ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆ 2011

Ա. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
Հեղինակային հրատարակություն
2011

ՀՏԴ 336:330
ԳՄԴ 65.9(2)26
Հ 177

Հրատարակման է երաշխավորել
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի գիտական խորհուրդը

Մասնագիտական խմբագիր՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Զ. Սարգսյան
Գրախոսներ՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Բայադյան
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա. Հ. Սարգսյան

Հրատարակվում է
«ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ
հովանավորությամբ

Հակոբյան Ա.Ա.
Հ 177 Ֆինանսական վարձակալություն / Ա.Ա. Հակոբյան;
Մասնագիտ. խմբ.՝ Ա. Զ. Սարգսյան. –Եր.: Հեղինակային
հրատարակություն, 2011: –256 էջ:

Ներկայացված են տնտեսավարման մակրո և միկրո մակարդակներում ֆինանսական վարձակալության (լիզինգի) կառավարման, հաշվառման և վերլուծության հիմնախնդիրները: Վերլուծական հետազոտության նպատակը վարձակալության տնտեսական կառավարման բարելավմանն ուղղված նոր մոտեցումների բացահայտումն է: Նորովի են մեկնաբանվել լիզինգի կազմակերպման և կառավարման խնդիրները, դիտարկվել են ֆինանսական ռիսկերի կառավարման բարելավման ուղիները, հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ներկայացման, ինչպես նաև վարձակալության տնտեսական վերլուծության և արդյունավետության գնահատման մոտեցումները:

Նախատեսված է տնտեսագիտական բուհերի ուսանողների, պրոֆեսորադասախոսական համակազմի, ինչպես նաև ֆինանսական կառավարիչների համար:

ՀՏԴ 336:330
ԳՄԴ 65.9(2)26

ISBN 978-9939-0-0079-4

© Հակոբյան Արմեն, 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ 5

ԳԼՈՒԽ I
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 11

1.1 Լիզինգի էությունը և դերը տնտեսական հարաբերությունների զարգացման գործընթացում 11

1.2 Վարձակալության ծառայությունների կազմակերպման ապահովագրական երաշխիքների բարելավումը 24

1.3 Ֆինանսական վարձակալության ծառայությունների շուկայի բնութագրումը 36

ԳԼՈՒԽ II
ԼԻԶԻՆԳԻ ԻՐԱՎԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ 48

2.1 Վարձակալության հարաբերությունների ՀՀ տնտեսահիրավական դաշտի վերլուծությունը 48

2.2 Ներդրումային քաղաքականության և վարձակալության փոխկապակցվածության գնահատումը 63

2.3 Լիզինգը որպես ֆինանսական քաղաքականության ձևավորման կարևորագույն գործիք 74

ԳԼՈՒԽ III
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 88

3.1 Հարկային պարտավորությունների ազատականացման ռիսկայնության գնահատումը վարձակալության շուկայում 88

3.2 Հարկային բեռի վերաբաշխման հիմնախնդիրը լիզինգի ոլորտում 106

3.3 Ֆինանսական վարձակալության ռիսկերի կառավարումը և դրա բարելավման ուղիները 115

ԳԼՈՒԽ IV
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱԾՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱԾՎԱՌՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ 128

4.1 Լիզինգի ֆինանսական հաշվառման կարգավորումը միջազգային ստանդարտներով 128

4.2 Վարձակալության ֆինանսական արդյունքների հաշվետվության բարելավումը 135

4.3 Լիզինգի հեջավորման արդյունքների հաշվառման հիմնախնդիրները 154

4.4 Վարձակալության պարտավորությունների կառավարչական հաշվառման ներդրման հիմնախնդիրները 169

4.5 Ֆինանսական վարձակալության ներխմբային օգուտների հաշվառման բարելավման ուղիները 183

ԳԼՈՒԽ V
ԼԻԶԻՆԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 192

5.1 Վարձավճարների օպտիմալացման հիմնախնդիրները լիզինգի համակարգում 192

5.2 Ֆինանսական կայունության և լիզինգի արդյունքների փոխազդեցության գնահատման մեթոդաբանության բարելավումը 211

5.3 Վարձակալության միկրոտնտեսական արդյունավետության վերլուծության բարելավման ուղիները 229

5.4 Լիզինգի մակրոտնտեսական արդյունավետության գնահատման մոտեցումները 236

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 248

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Վարձակալությունը դիտարկվում է որպես սեփականության հարաբերությունների ձևավորման եղանակ, որը մի կողմից խթանում է արտադրության միջոցների ձևավորումը, մյուս կողմից՝ նպաստում դրա օգտագործման իրավունքի փոխանցմանն ու տարածմանը: Այսպիսով՝ վարձակալությունն ունի ապրանքանյութական առաջարկի ակտիվացման և սոցիալ-տնտեսական պահանջարկի բավարարման նշանակություն: Գիտատեխնիկական առաջընթացի արդյունքների գործնական կիրառմանը, արտադրական նորամուծությունների ներդրումներին հատկապես նպաստում է կազմակերպությունների կողմից ակտիվների ֆինանսական վարձակալությունը (լիզինգը):

Վարձակալության առանձնահատկությունը ոչ միայն բազմաթիվ մասնակիցների տարաբնույթ գործառույթների իրականացման, այլև հենց ներդրումային ծրագրերի բարդության մեջ է, որոնք առաջացնում են կազմակերպչահրավական, ֆինանսական, տեխնիկական, մարքեթինգային և արտադրական հիմնախնդիրներ: Հետևաբար, վարձակալության գործընթացը կազմակերպչական առումով դիտարկվում է որպես ներդրումային գաղափարներից մինչև ծրագրի գործնական իրացման պարբերաշրջան: Այն բաղկացած է երեք հիմնական փուլից՝ նախապատրաստական (նախաներդրումային), կազմակերպչական (ներդրումային) և շահագործման՝ յուրաքանչյուրն իրեն յուրահատուկ գործառույթներով:

Ներդրումները, վարձակալության ոլորտում ձևավորելով արտադրական կապիտալ, գտնվում են երկարաժամկետ տնտեսական փոխհատուցման գործընթացում: Ուստի մակրոտնտեսական հարթությունում գործող ներդրումային և ֆինանսավարկային լծակները ձգտում են ձևավորել մի այնպիսի հավասարակշիռ վիճակ, երբ երկարաժամկետ հատվածում լիզինգի ծախսերն արդարացվում են ոչ միայն գործարարի, այլև հանրային արդյունավետության տեսանկյունից:

Լիզինգը, որպես տնտեսավարման յուրահատուկ ձև, համալիր ազդեցություն է գործում արտադրական գործընթացի հիմնական բաղադրիչների՝ արտադրության միջոցների, աշխատուժի օգտագործման ինտենսիվության վրա: Լիզինգը հատկապես օպերատիվ ներգործություն է ունենում գիտատեխնիկական առաջընթացի խթանման, նո-

ռամուծությունների ներդրման և իրացման, սահմանային ծախսերի կրճատման վրա: Այս առումով, ազգային տնտեսության համակարգում լիզինգը բազմապատիկ ներազդեցության արդյունք է ապահովում: Լիզինգի ծանապարհով նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիայի օգտագործման համեմատաբար հեշտ ուղի է հարթվում, ավելանում են արտադրողների եկամուտները, որոնք արտադրության լրացուցիչ ծավալների պահանջարկ են առաջացնում:

Որպես ֆինանսական ներդրումների յուրահատուկ ձև՝ լիզինգի տնտեսական նպատակահարմարությունը պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ ֆինանսական վարձակալության արժեքն ու հետգնման ժամանակահատվածը, որոնք իրենց հերթին փոփոխվում են ֆինանսական շուկայում փոխառությունների առաջարկի և պահանջարկի համամասնությունների, վարկային միջոցների եկամտաբերության տատանումներից: Ֆինանսական վարձակալության արժեքի, տոկոսադրույքների, եկամուտների, հետգնման ժամկետների արդյունքները միմյանց հակակշռելով, մրցակցային միջավայր են ստեղծում վարկային շուկայում՝ դրանով իսկ նպաստելով տնտեսության մեջ փոխառությունների օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

Հետևաբար, վարձակալության ծառայություններն իրենց ուրույն տեղն ունեն ազգային տնտեսության համակարգում և վճռորոշ դեր են կատարում մակրոտնտեսական հարաբերությունների կարգավորման գործընթացում: Դրանք մասնավորապես նպաստում են պետական շահեր հետապնդող մի շարք խնդիրների լուծմանը, որոնցից են՝ ազգային տնտեսության համակարգում մասնավոր ներդրումների ներգրավումը, գործարարության ակտիվացման արդյունքում պետբյուջե հարկային մուտքերի ավելացումները, արտադրության տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման աշխուժացումը, շուկայական ենթակառուցվածքային համակարգի զարգացման ապահովումը, նոր աշխատատեղերի ստեղծումը և բնակչության զբաղվածության բարելավումը, տնտեսության իրական և ֆինանսական հատվածի միջև մրցակցային միջավայրի ապահովումը, որոնք էլ արդիական են դարձնում լիզինգի մակրոտնտեսական կարգավորման հիմնախնդիրների լուծման ուղիների առաջադրումը:

Միկրոտնտեսական միջավայրում նույնպես լիզինգի ֆինանսական կառավարումը հանդես է գալիս իրեն յուրահատուկ հիմնախնդիրներով, որոնք լուծում են պահանջում: Մասնավորապես՝ կարևորվում է ֆինանսական վարձակալության ռիսկերի կառավարման կատարելագործումը: Լինելով բազամաքանակ մասնակիցների համախմբված գործունեության արդյունք՝ լիզինգը կարող է հեշտությամբ ձախողվել մասնակիցներից որևէ մեկի՝ պարտավորություններում թերանալու պատճառով: Լիզինգի պարագայում կարևորվում է «ակտիվի մատակարարում-վարձատու-վարձակալ» շղթայի ներդաշնակ գործունեությունը, որը խափանման ռիսկ է պարունակում նաև ներդրումների երկարաժամկետայնության, խոշոր ֆինանսական ռեսուրսների ներգրավման և վարձակալության շուկայի առանձնահատկությունների պատճառով: Ուստի լիզինգային ռիսկերի կառավարման մոտեցումները մեծ մասամբ վարձակալության հավանական վնասների կանխարգելման կամ նվազեցման նպատակ են հետապնդում:

Լիզինգը, որպես ֆինանսական ներդրումների այլընտրանքային ուղի, հիմնախնդիրներ է առաջացնում վարձակալության կողմերից յուրաքանչյուրի ֆինանսական կայունության ապահովման մեջ: Վարձակալը, ստանձնելով մեծածավալ և երկարաժամկետ պարտավորություններ, լիզինգի դեպքում ձգտում է ոչ միայն ձեռք բերված ակտիվի գծով ապահովել ներդրումների առավելագույն տնտեսական հատույց, այլև դիմագրավել լիզինգային պարտավորությունների հետևանքով առաջացող՝ կազմակերպության վճարունակության, ինքնավարության, ակտիվների իրացվելիության մակարդակի անկումը: Իր հերթին, վարձատուն, լիզինգի ծանապարհով վարձակալին տրամադրելով երկարատև փոխառություններ, ձգտում է ապահովել դեբիտորական պարտքերի հավաքագրելիության թույլատրելի մակարդակ, ֆինանսական ներդրումների առավելագույն հատույց, գործարար ակտիվության աճ, այսինքն՝ կազմակերպության ֆինանսական կայուն վիճակ:

Լիզինգի արդյունքների և կազմակերպության ֆինանսական դրության փոխազդեցության հավասարակշռման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից կարևորագույններն են՝ ակտիվի լիարժեք շահագործման նպատակով դրամական ռեսուրսների անհրաժեշտ չափի ապահովումը, միաժամանակ՝ ներդրման ծախսերի հետևանքով՝ գործարարության ֆինանսական կայունության անկման թույլատրելի սահմանի պահպանումը:

Տեսական մոտեցմամբ, ավանդաբար, լիզինգի արդյունավետության գնահատումը կատարվում է վերլուծության ֆինանսական և արտադրական ուղղություններով: Արդիական է, սակայն, լիզինգի արդյունավետության գնահատումը՝ վարձակալության հետևանքով ձևավորվող ֆինանսաարտադրական հանգույցի գործունեության արդյունքների կտրվածքով: Լիզինգի համակարգում ընդգրկված կազմակերպությունների փոխներգործության շղթան ընդունվում է որպես ֆինանսաարտադրական հանգույց, որը գործարարության ոլորտում ունի իր առանձնահատկությունները: Շուկայում մրցակցային դիրքեր ապահովելու համար միմյանց շաղկապված արտադրական և ֆինանսական ոլորտները, միավորելով իրենց կարողությունները, առավել արդյունավետորեն են լուծում առկա հիմնախնդիրները:

Այս առումով արդիական է ֆինանսական վարձակալության կառավարչական հաշվառման զարգացումը, որը տեղեկատվական կարևոր աղբյուր է լիզինգի արդյունավետությունը գնահատելիս: Լիզինգային պարտավորությունների կառավարչական հաշվառման ներդրումը հնարավորություն է ընձեռում ներկայացնելու այնպիսի վերլուծական տեղեկատվություն, որը թույլ է տալիս ֆինանսական վարձակալությանը մասնակից կազմակերպություններում իրականացնելու շրջանառու կապիտալի օպերատիվ կառավարում և հիմքեր է ստեղծում ֆինանսական կայունության ապահովման արդյունավետ գործիքների կիրառման համար:

Մենագրության նպատակն է ընթերցողին ծանոթացնել ՀՀ-ում կազմակերպվող ֆինանսական վարձակալության տնտեսական կառավարման բարելավմանը միտված եղանակների և միջոցառումների առաջարկվող համակարգին, ինչպես նաև նորովի մեկնաբանել լիզինգի հաշվառման և ֆինանսատնտեսական արդյունավետության գնահատման չափանիշները: Ըստ այդմ՝

- առաջարկվել է իրավական և հարկային լծակներով ակտիվացնել վարձակալության մոտիվացիոն գործառույթները՝ բարելավելով վարձակալի կողմից ակտիվի գնումը, վարձավճարների փոխանցումը, լիզինգի օբյեկտի տիրապետումն ու օգտագործումը, շահագործումն ու մոդեռնացումը,
- փոխառությունների դրույքաչափերի, տոկոսային եկամուտների, ինչպես նաև ֆինանսական ներդրումների արժեքի և դրանց հետգնման ժամկետների փոխազդեցության մակրոտնտեսական վերլուծության հիման վրա բացահայտվել են լիզինգի գնագոյացման առանձնահատկությունները և վարձակալության մրցակցային դիրքերի ապահովման ուղիները վարկային շուկայում,
- մշակվել է ֆինանսական վարձակալության ռիսկերի կառավարման նոր մեխանիզմ, որով լիզինգի հավանական վնասների բաժնեմասնակցային փոխհատուցման սկզբունքի կիրառմամբ՝ վարձակալության կողմերի միջև ռիսկային գործառույթները վերացնելու, փոխադարձ վերահսկողություն իրականացնելու մոտիվացիոն դաշտ է ստեղծվում՝ բարելավելով ռիսկերի կառավարման արդյունավետությունը,
- վարձավճարների օպտիմալացման նպատակով առաջարկվել է կիրառել լիզինգի կողմերի տնտեսական շահերի հակակշռման սկզբունք՝ բացահայտելով վարձակալի և վարձատուի՝ միմյանց հակազդող ֆինանսական մոտիվացիաները, ապահովելով վարձատուի (լիզինգատուի) հաշվեկշռի թույլատրելի իրացվելիություն և վարձակալի (լիզինգառուի)՝ վճարվելիք պարտավորությունների կայուն մարում և ներդրումային ռեսուրսների արդյունավետ փոխհատուցում,
- բարելավվել է լիզինգի կողմեր հանդիսացող կազմակերպությունների ֆինանսական կայունության վերլուծության մեթոդաբանությունը՝ համալիր կերպով հաշվի առնելով տնտեսական գործունեության՝ միմյանց հակազդող բազմաբնույթ գործոնները և դրանց առնչվող սահմանափակումները,
- առաջարկվել է ֆինանսական վարձակալության պարտավորությունների կառավարչական հաշվառման մեխանիզմ, որով բացահայտվում են դրամական հոսքերի նախահաշվային մեծությունից բարենպաստ և անբարենպաստ շեղումները, և իրականացվում է գործոնային վերլուծություն, որով հնարավոր է հակազդել կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացմանը՝ պարտավորությունների ձևավորման պահից մինչև դրանց մարումը,
- առաջարկվող կառավարչական հաշիվների և հաշվային թղթակցությունների հիման վրա բացահայտվել են լիզին-

գի ներխմբային համագործակցության ֆինանսական արդյունքի չափման և գնահատման ուղիներ, որոնց շնորհիվ ձևավորվում է վարձակալության կողմերի փոխշահավետ համագործակցության տնտեսական հետևանքների ցուցանիշների տեղեկատվական համակարգ,

- մշակվել է լիզինգի հեջավորման արդյունքների չափման և գնահատման մեխանիզմ, որը հնարավորություն է ընձեռում կառավարելի դարձնել գործարքի հավանական ֆինանսական կորուստները՝ կապված վարձակալության օբյեկտի վերագնահատումների հետ և դրանով իսկ ապահովագրվել ակտիվի արժեքային տատանումներից, ինչպես նաև ճանաչել վարձակալության հեջավորված հոդվածների իրական արժեքների ազդեցությունները շահույթի կամ վնասի վրա՝ լիզինգի ավարտին նպաստելով ակտիվի տնօրինման վերաբերյալ հիմնավոր կառավարչական որոշումների կայացմանը,
- առաջարկվել են վարձակալության հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների բարելավման ուղիներ՝ ներկայացնելով վարձակալած ակտիվի արժեզրկման ռիսկային գործոնների համախումբը, լիզինգի խրախուսման զեղչային արտոնություններից բխող ֆինանսական հետևանքները, ինչպես նաև հետադարձ վարձակալության դեպքում ակտիվի վաճառքից եկամուտներն ու դրան հաջորդող լիզինգի ծախսերի համեմատական վերլուծության արդյունքները:

Արմեն Հակոբյան
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ԳԼՈՒԽ I
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1 Լիզինգի էությունը և դերը տնտեսական հարաբերությունների զարգացման գործընթացում

Վարձակալությունը, ընդհանուր առմամբ, հանդես է գալիս որպես ներդրումային գործընթաց, որտեղ վարձակալն իր տնտեսական գործունեության մեջ է ներգրավում վարձատուին պատկանող ժամանակավորապես ազատ ակտիվները: Վարձակալության տնտեսական բովանդակությունը մասնագիտական գրականության մեջ տարբեր կերպ է մեկնաբանվում: Այսպես՝ վարձակալությունը դիտարկվում է որպես գործարարության ֆինանսավորման յուրահատուկ ձև, արտադրության միջոցների առուծախի, նաև՝ ուրիշի սեփականության կառավարման մի յուրահատուկ եղանակ[1]:

Վարձակալության տնտեսական բովանդակության ամփոփ մեկնաբանման նպատակով հպանցիկ անդրադառնանք վարձակալական գործընթացի էվոլյուցիային: Դեռևս Արիստոտելն (384-322 մ.թ.ա.) է բնութագրել վարձակալության փիլիսոփայությունը, նշելով, որ «հարստությունը սեփականության արդյունավետ օգտագործման, այլ ոչ թե դրա իրավունքի մեջ է»[2]:

Որպես տնտեսավարման վճռորոշ գործիք՝ ակտիվների վարձակալությունը սկիզբ է առել ԱՄՆ-ում և Միացյալ Թագավորությունում՝ մասնավորապես երկաթուղիների շինարարության ոլորտում: Տնտեսական տեսանկյունից՝ երկաթուղային կազմակերպությունները քարշակները դիտարկում էին ոչ թե որպես սեփականություն, այլ օգտագործման իրավունքով ակտիվներ, որոնք առավել շահավետ էին և խնայում էին խոշոր ֆինանսական միջոցներ:

Վարձակալությունը մեծ թափ առավ ԱՄՆ-ում՝ մեքենաշինական արդյունաբերության զարգացմանը զուգընթաց, երբ մեքենաշինական գործարանները ոչ միայն վարձում էին անհրաժեշտ արտադրության միջոցներ, այլ իրենք էին հանդես գալիս վարձատուի դերում՝

[1] Човушян Э.О, Лизинг в России, М. "Финансы", 2006, с. 13.
[2] Аристотель, Сочинения (Политика): в 4-х т., т. 4, М., Мысль, 1984, с. 390.

գնորդին վարձակալական հիմունքներով տրամադրելով մեքենաներ[3]: Հետևաբար, վարձակալական գործարքները սկսեցին երկուատեք բավարարել գործարարների շահերը՝ արտադրություն կազմակերպելիս և պատրաստի արտադրանքն իրացնելիս:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գործարարության ոլորտում ակտիվների վարձակալությունը վերածվեց արդեն կայացած ձեռնարկատիրական յուրահատուկ եղանակի, որը, տնտեսահրավական տեսանկյունից կանոնակարգվելով, լրացրեց տնտեսության վարկավորման և ներդրումային գործառույթների դաշտը: Միջազգային պրակտիկայում կիրառվում են շուրջ 30 տասնյակից ավելի վարձակալական սխեմաներ՝[4] համապատասխան ենթակառուցվածքային օղակներով (բանկեր, վարձակալության միջնորդներ, ապահովագրական ընկերություններ, վարկային կազմակերպություններ, խորհրդատվական գրասենյակներ և այլն):

Մասնագիտական գրականությունում վարձակալությունը բնութագրվում է նաև որպես սեփականության հարաբերությունների ձևավորման եղանակ, որը մի կողմից խթանում է արտադրության միջոցների ձևավորումը, մյուս կողմից՝ նպաստում դրա օգտագործման իրավունքի փոխակերպմանն ու տարածմանը: Այսինքն՝ վարձակալությունն ունի ապրանքանյութական առաջարկի ակտիվացման և սոցիալ-տնտեսական պահանջարկի բավարարման նշանակություն: Գիտատեխնիկական առաջընթացի արդյունքների գործնական կիրառմանը, արտադրական նորամուծությունների ներդրումներին հատկապես նպաստում է կազմակերպությունների կողմից ակտիվների ֆինանսական վարձակալումը (լիզինգը): Թանկարժեք հիմնական միջոցների գնումը հնարավոր է ապահովել միայն խոշոր ֆինանսական միջոցների հայթայթման ծանապարհով և շատ անգամ կարող է ժամանակավրեպ լինել: Մինչդեռ վարձակալությունը խթանում է կազմակերպությունների արտադրությունը և բավարարում սպառողների պահանջմունքները, եթե վերջիններս ապրանքանյութական բարիքներ ձեռք բերելու պահին չունեն բավարար ֆինանսական միջոցներ[5]:

Հետևաբար, տնտեսական համակարգում ֆինանսական վար-

[3] Бутенина Н.В., История развития лизинговых отношений в США, М., Лизинг ревю, 2000, #9/10, с. 31.

[4] Горемыкин В.А., Лизинг, М. "Дашков и К", 2003, с. 22.

[5] Харитонова Ю.С., Договор лизинга, М., Юрайт-М, 2002, с. 16.

ձակալությունը կատարում է երեք հիմնական գործառույթ՝ ֆինանսական, արտադրական և իրացման: Ֆինանսական գործառույթը ենթադրում է վարձակալության միջոցով գործարարության ոլորտում ձևավորված ազատ դրամական միջոցների վերաբաշխում արտադրողների և սպառողների միջև: Վարձակալության արտադրական գործառույթը խթանում է գիտատեխնիկական առաջընթացը՝ ժամանակին և տեղին արտադրության ոլորտում կատարելով համապատասխան նորամուծական ներդրումներ: Իրացման գործառույթը նպաստում է շուկայում վարձատուի արտադրանքի կամ մատուցվող ծառայության սպառմանը: Այսպիսով՝ վարձակալության «ֆինանսական-արտադրական-իրացման» գործառույթների շղթան տնտեսական համակարգում վերարտադրության բազմարկչի (մուլտիպլիկատորի) դեր է կատարում, որի մակրոտնտեսական կարգավորման հիմնախնդիրները կլուսաբանվեն երկրորդ գլխում:

Վարձակալությունը ընդհանուր հատկանիշներ ունի վարկավորման հետ, քանի որ այս դեպքում նույնպես վարձակալը ներգրավում է տնտեսական միջոցներ՝ վերադարձելիության, ժամկետայնության և վճարելիության սկզբունքներով: Սակայն վարձակալությունը վարկավորման գործընթացից տարբերվում է ակտիվների սեփականության նկատմամբ իր յուրահատուկ մոտեցումներով: Վարձակալության ողջ ժամանակաշրջանում ակտիվի սեփականության իրավունքը պահպանում է վարձատուն, վարձակալին է փոխանցվում միայն ակտիվի տիրապետման և օգտագործման իրավունքը, որի դիմաց կոնկրետ պայմանագրային ժամկետներով գումարներ են փոխանցվում վարձատուին: Վարձակալության վերջում կայանում է հետևյալ երեք սցենարներից որևէ մեկը. վարձակալը կարող է վարձատուից գնել ակտիվը, երկարացնել վարձակալության պայմանագիրը՝ առավել արտոնյալ պայմաններով, վերադարձնել ակտիվը վարձատուին: Փորձը ցույց է տալիս, որ գործնականում գերակշիռ մաս է կազմում առաջին սցենարով ֆինանսական վարձակալության ավարտը[6]:

Վարձակալական գործարքներում ընդգրկված են ուղղակի և անուղղակի մասնակիցներ: Ուղղակի են համարվում միայն երեք մասնակիցներ՝ վարձատուն, մատակարարը, վարձակալը: Վարձակալը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը, պայմանագրի համա-

[6] Справочник финансиста предприятия. 4-е изд., М, ИНФРА, 2002, с. 56.

ձայն, կոնկրետ ժամկետով և վարձավճարով, ժամանակավոր օգտագործմամբ ակտիվ է վերցնում: Վարձատուն, հանդիսանալով լիցենզավորված իրավաբանական անձ, սեփական կամ ներգրավված միջոցներով ակտիվ է գնում՝ այն վարձակալության հանձնելով առանց սեփականության իրավունքի փոխանցման, որոշակի վարձավճարներով և օգտագործման ժամկետով: Մատակարարը (արտադրողը) վաճառքի պայմանագրի համաձայն, վարձատուին է հանձնում իր արտադրանքը: Հետևաբար, ֆինանսական վարձակալությունը (լիզինգը) առնվազն երկու պայմանագիր է նախատեսում. պայմանագիր՝ վարձատուի և վարձակալի միջև, պայմանագիր՝ մատակարարի (արտադրողի) և վարձատուի միջև (տե՛ս գծապատկեր 1.1):



Գծապատկեր 1.1
Լիզինգի դասական կազմակերպման մեխանիզմը ուղղակի մասնակիցներով

Վարձակալության գործարքների անուղղակի մասնակիցները մի կողմից նպաստում են վարձակալական գործարքների լիարժեք իրականացմանը, մյուս կողմից՝ հանդես են գալիս որպես շահառուներ: Գծապատկեր 1.1-ում ավելացնելով վարձակալության ընդամենը չորս անուղղակի մասնակիցների (երաշխավորներ, բանկեր, ապահովագրական ընկերություններ, վերջնական սպառողներ), ձևավորվում է լիզինգի կազմակերպման հետևյալ մեխանիզմը (տե՛ս գծապատկեր 1.2):



Գծապատկեր 1.2
Լիզինգի կազմակերպման մեխանիզմը ուղղակի և անուղղակի մասնակիցներով[1]

Լիզինգային կազմակերպությունները ձգտում են հանդես գալ որպես բանկերի դուստր կազմակերպություններ հենց այն պատճառով,

[1] Газман В.Д., Финансовый лизинг, М. ВШЭ, 2003, с.28.

որպեսզի ձեռք բերեն էժան և բավարար չափով ֆինանսական ռեսուրսներ: Բացի դրանից, բանկերը, որոնք ունեն լիզինգային կազմակերպություններ, հաճախ ուղղորդում են իրենց հավանական վարկառուներին՝ վարձակալելու ակտիվներ՝ ձեռք բերելով հարկային արտոնություններ, կրճատելով վարկավորման ռիսկային գործոնները: Այդ իսկ պատճառով լիզինգային կազմակերպությունները մասնագիտական գրականության մեջ ներկայացվում են որպես «բանկային համակարգի ձեռքեր», քանի որ բանկերը նախընտրում են չմասնակցել կոնկրետ հաճախորդի վարկավորմանը և այն իրականացնում են լիզինգի ճանապարհով[8]:

Վարձակալական հարաբերությունների անբաժանելի մասն է ապահովագրությունը: Ընդ որում, ապահովագրվում են ոչ միայն վարձակալության տրված ակտիվների հնարավոր ֆիզիկական և որակական կորուստները, այլև դրանց օգտագործումից ակնկալվող բնապահպանական ռիսկային վնասները, վարձավճարների ուշացումներից կամ հրաժարումից կորուստները և այլն:

Լիզինգային կազմակերպությունները առավել արդյունավետորեն են գործում վարձակալների երաշխավորների առկայությամբ: Որպես երաշխավորներ կարող են հանդես գալ պետական և մասնավոր կազմակերպությունները, ինչպես նաև ֆիզիկական անձինք՝ բնութագրելով վարձակալի տնտեսավարման վարքագիծը, նաև որոշակի չափով կրելով վարձակալական գործարքների ռիսկային կորուստները: Ըստ գործունեության ոլորտների՝ լիզինգային կազմակերպությունները վարձակալության շուկայում ներկայանում են մասնագիտացված (միայն գյուղատնտեսական մեքենաների, ավտոմեքենաների, համակարգիչների գծով և այլն) և ունիվերսալ ձևերով: Երաշխավորների առկայությունը հատկապես կարևորվում է ունիվերսալ լիզինգային կազմակերպությունների գործունեությունում:

Ըստ լիզինգի մասնակից կողմերին ակտիվի օգտագործման ռիսկի պատասխանատվության ամրակցման՝ տարբերում են գործառնական և ֆինանսական վարձակալություններ: Հաշվապահական հաշվառման միջազգային 17 «Վարձակալություն» ստանդարտով ֆինանսական և գործառնական վարձակալության տարաբաժանումը կատարվում է մի շարք չափանիշներով (տե՛ս գծապատկեր 1.3):

Մասնագիտական գրականության մեջ ֆինանսական և գործառ-

[8] Чекмарева Е., Методы интеграции банковского и промышленного капитала, Лизинг ревю, М. #1, 2004, с. 13.

նական վարձակալության տարանջատման հիմքում հիմնականում վարձակալության երկարաժամկետայնությունն է (երեք տարուց ավելի), վարձակալի կողմից գնային արտոնություններով ակտիվի սեփականության ձեռք բերման իրավունքը, որպես կանոն, շրջանցելով այն կարևորագույն սկզբունքը, համաձայն որի՝ ֆինանսական վարձակալությամբ ակտիվի օգուտները, ռիսկային կորուստները վարձատուից փոխանցվում են վարձակալին:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե վարձակալին են փոխանցվում սեփականության բոլոր ռիսկերն ու օգուտները: Այն գործառնական է, եթե չեն փոխանցվում սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու օգուտները: Ռիսկերը ներառում են վարձակալած հզորությունների պարապուրդը կամ տեխնոլոգիաների հին լինելու պատճառով առաջացող հնարավոր վնասները և տնտեսական պայմանների փոփոխման հետևանքով՝ հատույցի փոփոխությունները:

Օգուտները կարող են ներկայացվել որպես ակտիվի տնտեսական ծառայության ընթացքում շահութաբեր շահագործումից և արժեքի բարձրացումից կամ մնացորդային արժեքի իրացումից ավելի շատ եկամտի ստացման ակնկալիքներ[9]: Հետևաբար, ֆինանսական վարձակալության ճանաչման առաջնահերթ պայման է վարձատուից ակտիվի օգտագործման ռիսկի փոխանցումը վարձակալին:

Ըստ վարձատրման օբյեկտի շահագործմանը ցուցաբերվող վերաբերմունքի, տարբերում են զուտ և լիարժեք վարձակալություններ: Առաջին դեպքում ակտիվի շահագործման բոլոր ծախսերը հոգում է վարձատուն, և հակառակը: Թեև լիարժեք վարձակալությունն էապես թանկ է, քանի որ վարձատուն հոգում է ակտիվի տեխնիկական շահագործման, սպասարկման, նորոգման, շահագործողների վերապատրաստման ծախսերը (երբեմն նաև ինքն է տրամադրում շահագործող անձնակազմ՝ նավերի, օդանավերի լիզինգի պարագայում), այնուհանդերձ, վարձակալները ձգտում են կատարել հենց լիարժեք վարձակալություն՝ ապահովելու համար ակտիվի որակյալ և արդյունավետ շահագործումը: Գործնականում առավել հաճախ կիրառվում է մասնակի վարձակալությունը, եթե վարձատուն մասամբ է իր վրա վերցնում ակտիվի շահագործման ծախսերը[10]:

[9] ՀՀՄՍ «Վարձակալություն», կետ 8, 9.

[10] Горемыкин В.А., Основы технологии лизинговых операци , М., Ось-89, 2000, с. 26.



Գծապատկեր 1.3

Գործառնական և ֆինանսական վարձակալության տարբերակման չափանիշները

Ըստ ֆինանսավորման տեսակի, տարբերում են միանվագ և կրկնվող (ռեվոլվերային) վարձակալություններ: Առաջին դեպքում ակտիվը վարձակալվում է մեկ անգամ, երկրորդ դեպքում պայմանագրի ավարտը երկարաձգվում է՝ հաշվի առնելով վարձակալած ակտիվի արդիականացումը, արտադրական հզորությունների ավելացումը, անգամ՝ նորացումը: Որպես կրկնվող վարձակալության տարատեսակ՝ հանդես է գալիս համապարփակ վարձակալությունը, որը ենթադրում է վարձակալած ակտիվի անընդմեջ համալրում օժանդակ և ուղեկցող սարքավորումներով՝ առանց նոր պայմանագրեր կնքելու: Այն հատկապես կիրառելի է ագրոբիզնեսում, երբ վարձակալած տրակտորին կարող են կցվել շարքացաններ, թունաքիմիկատների ներարկիչներ, գութաններ և այլն:

Գծապատկեր 1.4

Երկկողմանի վարձակալության մեխանիզմը

Վերջին տարիներին գործնականում որոշ երկրներում լայն կիրառում է գտնում երկկողմանի վարձակալությունը, երբ արտադրողը (մատակարարը) կատարում է նաև լիզինգային գործառույթները: Այս պարագայում, փաստորեն, շրջանցվում է լիզինգային միջնորդ կազմակերպության օղակը, ուղղակի կապ է հաստատվում մատակարարի և

վարձատուի միջև (տե՛ս գծապատկեր 1.4)՝ նվազեցնելով վարձատրման գինը:

Գործնականում կիրառելի է նաև հետադարձ լիզինգը, որտեղ արտադրողը (մատակարարը) ի տարբերություն երկկողմանի վարձակալության, միաժամանակ հանդես է գալիս նաև որպես վարձակալ՝ լիզինգային կազմակերպությանը հանձնելով ոչ թե սեփական արտադրանքը, այլ իր կողմից շահագործվող հիմնական միջոցի սեփականության իրավունքը: Փաստորեն, կատարվում է վաճառք՝ հետադարձ վարձակալությամբ (տե՛ս գծապատկեր 1.5):



Գծապատկեր 1.5

Հետադարձ վարձակալության մեխանիզմը

Բաժնետիրական (լեվերիջ) լիզինգը կիրառվում է լայնածավալ և գերթանկարժեք վարձակալական ծրագրերի իրականացման դեպքում, երբ մեկ լիզինգային կազմակերպության ֆինանսական ռեսուրսները բավարար չեն վարձակալություն կազմակերպելու համար: Այս դեպքում լիզինգային կազմակերպությունները ձևավորում են բաժնետիրական ընկերություն, թողարկում են բաժնետոմսեր, որոնք առավել «էժան» ֆինանսական միջոցներ են ապահովում, քան բանկային վարկերը: Բաժնետոմսերի վաճառքից մուտքերը կազմում են վարձա-

[illegible]ության ֆինանսավորման շուրջ 40%-ը, որը, փաստորեն, լծակ է հա[illegible]բար քիչ ծախսերով լայնածավալ ծրագրերի իրականացման պարագայում (լեվերիջ (անգլ.)՝ լծակ): Բաժնետիրական լիզինգի կիրառման սխեման ներկայացված է գծապատկեր 1.6-ում:



Գծապատկեր 1.6

Լեվերիջ լիզինգի գործունեության մեխանիզմը

Լիզինգային հարաբերություններում իր տեղն ունի նաև ենթավարձակալությունը, որի դեպքում վարձակալը, վարձատուի համաձայությամբ (նշվում է պայմանագրի առանձին կետով կամ փոխհամաայնեցված տեղեկատվական նամակով), երրորդ կողմին է հանձնում [illegible]ակալած ակտիվը: Ընդ որում, ենթավարձակալության ժամկետը կարող գերազանցել առաջնային լիզինգի ժամկետը, վարձակալն նքն է պատասխանատու վարձատուին վարձավճարների ժամանաին փոխանցման, ակտիվի, ըստ նշանակման, շահագործման համար՝ նկախ ենթավարձակալի ցուցաբերած հետագա վարքագծից: Ենթավարձակալության գործունեության սխեման ներկայացված է գծաատկեր 1.7-ում:

Ըստ ակտիվի հետգնման հատկանիշի՝ տարբերում են ամբողական և մասնակի հետգնման լիզինգ: Առաջին դեպքում վարձատուն

ամբողջությամբ, վարձավճարների տեսքով, վարձակալից ստանում է վարձատրման պահի ակտիվի մնացորդային արժեքը, որը առավել հատուկ է ֆինանսական վարձակալությանը: Երկրորդ դեպքում վարձավճարները չեն փոխհատուցում ակտիվի մնացորդային արժեքը, և վարձատուն, հետ ստանալով ակտիվը, դեռևս շարունակում է այն ամորտիզացնել:



Գծապատկեր 1.7

Ենթավարձակալության գործունեության մեխանիզմը

Կարևորվում է նաև վարձակալության դասակարգումն ըստ պայմանագրային պարտավորությունների կատարման ռիսկայնության աստիճանի: Որպես կանոն, վարձատուն լիզինգային երաշխիքներ է ապահովում մասնակիորեն կամ լիարժեքորեն: Լիզինգի մասնակի ապահովագրման պարագայում կորուստների ռիսկայնության ամբողջական ծածկույթ չի ապահովվում, այլ միայն վարձակալից դեպոզիտային գումար է գանձվում՝ «սառեցնելով» հաշիվը մինչև վարձակալության ավարտը: Լիարժեք ապահովագրության պարագայում ռիսկային

կորուստների ամբողջական ծածկույթ է ապահովվում, որն, ի դեպ, համաձայն պայմանագրի, կարող է միաժամանակ բաշխվել ապահովագրական ընկերությունների, ինչպես նաև լիզինգին մասնակից երաշխավոր կազմակերպությունների կողմից: Վարձակալության ռիսկերի ֆինանսական կառավարման հիմնախնդիրներին կանդրադառնանք երրորդ գլխում:

Այսպիսով՝ լիզինգը, որպես գործարարության յուրահատուկ ոլորտ, ընդգրկում է բազմաթիվ տնտեսակազմակերպչական հարաբերություններ, իսկ գործարարության ոլորտում վարձակալության գործառույթների վերլուծությամբ բացահայտվում են հետևյալ առանձնահատկությունները.

առաջին, վարձակալությունն իր նպատակայնության, ժամկետայնության, վերադարձելիության և վճարման սկզբունքներով հանդես է գալիս որպես գործարարության այլընտրանքային վարկավորման միջոց, սակայն վերջինից տարբերվում է ակտիվների սեփականության նկատմամբ՝ յուրահատուկ մոտեցումներով,

երկրորդ, տնտեսական համակարգում վարձակալությունն իրականացնում է երեք հիմնական գործառույթ՝ ֆինանսական, արտադրական և իրացման՝ մի կողմից նպաստելով նորամուծությունների ներդրմանը, մյուս կողմից՝ խթանելով ստացվող արդյունքների իրացումը և դրանով իսկ բազմարկչի դեր կատարելով վերարտադրության գործընթացում,

երրորդ, ի տարբերություն գործարարության վարկավորման, վարձակալությանը հատուկ է կազմակերպման ճկուն մեխանիզմ՝ բազմաբովանդակ սխեմաներով, ինչպես նաև բազմաքանակ ու բազմապրոֆիլ օպերատորների ընդգրկմամբ, որով գործարարության ոլորտում հնարավորություն է ստեղծվում լիզինգի առավել արդյունավետ մեխանիզմի ընտրության համար:

1.2 Վարձակալության ծառայությունների կազմակերպման ապահովագրական երաշխիքների բարելավումը

Վարձակալության բիզնեսի կազմակերպման և արագ զարգացման հիմքում ընկած են օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Օբյեկտիվ գործոններն առնչվում են գիտատեխնիկական նվաճումների ներդրմանը և գիտատար արտադրությունների զարգացմանը: Սուբյեկտիվ գործոնները կապված են պետության խթանիչ սոցիալ-տնտեսական քաղաքականության վարման և ձեռնարկատիրոջ սոցիալ-հոգեբանական արգելքների հաղթահարման հետ, երբ համոզմունք է ձևավորվում, որ արդյունավետ գործարարություն կարելի է կազմակերպել ոչ միայն սեփական, այլև վարձու (փոխառու) միջոցների հաշվին[11]:

Մասնավորապես՝ վարձակալության զարգացման օբյեկտիվ գործոնների թվին են դասվում տեխնիկայի և տեխնոլոգիայի նորացման արագացված տեմպերը, սեփական ուժերով բարդ սարքավորումների սպասարկման դժվարությունները, սարքավորումների հաճախակի արդիականացում պահանջող՝ թողարկվող արտադրատեսակների բարելավումները, ֆինանսական շուկայում փոքր և միջին բիզնեսի համար պահանջվող կապիտալի պակասը:

Ինչ վերաբերում է սուբյեկտիվ գործոններին, ապա պետության կարևորագույն գործառույթների թվին, առանց որոնց գործնականում հնարավոր չէ արդյունավետ վարձակալության կազմակերպումը, դասվում են.

- կարգավորիչ գործառույթը՝ ուղղված գործարարության իրավական նորմերի սահմանմանը,
- գործադիր ուղղությունը, որով գործնականորեն կարգավորվում են վարձակալական հարաբերությունները,
- վերահսկիչ գործառույթը, որն իրականացնում է պետական մարմինների և գործարարների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպությունները:

Վարձակալության առանձնահատկությունը ոչ միայն մասնակիցների բազմազանության, տարաբնույթ գործառույթների իրականացման, այլև հենց ներդրումային ծրագրերի բարդության մեջ է, որոնք առաջադրում են կազմակերպչահիրավական, ֆինանսական,

[11] Симонова М.Н., Аренда, лизинг, прокат, М., Статус-Кво, 2001, с. 59.

տեխնիկական, մարքեթինգային և արտադրական հիմնախնդիրներ: Վարձակալը, որը հիմնականում առաջինն է հանդես է գալիս որպես վարձակալական հարաբերությունների գործնական նախաձեռնող, շուկայում ներկայանում է իր բիզնես-ծրագրերով՝ դրանով իսկ կանխորոշելով լիզինգի կազմակերպման խնդիրների շրջանակը[12]: Իր հերթին, վարձատուն լրացնում է այդ շրջանակը՝ կապված վարձակալական ռիսկերի գնահատման, շուկայի հետազոտման, ներդրումային առավել շահավետ ուղղությունների որոշման հետ:

Հետևաբար, վարձակալության գործընթացը կազմակերպչական առումով պետք է դիտարկել որպես հիմնարար գաղափարներից մինչև ծրագրի գործնական իրացման պարբերաշրջան՝ բաղկացած երեք հիմնական փուլից՝ նախապատրաստական (նախաներդրումային), կազմակերպչական (ներդրումային) և շահագործման: Դրանցից յուրաքանչյուրը ներկայանում է իրեն բնորոշ գործառույթներով:

Նախապատրաստական փուլում կողմերն ուսումնասիրում են շուկան, վարձակալության պայմաններն ու առանձնահատկությունները, գնահատում են գործարքի տնտեսական արդյունավետությունը, գործընկերների վճարունակությունը, ներկայացնում են հայտեր: Երկրորդ փուլում կնքվում են պայմանագրեր, և վարձակալության օբյեկտը տրամադրվում է օգտագործողին: Երրորդ փուլը, որը ժամանակային տեսանկյունից ամենատևականն է, ընդգրկում է վարձավճարների փոխանցումը և լիզինգի ավարտը՝ ակտիվի վերադարձի կամ վարձակալի կողմից գնման ելքով:

Գործարքի մեկնարկին վարձակալը, ծրագիրը հիմնավորելու առումով, համալիր միջոցառումներ է իրականացնում հետևյալ ուղղություններով.

- *վարձակալության գաղափարի ձևավորում.* գործարարության ոլորտի ընտրություն, վարձակալվող ակտիվների պահանջարկի տեխնիկական հիմնավորում, վարձակալության գործընթացում ստեղծվող արտադրանքի սպառման պահանջարկի գնահատում,
- *վարձակալության ծրագրի տնտեսական հիմնավորում.* վարձակալության շուկայի ուսումնասիրում և վարձատուի ճիշտ ընտրություն, ծրագրի ֆինանսավորման եղանակի տնտեսա-

[12] Харитонова Ю. С., Договор лизинга, М., Юрайт-2002, с. 36.

կան հիմնավորում, բիզնես-ծրագրի մշակում, վարձակալության ձևի ընտրություն,

- *վարձակալության փաստաթղթային փաթեթի կազմում.* վարձակալությամբ ձեռք բերվող ակտիվի հայտագրում, վարձակալության բիզնես-պլանի առանցքային ցուցանիշների համախմբված մատուցում, վարձակալի անձնագրի, ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև երաշխավոր կազմակերպությունների և հավաստագրերի ներկայացում:

Վարձատուն գործարքի կազմակերպչական միջոցառումների համակարգում ընդգրկում է.

- պոտենցիալ վարձակալների արձանագրումն ու հաշվառումը,
- ներդրումային ծրագրերի ընտրությունը,
- վարձատրման ենթակա ակտիվի ձեռք բերումն ու հանձնումը վարձակալին,
- վարձակալության պայմանագրի կատարման ընթացքի վերահսկումը:

Ակտիվի վարձակալության պահին հատկապես կարևորվում են.

- գործարքի արդյունավետության և բիզնես-ծարգրի հիմնավորումը,
- թողարկվող արտադրանքին առնչվող շուկայական պոտենցիալը,
- վարձակալի ֆինանսատնտեսական վիճակի գնահատումը և վարձակալության ոլորտում կուտակած փորձը,
- վարձակալության իրավական հիմնավորումն ու վարձակալական ռիսկերի (ֆինանսական, իրավական, բնապահպանական) գնահատումը:[13]

Վարձակալության արդյունավետ կազմակերպման հիմքում է նաև ապահովագրական մեխանիզմը: Սակայն, գործնականում, լիզինգի ապահովագրության ֆինանսական բեռը վարձակալի վրա է, իսկ վարձատուն հանդես է գալիս որպես շահառու: Վարձակալական ապահովագրությունը մեղմում է կազմակերպություններում ֆինանսական, արտադրական, տեխնիկական, շուկայական խաթարումներից առաջացող ռիսկը, սակայն, դրանով հանդերձ, ՀՀ-ում այն դեռևս լայն

[13] Виленский П.Л., Оценка эффективности инвестиционных проектов. Теория и практика, М., Дело, 2001, с. 68.

զարգացում չի ստանում: Ռաումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք երկրների օրենսդրությունը պահանջում է վարձակալական հարաբերություններին մասնակից կազմակերպությունների գործունեության պարտադիր ապահովագրություն[14]:

ՀՀ-ում կազմակերպությունների վարձակալության համալիր ապահովագրության ինստիտուտի բացակայությունն առաջին հերթին պայմանավորված է օրենսդրական իրավիճակով: Թեպետ 2004 թվականից հանրապետությունում գործում են «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, իսկ 2008-ից՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը, սակայն ապահովագրական գործընթացն առհասարակ դանդաղում է, իսկ մասնավորապես վարձակալության ապահովագրությունը դեռևս չի զարգացել:

Ապահովագրությունն օրենսդրությամբ և ապահովագրական պայմանագրով սահմանված կարգով ապահովագրական պատահարների տեղի ունենալու հետ կապված ապահովադիրների կամ պայմանագրով նախատեսված այլ անձանց անձնական և գույքային շահերի պաշտպանության նպատակով ապահովագրողի և ապահովադրի միջև հաստատված հարաբերություն է: Այն կարգավորում է ապահովագրողների ձևավորած ապահովագրական պահուստների հաշվին ապահովադիրներին վճարումները:

Սակայն փորձը ցույց է տալիս, որ մինչ այժմ մեր հանրապետությունում տնտեսավարողներն ակտիվություն չեն դրսևորում վարձակալական ապահովագրության նկատմամբ: Պատշաճ ուշադրություն չդարձնելով վարձակալության՝ գործարարությունից բխող կորուստների առաջացման հավանականությանը, մեր հանրապետությունում կազմակերպություններին օրենսդրորեն դեռևս չի պարտադրվում ապահովագրվել վարձակալական հարաբերությունների խզման վնասներից: Մյուս կողմից, կազմակերպություններն իրենց հերթին չեն դրսևորվում առանձնակի շահագրգռվածություն վարձակալության ապահովագրության նկատմամբ, քանի որ ապահովագրական վճարները լրացուցիչ ֆինանսական բեռ են և էլ ավելի են խորացնում տնտեսական գործունեության ֆինանսական լարվածությունը: ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից ձեռնարկվող լիզինգի ժա-

[14] World Leasing Yearbook, 2005, 26th ed/ Ed. by Paul L., Euro money Institutional Investor Publication, 2005, page 68.

մանակ հիմնականում ապահովագրվում են վարձատրվող ակտիվը (գույքային ապահովագրություն) և դրա տեխնիկական շահագործման ռիսկերը, որոնց բեռն ընկնում է վարձակալի վրա: Ֆինանսական ռիսկերի ապահովագրում կատարվում է այն ժամանակ, երբ վարձատուն վարկային ռեսուրսներ է ներգրավում միջազգային կազմակերպություններից:

ՀՀ-ում ապահովագրական պայմանագրերի գերակշիռ մասն առնչվում է ցամաքային տրանսպորտի շահագործմանը (տե՛ս գծապատկեր 1.8), իսկ հավաքագրված ապահովագրավճարներինը՝ օդային տրանսպորտի շահագործմանը: Փաստորեն, լիզինգային ֆինանսական գործարքների խզման կորոատների, գույքին հասցված վնասների, ընդհանուր պատասխանատվության խոսափոխից ռիսկերի ապահովագրական մուտքերն աննշան են՝ պայմանավորված ոչ միայն ՀՀ-ում վարձակալական գործարքների դեռևս սահմանափակ շրջանակներով, այլև օրենսդրական դրույթների բարեփոխման անհրաժեշտությամբ:



Գծապատկեր 1.8

Ապահովագրական պայմանագրերի քանակը ՀՀ-ում 2009 թ.[15]

[15] Կազմված է՝ «ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագիր» 2009 թ., էջ 92-ի տվյալներով:

Վարձակալության ապահովագրության գործընթացի զարգացման խոչընդոտ են նաև օրենսդրությամբ սահմանված՝ ապահովագրական կառույցներին առաջադրվող պայմանները: Ապահովագրողների ընդհանուր կապիտալի նվազագույն չափը, ըստ գործող օրենսդրության, չպետք է պակաս լինի 1.000.000 հազ. դրամից, որը կարող է ավելացվել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից, բայց ոչ հաճախ, քան տարին մեկ անգամ[16]: Բացի դրանից ֆինանսական կայունություն, վճարունակություն ու իրացվելիություն ապահովելու համար ապահովագրողները պարտավոր են պահպանել ապահովագրական ընկերությունների հիմնական տնտեսական նորմատիվները (կապիտալի համարժեքություն, իրացվելիություն, ռիսկայնություն և այլն), որոնք բավական կոշտ են և չեն խթանում ապահովագրական ընկերությունների լայնածավալ զարգացումը:



Գծապատկեր 1.9

-ում հավաքագրված ապահովագրավճարների կառուցվածքը 2009 թ.՝ ըստ ապահովագրության տեսակների[17]

[16] Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ ՕՐԵՆՔ, 2008 թ., հոդված 60, կետ 1:

[17] Կազմված է՝ «ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագիր», 2009 թ., էջ 93-ի տվյալներով:

Ապահովագրական կազմակերպությունների ֆինանսական լարվածությունն էլ ավելի է խորանում, քանի որ գործող օրենսդրությամբ պարտադրվում է կնքված ապահովագրական պայմանագրերի գծով ձևավորել ապահովագրական պահուստներ, որոնք պետք է լինեն հուսալի և ապահով բոլոր ապագա վճարումների համար: Ապահովագրական պահուստների տեսակները, ինչպես նաև դրանց ձևավորման և տեղաբաշխման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը:

Ապահովագրական պահուստները տեղաբաշխվում են օրենսդրությամբ նախատեսած ներդրումներում՝ առաջնորդվելով ապահովադիրների (ապահովագրված անձանց և շահառուների) շահերի պաշտպանության, ռիսկի դիվերսիֆիկացիայի և նվազեցման, ինչպես նաև կազմակերպության ֆինանսական կայունության, վճարունակության և իրացվելիության ապահովման սկզբունքներով:

Առաջարկում ենք պոտենցիալ վարձակալական հարաբերություններին մասնակից կազմակերպությունների համար կիրառել պատասխանատվության պարտադիր ապահովագրություն: Պատասխանատվության ապահովագրությունը ապահովադրի կամ ապահովագրված անձի կողմից երրորդ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի ապահովագրական հատուցման կամ ապահովագրական գումարի վճարման հետ (պատասխանատվության ապահովագրության տեսակներ) կապված գործունեություն է[18]: Մինչդեռ ընդհանուր պատասխանատվությամբ ապահովագրությունը մեր հանրապետությունում դեռևս չի զարգանում, և 2009 թ. այդ համատեքստում կնքվել է 255 պայմանագիր՝ ընդհանուր ապահովագրավճարներում կազմելով ընդամենը 4% (տե՛ս գծապատկեր 1.9), իսկ պատասխանատվությամբ ապահովագրության հատուցման գծով վիճակագրություն չի կատարվում: Ապահովագրական հատուցումը դրամական արտահայտությամբ գումար է, որն ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովադրին կամ շահառուին՝ պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած փաստացի վնասների կամ կորուստների դիմաց:

[18] «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը, 2008 թ., հոդված 12:

Վարձակալության ապահովագրության կիրառման ոլորտում, մեր կարծիքով, հիմնախնդիր է նաև ապահովագրական գումարի և սակագնի որոշումը: Ապահովագրական գումարը, ինչպես նաև ապահովագրական ծածկույթը, կամավոր ապահովագրության դեպքում ապահովադրի և ապահովագրողի համաձայնությամբ է որոշվում: Պարտադիր ապահովագրության դեպքում այն ներկայանում է օրենքով սահմանված դրամական արտահայտությամբ, որի սահմաններում ապահովագրվում է ապահովագրության օբյեկտը: Ապահովագրական սակագինը սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափն է, որը կամավոր ապահովագրության տեսակների համար որոշվում է ապահովագրողի կողմից, իսկ պարտադիր ապահովագրության տեսակների համար սահմանվում է օրենքով:

Հիմնավորված է այն ապահովագրական սակագինը, որը հաշվարկված է ակտուարային մեթոդներին համապատասխան՝ վիճակագրական տվյալների հիման վրա, որոնցից են՝

ա) պաշտոնական վիճակագրական տվյալները,
բ) Հայաստանի Հանրապետության տարածքում մասնագիտացված միջազգային և այլ կազմակերպությունների իրականացրած վիճակագրական հետազոտությունների արդյունքում արձանագրված տվյալները,
գ) Հայաստանի Հանրապետության տարածքում տվյալ ապահովագրության տեսակի գծով ոչ պակաս, քան երեք տարի ապահովագրական գործունեություն իրականացրած ապահովագրողների գործունեության արդյունքում արձանագրված վիճակագրական տվյալները,
դ) հրատարակված և լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հավանության արժանացած այլ տվյալները:

Համաձայն գործող օրենսդրության, ապահովագրական շուկայում չհիմնավորված ցածր ապահովագրական սակագների կիրառումը բացառելու և ապահովագրողների ֆինանսական կայունությունն ապահովելու նպատակով ապահովագրողները պարտավոր են լիազորված պետական կառավարման մարմին պարբերաբար ներկայացնել հաշվետվություն՝ ապահովագրության յուրաքանչյուր տեսակի գծով կի-

ռառվող ապահովագրական սակագների մասին՝ համապատասխան հիմնավորումներով:

Վարձակալության ոլորտում ապահովագրության ծածկույթի որոշումը և դրանից բխող ապահովագրական սակագների հաշվարկումը բարդանում են, քանի որ, ի տարբերություն ապահովագրության մյուս ոլորտների, գործարարության արդյունքում լիզինգային ռիսկերի ծագման հավանականությունը և դրանց վնասների որոշումը դժվարություն են ներկայացնում: Միևնույն ժամանակ, պաշտոնական վիճակագրությունը գործարարության ընթացքում ծագող լիզինգային կորուստների մասին այնքան էլ հարուստ տեղեկատվություն չունի, քանի որ այն կամ չի արձանագրվում, կամ էլ հիմնավորապես չի հաշվառվում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում լիզինգային գործառույթների ապահովագրական բեռը անհավասարաչափ է բաշխվում վարձակալության մասնակիցների միջև: Այսպես՝ վարձակալը հիմնական ապահովադիրն է, որին բաժին է ընկնում լիզինգային համակարգի ապահովագրավճարների շուրջ 80%-ը՝ այն էլ գույքի ապահովագրության գծով: Բանկերը և վարձատուները վարձակալության ֆինանսավորմանը ուղղված վարկային միջոցների դիմաց ապահովագրավճարներ են կատարում, որոնք չեն գերազանցում վարձակալության ապահովագրական բեռի 20%-ը: Իսկ ֆորս մաժորային իրադարձությունների կամ վարձակալի բիզնես-ծրագրի ապահովագրություն չի իրականացվում (տե՛ս գծապատկեր 1.10):

Մեր կարծիքով, պետք է կատարվի վարձակալության կազմակերպման երաշխիքների ապահովագրական բեռի վերաբաշխում այնպես, որ լիզինգին մասնակից բոլոր կողմերը համարժեք երաշխիքներ ունենան վարձակալության կորուստների փոխհատուցման պարագայում: Արդարացի չենք համարում բիզնես-ծրագրի ձախողման հետևանքով վարձակալության կորուստների փոխհատուցման ողջ բեռը թողնել վարձակալի վրա, քանի որ այդ ուղղությամբ մեր հանրապետությունում ապահովագրություն չի իրականացվում:



Գծապատկեր 1.10

Լիզինգային գործարքների ապահովագրական բեռի կառուցվածքը ՀՀ-ում

Վարձակալական ապահովագրական պոլիսներ կազմելիս վարձակալն ապահովագրվում է միայն ակտիվի պահպանման և շահագործման ուղղությամբ՝ ընդ որում, հանդես գալով որպես ապահովադիր և կատարելով ապահովագրավճարներ: Վարձակալն այլևս ցանկանում ունենալ ապահովագրական լիարժեք ծածկույթ, որը երաշխիքներ կստեղծի իր իսկ բիզնես-ծրագրի խափանման ռիսկային կորուստների փոխհատուցման գծով, քանի որ առանց այն էլ գույքի ապահովագրությունը թանկացնում է լիզինգը: Իսկ բիզնես-ծրագրի շահագործման խափանումը կախված չէ միայն վարձակալի գործունեությունից, այլ կարող է տեղի ունենալ նաև շուկայական գների տատանման, շուկայում նոր մրցակիցների գործունեության, գնորդների սնանկացման, սպառողի վարքագծի փոփոխման և վարձակալի կողմից թույլատրված ապրանքների նկատմամբ պահանջարկի կտրուկ նվազման

պատճառով:

Հետևաբար, տնտեսապես արդյունավետ ենք համարում լիզինգի կողմերի միջև ապահովագրական բեռի համաչափ վերաբաշխումը, որն առաջարկում ենք իրականացնել պետության կողմից վարվող հարկային խթանիչ քաղաքականության ճանապարհով: Լիզինգային գործարքների պարագայում ակտիվի արտադրողը (մատակարարը), ապահովագրելով վարձատուին վաճառվող իր արտադրանքը, շահութահարկի հաշվարկման ժամանակ համախառն եկամտից կատարվող նվազեցումներում ապահովագրական վճարների չափը կարող է բազմապատկել ածեցնող գործակցով, եթե օրենքը թույլ է տալիս, դրանով իսկ խթանել լիզինգին ուղղված արտադրության միջոցների վաճառքի ծավալները: Համախառն եկամտից նվազեցման նույն մեխանիզմն ենք առաջարկում նաև վարձատուի համար, որի ապահովագրական վճարները շահութահարկի հաշվարկներում, ըստ օրենքի, եթե նախատեսվի բազմապատիկ ներկայացնել, ապա էապես կավելանան լիզինգային գործարքները:

Այս ճանապարհով վարձակալական հարաբերություններում ձևավորվող ապահովագրական վճարների «ծանրության կենտրոնն» այլևս վարձակալի մոտ չի լինի, քանի որ ֆորս-մաժորային իրադարձությունների, բիզնես-ծրագրի խափանումից ռիսկերի ապահովագրության որոշակի բաժնեմաս կփոխանցվի վարձակալին և վարձակալության տրվող ակտիվի արտադրողին (մատակարարին): Միջազգային փորձը ցույց է տալիս, որ վարձակալության կողմերը ապահովագրությամբ ձեռք բերվող տնտեսական երաշխիքների բաշխման հետևյալ օպտիմալ հարաբերակցությամբ են մասնակցում լիզինգային գործարքներին. վարձակալվող ակտիվի մատակարար՝ 20%, վարձակալությունը ֆինանսավորող բանկեր՝ 15%, վարձատու՝ 25%, վարձակալ՝ 40%[19]: Իսկ մեր հանրապետությունում վարձակալության կարևորագույն կողմ հանդիսացող ակտիվի արտադրողն ընդհանրապես չի կրում լիզինգի ապահովագրության բեռը և ֆորս-մաժորային իրավիճակներում ռիսկային կորուստների պատասխանատվության երաշխավոր չէ:

Վարձակալության ծառայությունների կազմակերպման ապահովագրական երաշխիքների տրամադրման նման համամասնությունը կձևավորի մի շարք տնտեսական առավելություններ.

առաջին՝ վարձակալության մասնակիցների միջև ապահովագրական բեռի վերաբաշխումը կկատարվի այնպես, որ լիզինգի ձախողումից կորուստների փոխհատուցման ընդհանուր պատասխանատվության դաշտ կստեղծվի «ակտիվի մատակարար-վարձակալ-վարձատու-բանկ» շղթայում, և դրանով իսկ՝ վարձակալի կողմից ռիսկային կորուստների փոխհատուցման պատասխանատվության բեռի բաժնեմաս կփոխանցվի լիզինգի մյուս մասնակիցներին:

երկրորդ՝ լիզինգի բոլոր մասնակիցների համար շահութահարկի արտոնություններ սահմանելով, կբարձրանա պետության կողմից վարձակալական գործարքների խթանման և կարգավորման դերը:

երրորդ՝ վարձակալության մասնակիցների միջև ապահովագրական բեռը համաչափ վերաբաշխելիս կբարձրանա լիզինգի զարգացման սուբյեկտիվ գործոնների դերը, քանի որ լիզինգային գործարքների խափանման դեպքում ակտիվի մատակարարը կստանա երաշխիքներ՝ վարձակալին վաճառած ակտիվի կորուստների փոխհատուցման գծով և դրանով իսկ արտադրանքի իրացման ծավալները կփորձի ուղղորդել դեպի վարձակալության շուկա:

չորրորդ՝ վարձատուն հնարավորություն կստանա բարեփոխված ապահովագրական պոլիսներով ստեղծելու լիզինգի ապահովագրման լիարժեք ծածկույթ (կազմակերպչական, ֆինանսական, շուկայական, սոցիալ-քաղաքական), քանի որ ապահովագրավճարների բեռը չի ձևավորվի վարձակալի մոտ, և երաշխիքների սահմանման առումով լիզինգը երկուստեք շահավետ կդառնա:

[19] Lease and Hire Purchase Contracts, UK GAAP, 7th ed., L.: Erns and Young, 2006, page 126.

1.3 Ֆինանսական վարձակալության ծառայությունների շուկայի բնութագրումը

Լիզինգն իր տնտեսական բովանդակությամբ համահունչ է վարկավորմանը, քանի որ գործում է վերադարձելիության, վճարելիության, ժամկետայնության սկզբունքներով: Դրան զուգահեռ, լիզինգն իր բարդությամբ, մեծաքանակ մասնակիցների ընդգրկվածությամբ, բազմաբնույթ շուկայական ենթակառուցվածքներով հանդերձ, վարկավորման նկատմամբ ունի մի շարք առավելություններ:

Կազմակերպչական առումով, լիզինգի ժամանակ վարձակալը, դիմելով վարձատուին, առավել քիչ ժամանակ և ռեսուրսներ է ծախսում ակտիվի ձեռք բերման համար, քան դա կարվեր վարկավորման ճանապարհով ակտիվը ձեռք բերելիս: Լիզինգային կազմակերպությունները առավել արհեստավարժ են հիմնական միջոցների մատակարարների հետ բանակցություններ վարելիս և հնարավորինս ցածր գներով սարքավորումներ ձեռք բերելիս: Նույնը վերաբերում է նաև վարձակալության ֆինանսական ռեսուրսների ներգրավման գործընթացին: Լիզինգային կազմակերպությունները առավել հնարավորություններ ունեն «էժան փողեր» ներգրավելու բանկերից, հատկապես, երբ դրանց դուստր ընկերություններն են:[20]

Բացի դրանից, ֆինանսական վարձակալության ժամանակ լիզինգային կազմակերպություններն են հիմնականում կատարում ակտիվի ձեռք բերման իրավաբանական ձևակերպումները, կազմակերպում ապահովագրական պոլիսների ստացումը, վարձակալած հիմնական միջոցի մոնտաժումը, աշխատանքի մեկնարկային ապահովումը, որոնք վարձակալի համար ոչ միայն աշխատատար գործառույթներ են, այլև ծախսատար են:

Լիզինգային գործառնությունների ժամանակ տրամադրվում են նաև որոշ հարկային արտոնություններ, որոնք ֆինանսական վարձակալությունը տնտեսապես շահավետ են դարձնում վարկային փոխատվությունների նկատմամբ: Վարձակալության ժամանակ տնտեսվում են նաև ակտիվի շահագործման և սպասարկման այն ծախսերը, որոնք ըստ պայմանագրի, կատարվում են վարձատուի կողմից:

[20] Латышева О., Матвеев А, Панова М. и др. Темпы хорошо. А качество — лучше! Экономика и жизнь. 2007. № 16. с. 2-3.

Վարձակալությանը հատուկ են նաև ֆինանսական ներդրումային սխեմաների ընտրության լայն շրջանակը և ճկունությունը: Լիզինգը հնարավոր է կազմակերպել տարբեր ձևերով, վճարային փոխանցումների հաշվարկման բազմազան մեխանիզմներով, ինչը հատուկ չէ վարկավորմանը:

Լիզինգի պարագայում, ի տարբերություն վարկավորման, ֆինանսական կորուստների ռիսկերը նույնպես առավել համաչափ են վերաբաշխվում գործարքի մասնակիցների միջև: Ի տարբերություն վարկավորման, լիզինգի գրավադրման պայմաններն առավել մեղմ են, քանի որ վարձատուն, պահպանելով ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքը, փոխանցում է միայն հիմնական միջոցի օգտագործման իրավունքը: Հետևաբար, վարձակալության խափանման պարագայում սնանկացման ռիսկն առավել փոքր է, քանի որ ակտիվը վերադարձվում է վարձատուին և դրա փոխարեն գրավադրման իրացմամբ վարձակալի մոտ ֆինանսական լուրջ լարվածություն չի ձևավորվում, իսկ վարձակալի անվճարունակությունը միևնույն ժամանակ հիմք չի հանդիսանում սնանկացման գործընթացի համար:[21]

Բանկային վարկավորման նկատմամբ լիզինգի տնտեսական նպատակահարմարությունը, խոշոր հաշվով, այն է, որ խիստ նպատակային և հասցեագրված ֆինանսական ներդրմամբ վարձակալման հանձնած սարքավորման միջոցով վարձակալի համար ապահովվում են դրամական լրացուցիչ ներհոսքեր: Դրանք ձևավորվում են նորամուծության ներդրման արդյունքում՝ թողարկման ծավալների ավելացման, արտադրանքի որակի հաշվին՝ իրացման գների բարձրացման, արտադրական ծախսերի կրճատման շնորհիվ: Իսկ վարկային ռեսուրսները չունեն խիստ հասցեագրում և կարող են օգտագործվել նաև շրջանառու միջոցների համալրման, վճարունակության կարգավորման ուղղություններով:[22]

Լիզինգը վարկավորումից տարբերվում է ոչ միայն գործառույթների տնտեսական շահավետության տեսանկյունից, այլև վարկային շուկայի նկատմամբ վարձակալության շուկայի գործունեության բարդության աստիճանով:

[21] Андреева М., Дубровина Н., Назарова Л., Банковский лизинг. Деньги на оборудование, Экономика и жизнь, 2003, #5, с. 6.

[22] Лапыгин Ю.Н., Сокольских Е.В., Лизинг, М., Академический проект, 2005, с. 185.

Վարձակալության շուկան, որպես տնտեսության ինքնուրույն և կարևորագույն ենթակառուցվածքային ոլորտ, գործում է իրեն հատուկ օրենքներով: Այն գնորդների և վաճառողների միջև ապրանքների փոխանակման կամ ծառայությունների մատուցման տնտեսական փոխշահավետ հարաբերություններ է կարգավորում: Վարձակալության շուկայի հիմնական մասնակիցներն են վարձակալները, վարձատուները և ակտիվի մատակարարները, այսինքն՝ լիզինգի ուղղակի մասնակիցները: Այս համակարգի օրգանական մասն է կազմում ինչպես ֆինանսական շուկան, որտեղ վարձակալության ոլորտում բանկերն ու վարկային կազմակերպությունները ներդրումներ են կատարում, այնպես էլ վարձակալի մասնագիտական գործունեության հիմնական արդյունքների իրացման շուկան: Այս առումով, վարձակալության շուկան հանդես է գալիս իր առանձնահատուկ կառուցվածքով և դրա անուղղակի մասնակիցներն են երաշխավորները, բանկերը, ապահովագրական ընկերությունները և վերջնական սպառողները:

Շուկայի կառուցվածքը բնութագրում են նրա առանձին տարրերի դասավորվածությունը և գործունեության տեսակարար կշիռը շուկայական միջավայրի ամբողջական համակարգում:[23] Ըստ օբյեկտների՝ վարձակալական շուկայի կառուցվածքը հետևյալն է.

1. սպառման շուկա, որտեղ վարձակալը իրացնում է լիզինգով ձեռք բերված սարքավորումներով թողարկված պատրաստի արտադրանքը,
2. աշխատուժի շուկա, որն ապահովում է լիզինգային հարաբերությունները մարդկային կապիտալով,
3. արտադրության միջոցների շուկա, որտեղ կատարվում է վարձակալվող ակտիվների առքուվաճառք,
4. ֆինանսական շուկա, որն ապահովում է ֆինանսական վարձակալությունը դրամական ռեսուրսներով, վարկերով, արժեթղթերի թողարկումով, գրավադրումներով:

Նախաձգնաժամային միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վարձակալության շուկայի առանձին տարրերը լիզինգի գործառույթների ընդհանուր շուկայական միջավայրում, որպես կանոն, ակտիվության տարբեր աստիճան են ցուցաբերում (տե՛ս գծապատկեր 1.11): Այսինքն՝ վարձակալական հարաբերությունների մեկնարկից մինչև ավարտը առավել ակտիվ է գործում ֆինանսական շուկան, որը դրամական ներդրումներ է ապահովում լիզինգի մեկնարկային ժամանակահատվածում, իսկ այնուհետև կարգավորում է վարձավճարների հոսքերը մի քանի տարվա կտրվածքով:

[23] Экономическая теория, под редакцией Журавлевой Г.П. и др. Российская экономическая академия им. Пленанова, М., 2000 г., с. 108.



Գծապատկեր 1.11

Վարձակալության շուկայի կառուցվածքային սեգմենտավորումը՝ ըստ առանձին տարրերի ակտիվության աստիճանի[24]

Վարձակալական հարաբերությունները դիտարկելիս կարևորվում է նաև շուկայի ենթակառուցվածքի ուսումնասիրությունը: Շուկայի ենթակառուցվածքը հանդես է գալիս որպես կազմակերպչահիրավական ձևերի համախումբ, որը նպաստում է առքուվաճառքի, մատուցվող ծառայությունների անխափան իրականացմանը և շուկայական գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

[24] Финансовая аренда (лизинг) в России. Обзор рынка 2005-2006, М., Международная финансовая корпорация, 2006, с. 81.

Վարձակալության շուկայի ենթակառուցվածքի գործառույթները հիմնականում կրում են իրավաբանական, միջնորդային, կազմակերպչական, խորհրդատվական բնույթ (տե՛ս գծապատկեր 1.12):

Վարձակալության շուկայի ենթակառուցվածքը ծառայությունների մատուցման և իրացման գործառույթներ ապահովող տարաբնույթ կազմակերպչաիրավական օղակների համախումբն է, որը կատարում է առավելապես միջնորդական գործառույթներ:

Դիստրիբյոտորները, որպես անկախ կազմակերպություններ, միջնորդավորում են վարձատուի և ակտիվի մատակարարի (արտադրողի) գործունեությունը՝ ուսումնասիրելով շուկան, կատարելով լիզինգին առնչվող ակտիվների մեծաքանակ գնումներ, վարձակալության շուկայում հանդես գալով իրենց գնային առաջարկներով:

Դիլերները լիզինգի նպատակով ակտիվների համեմատաբար փոքր ծավալի գնումներ են կատարում և համագործակցում են ինչպես վարձատուի հետ՝ առաջարկելով փոխշահավետ առքուվաճառքի գին և գովազդային ծառայություններ, այնպես էլ վարձակալի հետ՝ կատարելով լիզինգի տեխսպասարկում:

Բրոկերները սոսկ միջնորդ են «ակտիվի մատակարարում-վարձատու-վարձակալ-բանկ» շղթայում և միջնորդավճար ստանալով ծառայության դիմաց, տնտեսական ռիսկերի փոխհատուցման պատասխանատվություն չեն կրում:

Վարձակալության շուկայի ակտիվացման գործընթացում որոշիչ դեր են խաղում նաև կոնսիգնատորները, որոնք արտադրողներից կոնսիգնացիոն հիմունքներով ի պահ են վերցնում ակտիվ (առանց սեփականության իրավունքի փոխանցման) և այնուհետև վարձակալության շուկայում վարձակալի հետ վերջնականորեն բանակցելուց հետո միայն կազմակերպում են ակտիվի առքուվաճառք՝ ստանալով կոմիսիոն վճարներ:

Կոմիվոյաժորները, լրացնելով կոնսիգնատորների գործառույթները, վարձատուի համար իրականացնում են նաև վարձակալած ակտիվի մոնտաժման և շահագործման մեկնարկային աշխատանքներ[25]:

[25] Downes J., Goodman J.E., Finance and Investment Handbook, 5th ed., N.Y., Barron`s Educational Series, 1999, page 212.



վարձակալության ուղղակի մասնակիցների գործառույթների շուկա
վարձակալության անուղղակի մասնակիցների գործառույթների շուկա
վարձակալության միջնորդային գործառույթների շուկա

Գծապատկեր 1.12

Վարձակալության շուկայի ենթակառուցվածքի գործունեության մեխանիզմը

Վարձակալության շուկայի ուսումնասիրության մեջ կարևորվում է շուկայական գործող մեխանիզմի վերլուծությունը: Շուկայական մեխանիզմը ներկայացվում է որպես այդ միջավայրի հիմնական տարրերի՝ առաջարկի, պահանջարկի, գնագոյացման, մրցակցության գործառույթների ամբողջություն:



Գծապատկեր 1.13

Լիզինգի և վարկավորման գնագոյացման կառուցվածքը[26]

Վարկային շուկայի համեմատությամբ, վարձակալության շուկայում գնագոյացումն ունի որոշակի առանձնահատկություններ՝ կապված շուկայի ենթակառուցվածքն ապահովող ծառայությունների մատուցման և իրացման կազմակերպչահրավական տարաբնույթ գործառույթների հետ: Նախ, ի տարբերություն վարկային շուկայի, վարձակալության շուկայում գերակշռում են միջնորդային գործառույթները (տե՛ս գծապատկեր 1.12), որոնք որոշակի դեր են խաղում լիզինգի գնագոյացման կառուցվածքում (տե՛ս գծապատկեր 1.13):

[26] Lease and Hire Purchase Contracts, UK GAAP, 7th ed., L.: Ernst and Young, 2006, page 65-66.

Եթե ֆինանսական շուկան հավասարակշռված է, երկարատև վարկավորման և լիզինգի գործառույթներն ապահովում են 15-20% շահութաբերություն, ապա լիզինգի գնային կառուցվածքում միջնորդավճարները կազմում են շուրջ 10%՝ վարկավորման 2%-ի դիմաց: Նույն կառուցվածքային հարաբերակցությունն ունեն սպասարկման ծախսերը: Ուստի լիզինգային կազմակերպությունները պետք է ձգտեն «էժան փողեր» ձեռք բերել՝ ֆինանսական շուկայում մրցունակ լինելու համար:

Բացի նշվածից, ֆինանսական շուկայում ֆինանսական վարձակալությունը և վարկավորումը հանդես են գալիս որպես միմյանց փոխարինող ծառայություններ, և մեկի ծավալների կրճատումն ավելացնում է մյուսի պահանջարկը և գինը: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրելու լիզինգի պահանջարկի առաձգականության աստիճանը: Ֆինանսական շուկայում վարձակալության ծառայությունների ծավալը (Q) և գինը (P) ուղղակիորեն ազդում են լիզինգի պահանջարկի (D) վրա: Ընդ որում, լիզինգային ծառայությունների անփոփոխ առաջարկի (S) պայմաններում վարձակալության պահանջարկի բարձրացմամբ (D_1) զուգահեռաբար աճում է այդ ծառայության գինը (ΔP), և հակառակը (տե՛ս գծապատկեր 1.14):



Գծապատկեր 1.14

Պահանջարկի և գնի փոխկապակցվածությունը լիզինգի հաստատուն ծավալների դեպքում

Գործնականում՝ լիզինգի առաջարկը ֆինանսական շուկայում անփոփոխ չէ և աճման միտում ունի, քանի որ գիտատեխնիկական առաջընթացին զուգահեռ հիմնական միջոցների բարոյական մաշվածության արագացումը, խոշոր ներդրումներ պահանջող նորամուծական արդյունքների ինտենսիվ կիրառման անհրաժեշտությունը գործարարներին ստիպում են ոչ թե վարկավորման, այլ առավել մատչելի ճանապարհով՝ վարձակալության միջոցով լուծելու տեխնիկական պարկի նորացման հիմնախնդիրը: Ոատի վարձակալության շուկայում վարձատուները հանդես են գալիս ակտիվների տրամադրման ծառայությունների առաջարկով (S), որը ձևավորում է լիզինգի հավասարակշռված գին (տե՛ս գծապատկեր 1.15, Q_0 կետ):



Գծապատկեր 1.15

Վարձակալության գնի ձևավորումը լիզինգի պահանջարկի և առաջարկի հավասարակշռման դեպքում

Վարձակալության պահանջարկի աճի հետ մեկտեղ (D_1 կոր) ֆինանսական շուկայում աճում է նաև լիզինգային ծառայությունների առաջարկը (S, կոր), որը հանգեցնում է հավասարակշռված նոր գնի

ձևավորմանը (P_1) և ծառայությունների հավելյալ ծավալների (Q_1) մատուցմանը:

Այս դեպքում ծառայությունների առաձգականությունն ըստ վարձակալության գնի որոշվում է.

$$E = \frac{\text{Q փոփոխության \%}}{\text{P փոփոխության \%}} \quad \text{կամ} \quad E - \frac{\Delta Q/Q}{\Delta P/P}$$

Փաստորեն, E գործակիցը ցույց է տալիս, թե 1 % վարձակալության գնի փոփոխությամբ ֆինանսական շուկայում ինչ տոկոսով է փոխվում լիզինգային ծառայությունների ծավալը:

Ֆինանսական շուկայում վարձակալության մրցակցային դիրքերի ապահովման առաջնահերթ գրավականը երկարատև վարկավորման նկատմամբ լիզինգի ողջամիտ գների սահմանումն է: Վարձատուները, շուկայում գերիշխող դիրք գրավելու նպատակով, պետք է ձգտեն լիզինգի գների ցածր հավելաճով մատուցվող վարձակալության ծառայությունների բարձր հավելաճի, այսինքն՝ առաձգականության բարձր գործակցի (E > 1):

Լիզինգի գնի ձևավորման վրա, բացի վարձակալության շուկայում գնագոյացման կառուցվածքային առանձնահատկություններից (տե՛ս գծապատկեր 1.13), ազդում է նաև ծառայության երկարաժամկետայնության գործոնը: Փաստորեն, վարձատուի և վարձակալի միջև պայմանագիր է կնքվում լիզինգի մեկնարկին՝ սահմանելով վարձակալության գինը՝ «վարձավճարների ծավալ x քանակ» կտրվածքով, իսկ ծառայության դիմաց վերջնական վճարումը կատարվում է գործարքի ավարտին: Այսինքն, ժամանակագրական տեսանկյունից խզում է առաջանում ծառայության գնի սահմանման և «առքուվաճառքի» միջև: Ընդ որում, վարձակալած ակտիվի բարոյական մաշվածության հետևանքով երկարաժամկետ հատվածում մեկնարկած լիզինգի պահանջարկը շուկայում աստիճանաբար ընկնում է՝ D_0 կորից տեղափոխվելով D_2 կոր, նվազեցնելով նաև վարձակալության գինը՝ P_0-ից P_2 կետ (տե՛ս գծապատկեր 1.14): Իր հերթին, վարձակալության ցածր գինն առաջացնում է ծառայությունների պահանջարկի աճ (D_1 կոր), որն այնուհետև ուղեկցվելով բարձր գներով, ֆինանսական շուկայում հանգեցնում է վարձակալության ծառայությունների կրճատման և հավասարակշիռ գնի (P_0) ձևավորման:

Հետևաբար, վարձակալության ողջամիտ գինը ժամանակագրական տեսանկյունից գործնականում ձևավորվում է ոչ թե լիզինգի մեկնարկին կամ ավարտին, այլ ծառայության մատուցման միջնամասում, որը ֆինանսական շուկայում լուրջ մրցակցային հիմնախնդիրներ է առաջացնում վարկավորման նկատմամբ:[27] Այսինքն՝ վարձակալության մեկնարկին պայմանագրով սահմանվող ծառայության գինը պետք է համապատասխանի լիզինգի միջնակետում պահանջարկի և առաջարկի ազդեցությամբ ձևավորվող հավասարակշիռ վիճակին: Եթե այն գերազանցում է ֆինանսական շուկայում առաջարկվող վարկային փոխառությունների գինը, ապա վարձակալը գերադասում է երկարաժամկետ վարկավորումը, այլ ոչ թե լիզինգը:

Ելնելով վերոնշյալից՝ վարձակալության շուկայում լիզինգի կազմակերպման տարբեր մեխանիզմներ են առաջարկվում՝ նպատակ ունենալով բացահայտելու վարձակալության արժեքի կրճատման ռեզերվները: Վերջին տասնամյակում վարձակալության շուկայում երկկողմանի լիզինգի (տե՛ս գծապատկեր 1.4) կազմակերպման ծավալների ավելացման միտում է նկատվում, քանի որ այս պարագայում կրճատվում է վարձակալության միջնորդային և անուղղակի մասնակիցների ծառայությունների շրջանակը (տե՛ս գծապատկեր 1.12):

Վարձակալության արժեքի նվազման խոշոր ռեզերվ է նաև վարձատուի կողմից «էժան փողերով» լիզինգի ֆինանսավորումը: Գործնականում այդ խնդիրը լուծվում է լեվիրիջ լիզինգի ճանապարհով (տե՛ս գծապատկեր 1.6), որն է՝ լիզինգային կազմակերպությունները բաժնետոմսեր են թողարկում և երկարաժամկետ կտրվածքով «էժան փողեր» են վաստակում: Լիզինգի համեմատաբար «էժան ֆինանսավորում» ձեռք է բերվում նաև այն դեպքում, երբ բանկերն են ձևավորում լիզինգային կազմակերպություններ՝ որպես դուստր ձեռնարկություններ: Այս դեպքում լիզինգային կազմակերպությունը «մայր բանկից» արտոնյալ պայմաններով է տնօրինում ֆինանսական միջոցները:

Այսպիսով, վարձակալության շուկան գործում է մի շարք առանձնահատկություններով, որոնք մրցակցային դիրքերի ապահովման նպատակով առաջնահերթություններ են ձևավորում վարձատուների գործունեության ոլորտում.

[27] Комаров В., Первый лизинговый конгресс СНГ, инвестиции в России, 2001, #1 с. 18.

առաջին՝ ֆինանսական շուկայում ֆինանսական վարձակալությունը և վարկավորումը հանդես են գալիս որպես միմյանց փոխարինող ծառայություններ, և մեկի ծավալների կրճատումն ավելացնում է մյուսի պահանջարկն ու գինը: Ոատի վարձատուները պետք է ձգտեն ծառայությունների մատուցման առաձգականության բարձր գործակցի, որպեսզի վարձակալության ծառայությունների հավելաճն առաջանցիկ լինի լիզինգի գնային հավելաճից,

երկրորդ՝ վարձակալության արժեքային կառուցվածքում հնարավորինս պետք է կրճատվեն միջնորդավճարներն ու ապահովագրավճարները, որոնք թանկացնում են լիզինգը: Այդ նպատակով վարձատուները պետք է դիմեն լիզինգի կազմակերպման արդյունավետ մեխանիզմների՝ մասնագիտացման աստիճանի բարձրացմամբ նեղացնելով վարձակալության անուղղակի մասնակիցների գործառույթների և միջնորդային շուկայի գործունեության շրջանակները,

երրորդ՝ լիզինգի գնագոյացումը պետք է իրականացվի ոչ միայն «էժան փողերով» այլև մատակարարներից համեմատաբար ցածր գներով ակտիվների ձեռք բերմամբ, որը ֆինանսական շուկայում վարձակալությունը մրցունակ կդարձնի բանկային վարկավորման նկատմամբ:

ԳԼՈՒԽ II
ԼԻԶԻՆԳԻ ԻՐԱՎԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

2.1 Վարձակալության հարաբերությունների ՀՀ տնտեսահրավական դաշտի վերլուծությունը

Լիզինգը ՀՀ-ում իրականացվում է առևտրային բանկերի, ինչպես նաև վարկային կազմակերպությունների ֆինանսական գործառույթներով՝ սահմանված լիցենզիայի հիման վրա:[28] ՀՀ-ում ներկայումս ֆինանսական վարձակալությամբ զբաղվող կազմակերպությունները փոքրաթիվ են և իրենց գործառույթներով անհամամասնական դիրքեր են գրավել ֆինանսական շուկայում: Այսպես՝ «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպությունը ֆինանսական վարձակալության ծառայությունների տրամադրման առաջատարն է հանրապետությունում: «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ գործում է 2003 թվականից: Կազմակերպության հիմնական գործունեությունը ֆինանսական վարձակալության (լիզինգ) իրականացումն է: Նրան բաժին է ընկնում ՀՀ շուկայում գործող առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող լիզինգային գործառնությունների շուրջ 72 %-ը (տե՛ս գծապատկեր 2.1): Միաժամանակ միայն լիզինգային վարկային կազմակերպությունների ներդրումներում նրա բաժինը գերազանցում է 93 %[29]:

Երկրորդ տեղում է «Ագրոլիզինգ» վարկային կազմակերպությունը: Վերջին երկու տարում լիզինգի կազմակերպման ուղղությամբ զգալի աշխատանքներ են կատարում նաև «ՎՏԲ-Հայաստան Բանկը», ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ և ԱՄԵՐԻԱԲԱՆԿԸ:

Ֆինանսական վարձակալությունը հանրապետությունում առավելապես զարգացած է արդյունաբերության և տրանսպորտի ճյուղերում (տե՛ս գծապատկեր 2.2), սակայն վերջին տարիներին լիզինգի աճ

[28] «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, հոդ. 8 1. կետ, ը) ենթակետ, Եր. 2002 թ.:
«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը, հոդ. 34, կետ ժա) Եր., 1996 թ.:

[29] Տես՝ "Ренкинг кредитных организаций Армении 31.12.2009" N23, 01.02.2010, Информационное Агенство АрмИнфо.

է գրանցվել նաև ագրարային ոլորտում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լիզինգային ծառայություններ մատուցող կազմակերպությունները մեր հանրապետությունում դանդաղ են զարգանում ոչ միայն գործարարների շրջանում ոլորտին առնչվող տեղեկատվության պակասի, այլև ֆինանսական վարձակալության կարգավորման տնտեսահրավական դաշտում դեռևս առկա բացթողումների պատճառով:



Գծապատկեր 2.1[30]

Ֆինանսական վարձակալության գործարքներ իրականացնող կազմակերպությունների գործարքների տեսակարար կշիռը

Վարձակալության իրավաբանական կարգավորման հիմնախնդիրներին երկու մոտեցում է ցուցաբերվում: Վարձակալության իրավական կողմը դիտարկվում է նեղ իմաստով, այսինքն՝ վարձատուի և վարձակալի միջև կնքված պայմանագրի շրջանակներում կամ ընդհակառակը, համապարփակ մոտեցմամբ՝ իրավական գնահատական տալով ոչ միայն լիզինգի ուղղակի, այլ բազմակողմ մասնակիցների փոխկապակցված հարաբերություններին (ակտիվի մատակարարներ,

[30] Կազմված է՝ «Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք», 2009, ԱՎԾ, Երևան, տվյալների հիման վրա:

բանկեր, երաշխավորներ և այլն): Վարձակալության ուղղակի և անուղղակի կողմերի միջև ձևավորող տնտեսահրավական հարաբերությունները անհրաժեշտ է քննարկել համակողմանիորեն, քանի որ օղակներից որևէ մեկի խափանումը կհանգեցնի վարձակալական գործընթացի անհամաչափության և անգամ՝ խզման:



Գծապատկեր 2.2[31]

ՀՀ լիզինգի շուկայի հատվածավորումը

Մասնագիտական գրականության ուսումնասիրման հիման վրա ֆինանսական վարձակալության տնտեսահրավական հարաբերությունների կարգավորման հիմնախնդիրները, ըստ մեզ, կարելի է դասակարգել չորս խմբի (տե՛ս գծապատկեր 2.3): Ի դեպ՝ դրանք դեռևս ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային պրակտիկայում լուծված չեն:

Վարձակալության կարգավորման ՀՀ տնտեսահրավական դաշտում ներկայում գործող փաստաթղթերն են՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը (ընդունված՝ 1998 թվականի մայիսի 5-ին), «Շարժական գույքի կադաստրի վարման, շարժական գույքի գրավի իրավունքի, լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցման մա-

[31] Կազմված է՝ «Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք», 2009, ԱՎԾ, Երևան տվյալների հիման վրա:

ՀՀ օրենքը (ընդունված՝ 2004 թ. մայիսի 11-ին), «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (ընդունված՝ 2002 թ. մայիսի [illegible]-ին), ՀՀ Սահմանադրական դատարանի՝ ԱՊՀ-ում լիզինգային գործունեության ընդլայնման համար բարենպաստ իրավական, տնտեսական և կազմակերպական պայմանների ստեղծման համաձայնագրին ՀՀ միանալու մասին որոշումը (ընդունված՝ 16 հունիսի 2006 թ.):



Գծապատկեր 2.3

Ֆինանսական վարձակալության իրավատնտեսական կարգավորման հիմնախնդիրները

Վարձակալության կարգավորման միջպետական համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է.

- ազգային օրենսդրության շրջանակներում նախատեսել իրավական, ֆինանսական և կազմակերպական բարենպաստ պայմաններ միջպետական լիզինգի զարգացման և լայն կիրառման համար,
- լիզինգային գործունեության բնագավառում ազգային օրենսդրության ներդաշնակեցման և միասնականացման ընթացքում օգտագործել «Լիզինգի մասին» մոդելային օրենքի նորմերը,
- ապահովել միջպետական լիզինգի առարկաների գույքային ան-

ձեռնմխելիությունը՝ ազգային օրենսդրությանը համապատասխան,

- քայլեր ձեռնարկել լիզինգային գործունեության համար՝ տնտեսական պայմանների, հարկման կարգի և մաքսային ձևակերպումների օպտիմալացման ուղղությամբ,
- սատարել միջպետական լիզինգի զարգացմանը, ինչպես նաև վերջինիս ենթակառուցվածքի՝ ինքնաֆինանսավորման սկզբունքներով ձևավորման ապահովմանը,
- աջակցել ԱՊՀ-ում լիզինգային գործունեության վիճակագրական դիտարկումներին, տնտեսավարող սուբյեկտների և այլ շահագրգիռ կազմակերպությունների միջև լիզինգային գործունեության հարցերով տեղեկատվության ազատ փոխանակմանը:[32]

Նախքան միջպետական վերոնշյալ համաձայնագրին միանալը, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով (ՀՀ ՔՕ) արդեն իսկ հանրապետությունում լիզինգի մասին օրենքի ընդունման պահանջ դրվեց,[33] սակայն այն մինչ օրս չի ընդունվել, և այս առումով, կարծում ենք, վարձակալության կարգավորման իրավական դաշտը բարելավման կարիք ունի:

Նախ՝ ՀՀ գործող օրենսդրական դաշտը լիարժեքորեն չի սահմանում լիզինգը: ՀՀ ՔՕ-ով վարձակալություն է դիտվում այն գործարքը, ըստ որի՝ վարձատուն պայմանագրով պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:[34] Ընդ որում, վարձակալությունը դասակարգվում է ըստ վարձույթի և լիզինգի՝ ելնելով վարձակալի կողմից ակտիվի օգտագործման տնտեսական բնույթի նկատառումներից:

Այսպես՝ վարձույթի պայմանագրով, որպես մշտական ձեռնարկատիրական գործունեություն, գույքը վարձակալության հանձնող վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել շարժական գույքը: Վարձույթի պայմանագրով տրամադրված գույքն օգտագործվում է սպառողական նպատակներով, եթե այլ բան նախատեսված

[32] ՀՀ Սահմանադրական դատարանի՝ ԱՊՀ-ում լիզինգային գործունեության ընդլայնման համար բարենպաստ իրավական, տնտեսական և կազմակերպական պայմանների ստեղծման համաձայնագրին ՀՀ միանալու մասին որոշում, 2006 թ.:

[33] ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդ. 677, 4-րդ կետ, Եր., 1998 թ.:

[34] Նույն տեղում, հոդ. 606, Եր., 1998 թ.:

չէ պայմանագրով կամ չի բխում պարտավորության էությունից:[35] Իսկ համաձայն ՀՀ ՔՕ հոդ. 677-ի՝ վարձատուն լիզինգի պայմանագրով պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշված վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը՝ ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար: Այդ դեպքում վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության առարկայի և վաճառողի ընտրության համար:

Մեր կարծիքով, վարձակալության սահմանումը տնտեսական նպատակայնության առումով լիարժեքորեն ներկայացված չէ նաև հաշվապահական հաշվառման ստանդարտներով: Այսպես՝ ՀՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտում նշվում է, որ վարձակալությունը համաձայնագիր է, որով վարձատուն վճարի կամ վճարների շարքի դիմաց համաձայնեցված ժամկետի ընթացքում վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման իրավունքը: Իսկ ֆինանսական վարձակալության դեպքում վարձակալին է փոխանցում ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Սեփականության իրավունքը կարող է ի վերջո փոխանցվել կամ չփոխանցվել:[36]

Վարձակալության վերոնշյալ սահմանումներում բացակայում են լիզինգին հատուկ հետևյալ հատկանիշները.

- լիզինգը ձեռնարկատիրական ոլորտ է, այն էլ՝ ոչ թե միայն կողմանի, այլ նրա բոլոր մասնակիցների համար,
- լիզինգը կառուցվում է առնվազն երեք տնտեսատիրական հարաբերությունների շրջանակում՝ վարձակալական, ներդրումային, առևտրային,
- լիզինգի առարկան միայն գույքը չէ, այլ տնտեսական ակտիվը, որը տնտեսական օգուտների ներուժը է ապահովում վարձակալության բոլոր մասնակիցների համար:

Համաձայն ՀՀ ՔՕ-ի հոդ. 608-ի՝ վարձակալության կարող են հանձնվել հողամասեր և մեկուսի բնական այլ օբյեկտներ, շենքեր, շինություններ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և այլ գույք, որոնք օգտագործման ընթացքում չեն կորցնում իրենց բնական հատկությունները (չսպառվող գույք): Սակայն, կարծում ենք, որ լիզին-

[35] ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդ. 629:

[36] ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», կետ 4:

գի օբյեկտը պետք է առավել ընդգրկուն շրջանակներ ունենա՝ ներառելով կազմակերպության բոլոր ակտիվները: Ի վերջո, լիզինգի նպատակը ձեռնարկատիրական գործունեություն ծավալելն ու տնտեսական օգուտների ստացումն է, որը գործարարը կարող է ապահովել ինչպես չսպառվող գույքից, այնպես էլ՝ ոչ նյութական ակտիվներից: Ներկայում առավել թանկ արժեն բարձր տեխնոլոգիաների, տեղեկատվական մշակումների արդյունքում ստեղծվող ակտիվները, որոնք նույնպես կարող են վարձակալման տրամադրվել (հաշվապահական հաշվառման վարման համակարգչային փաթեթներ, կառավարման էլեկտրոնային ծրագրեր և այլն): Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ մտավոր գործունեության արդյունքները (նոու հաու, ծրագրային ապահովումներ, գյուտեր) լիզինգի ենթակա չեն, սակայն կարծիք է հայտնվում, որ լինելով տնտեսական օգուտներ ապահովող ակտիվներ, դրանք նույնպես տնտեսահրավական տեսանկյունից պետք է համարվեն վարձակալության օբյեկտներ:[37]

Ոատի, ելնելով լիզինգի տնտեսահրավական բնույթից, փորձել ենք նորովի սահմանել այն. «Լիզինգը ձեռնարկատիրական գործունեություն է, որով տիրապետման և օգտագործման իրավունքով վարձակալին է փոխանցվում ակտիվ՝ սեփականության ռիսկերով ու հատույցներով՝ դրանով իսկ տնտեսական օգուտներ ապահովելով վարձակալության համակարգում ընդգրկված ուղղակի և անուղղակի մասնակիցների համար»:

Այս սահմանումից հետևում է, որ լիզինգն ընդգրկում է վարձակալության բոլոր ենթակառուցվածքային համակարգերը՝ ներդրումային, կոմերցիոն, միջնորդային, վարձատրման, որոնք օրգանապես փոխկապակցված են, տնտեսական շահ են հետապնդում և կարևորագույն գործառույթներն են իրականացնում լիզինգային հարաբերություններում: Բացի դրանից, սահմանումը լիզինգի օբյեկտ է ներկայացնում ցանկացած ակտիվ, որը տնտեսական օգուտ բերելու ունակություն ունի: Նման ձևով ընդլայնվում է լիզինգի օբյեկտների շրջանակը՝ չսպառվող գույքից բացի (համաձայն ՀՀ ՔՕ-ի)[38], ներա-

[37] Лапыгин Ю.Н., Сокольских Е.В., Лизинг, М., Академический Проект, 2005, с. 14.
[38] Ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկա կարող է լինել ձեռնարկատիրական գործունեության համար օգտագործվող ցանկացած չսպառվող գույք: Հոդ. 680, «Ֆինանսական վարձակալության պայմանագրի առարկան», ՀՀ ՔՕ, Եր., 1998 թ.:

ելով նաև ոչ նյութական ակտիվները: Նշենք, որ վարձակալության պայմանագրի առանձին տեսակները դասակարգելիս ՀՀ ՔՕ-ում շվում են միայն գույքի առանձին տեսակների վարձակալության պայմանագրերը (վարձույթ, տրանսպորտային միջոցների վարձակալություն, շենքերի և շինությունների վարձակալություն, բնակելի տարածության վարձակալություն, ֆինանսական վարձակալություն):[39]

Եվ, վերջապես, լիզինգի առաջարկվող սահմանումն արձանագրում է վարձակալության երաշխիքային ապահովվածությունը, ընդգծելով, որ վարձակալը, ստանալով ակտիվի տիրապետման և օգտագործման իրավունքը, ձեռք բերելով նաև շահագործման ռիսկերն ու հատույցները, փաստորեն, օգտվում է սեփականատիրոջ առանցքային առավելությունից, այն է՝ ակտիվի օգտագործման տնտեսական արդյունքներից և ոչ թե սեփականատիրոջ իրավական հնարավորություններից: Ֆիզիկական և իրավաբանական անձինք լիզինգի պայմանագրով վարձակալության գրանցված իրավունքի մասին տեղեկացված լինելով և լիզինգի պայմանագրով վարձակալության հանձնված գույքը դրա օտարման իրավունքը չունեցող վարձակալից կամ այլ անձից հատուցմամբ կամ անհատույց ձեռք բերելիս համարվում են անբարեխիղճ տիրապետողներ:[40]

Հետևաբար, սեփականության իրավունքը, որը դեռևս պահպանում է վարձատուն, վարձակալության ընթացքում նրա կատարած ներդրման գծով ընդամենը երաշխիքային դեր է կատարում և ոչ թե տնտեսագիտական դասական իմաստով՝ ապահովում սեփական ակտիվի շահագործումից օգուտների ներհոսք: Այս հանգամանքը կարևորվում է նրանով, որ լիզինգի պարագայում, չնայած ակտիվի սեփականության վկայականը իրավական առումով վերագրվում է վարձատուին, սակայն տնտեսական առումով վարձակալության օբյեկտի՝ որպես սեփականատեր, պարտավորություններն ընկնում են վարձակալի վրա՝ ինչպես օգուտների, այնպես էլ հատույցների մասով (այդ թվում՝ արժեզրկման կորուստներ, վերագնահատման վնասներ և այլն):

Վարձակալած գույքի պահպանության համար կողմերի պարտականությունները կարգավորվում են ՀՀ ՔՕ-ի հոդ. 618-ով, ըստ որի՝

[39] ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդ. 608, Եր., 1998 թ.:
[40] «Շարժական գույքի կադաստրի վարման, շարժական գույքի գրավի իրավունքի, լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցման մասին» ՀՀ օրենքը, հոդ. 11, Եր., 2004 թ.:

վարձատուն պարտավորվում է իր միջոցներով կատարել վարձակալության հանձնված գույքի հիմնական վերանորոգումը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, մյուս իրավական ակտերով կամ վարձակալության պայմանագրով: Վարձակալն էլ իր հերթին պարտավորվում է գույքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել ընթացիկ վերանորոգում և կրել գույքը պահպանելու ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ վարձակալության պայմանագրով:

Ֆինանսական վարձակալության դեպքում վարձակալած ակտիվի նորոգման ընթացիկ կամ կապիտալ ծախսերը պետք է կատարի վարձակալը, քանի որ նրան են փոխանցվում ակտիվի օգտագործման ռիսկերը: Այստեղ հիմնախնդիրը վարձակալած ակտիվի բարելավումների հատուցման պարտավորության կողմի որոշումն է: Քննարկման ենթակա չէ այն փաստը, որ վարձակալած գույքի պատահական կորստի կամ վնասվածքի ռիսկը վարձակալին է անցնում վարձակալած գույքը նրան հանձնելու պահից, եթե ֆինանսական վարձակալության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:[41] Այստեղ խնդրո առարկա է բարելավումների նկատառումով վարձակալած ակտիվի վրա վարձատուի կատարած ծախսերի փոխհատուցումը:

ՀՀ ՔՕ-ն վարձակալած գույքի բարելավումները դասակարգում է երկու մասով՝ ակտիվից բաժանելի և անբաժանելի: Ընդ որում՝ նշվում է, որ վարձակալած գույքից վարձակալի կատարած բաժանելի բարելավումները նրա սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով: Եթե վարձակալն իր միջոցների հաշվին և վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, պայմանագիրը դադարելուց հետո վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով, եթե այլ բան նախատեսված չէ վարձակալության պայմանագրով:[42]

Կարծում ենք, եթե վարձակալը կատարում է ակտիվի բարելավում, որը վարձակալության օբյեկտի բաժանելի կամ անբաժանելի մասն է կազմում (վարձակալած շենքի կապիտալ նորոգում, վարձակալած տրանսպորտային միջոցի շարժիչի հզորացում և այլն), ապա ցանկացած պարագայում վարձատուն չպետք է հատուցվի, քանի որ վերջին կողմից ակտիվի օգտագործման ռիսկերի փոխանցումը ենթադրում է ոչ միայն չնախատեսվող տնտեսական վնասներ, այլև հավելյալ գումտներ:

[41] ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդ. 683, Եր., 1998 թ.:
[42] Նույն տեղում, հոդ. 626, Եր., 1998 թ.:

Ակտիվի բարելավմանն ուղղված ծախսերը վարձակալը իրականացնում է երկու նպատակով՝ պահպանելու համար մաշվող վարձակալության օբյեկտի տնտեսական օգտակարությունը կամ էլ մոդեռնացման ծանապարհով ավելացնելու ակտիվի հետագա օգտակարության աստիճանը: Առաջին պարագայում հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջով ակտիվը չի վերագնահատվում և տեղի չի ունենում վերջինիս արժեքի աճ:[43] Երկրորդ պարագայում, բարելավման ծախսերի հաշվին ավելանում է ակտիվի հաշվեկշռային արժեքը, որը, մեր կարծիքով, լիզինգի վերջում (եթե կայանում է ակտիվի վերադարձ), առանց փոխհատուցման՝ վարձակալից պետք է անցնի վարձատուին:

Այսինքն՝ լիզինգի դեպքում անհրաժեշտ ենք համարում վարձակալած ակտիվի բաժանելի և անբաժանելի բարելավումները փոխհատուցել վարձակալի հաշվին, անկախ այն բանից, դրանք նախօրոք համաձայնեցված են վարձատուի հետ, թե ոչ: Իսկ վարձակալած գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարված ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները վարձատուի սեփականությունն են, ինչը և նախատեսվում է ՀՀ ՔՕ հոդ. 626-ի 4-րդ կետով:

Վարձակալության պայմանագիրը դադարելու դեպքում վարձակալը պարտավոր է վարձատուին վերադարձնել գույքը նույնպիսի վիճակում՝ բնականոն մաշվածության հաշվառմամբ կամ պայմանագրով նախատեսված: Եթե վարձակալը չի վերադարձրել վարձակալած գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամկետի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում վարձատուին պատճառված վնասները, ապա նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:[44]

Լիզինգի կարգավորման տնտեսահրավական հիմնախնդիրներից է նաև վարձակալած ակտիվի գնումը վարձակալի կողմից: Թեպետ լիզինգի կարգավորման միջազգային կոնվենցիան չի նախատեսում վար-

[43] ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ», 7-րդ և 14-րդ կետեր:
[44] ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդ. 625:

ծակալության վերջում ակտիվի պարտադիր գնում վարձակալի կողմից, այնուամենայնիվ, ֆինանսական վարձակալությունը մեծ մասամբ ավարտվում է նման ելքով:[45] Համաձայն ՀՀ օրենսդրության՝ ֆինանսական վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել, որ վարձակալված գույքը, վարձակալության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը, անցնի վարձակալի սեփականությանը՝ վարձակալի կողմից պայմանագրով նախատեսված գինը վճարելու պայմանով:[46] Եթե վարձակալության պայմանագրում նախատեսված չէ վարձակալած գույքը գնելու պայման, այն կարող է սահմանվել կողմերի լրացուցիչ համաձայնությամբ, որոնք իրավունք ունեն պայմանավորվել՝ նախապես մուծված վարձավճարը գնի մեջ հաշվարկելու մասին:[47]

Մեր կարծիքով՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածն ամբողջովին չի կարգավորում լիզինգի ավարտից հետո վարձակալի կողմից ակտիվի գնման իրավահարաբերությունները, քանի որ եթե վարձակալական հարաբերությունների պայմանագրով նախօրոք չի նախատեսվում ակտիվի սեփականության օտարում որոշակի գնով, ապա այն, կողմերի լրացուցիչ համաձայնության պարագայում, տնտեսական վեճի առիթ կդառնա: Մի կողմից, վարձատուն կձգտի թանկ վաճառել լիզինգի օբյեկտը, քանի որ վաճառքի հիմքում դրված չէ շուկայական հավասարակշռված գինը, մյուս կողմից, վարձակալը կպահանջի էժան ձեռք բերել երկար տարիներ իր տրամադրության տակ գտնվող ակտիվը, որի վրա կատարվել են շահագործման և պահպանման ծախսեր, ինչպես նաև մոդեռնացման նպատակով՝ ներդրումներ, որոնք պետք է նվազեցնեն ակտիվի գինը:[48] Հետևաբար, եթե լիզինգի պայմանագրում նախապես ամրագրված չէ վարձակալության վերջում վարձակալի կողմից ակտիվի ձեռք բերման գինը, և այն դառնում է վիճահարույց վարձատուի և վարձակալի միջև, ապա օրենսդրական դաշտում ողջամիտ գնային առաջարկի մոտեցում պետք է ապահովվի:

Այս հիմնախնդրի լուծման համար առաջնային ենք համարում ակտիվի գնահատման Հաշվապահական հաշվառման 17-րդ «Վարձակալություն» ստանդարտի կիրառումը, որի համաձայն՝ վարձակալը

[45] Королев А., Нужны новые подходы к лизинговому законодательству, Хозяйство и право, 2001, #9, с.114.

[46] ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդ. 677, 3-րդ կետ:

[47] Նույն տեղում, հոդ. 627, 2-րդ կետ:

[48] Кабатова Е.В., Закон "О лизинге" сегодня и завтра, Закон, 2000, #11, с. 52.

[redacted]արավորություն ունի տվյալ ակտիվը գնելու սպասելի գնով՝ բավականաչափ ցածր ակտիվի իրական արժեքից: Եթե վարձակալության սկզբում արդեն իսկ կա խելամիտ համոզվածություն, որ այդ հնարավորությունը կիրագործվի, ապա վարձակալության ժամկետի ընթացքում նվազագույն վարձավճարները ներառում են ակտիվի գնման համար պահանջվող վճարը:[49] Փաստորեն, վարձակալության սկզբում նվազագույն վարձավճարների ներկա արժեքը վարձակալված ակտիվի իրական արժեքն է:[50]

Հետևաբար, եթե վարձակալության ժամկետի մեկնարկի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալը ֆինանսական վարձակալությունը ճանաչում է որպես ակտիվ և պարտավորություն՝ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, ապա վարձակալության ավարտին վարձակալի չվճարված պարտավորությունների մնացորդն էլ հանդես կգա որպես ակտիվի ձեռք բերման գին: Ընդ որում, վարձավճարների ներկա արժեքի հաշվարկման ժամանակ գեղչման դրույք է վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այն հնարավոր է որոշել, իսկ եթե ոչ, ապա պետք է օգտագործվի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածում առաջարկում ենք ավելացնել ևս մեկ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «Եթե վարձակալության պայմանագրում նախատեսված չէ վարձակալած գույքը գնելու պայման, և այն ի հայտ է գալիս վարձակալության ավարտին, հանգեցնելով կողմերի անհամաձայնության, ապա վարձակալն իրավունք ունի գնելու վարձակալած ակտիվը՝ վարձատուին չվճարված պարտավորությունների մնացորդից ոչ ավելի գումարով»: Համոզված ենք՝ նման կետի կիրառումը գործող ՀՀ ՔՕ-ում կապահովի վարձակալած գույքի տնտեսահրավական հարաբերությունների իրացման լիարժեք ծածկույթ:

Ֆինանսական վարձակալության կարգավորման տնտեսահրավական հիմնախնդիրներից է վարձավճարների չափի և վճարման տևողության սահմանումը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ վարձավճարների տևողությունը համընկնում է ակտիվի ամորտիզացման ժամանակաշրջանի հետ: Հետևաբար, խնդրո առարկա է լիզինգի պա-

[49] ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», կետ 4:

[50] Նույն տեղում, կետ 10, ենթակետ դ):

րագայում ակտիվի ամորտիզացման քաղաքականության ընտրությունը:

Այսպես՝ Ռուսաստանի Դաշնությունում օրենսդրությունը թույլ է տալիս լիզինգի պայմաններում ակտիվի արագացված ամորտիզացում՝ մինչև 3 գործակցի սահմաններում,[51] Միացյալ Թագավորությունում, Գերմանիայում ֆինանսական վարձակալությամբ տրված ակտիվի ամորտիզացման և վարձավճարների ժամկետայնության գծով չկան հստակ սահմանափակումներ, Ճապոնիայի քաղաքացիական օրենսգիրքը, ընդհակառակը, պահանջում է, որ վարձակալության ժամկետը պետք է լինի ակտիվի օգտակար ծառայության ժամկետի 70%-ից ավելին:[52]

ՀՀ ՔՕ-ն վարձավճարի չափի և ժամկետների վերաբերյալ հստակ նորմատիվներ չի սահմանում, այլ պարզապես արձանագրում է՝ վարձակալը պարտավոր է ժամանակին մուծել գույքն օգտագործելու համար վճարը (վարձավճարը): Վարձավճար մուծելու կարգը, պայմանները և ժամկետները որոշվում են վարձակալության պայմանագրով: Եթե պայմանագրով դրանք նախատեսված չեն, ապա կիրառվում են նույնանման գույքի վարձակալության ժամանակ համեմատելի հանգամանքներում սովորաբար գործող կարգը, պայմանները և ժամկետները:[53]

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտները նույնպես լիզինգով տրված ակտիվների ամորտիզացման նորմատիվներ չեն սահմանում, արձանագրելով, որ եթե չկա խելամիտ համոզվածություն, որ վարձակալը վարձակալության ժամկետի ավարտին ձեռք է բերելու սեփականության իրավունք, ապա ակտիվն ամբողջովին պետք է ամորտիզացվի հետևյալ երկու ժամկետներից առավել կարճի ընթացքում՝ վարձակալության ժամկետի կամ օգտակար ծառայության ժամկետի: Պարզապես, պահանջ է դրվում նվազագույն վարձավճարների բաշխման առումով. «Նվազագույն վարձավճարները պետք է բաշխվեն ֆինանսական վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսական վճարը վարձակալության ժամկետի ընթացքում, ըստ ժամանակաշրջանների, պետք է բաշխվի այնպես,

[51] Федеральный закон РФ "О финансовой аренде (лизинге)": от 29 октября 1998г., # 164-ФЗ, Налоговый кодекс РФ, с. 259.3. п.2, пп.1 (31.07.0998г.).
[52] Газман В.Д., Финансовый лизинг, М. ВШЭ, 2003, с.102.
[53] ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, հոդ. 616, 1-ին և 2-րդ կետ:

որպեսզի ստացվի հաստատուն պարբերական տոկոսադրույք յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ:»[54]

Մասնագիտական գրականության մեջ նույնպես կարծիք է հայտնվում, որ վարձավճարների ժամկետայնության առումով նորմատիվների սահմանումն անհրաժեշտություն է, քանի որ դրանց բացակայության պարագայում, վարձակալության պատրվակով, կողմերի միջև կիրականացվի ոչ թե լիզինգ, այլ ակտիվի առուծախ՝ արագացված և խոշոր չափերով վարձավճարներ սահմանելով, հատկապես, երբ ֆինանսական վարձակալության նկատմամբ կիրառվում են հարկային էական արտոնություններ:[55]

Ֆինանսական վարձակալության ժամանակ արագացված ամորտիզացիայի կիրառումը, կարծում ենք, լիզինգային գործարքների խթանման առաջնահերթ նախապայմաններից է: Վերջինս, եթե ոչ հարկային բեռի թեթևացման, ապա գոնե մոտիվացիոն առումով տնտեսապես կշահագրգռի բանկային համակարգին՝ ֆինանսական ներդրումներ կատարելու լիզինգային գործարքներում և առավելապես կարճաժամկետ հատվածում՝ հետգնումներ իրականացնելու: Մյուս կողմից, լիզինգի օբյեկտի արագացված ամորտիզացիան վարձակալին կապահովագրի երկարաժամկետ օգտագործմամբ վարձակալած ակտիվի բարոյական մաշվածությունից:

ՀՀ-ում ներկայում գործող «Շահութահարկի մասին» օրենքը արգելում է ակտիվի արագացված ամորտիզացիան, իսկ ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտն առաջարկում է մաշվածության հաշվարկման արագացված մեթոդներ,[56] և վերջինիս կիրառման պարագայում կազմակերպություններում ձևավորվում են հետաձգված հարկային ակտիվներ: Այս առումով առաջարկում ենք ՀՀ օրենսդրական դաշտում լիզինգի պայմաններում թույլատրել արագացված ամորտիզացիա, որը մի կողմից կբացառի լիզինգային հարաբերություններում հետաձգված հարկային ակտիվների ձևավորումը, մյուս կողմից, էականորեն կխթանի լիզինգի ծանապարհով ակտիվների ձեռք բերումը:

[54] ՀՀՄՍ 17, «Վարձակալություն», կետ 25:
[55] Самохвалова Ю.Н., Лизинг в России: правовые основы, бухгалтерский учет, налогообложение, М., Современная экономика и право, 1999, с. 102.
[56] ՀՀՄՍ 16, «Հիմնական միջոցներ», կետ 60:

ՀՀ-ում լիզինգի կարգավորման տնտեսահրավական հիմնախնդիրներից է ֆինանսական վարձակալության անուղղակի մասնակիցների գործունեության պատասխանատվության իրավական գնահատումը: ՀՀ ՔՕ-ն հիմնականում կարգավորում է ֆինանսական վարձակալության ուղղակի մասնակիցների տնտեսահրավական հարաբերությունները: Սակայն, առանց անուղղակի կողմերի մասնակցության, այն է՝ միջնորդների, ապահովագրողների, ֆինանսական ներդրողների, խորհրդատուների, մարքեթինգային գործակալների գործառույթների, հնարավոր չէ ապահովել ֆինանսական վարձակալական հարաբերությունների բնականոն ընթացք: Ուստի առաջարկում ենք ՀՀ ՔՕ-ի գլուխ 35 «Վարձակալություն» մասում ավելացնել լիզինգի անուղղակի մասնակիցների գործառույթների տնտեսահրավական կարգավորմանը նվիրված հատուկ պարագրաֆ:

Այսպիսով՝ ֆինանսական վարձակալության ՀՀ օրենսդրական դաշտի բարելավման նպատակով առաջարկում ենք.

առաջին՝ համալրել վարձակալության իրավատնտեսական կարգավորման փաստաթղթերի շրջանակը՝ մասնավորապես ընդունելով «Լիզինգի մասին» ՀՀ օրենք, ներդաշնակեցնելով ֆինանսական վարձակալությանն առնչվող ՀՀ-ում գործող տնտեսահրավական ակտերի պահանջները:

երկրորդ՝ իրավական լծակներով ակտիվացնել վարձակալության զարգացման մոտիվացիոն լծակները՝ բարելավելով վարձակալի կողմից ակտիվի գնման, վարձավճարների փոխանցման, լիզինգի օբյեկտի տիրապետման, օգտագործման, շահագործման և մոդեռնացման գործառույթները:

երրորդ՝ ընդլայնել վարձակալության հարաբերությունների տնտեսահրավական կարգավորման շրջանակը՝ նրանում ընդգրկելով ոչ միայն լիզինգի ուղղակի մասնակիցների (ակտիվի մատակարար-վարձատու-վարձակալ), այլև անուղղակի (միջնորդներ, բանկեր, երաշխավորներ, ապահովագրողներ և այլն) գործառույթները, քանի որ այդ մասնակիցների բնականոն տնտեսահրավական հարաբերությունների առկայության դեպքում է միայն երաշխավորվում անխափան և արդյունավետ վարձակալական գործընթացի իրականացում:

2.2 Ներդրումային քաղաքականության և վարձակալության փոխկապակցվածության գնահատումը

Վարձակալության ծառայությունների ոլորտն իր ուրույն տեղն ունի ազգային տնտեսության համակարգում և վճռորոշ դեր է կատարում սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման գործընթացում: Մակրոտնտեսագիտության խնդիրը ազգային տնտեսության ամբողջական օրգանիզմի զարգացման ուղղությունների և արդյունքների ուսումնասիրությունն է: Այս առումով, վարձակալությունը նպաստում է պետական շահեր հետապնդող մի շարք խնդիրների լուծմանը, որոնցից են.

- ազգային տնտեսության համակարգում մասնավոր ներդրումների ներգրավումը,
- գործարարության ակտիվացման արդյունքում պետբյուջե հարկային մուտքերի ավելացումները, արտադրության տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման խթանումը,
- շուկայական ենթակառուցվածքային համակարգի զարգացման ապահովումը,
- նոր աշխատատեղերի ստեղծումը և բնակչության զբաղվածության բարելավումը,
- տնտեսության իրական (նյութական բարիքների արտադրություն) և ֆինանսական հատվածների միջև մրցակցային միջավայրի ապահովումը:[57]

Թվարկված խնդիրների լուծման ուղիները էապես փոխկապված են պետության վարած հարկային, ֆինանսավարկային, ներդրումային, սոցիալական քաղաքականության հետ (տե՛ս գծապատկեր 2.4): Ընդ որում, այս ոլորտները միմյանց հակակշռելով, հավասարակշիռ վիճակ են ստեղծում վարձակալության շուկայում՝ ծախսված ռեսուրսները համապատասխանեցնելով ձևավորված մակրոտնտեսական իրավիճակի պահանջներին:

[57] Соколова Т.Ю., Лизинг-инвестиции или налоговая уловка?, Конкуренция и рынок, #9, М., 2004, с. 39.



Գծապատկեր 2.4

Վարձակալության շուկայի մակրոտնտեսական կարգավորման ոլորտները

Վարձակալության գործընթացի մակրոտնտեսական արդյունքները ոչ միայն պետք է գնահատել որակական այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են՝ վարձակալության մուտքերի տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում, վարձակալության ծախսերի տեսակարար կշիռը պետբյուջեի ծախսային մասում, հիմնական միջոցների կազմում վարձակալած ակտիվների տեսակարար կշիռը և այլն, այլ նաև գործազրկության մակարդակի և վարձակալության ծառայությունների սպառման ծավալների կապի սերտության հստակ գնահատմամբ, հարկային խթանիչ քաղաքականության ազդեցության որոշմամբ վարձակալության առաջարկի և պահանջարկի վրա:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ֆինանսական վարձակալությունը իր դիրքերն առավելապես ամրապնդում է զարգացող երկրներում, որտեղ դեռևս ձևավորման փուլում է կապիտալի շուկան, կազմակերպություններին չի բավարարում սեփական միջոցներով կապիտալ ներդրումների իրականացումը, երկարաժամկետ փոխառությունների ինստիտուտը գործում է սահմանափակ և բարձր տոկոսադրույքներով: Որպես կանոն, զարգացող երկրների ՀՆԱ-ի կազմում ֆինանսական վարձակալության ծավալը գերազանցում է 8%-ի շեմը (տե՛ս գծապատկեր 2.5): Զարգացած երկրներում, որտեղ արդեն կայացած է լիզինգի շուկան, ՀՆԱ-ի կազմում ֆինանսական վարձակալության ծավալների չափաբաժինը չի գերազանցում 5%-ի շեմը:



Գծապատկեր 2.5

Ֆինանսական վարձակալություն/ՀՆԱ դինամիկան տնտեսության տարբեր զարգացածությամբ երկրներում[58]

ՀՀ-ում ֆինանսական վարձակալության շուկան դեռևս ձևավորման փուլում է, և այդ իսկ պատճառով վերջին երկու տարիներին ՀՆԱ-ի կազմում լիզինգային ծառայությունների տեսակարար կշիռը չի գերազանցում անգամ 1%-ի շեմը և կազմում է ընդամենը 0.6%: Դրան նպաստում է նաև հանրապետությունում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարումը, երբ միջոցներ են ձեռնարկվում ոչ թե ֆինանսական շուկայի զարգացման, այլ ուղղակի կայունացման ուղղությամբ: Այնուամենայնիվ, ըստ միջազգային փորձագետների, եթե առաջիկա տարիներին ՀՀ-ն հաղթահարի ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները և ՀՆԱ-ի շուրջ 10% հավելաճի պայմաններում ձեռք բերի մակրոտնտեսական կայունություն, ապա ֆինանսական վարձակալության ծավալների աշխուժացում կնկատվի և լիզինգ/ՀՆԱ հարաբերակցությունը կգերազանցի 5%-ի շեմը[59] (տես գծապատկեր 2.6):

[58] Financial Sector Deepening Project, USAID, Presentation to partners banks CEOs, 2010.

[59] Նույն տեղում:



Գծապատկեր 2.6
Ֆինանսական վարձակալության տեսակարար կշռի կանխատեսումը ՀՆԱ-ում

Մեր երկրում ֆինանսական վարձակալության զարգացման վրա էական ազդեցություն է գործում ձևավորված մակրոտնտեսական միջավայրը, որը, կարծում ենք, դեռևս այնքան էլ բարենպաստ չէ խոշորածավալ ֆինանսական ներդրումների գրավչության առումով:

Վարձակալության ոլորտում ներդրումները ձևավորելով արտադրական կապիտալ՝ գտնվում են երկարաժամկետ տնտեսական փոխհատուցման գործընթացում: Ուստի մակրոտնտեսական հարթությունում գործող ներդրումային և վարկային լծակները ձգտում են ձևավորել մի այնպիսի հավասարակշիռ վիճակ, երբ երկարաժամկետ լիզինգի ծախսերն արդարացվում են ոչ միայն գործարարի, այլև հանրային արդյունավետության տեսանկյունից:[60]

Վարձակալության մակրոտնտեսական կարգավորման մոդելում պետք է հաշվի առնվեն նաև բանկային տոկոսադրույքները, հարկային բեռը, գնաճը, ազգաբնակչության զբաղվածությունը, սպառման և խնայողության վարքագիծը, որոնք միմյանց հակակշռելով, հավասարակշիռ վիճակ են ստեղծում վարձակալության շուկայում:

Լիզինգը, որպես տնտեսավարման յուրահատուկ ձև, համալիր

[60] Экономическая теория, под. ред. А.И.Добрынина, "Питер", 2000 г., М., с. 291.

ազդեցություն է գործում արտադրական գործընթացի հիմնական բաղադրիչների՝ արտադրության միջոցների, աշխատուժի օգտագործման ինտենսիվության վրա: Անմիջական է նրա ներգործությունը նաև գիտատեխնիկական առաջընթացի խթանման, նորամուծությունների ներդրման և իրացման, սահմանային ծախսերի կրճատման վրա: Այս առումով, ազգային տնտեսության համակարգում լիզինգը բազմարկչի ներազդեցության էֆեկտ է ապահովվում: Լիզինգի միջոցով նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիայի օգտագործման համար համեմատաբար հեշտ ուղի է հարթվում, ավելանում են արտադրողների եկամուտները, որոնք արտադրության լրացուցիչ ծավալների պահանջարկ են առաջացնում:

Իր հերթին, արտադրության լրացուցիչ պահանջարկը խթանում է առավելագույն նորամուծական ծրագրերի ներդրումը, որին նպաստում են ակտիվների վարձակալության գործառույթները: Արտադրության առաջարկի և սպառման պահանջարկի շղթայի արդյունքները բազմապատկվում են վարձակալական աշխույժ հարաբերությունների առկայությամբ: Լիզինգն էապես ազդում է ազգային եկամտի ձևավորման և բաշխման, տնտեսական աճի տեմպերի, հասարակական արտադրության և սպառման համամասնությունների վրա:

1929-1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի հաղթահարման առաջնահերթ ուղիներից մեկը հանրային ծախսերի աննախադեպ աճն էր, որն էլ հետագայում ուշադրության արժանացավ տնտեսագետների կողմից՝ հիմք դնելով Քեյնսի մուլտիպլիկատորի (բազմարկչի) տեսության ձևավորմանը:

Բազմարկչի տեսության առանցքը դարձավ ազգային եկամտի և բնակչության զբաղվածության վրա հանրային ծախսերի ազդեցության բնույթը: Այսինքն՝ հիմնավորվեց, որ հանրային ծախսերի (ներդրումների) աճը տնտեսությունում ձևավորում է լրացուցիչ աշխատատեղեր, աճում է բնակչության զբաղվածության աստիճանը, և դրան զուգահեռ՝ սպառումն ու եկամուտը: Հատկանշական է, որ լրացուցիչ ներդրումներով պայմանավորված զբաղվածության սկզբնական աճը հետագայում ուղեկցվում է եկամտի երկակի, եռակի և անգամ առավել բազմապատիկ աճով: Ըստ Քեյնսի՝ բազմարկիչը ցույց է տալիս, թե քանի անգամ է եկամուտների հավելաճը գերազանցում հանրային ծախսերի հավե-

$$\text{Բազմարկիչ (K)} = \frac{\text{իրական եկամտի փոփոխություն } (\Delta y)}{\text{ներդրումների փոփոխություն } (\Delta i)}$$

Համաձայն այդ տեսության՝ ներդրումների աճը բազմապատիկ ազդեցություն է գործում եկամտի աճի վրա, քանի որ վերջինս իր հերթին առաջացնում է սպառողական ապրանքների լրացուցիչ պահանջարկ և հետևաբար, նաև արտադրության ծավալների ընդլայնման անհրաժեշտություն (նոր գործարանների շահագործում, աշխատատեղերի բացում, լրացուցիչ ներդրումներ): Ընդ որում, այս պարբերաշրջանում լրացուցիչ ներդրումների աճը միշտ հետ է մնում եկամուտների աճից[61]:

Այդուհանդերձ, չպետք է ընդունել, որ ներդրումային ծախսերի մեկնարկային աճը կարող է հանգեցնել եկամուտների և սպառման առաջանցիկ ավելացման անվերջ պարբերաշրջանի: Բազմարկչի էֆեկտը չի գործում, եթե եկամտի աճն ուղղվում է ոչ թե սպառմանը, այլ խնայողությանը (Δs): Այսինքն՝ բազմարկչի ազդեցությունը դադարում է այն պահից, երբ խնայողության հավելաճը հավասարվում է եկամտի հավելաճին (Δi = Δs)[62] (տե՛ս գծապատկեր 2.10):

Վարձակալության ոլորտում կատարվող ներդրումները սերտորեն առնչվում են բազմարկչի տեսությանը, քանի որ խնդիրը նորագույն արտադրական տեխնոլոգիաների ընդլայնմանն ուղղված ներդրումների ծանապարհով ազդեցություն գործելն է տնտեսական վերարտադրության վրա՝ ոչ միայն ծախսերի կատարման պահին, այլև դրան հաջորդող հետագա ժամանակաշրջանում:

Բազմարկչի տեսության գրաֆիկական վերլուծությունը պարզորոշ ցույց է տալիս ազգաբնակչության եկամուտների հավելաճի առաջանցիկ գործընթացը ներդրումների հավելաճից: Գծապատկեր 2.7-ում ներկայացված է ազգաբնակչության սպառման վարքագծի կորը (I), երբ եկամուտները՝ հարկերը վճարելուց հետո, ամբողջովին ուղղվում են սպառմանը: Այդ է պատճառը, որ սպառման վարքագծի կորը ունի 45° անկյան թեքվածություն:[63]

[61] Экономическая теория, под. ред. В.И. Видяпина, Российская экономическая академия, М., 2000 г., с. 423.

[62] Ведута Е.Н., Стратегия и экономическая политика государства, М. "Наука", 2004, с. 59-60.

[63] Новикова З.Т., Экономическая теория, учебное пособие для вузов, М., "Трикста", 2005, с. 204.

Սակայն, որպես կանոն, ազգաբնակչությունը ձգտում է իր եկամուտների մի մասը խնայել՝ աբողջապես չոտղելով սպառմանը: Ընդ որում, եթե ընդունենք, որ խնայված միջոցները հետագայում տնտեսությունում միտվում են ֆինանսական վարձակալության կարիքներին, ապա այդ ոլորտում կատարված ներդրումներից հետո ազգաբնակչության սպառման վարքագծի փոխկապակցվածությունը ստացվող եկամուտների նկատմամբ այլ կերպ է դրսևորվում (տե՛ս գծապատկեր 2.8, կոր II):



Գծապատկեր 2.7

Սպառման վարքագիծը՝ առանց եկամուտների խնայողության

Այսպես՝ մակրոտնտեսական հավասարակշռման սկզբնական շրջանում ազգաբնակչության եկամուտներն ամբողջովին չեն փոխհատուցում ծախսերը, և այդ պատճառով ձևավորվում է ծախսերի գոտին՝ մինչև եկամուտների և սպառման ծավալների հավասարակշռման կետը (A_0): Այնուհետև, A_0 կետից դեպի աջ շարժվելիս, դիտվում է եկամուտների աճ՝ սպառման ծավալների նկատմամբ, որը ազգաբնակչության շրջանում ձևավորում է խնայողության հնարավորություն (տե՛ս գծապատկեր 2.8):



Գծապատկեր 2.8

Սպառման վարքագիծը եկամուտների խնայողության դեպքում

Այժմ դիտարկենք այն տարբերակը, երբ ազգաբնակչության խնայած միջոցների մի մասը լրացուցիչ ձևով ներդրվում է ֆինանսական վարձակալության ոլորտում, այսինքն՝ ավանդագրումների ընդլայնման հաշվին բանկերը հնարավորություն են ստանում ֆինանսավորելու վարձատուներին: Փաստորեն, այս պարագայում տեղի է ունենում լիզինգի ներդրումային հավելաճ (Δi), որը բերում է նյութական բարիքների արտադրության աճին, իսկ վերջինս էլ իր հերթին ձևավորում է ազգաբնակչության իրական եկամտի փոփոխություն (Δy):

Գծապատկեր 2.9-ում պարզորոշ երևում է բնակչության եկամուտների հավելաճի (Δy) առաջանցումը լիզինգի բնագավառում ներդրումային ծախսերի հավելաճից (Δi):

Վարձակալության ոլորտում լրացուցիչ ներդրումներ, այսինքն՝ տնտեսության մեջ նորամուծություններ իրականացնելիս, նոր տեխնիկայով վերազինվելիս, ավելանում են արտադրական ծավալները, և դրա հետ կապված, ազգաբնակչության սպառման վարքագիծը դրսևորվում է (III) կորով (տե՛ս գծապատկեր 2.9): Երբ լիզինգի բնագավառում լրացուցիչ ծախսեր են կատարվում (Δi), բացվում են նոր աշխատատեղեր, ավելանում է որակյալ աշխատանքի վարձատրությունը,

բնակչության եկամուտները A_0-ից աճում են մինչև A_1 հավասարակշռման կետ: Եվ այս պարագայում, եթե դիտարկվում է A^0 և A^1 հավասարակշռման կետերով կառուցված հավասարակողմ ուղղանկյուն եռանկյունին (ներքնաձիգը I կորի վրա), ապա ուղղանկյան կողմերից Δy-ը մեծ է ստացվում մյուս կողմի Δi հատվածից.

$$\Delta y > \Delta i,\ \Delta y/\Delta i > 1$$



Գծապատկեր 2.9

Սպառման վարքագիծը եկամուտների խնայողությունների օգտագործման դեպքում

Բնականաբար, բնակչության սպառման վարքագծերի I և III կորերի հատման կետում իրական եկամուտներն ամբողջովին փոխհատուցում են սպառման ծախսերը, և ազգաբնակչությունը հնարավորություն չի ունենում լրացուցիչ խնայողություններ կատարելու (Δs = 0): Երբ իրական եկամուտների հետագա հավելաճի պայմաններում (A_1 կետից դեպի աջ) ձևավորվում են լրացուցիչ խնայված միջոցներ, ապա հնարավորություն է ստեղծվում ազգաբնակչության ավանդագրումների աճի ծավալներն ուղղելու վարձակալության ֆինանսավորման ոլորտ և հետագայում վաստակելու առաջանցիկ եկամուտներ:

Բազմարկչի էֆեկտը չի գործի, երբ ազգաբնակչության խնայողության հավելածը (Δs), որն ուղղվում էր լրացուցիչ լիզինգային ներդրումներին (Δi), հավասարվի եկամտի հավելածին (տե՛ս գծապատկեր 2.10).

$$\Delta s = \Delta i = \Delta y$$

Այսպես՝ գծապատկեր 2.10-ում պարզորոշ երևում է, որ եկամուտների աճի հետ մեկտեղ, սպառման ծախսերը մնում են անփոփոխ C_0 կետում (կոր IV): Այնուհետև, սպառման ծախսերում կատարելով խնայողություն (ΔS) և այն վերաուղղելով լիզինգի ֆինանսավորման ոլորտ՝ եկամտի հավելածին (Δy) համարժեք՝ կստանանք (V) կորը:



Գծապատկեր 2.10

Բազմարկչի բացակայությունը խնայողության և եկամտի հավասար հավելածի դեպքում

Վարձակալական հարաբերությունների կարգավորման մակրոտնտեսագիտության խնդիրն է բացահայտել բանկային տոկոսադրույքների այն օպտիմալ մեծությունը, որը կխթանի տնտեսությունում խնայած ռեսուրսները՝ ոչ թե ավանդագրելու և ստանալու տոկոսային եկամուտներ, այլ ներդնելու լիզինգային գործառույթների բնագավառ՝ հետագայում առավել մեծ եկամուտներ ստանալու ակնկալիքով:

Ներդրումային քաղաքականության և ֆինանսական վարձակալության գործընթացի մակրոտնտեսական վերլուծության հիման վրա կարելի է կատարել այն եզրահանգումը, որ լիզինգի զարգացումը փոխկապակցված է բնակչության եկամուտների ձևավորման և սպառման վարքագծի հետ: Եթե տնտեսությունում ստեղծվում է այնպիսի վիճակ, երբ արձանագրվում է ազգաբնակչության եկամուտների աճ և միաժամանակ կատարվում է խնայողություն, ապա խնայված ավանդագրումները միտվում են լիզինգի ֆինանսավորմանը՝ առաջացնելով տնտեսական աճի բազմարկչային էֆեկտ:

2.3 Լիզինգը որպես ֆինանսական քաղաքականության ձևավորման կարևորագույն գործիք

Լիզինգի զարգացմանը նպաստելու առումով մակրոտնտեսական կարգավորման խնդիրն է այնպիսի տոկոսադրույքների սահմանումը, որ մի կողմից բանկային համակարգի միջոցները վերաուղղվեն վարձակալության ոլորտ, և մյուս կողմից՝ կազմակերպությունների համար լիզինգին առնչվող ներդրումները դառնան գրավիչ՝ տեսանելի ապագայում դրանց ոչ երկարաժամկետ հետգնման հնարավորությունների առումով:

Որպես ֆինանսական ներդումների յուրահատուկ ձև՝ լիզինգի տնտեսական նպատակահարմարությունը կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ ֆինանսական վարձակալության արժեքն ու հետգնման ժամանակահատվածը, որոնք, իրենց հերթին, փոփոխվում են՝ պայմանավորված ֆինանսական շուկայում փոխառությունների առաջարկի և պահանջարկի համամասնությունների, վարկային միջոցների եկամտաբերության տատանումներով:[64]

Որպես կանոն, լիզինգի տոկոսադրույքը սահմանվում է ոչ պակաս՝ ավանդների և ոչ ավելի՝ վարկային տոկոսադրույքների մեծության չափով: Եթե լիզինգի տոկոսադրույքները պակաս լինեն ավանդների տոկոսադրույքներից, ապա վարձատուն հնարավորություն չի ունենա բանկերից հավաքագրելու «էժան փողեր» և դրանք վերաուղղելու լիզինգի ոլորտ: Անգամ նման հնարավորության առկայության դեպքում՝ նա տնտեսապես նպատակահարմար չի համարի ֆինանսական ներդրումներ կատարել վարձակալության մեջ՝ դիմելով ռիսկայնության, եթե ավանդագրման ճանապարհով հնարավոր է վաստակել տոկոսային եկամուտ:[65]

Մյուս կողմից, եթե լիզինգի տոկոսադրույքը գերազանցի վարկային տոկոսադրույքը, ապա վարձակալը կհրաժարվի ֆինանսական վարձակալությունից և փոխարենը, բանկերից վարկեր վերցնելով, ձեռք կբերի պահանջվող ակտիվը: Հետևաբար, մակրոտնտեսական միջավայրում ֆինանսական վարձակալության տոկոսադրույքները ձևավոր-

[64] Киркоров А., Методы определения эффективности финансового лизинга по сравнению с кредитом, Лизинг-Ревью-2000, N5/6, с. 18.

[65] Вахрин П.И., Инвестиции, учебник, М., "Финансы", 2002, с. 109.

վում են ավանդագրման և վարկավորման տոկոսադրույքների միջինացված մարժայի սահմաններում:[66]

Ֆինանսական քաղաքականության ազդեցությունը վարձակալության վրա արտահայտվում է նաև երկարաժամկետ և կարճաժամկետ վարկավորման տոկոսադրույքների համամասնություններով: Որպես ներդրումային ծրագրեր՝ լիզինգային գործարքները երկարատև ժամանակահատվածով են իրականացվում և պահանջում են «երկար փողեր», այսինքն՝ երկարատև ֆինանսավորում: Սակայն թե՛ վարձատուն, և թե՛ վարձակալը ձգտում են հնարավորինս կարճ ժամկետում ավարտել լիզինգային գործարքները:

Վարձատուն տնտեսապես շահագրգռված է կարճ ժամկետում կնքելու լիզինգի պայմանագիր՝ կարճաժամկետ փոխառությունների և ցածր տոկոսադրույքների հաշվին հնարավորինս էժանացնելով լիզինգը, դարձնելով գրավիչ և նույնիսկ մեղմելով գործարքի ռիսկայնությունը:[67]

Վարձակալը նույնպես տնտեսական մոտիվացիա ունի կարճաժամկետ լիզինգի կազմակերպման հարցում, քանի որ այս դեպքում մի կողմից իջնում է վարձակալության արժեքը, մյուս կողմից, որն ավելի կարևոր է, ինտենսիվ վարձավճարները հնարավորություն են ընձեռում համեմատաբար արագ փոխհատուցելու վարձակալած ակտիվի արժեքը, մեղմելու բարոյական մաշվածության ռիսկայնությունը և հաճախակի իրականացնելու տեխնիկական վերազինում:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին ՀՀ վարկային շուկայում դիտվում է երկարաժամկետ փոխառությունների ավելացման առաջանցում կարճաժամկետ վարկավորման տեմպերից: Ընդ որում, անգամ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին արձանագրվել է տնտեսության վարկավորման աճ (տե՛ս գծապատկեր 2.11): Զուգահեռաբար, 2006-2009 թթ. արձանագրվել է բանկային տոկոսի հաշվարկային դրույքի նվազում՝

[66] Финансовая аренда (лизинг) в России. Обзор рынка 2005-2006, М., Международная финансовая корпорация, 2006, с. 59.

[67] Комаров В., Инвестиции и лизинг в СНГ, М., "Финансы и статистика", 2001, с. 62.

համապատասխանաբար 19%-ից մինչև 12%:[68] Այսինքն՝ հանրապետությունում դիտարկվում է «երկար փողերի» էժանացման միտում, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում ֆինանսական վարձակալության ակտիվացման համար:



Գծապատկեր 2.11

ՀՀ-ում վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության (մլն դրամ)[69]

Քանի որ ֆինանսական վարձակալությունը, որպես կանոն, թանկարժեք ներդրումային ծրագիր է, այն գործնականում չի կարող կարճաժամկետ հատվածում ապահովել այնքան եկամուտներ, որոնցով հնարավոր կլինի փոխհատուցել ակտիվի ձեռք բերման ծախսերը: Ուստի որքան էլ վարձատուն և վարձակալը ձգտեն կարճաժամկետ վարձակալության, լիզինգի արժեքն առավելապես ձևավորվում է «երկար փողերի» հաշվին, այսինքն՝ երկարատև փոխառությունների տնտեսական չափանիշներով, որոնք էլ փոխկապակցվում են վարձակալությունից ձևավորվող եկամուտների մեծության հետ:

[68] Կազմված է՝ «ՀՀ Կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր», 2009 թ., էջ 47 տվյալներով:

[69] Նույն տեղում, էջ 72:

Վարձակալության ծախսերի հետգնման հիմնախնդիրը կարևորվում է երկուստեք՝ թե՛ վարձատուի, և թե՛ վարձակալի համար: Հետևաբար, ֆինանսական շուկայում լիզինգի հավասարակշռված գինը ձևավորվում է մակրոտնտեսական մի շարք սցենարների պարագայում, որոնք ամփոփված են աղյուսակ 2.1-ում:

Աղյուսակ 2.1

Լիզինգի հավասարակշռված գնի ձևավորման մակրոտնտեսական իրավիճակների դասակարգումը

Սցենար	Բովանդակություն	Մակրոտնտեսական իրավիճակ
I	Վարձակալության ծախսերի հետգնումը լիզինգի ծախսերի սահուն աճի վարքագծի պարագայում	տնտեսության կայուն զարգացում
II	Վարձակալության ծախսերի հետգնումը լիզինգի ծախսերի նվազման վարքագծի պարագայում	տնտեսության դանդաղ անկում
III	Վարձակալության ծախսերի հետգնումը աճող եկամուտների վարքագծի պարագայում	տնտեսության կայուն զարգացում
IV	Վարձակալության ծախսերի հետգնումը եկամուտների նվազման վարքագծի պարագայում	տնտեսության դանդաղ անկում
V	Վարձակալության ծախսերի հետգնումը լիզինգի ծախսերի և եկամուտների աճի վարքագծի պարագայում	տնտեսության կտրուկ աճ
VI	Վարձակալության ծախսերի հետգնումը լիզինգի ծախսերի և եկամուտների նվազման վարքագծի պարագայում	տնտեսության կտրուկ անկում

Մակրոտնտեսական տեսանկյունից, վարձակալության ժամանակահատվածի երկարաձգմանը զուգընթաց, տարիների ընթացքում վարձակալի մոտ իջնում է լիզինգի արժեքը, քանի որ վարձավճարների տեսքով վարձատուին է փոխանցվում «փոխառնված ակտիվի մայր գումարի» մնացորդը: Միաժամանակ, լիզինգի արժեքի նվազման հաշվին տարիների ընթացքում բարձրանում է վարձակալության եկամուտը: [70]

[70] Лещенко М.И., Основы лизинга, М.. “Прогресс-МТ”, 2000, с. 91.

Հետևաբար, վարձակալության հավասարակշռված գինը ձևավորվում է ոչ թե լիզինգի մեկնարկին, այլ ֆինանսական վարձակալության ընթացքում, որի վրա ուղղակիորեն ազդում է մակրոտնտեսական միջավայրում վարվող քաղաքականությունը:[71] Ֆինանսական վարձակալության արժեքի, տոկոսադրույքների, եկամուտների, հետգնման ժամկետների գործոնային վերլուծությունը ներկայացնենք գրաֆիկորեն:

Գծապատկեր 2.12-ում վարձակալության արժեքը ներկայացնում ենք V տառով (օրդինատների առանցք), իսկ տարիները՝ T տառով (աբսիսների առանցք): Ակտիվի լիզինգի վարձավճարի սահմանման չափը նշանակել ենք C_0–ով, որը տարիների ընթացքում կրճատման միտում ունի՝ կապված ակտիվի բարոյական մաշվածության և շուկայական գնի նվազման հետ:



Գծապատկեր 2.12

Վարձակալության հավասարակշռված գնի ձևավորումը

Վարձակալի մոտ ակտիվի շահագործման եկամուտը նշանակել ենք M_0-ով (տե՛ս գծապատկեր 2.12), որը տարիների ընթացքում

[71] Downes J., Finance and Investment Handbook, 5th ed., N.Y. Barons Educational Series, 1999, p. 206.

ավելանալու միտում ունի՝ կապված վարձակալության արժեքի աստիճանական նվազման հետ: Ուստի դրանց հատման կետն էլ կձևավորի ֆինանսական շուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռմամբ վարձակալության գինը (c_0 կետ) և լիզինգի արժեքի փոխհատուցման ժամկետը (a_0 կետ):

Եթե ֆինանսական շուկայում բարձրանան երկարատև վարկավորման տոկոսադրույքները, լիզինգի ֆինանսավորման աղբյուրները կթանկանան, և արդյունքում՝ վարձակալության պայմանագրերը կկազմվեն առավել բարձր տոկոսադրույքներով՝ ձևավորելով լիզինգի գնի աճ (տե՛ս գծապատկեր 2.13): Եթե նման իրավիճակում լիզինգից ակնկալվող եկամուտները մնան անփոփոխ (M_0), ապա կաճի վարձավճարների չափը, և C_0 կորը կտեղափոխվի դեպի վեր (C_1 դիրք)՝ զուգահեռաբար ավելացնելով և՛ լիզինգի արժեքի փոխհատուցման ժամկետը (a_1 կետ), և՛ վարձակալության գինը (c_1 կետ):



Գծապատկեր 2.13

Վարձակալության ծախսերի հետգնումը ծախսերի աճի վարքագծի պարագայում

Փաստորեն, վարձակալության ծախսերի հետգնման ժամկետի երկարացումը ($a_1 - a_0$) և լիզինգի գնաճը ($c_1 - c_0$), որը արդյունք է տո-

կոսադրույքների աճի, տնտեսապես շահավետ չեն վարձակալի և վարձատուի համար: Ուստի հնարավորության սահմաններում անհրաժեշտություն է առաջանում, ըստ ծախսերի հետգնման տարիների, մեղմել գնաճի առաձգականությունը՝ ձգտելով $(c_1 - c_0) / (a_1 - a_0)$ հարաբերությունը հասցնել նվազագույնի:

Տոկոսադրույքների աճի երկարատև պահպանման արդյունքում ֆինանսական շուկայում աստիճանաբար ընկնում է լիզինգի պահանջարկը (տե՛ս գծապատկեր 2.14), որը հանգեցնում է վարձակալության գնի հետագա անկման (C_4 կետ՝ $c_0 - c_4 < 0$): Իր հերթին, մակրոտնտեսական միջավայրում արձանագրվում է լիզինգի եկամուտների նվազում (M_2 կորի տեղաշարժ դեպի ներքև)՝ զուգահեռաբար ավելացնելով վարձակալության հետգնման ժամկետը ($a_0 - a_4 > 0$):

Վարձակալության գնի էժանացումը հանգեցնում է լիզինգի պահանջարկի ավելացմանը, որի արդյունքում ավելանում է ֆինանսական վարձակալության գինը՝ բերելով մինչ տոկոսադրույքների ավելացման պահը պահանջարկի և առաջարկի հավասարակշռված մեկնարկային մակարդակի նախկին դիրքին (c_0), որը ներկայացված է գծապատկեր 2.12-ում:



Գծապատկեր 2.14
Վարձակալության ծախսերի հետգնումը եկամուտների նվազման վարքագծի պարագայում

Լիզինգի առաջարկի և պահանջարկի հավասարակշռմամբ պայմանավորված՝ գնի ձևավորման նման իրավիճակ է ստեղծվում նաև այն ժամանակ, երբ ֆինանսական շուկայում իջնում են տոկոսադրույքները: Այսպես՝ տոկոսադրույքների իջեցման երկարատև իրավիճակը հանգեցնում վարձակալության ծախսերի կրճատման, և արդյունքում C_0 կորը տեղափոխվում է C_2 դիրք՝ բերելով վարձակալության գնի նվազման՝ $c_0 - c_2 < 0$: Զուգահեռաբար կրճատվում է նաև վարձակալության ծախսերի հետգնման ժամկետը՝ $a_0 - a_2 < 0$ (տե՛ս գծապատկեր 2.15):



Գծապատկեր 2.15
Վարձակալության ծախսերի հետգնումը ծախսերի նվազման վարքագծի պարագայում

Մակրոտնտեսական նման վիճակը չափազանց գրավիչ է դարձնում լիզինգը, և կազմակերպությունները ձգտում են էժան ու կարճաժամկետ հետգնմամբ ֆինանսական վարձակալության: Արդյունքում՝ աճում է վարձակալության եկամուտը՝ ներկայանալով M_1 կորով: Հետևաբար, լիզինգի պահանջարկի արագ աճը հանգեցնում է առաջարկի թանկացմանը, և որոշակի ժամանակահատվածում վարձա-

կալության գինը աճում է և հասնում c_3 մակարդակին (տե՛ս գծապատկեր 2.16):



Գծապատկեր 2.16
Վարձակալության ծախսերի հետգնումը աճող եկամուտների վարքագծի պարագայում

Ֆինանսական վարձակալության մակրոտնտեսական կարգավորման համակարգում հիմնախնդիր է առաջացնում այն իրավիճակը, երբ միաժամանակ արձանագրվում է ինչպես լիզինգի գնաճ, այնպես էլ՝ եկամուտների ավելացում (տե՛ս գծապատկեր 2.17): Ֆինանսական շուկայում նման իրավիճակ դրսևորվում է տնտեսական կտրուկ վերելքի ժամանակ, երբ կապիտալ ներդրումները դառնում են չափազանց շահավետ, և դրանց բուռն զարգացումն առաջացնում է ֆինանսական անհրաժեշտ միջոցների պակաս: Այդպիսով՝ աճում է երկարաժամկետ փոխառությունների տոկոսադրույքը՝ զուգահեռաբար թանկացնելով լիզինգի արժեքը (տե՛ս C_1 կոր): Միաժամանակ, տնտեսական վերելքն ապահովում է վարձակալության բարձր եկամուտներ (M_1 կոր), որոնք ձևավորում են լիզինգի հավասարակշիռ գին c_5 կետում և ծախսերի փոխհատուցման ժամկետ՝ a_5 կետում (տե՛ս գծապատկեր 2.17):



Գծապատկեր 2.17
Վարձակալության ծախսերի հետգնումը ծախսերի և եկամուտների աճի վարքագծի պարագայում

Մակրոտնտեսական նման հավասարակշիռ վիճակը, թերևս, ժամանակագրական տեսանկյունից համեմատաբար կարճ է տևում, սակայն դրա արդյունքում թանկանում է լիզինգը ($c_5 - c_0 > 0$), և երկարաձգվում է ծախսերի փոխհատուցման ժամկետը ($a_5 - a_0 > 0$):

Ճիշտ հակառակ պատկեր է տոկոսադրույքների և վարձակալության եկամուտների անկման պարագայում (տե՛ս գծապատկեր 2.18), երբ վարձակալությունը ուղեկցվում է լիզինգի գնի նվազմամբ ($c_0 - c_6 < 0$), և հետևաբար, վարձակալության ծախսերի հետգնման ժամանակահատվածի կրճատմամբ ($a_0 - a_6 < 0$): Մակրոտնտեսական նման հավասարակշռությունը բնորոշ է տնտեսական անկման ժամանակահատվածին, երբ ֆինանսական շուկայում նվազում է վարկավորման ծավալների պահանջարկը, տոկոսադրույքների իջեցումը ուղղակիորեն ձևավորում է լիզինգի եկամուտների կրճատում (M_0 կետի տեղաշարժը M_2 դիրք), ինչպես նաև լիզինգային ծախսերի տնտեսում (տե՛ս գծապատկեր 2.18): Վարձակալության և ֆինանսավարկային քաղաքականության փոխկապակցվածության գծապատկերային վերլուծության արդյունքներն ամփոփենք աղյուսակ 2.2-ում:



Գծապատկեր 2.18

Վարձակալության ծախսերի հետգնումը ծախսերի և եկամուտների նվազող վարքագծի պարագայում

Աղյուսակ 2.2-ի տվյալները վկայում են ֆինանսական քաղաքականության և վարձակալության տնտեսական արդյունքների տարաբնույթ փոխկապակցվածության մասին: Այսպես՝ մակրոտնտեսական տարբեր իրավիճակներում վարձակալության ծախսերի հետգնման ժամկետը փոփոխման է ենթարկվում տոկոսային դրույքների և լիզինգի եկամուտների տատանման հետևանքով: Ֆինանսական վարձակալության ակտիվացման առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվում երկրորդ սցենարի դեպքում, երբ լիզինգի ծախսերի սահուն նվազմամբ կրճատվում է ինչպես վարձավճարի գինը, այնպես էլ՝ հետգնման ժամկետը: Իսկ երբ թանկանում են փոխառությունները և բարձրանում են վարկային տոկոսադրույքները, աճում է ինչպես լիզինգի գինը, այնպես էլ՝ վարձակալության ծախսերի հետգնման ժամանակահատվածը (մակրոտնտեսական իրավիճակի առաջին սցենար):

Աղյուսակ 2.2

Վարձակալության ծախսերի հետգնումը ծախսերի և եկամուտների փոփոխվող վարքագծի պարագայում

Սցենար	Բովանդակություն	Հետգնման միտումը	Փոփոխման արդյունքը	Լիզինգի գնի փոփոխությունը	Փոփոխման արդյունքը
I	Վարձակալության ծախսերի հետգնումը լիզինգի ծախսերի աճի վարքագծի պարագայում	հետգնման տարիների աճ $a_1 - a_0 > 0$	+ ↑	լիզինգի գնի աճ $c_1 - c_0 > 0$	+ ↑
II	Վարձակալության ծախսերի հետգնումը լիզինգի ծախսերի նվազման վարքագծի պարագայում	հետգնման տարիների նվազում $a_0 - a_2 < 0$	- ↓	լիզինգի գնի նվազում $c_0 - c_2 < 0$	- ↓
III	Վարձակալության ծախսերի հետգնումը աճող եկամուտների վարքագծի պարագայում	հետգնման տարիների նվազում $a_0 - a_3 < 0$	- ↓	լիզինգի գնի աճ $c_3 - c_0 > 0$	+ ↑
IV	Վարձակալության ծախսերի հետգնումը եկամուտների նվազման վարքագծի պարագայում	հետգնման տարիների աճ $a_4 - a_0 > 0$	+ ↑	լիզինգի գնի նվազում $c_0 - c_4 < 0$	- ↓
V	Վարձակալության ծախսերի հետգնումը լիզինգի ծախսերի և եկամուտների աճի վարքագծի պարագայում	հետգնման տարիների աճ $a_5 - a_0 > 0$	+ ↑	լիզինգի գնի աճ $c_5 - c_0 > 0$	+ ↑
VI	Վարձակալության ծախսերի հետգնումը լիզինգի ծախսերի և եկամուտների նվազման վարքագծի պարագայում	հետգնման տարիների նվազում $a_0 - a_6 < 0$	- ↓	լիզինգի գնի նվազում $c_0 - c_6 < 0$	- ↓

Հատկանշական է, որ տնտեսական վերելքի պայմաններում, երբ միաժամանակ աճում են լիզինգի եկամուտներն ու ծախսերը, դիտվում է վարձակալության գնի թանկացում և հետգնման ժամկետի երկարաձգում (V սցենար), որը, բնականաբար, չի կարող դրականորեն ազդել ֆինանսական վարձակալության հետագա զարգացման վրա:

Այսպիսով՝ վարձակալությունը ֆինանսական քաղաքականության շրջանակներում կատարում է հետևյալ գործառույթները.

առաջին՝ կարճաժամկետ լիզինգի ակտիվացման դեպքում ֆինանսական շուկայում նվազում է երկարատև փոխառությունների պահանջարկը, և արդյունքում՝ երկարատև վարկային տոկոսադրույքները ձգտում են նվազման: Մյուս կողմից, լիզինգի իրականացումը խոշոր ներդրումներ է պահանջում, որոնք հետգնման երկարաժամկետայնություն ունեն և երկարատև փոխառություններով են իրագործվում՝ ձևավորելով երկարատև վարկային տոկոսադրույքների աճ: Հետևաբար, ֆինանսական շուկայում վարձակալական հարաբերությունները նպաստում են տոկոսադրույքների տատանումների մակրոտնտեսական հավասարակշռմանը,

երկրորդ՝ վարձակալության գինը և լիզինգի ծախսերի հետգնման ժամկետները ֆինանսական շուկայում ներազդում են վարկային ռեսուրսների առաջարկի և պահանջարկի վրա՝ դրանով իսկ տնտեսական պարբերաշրջանի տարբեր փուլերում (վերելք, կայունացում, անկում) մակրոտնտեսական կարգավորիչ դեր կատարելով փոխառությունների տոկոսադրույքները ձևավորելիս: Այսպես՝ տնտեսական վերելքների ժամանակ թանկանում է վարձակալության գինը, երկարաձգվում են լիզինգի ծախսերի հետգնման ժամկետները, և դրանով իսկ, ֆինանսական շուկայում բարելավվում են վարկավորման մրցակցային դիրքերը լիզինգի նկատմամբ: Եվ հակառակը, տնտեսական անկումների դեպքում նկատվում է լիզինգի ծախսերի նվազման միտում, որն էլ հանգեցնում է վարձակալության ակտիվացման և վարկային շուկայում փոխառությունների պահանջարկի կրճատման,

երրորդ՝ ֆինանսական վարձակալության արժեքի, տոկոսադրույքների, եկամուտների, հետգնման ժամկետների արդյունքները, միմյանց հակակշռելով, մրցակցային միջավայր են ստեղծում վարկային շուկայում՝ նպաստելով մակրոտնտեսական միջավայրում փոխառությունների օգտագործման արդյունավետության բարձրացմանը: Հետևաբար, լիզինգի թանկացմանը զուգընթաց, կազմակերպությունները ձգտում են վարձակալության փոխհատուցման ժամկետների կրճատման, լիզինգի օբյեկտների բարոյական մաշվածության ռիսկայնության նվազման՝ նպաստելու համար փոխառու միջոցների արդյունավետ կառավարմանը:

ԳԼՈՒԽ III
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1 Հարկային պարտավորությունների ազատականացման ռիսկայնության գնահատումը վարձակալության շուկայում

Պետությունն իր տնտեսական գործառույթների իրականացման համար տիրապետում է կարգավորման լծակների մի ամբողջ համակարգի, որի մեջ առաձնակի կարևորություն և տեղ ունի հարկաբյուջետային քաղաքականությունը: Զարգացած շուկայական տնտեսությամբ երկրների տնտեսական պատմությունը վկայում է, որ հարկային քաղաքականությունը մշտապես օգտագործվել է տնտեսության պետական կարգավորման նպատակով: Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ տրվում է հարկային քաղաքականության հետևյալ ձևակերպումը. «Հարկային քաղաքականությունը կարգավորիչ բնույթի իրավական նորմերի և կազմակերպատնտեսական իրավական միջոցառումների ամբողջություն է, որն ընդունվում և իրացվում է պետական իշխանության մարմինների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց հետ հարկային հարաբերությունների ոլորտում»:[72]

«Հարկ» հասկացությունը մասնագիտական գրականության մեջ մի շարք սահմանումներ ունի: Գերմանացի գիտնականները հարկերը դիտել են որպես քաղաքացիներից՝ պետությանը ցուցաբերվող օգնություն (պաշտպանություն): Անգլիայում առ այսօր հարկերը կրում են պարտք (պարտավորություն), Ֆրանսիայի օրենսդրությամբ՝ պարտադիր վճարներ անվանումը: Ժամանակակից գրականությունում հարկերը դիտարկվում են որպես օրենսդրությամբ սահմանված կարգով պետական և այլ մակարդակի բյուջե կատարվող պարտադիր, անվերադարձ, համապատասխան ժամկետներով և դրույքաչափերով վճարներ:[73]

Հարկային քաղաքականությունը կրում է դինամիկ բնույթ՝ ենթարկվելով որոշակի փոփոխությունների, կախված կոնկրետ

[72] Налоги, Словарь-справочник., М., ИНФРА, 2000, с. 96.

[73] Գրիգորյան Կ., Հարկային իրավունքի հիմունքներ, հեղ. հրատ., Եր., 2007, էջ 13:

տնտեսական պայմաններից, սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի նպատակներից և երկրի տնտեսության զարգացման գերակայություններից: Իրականացնելով միմյանցից տարբեր տնտեսական քաղաքականություն՝ պետությունները միմյանցից տարբերվում են նաև հարկման եղանակների ընտրությամբ: Մասնավորապես՝ հաշվի են առնվում, թե որ գերակայությունները պետք է դիտարկվեն ուղղակի և անուղղակի հարկերի դրույքաչափերը որոշելիս, ինչ հարկային արտոնություններ պետք է գործեն տնտեսության տարբեր ոլորտների աշխուժացման նպատակով:

Շուկայական տնտեսության պայմաններում ցանկացած պետություն հարկային քաղաքականությունն օգտագործում է որպես շուկայի նեգատիվ երևույթների վրա ներգործության որոշակի կարգավորիչ, և հարկերն ու ողջ հարկային համակարգը դառնում են տնտեսության կառավարման արդյունավետ գործիք: Հարկային քաղաքականությունը բարձր տնտեսական աճի և մակրոտնտեսական հավասարակշռության, տնտեսության կայունացման ու առաջընթացի ապահովման հիմնական երաշխիքներից է:

Հարկերի աճը նպաստում է պահանջարկի իջեցմանը և ներդրումների կրճատմանը, իսկ իջեցումը՝ տնտեսավարման սուբյեկտների ու քաղաքացիների կողմից դրամական ազատ միջոցների աճին, որը տանում է պահանջարկի կապիտալ ներդրումների ծավալի մեծացման: Հարկային ծանր բեռը ստեղծում է օբյեկտիվ նախադրյալներ տնտեսական աճի տեմպերի դանդաղեցման և ստվերային տնտեսության ծավալների ընդլայնման համար, իսկ հարկային բեռի թեթևացումը, որը չի փոխհատուցվում հարկային վարչարարության ուժեղացմամբ կամ հարկային բազայի ընդլայնմամբ, կարող է իրականացվել միայն պետական ծախսերի կրճատման ճանապարհով:

Ի վերջո, հարկային քաղաքականությունը կարող է համարվել արդյունավետ, եթե այն նպաստում է ներդրումային միջավայրի ակտիվացմանն ու զբաղվածության ավելացմանը, կառուցվում է հարկային ազատական մոտեցումներով, և հարկային վարչարարության միջոցով ստեղծվում են պայմաններ՝ բոլոր տնտեսավարող սուբյեկտներին հավասար մրցակցային պայմաններով ապահովելու համար: «Հարկերը կարելի է համեմատել դեղամիջոցի հետ, որի բուժական հատկությունները դրսևորվում են միայն դրա խելացի չափաքանակի դեպքում»:[74]

[74] Задон А., Петрухин Ю., Основы экономической теории., М., Рыбари, 2000, с. 344.

ՀՀ-ում հարկային եկամուտների դինամիկայի (տե՛ս աղյուսակ 3.1) վերլուծությունը ևս մեկ անգամ փաստում է հարկային մուտքերի կազմում ավելացված արժեքի հարկի գերիշխող դիրքի մասին, որը վերջին տարիներին ձգտում է 50%-ի (տե՛ս գծապատկեր 3.1):

Աղյուսակ 3.1

Հարկային եկամուտների դինամիկան ՀՀ-ում (մլն դրամ)[75]

Ցուցանիշներ	2005	2006	2007	2008	2009
Հարկային եկամուտներ	312 316	375 537	494 420	598 794	503 326
Ավելացված արժեքի հարկ	146 782	165 912	248 007	318 313	254 158
Շահութահարկ	46 556	65 329	75 503	8 612	8 121

Հարկային եկամուտների կառուցվածքային գնահատումը ցույց է տալիս, որ վերջին տարիներին հանրապետությունում ԱԱՀ-ի գծով մուտքերը շուրջ 3.5 անգամ գերազանցում են շահութահարկը (տե՛ս գծապատկեր 3.2): Նման հարաբերակցությունը, մեր կարծիքով, չի կարող նպաստել տնտեսության իրական հատվածում հարկային քաղաքականության խթանիչ դերի բարձրացմանը:

Վերջին տարիներին ՀՀ-ում իրականացված հարկային բարեփոխումները զգալիորեն նպաստեցին օրենսդրական միջավայրի բարելավմանը: Միևնույն ժամանակ, տնտեսությունում դեռևս առկա են ստվերայնություն և հարկային ապառքներ, որոնք վկայում են՝ հարկային քաղաքականության ոլորտում դեռևս կան բազմաթիվ խնդիրներ, որոնք լուրջ խոչընդոտ են հարկատուի և պետության միջև թափանցիկ ու պարզ փոխհարաբերությունների կառուցման համար: Հարկային համակարգի բարեփոխումների ուղի են՝ անուղղակի հարկերից ծանրության կենտրոնը ուղղակի հարկերի վրա տեղափոխումը, հարկային

[75] Կազմված է՝ Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք 2010, ԱՎԾ, տվյալներով, էջ 381:

վարչարարության խստացումը, հարկման արդարացիության սկզբունքների ապահովումը, տնտեսավարման սուբյեկտների գծով հարկման հավասար պայմանների ստեղծումը:[76]



Գծապատկեր 3.1

Հարկային եկամուտների կառուցվածքային դինամիկան ՀՀ-ում

Ներկայում հանրապետությունում վարվող հարկաբյուջետային քաղաքականությունը բնորոշվում է ոչ միայն տնտեսական խթանիչ լծակներով, այլև հարկային վարչարարության ուղղակի խստացումներով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ պետբյուջե հարկային մուտքերի շուրջ 14%-ը ստուգումներով հայտնաբերված ապառքներն ու տույժերն են (տե՛ս աղյուսակ 3.2): Հետևաբար, կազմակերպությունների իրականացրած հարկային հաշվետվությունների աուդիտը և հիմնավոր հաշվապահական հաշվառման կազմակերպումն իրենց հերթին էական ազդեցություն կունենան հարկային բեռի թեթևացման առումով՝ ձգտելով հարկային տույժ և տուգանքների մակարդակը հասցնել նվազագույնի:

[76] Գրիգորյան Կ., Հարկային իրավունքի հիմունքներ, հեղ. հրատ., Եր., 2007, էջ 47:



Գծապատկեր 3.2

ԱԱՀ և շահութահարկ հարաբերակցության դինամիկան ՀՀ հարկային եկամուտների կազմում

Պետության՝ հարկային քաղաքականությունը խթանելու ակտիվ միջոցներն իրագործվում են մակրոմակարդակով և կազմակերպությունների տնտեսական գործունեության վրա ազդում են ուղղակիորեն: Սակայն դա չի նշանակում, որ մեզոմակարդակով հնարավոր չէ արդյունավետ դարձնել հարկային պարտավորությունների ձևավորումն ու իրականացումը: Կարծում ենք, որ մակրոմակարդակով պետության հարկային քաղաքականության ազդեցության արդյունքները հնարավոր է որոշակիորեն վերաարժեվորել մեզոմակարդակում (ծյուղային): Այս առումով բացառություն չէ ֆինանսական վարձակալության շուկան:

Նախ՝ ֆինանսական վարձակալության ծառայությունների ոլորտն արդեն իսկ առնչվում է հարկային որոշ արտոնությունների: ԱԱՀ-ից ազատվում են բանկերի և վարկային կազմակերպությունների ներմուծած այն ապրանքների ֆինանսական վարձակալությամբ տրամադրումը, որոնք ներմուծման պահին ազատված են ԱԱՀ-ից[77], ԱԱՀ-ով զրոյական դրույքաչափով հարկում՝ ՀՀ-ից արտահանվող ապրանքների շրջանառությունը[78]՝ որպես լիզինգային ծրագրերի իրականացման արդյունք:

[77] «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը, հոդ. 15:

[78] Նույն տեղում՝ հոդ.16:

Աղյուսակ 3.2

ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային վարչարարության ամփոփ ցուցանիշները[79]

	Չ/մ	2009թ.	2010թ
Հաշվառված հարկ վճարողները	թվաքանակ	16 060	14 811
Վարչական տույժեր	հատ	23 844	27 877
Հարուցված քրեական գործեր	հատ	167	144
Հավաքագրված հարկային եկամուտներ	մլն դրամ	395 580	442 437
Ապարքներ	մլն դրամ	101 135	103 396

Բացի նշվածից, լիզինգի ոլորտում ներգրավված սարքավորումների և տեխնիկայի տոկոսային վարձավճարները նույնպես ազատվում են ԱԱՀ-ից, և պայմաններ են ստեղծվում ֆինանսական վարձակալության հարաբերությունների հարկային արդյունավետ պլանավորման համար: Սակայն, մեր կարծիքով, ֆինանսական վարձակալության ոլորտում անհրաժեշտ է բարելավել վարվող հարկաբյուջետային քաղաքականությունը, որպեսզի այն խթանիչ դերակատարում ունենա լիզինգի զարգացման գործում:

Հարկաբյուջետային խթանիչ քաղաքականության տեսությունը շրջանառվում է նախորդ դարավերջից՝ նոր դասականների կողմից և կիրառվում տնտեսության պետական կարգավորման բնագավառում: Հեղինակները ամերիկյան տնտեսագետներ Ա.Լաֆերը և Ջ.Գիլդերն էին: Պետական տնտեսական քաղաքականության տարբեր կողմերի միջև (ֆիսկալ, դրամաշրջանառություն, զբաղվածության կարգավորում, աշխատանքի վարձատրություն) հնարավոր կախվածությունները հետազոտելով, նրանք ձգտում էին գտնել ուղիներ տնտեսության ցնցումների կարգավորման ուղղությամբ՝ բնորոշ 1970-ական թվականների տնտեսական ճգնաժամին:

Ըստ նոր դասական տեսության՝ ձեռնարկատիրության կարևորագույն միջոցը պետության հարկային քաղաքականությունն է: Առա-

[79] http://www.taxservice.am/index.php?menuID=18&tid=2&pid=&

ջարկվում է հարկային քաղաքականությունը հիմնովին փոխել՝ իջեցնելով հարկերի դրույքաչափերը: Ենթադրվում է, որ արտադրության ընդլայնման հետ, ստագնացիայից տնտեսություն դուրս գալով, բյուջեն կհամալրվի ավելի մեծ եկամուտներով՝ հարկերի նույնիսկ ավելի ցածր դրույքաչափերի դեպքում: Հետևաբար, խրախուսվում է արտադրության այնպիսի գործոնը, որպիսին ձեռնարկատիրությունն է:

Հարկային բարեփոխումների նախագիծն առավել հստակորեն կենսագործվեց ԱՄՆ-ում, Ռոնալդ Ռեյգանի նախագահության առաջին ժամկետի ընթացքում: Եկամտահարկի առավելագույն՝ 70 տոկոս դրույքաչափն իջեցվեց մինչև 50 տոկոսի, որի արդյունքում հարկի դրույքաչափը դարձավ նվազ պրոգրեսիվ: Նմանատիպ հետևանքների հանգեցրեց նաև նույն համամասնությամբ (երեք տարվա ընթացքում՝ 23 տոկոսով) բոլոր հարկատուների եկամտահարկի կրճատումը: Արդյունքում՝ առավել ունևոր հարկատուների արտոնությունները դարձան խիստ էական: Տարեկան 60 հազ. ԱՄՆ դոլարից ավելի եկամուտ ունեցող հարկ վճարողների խմբին, որոնք կազմում էին բոլոր հարկատուների թվաքանակի միայն 4 տոկոսը, բաժին ընկավ հարկերի նվազեցման ընդհանուր գումարի 24 տոկոսը[80]: Բացի դրանից, կրճատվեցին նվիրատվությունների, անշարժ գույքի, կուտակումների և ներդրումների հարկումը: Նկատելի հարկային արտոնություններ տրամադրվեցին կորպորացիաներին: Վերանայվեցին ամորտիզացիոն ժամկետները, և իրականացվեցին մի շարք այլ միջոցառումներ: Արդյունքում՝ կորպորացիաների մասնաբաժինը հարկերի ընդհանուր գումարի մեջ 60-ական թվականների կեսերին 26 տոկոսից նվազեց և 80-ականների սկզբին կազմեց միայն 5 տոկոս:

Հետագայում եկամտահարկի առավելագույն դրույքաչափը նվազեցվեց մինչև 38 տոկոս: Ինչպես երևում է, գաղափարները, որոնք ընկած են նոր դասականների տեսությունների հիմքում, իրենց իրագործումը գտան հարկային քաղաքականության մեջ, և ձեռնարկատիրական նախաձեռնությունը հնարավոր դարձավ խրախուսել[81]:

Առաջարկի տնտեսության տեսությունը քեյնսականության և մոնետարիզմի համեմատ առավել մեծ չափով է հարկերը դիտում որպես տնտեսական զարգացման և տնտեսության կարգավորման կարևոր

[80] Налоги, Словарь-справочник., М., ИНФРА, 2000, с. 84-85

[81] Ճուղուրյան Ա., Սուքիասյան Ս., Ավետիսյան Դ., Հարկեր և հարկային հաշվառում, Եր.«Վան Արյան», 2007թ., էջ 16-17:

գործոն: Այս տեսության համաձայն՝ հարկային բեռի իջեցումը հանգեցնում է ձեռնարկատիրական և ներդրումային գործունեության բուռն աճի: Նշված տեսության շրջանակներում Ա. Լաֆերը սահմանեց հարկային դրույքաչափերի մակարդակի և բյուջեի եկամուտների միջև մաթեմատիկական կախվածությունը: Գծապատկերով «Լաֆերի էֆեկտը» ներկայացվում է որպես կոր (տե՛ս գծապատկեր 3.3), որը ցույց է տալիս բյուջե հավաքագրվող հարկերի գումարների կախվածությունը հարկերի դրույքաչափերից:

Լաֆերի կորի վրա պետք է առանձնացնել հետևյալ կետերը.

- հարկի դրույքաչափը զրո է, և բյուջե մուտքեր չկան,
- հարկի դրույքաչափը 100 տոկոս է, բյուջե մուտքեր չկան. նման պայմաններում ոչ ոք չի աշխատում, և բոլորը հեռանում են «ստվերային տնտեսություն»,



Գծապատկեր 3.3

Բյուջեի հարկային մուտքերի կախվածությունը հարկման մակարդակից (Լաֆերի էֆեկտ)[82]

- հարկի դրույքաչափի (r) մյուս բոլոր մակարդակների դեպքում հարկատուները վճարում են, իսկ պետությունը հավաքագրում է հարկերը,

[82] Ведута Е. Н. Стратегия и экономическая политика государства, М. "Наука", 2004, с. 69.

- A կետ: r_a-ի որոշակի նշանակության պայմաններում ձեռք են բերվում բյուջեի առավելագույն մուտքերը, r_a-ն հարկի դրույքաչափի օպտիմալ մակարդակն է, իսկ T_a-ն բյուջե կատարվող հարկային մուտքերի առավելագույն գումարն է:

Եթե հարկի դրույքաչափն ավելանա r_a-ի համեմատությամբ, ապա տեղի կունենա բյուջեի հարկային եկամուտների ոչ թե ավելացում, այլ նվազում, այսինքն՝ երբ $r_b > r_a$, ապա $T_b < T_a$, քանի որ հարկի բարձր դրույքաչափի դեպքում նվազում են աշխատանքային և ձեռնարկատիրական գործունեության խթանները:

Այսպիսով՝ «Լաֆերի էֆեկտի» էությունը հետևյալն է. եթե տնտեսությունը գտնվում է A կետից դեպի աջ (օրինակ՝ B կետում), ապա հարկման մակարդակի նվազեցումը մինչև օպտիմալ մակարդակը կարճաժամկետ հեռանկարում իջեցնելու է բյուջեի հարկային եկամուտները, սակայն երկարաժամկետ հեռանկարում դրանք կաճեն, քանի որ ուժեղանում են աշխատանքային և ձեռնարկատիրական գործունեության խթանները, տեղի է ունենում «ստվերային» տնտեսությունից անցում օրինականին:

Վարձակալության գործընթացը հիմնականում առնչվում է երեք հարկատեսակի՝ ավելացված արժեքի հարկ, շահութահարկ և գույքահարկ, որոնք հարկաբյուջետային համակարգում կարգավորման տարբեր աստիճաններ ունեն: Մասնավորապես՝ պետությունը կարող է որոշակի արտոնություններ սահմանել լիզինգով տրվող ակտիվների գույքահարկի գծով՝ խթանելով ֆինանսական վարձակալությունը: Նման արտոնություններ սահմանվում են նաև ԱԱՀ-ի գծով, որը գործում է ՀՀ ֆինանսական շուկայում:

Մեր կարծիքով, վարձակալության գործընթացում հարկաբյուջետային քաղաքականության առավել ակտիվ դերակատարումը վերագրվում է շահութահարկին: Նկատի ունենք ոչ թե պետության կողմից վարձակալության շահութահարկի արտոնությունների սահմանումը, որին մենք վերաբերվում ենք որպես հարկաբյուջետային քաղաքականության կարգավորման պասիվ գործոնի, այլ շահութահարկի պարտավորությունների ժամանակագրական ձևավորումը, որը մեծապես կարևորվում է վարձակալության ոլորտի հարկաբյուջետային քաղաքականության զարգացման մեջ:

Ֆինանսական վարձակալության դեպքում շահութահարկի գծով պարտավորությունների բեռը վարձատուի և վարձակալի վրա է: Ընդորում, վարձատուի մոտ, վարձավճարները համարվում են եկամուտներ և ձևավորում են շահութահարկի պարտավորություններ, իսկ վարձակալի մոտ նույն վարձավճարները ծախսեր են և շահութահարկի հաշվարկներում դիտարկվում են որպես համախառն եկամտից նվազեցումներ[83]: Եվ եթե ժամանակագրական առումով վարձավճարների տեսքով եկամուտները և ծախսերը տարբեր արագությամբ են ձևավորվում վարձատուի և վարձակալի մոտ, ապա դրանով տարաբնույթ մոտիվացիոն տնտեսական դաշտ է ձևավորվում վարձակալության շուկայում:

Այսպես՝ լիզինգի պայմանագիրը կարող է կարճ ժամկետով կնքվել՝ մեծացնելով վարձավճարների չափաբաժինը տարիների կտրվածքով, կամ, ընդհակառակը, պայմանագրի ժամանակահատվածը երկարաձգելով՝ կրճատել վարձակալի եկամուտների չափաբաժինը վարձակալության յուրաքանչյուր տարվա գծով: Բնականաբար, տնտեսական գործընթացի նույն արդյունքը կարձանագրվի վարձակալի մոտ, երբ լիզինգի պայմանագրի երկարաժամկետայնությունը կհանգեցնի յուրաքանչյուր տարվա վարձակալության ծախսերի նվազման և հակառակը:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ վարձակալի մոտ լիզինգային ծախսերն ըստ տարիների փոփոխվում են ոչ միայն վարձակալության ժամկետի ընդլայնումից կամ սեղմումից, այլև լիզինգի օբյեկտի ամորտիզացման քաղաքականության ընտրությունից: Օրինակ՝ եթե վարձակալն ընտրում է լիզինգային ակտիվի արագացված ամորտիզացման քաղաքականություն, ապա վարձակալության սկզբում կտրուկ աճում են լիզինգային ծախսերը, իսկ վերջում՝ նվազում էականորեն[84]:

Ժամանակագրական տեսանկյունից լիզինգի ծախսերի (վարձակալի մոտ) և եկամուտների (վարձատուի մոտ) նման փոփոխություններն ազդում են ոչ միայն շահութահարկի պարտավորությունների ծավալների, այլև ֆինանսական շուկայում վարձակալության գնի

[83] Воропаева Н., Корнева Л. Налогообложение операций по договору лизинга, Финансовая газета, 1998, № 51 с. 5.

[84] Ищенко Е.П. Государство — особый участник лизинговых отношений. Законность. 2007, №11. с. 49.

ձևավորման վրա[85]: Հետևաբար, վարձատուի և վարձակալի մոտ վարձավճարների և վարձակալական ծախսերի ճանաչման ժամանակային տարբերությունների արդյունքները կարող են կարգավորիչ դեր խաղալ լիզինգի շուկայում, մասնավորապես՝ գնագոյացման և հարկային պարտավորությունների ձևավորման ոլորտում:

Լիզինգի արժեքի (V) և շահութահարկի պարտավորությունների (P) փոխկապակցվածության գծանկարային վերլուծությունը ներկայացնենք վարձակալության եկամուտների (B) և ծախսերի (C) փոփոխության վարքագծով (տե՛ս գծապատկեր 3.4):



Գծապատկեր 3.4

Վարձակալության գնի և շահութահարկի պարտավորությունների փոխկապակցվածությունը

Վարձավճարները, որոնք վարձատուի համար եկամուտներ են (B_0), լիզինգի արժեքի աճին զուգընթաց ավելացնում են նրա շահույթը, հետևաբար նաև շահութահարկի պարտավորությունները: Մյուս կողմից, վարձավճարները վարձակալի մոտ ծախսեր են (C_0), և դրանց կրճատումը նույնպես հանգեցնում է վարձակալի շահույթի և շահութահարկի աճի (տե՛ս գծապատկեր 3.4): Փաստորեն,

[85] Экономическая теория, под ред. А.И. Добрынина, "Питер", М., 2000, с. 588.

լիզինգի գնի փոփոխությունը տարբեր ուղղություններով է ազդում վարձատուի և վարձակալի շահույթի և վճարվելիք շահութահարկի պարտավորության մեծության վրա: Արդյունքում՝ լիզինգի գծով շահութահարկի հանրագումարային պարտավորությունը (վարձատուի և վարձակալի կողմից) V_0 վարձավճարի սահմանման դեպքում ձևավորվում է P_0 կետում:

Այժմ դիտարկենք այն իրավիճակը, երբ վարձակալը, կիրառելով ակտիվի արագացված ամորտիզացիա, վարձակալության սկզբնական շրջանում ավելացնում է լիզինգի ծախսերը՝ C_0 կորը տեղափոխելով C_1 դիրք (տե՛ս գծապատկեր 3.5): Արագացված ամորտիզացիան վարձակալի մոտ լիզինգին դիմելու մոտիվացիա է ստեղծում, որն էլ իր հերթին, ֆինանսական շուկայում ավելացնելով լիզինգի պահանջարկը, մեծացնում է վերջինիս արժեքը՝ V_0 կետից մինչև V_1 կետ: Բարձր վարձավճարներն էլ հանգեցնում են շահութահարկի մուտքերի աճի (P_0 կետի տեղաշարժը՝ P_1 կետ):



Գծապատկեր 3.5

Լիզինգի շահութահարկի պարտավորությունների ձևավորումը վարձակալի կողմից ակտիվի արագացված ամորտիզացման դեպքում



Գծապատկեր 3.6

Լիզինգի շահութաբերության պարտավորությունների ձևավորումը ակտիվի արագացված ամորտիզացման և վարձավճարների հավաքագրման ժամկետների կրճատման դեպքում

Հետևաբար, վարձակալը, կիրառելով արագացված ամորտիզացիա, վերջին հաշվով, նպաստում է լիզինգի աշխուժացմանը ֆինանսական շուկայում և դրա հետ կապված՝ հարկային մուտքերի աճին: Երբ տեղի է ունենում լիզինգային եկամուտների (B) և ծախսերի (C) միաժամանակյա աճ, այսինքն՝ վարձակալության ժամկետների կրճատում վարձատուի կողմից և ակտիվի արագացված ամորտիզացիա՝ վարձակալի կողմից, ապա ֆինանսական շուկայում վարձակալության արժեքի աճ է արձանագրվում (V_0-ից՝ V_2 կետ), սակայն հարկային մուտքերի աճի տեմպը չի գերազանցում, այլ ընդհակառակը՝ հետ է ընկնում վարձակալության գնի աճից (տե՛ս գծապատկեր 3.6): Պատճառը ֆինանսական շուկայում վարձակալության առաջարկի ավելացումն է, որը հանգեցնում է լիզինգի գնաճի ($\Delta V_2 > \Delta V_1$) և, միաժամանակ, հարկային մուտքերը մեղմելուն ($\Delta P_1 > \Delta P_2$)՝ պայմանավորված արագացված ամորտիզացիոն ծախսերի ավելացումով: Ուստի լիզինգի բնագավառում պետության հարկաբյուջետային քաղաքականությունը բյուջետային մուտքերի ապահովման առումով պետք պահպանի $\Delta P/\Delta V > 1$ հարաբերակցությունը՝ միաժամանակ ստեղծելով վարձակալության գործընթացի խթանիչ միջավայր:



Գծապատկեր 3.7

Լիզինգի շահութաբերության պարտավորությունների ձևավորումը ակտիվի հավասարաչափ ամորտիզացման և վարձավճարների հավաքագրման ժամկետների երկարացման դեպքում

Հարկային մուտքերի կտրուկ աճ չի արձանագրվում, և դրանք հարաբերականորեն մնում են կայուն կամ փոքր-ինչ նվազում են նաև այն դեպքում, երբ ժամանակագրական տեսանկյունից տեղի է ունենում վարձակալության ծախսերի (C) և եկամուտների (B) միաժամանակյա նվազում՝ վարձատուի և վարձակալի մոտ (տե՛ս գծապատկեր 3.7): Այս իրավիճակում ֆինանսական շուկայում ընկնում է լիզինգի արժեքը (V_0-ից՝ V_3 կետ), քանի որ վարձակալը կիրառում է հավասարաչափ ամորտիզացիա, երկարացնում է վարձակալության ժամկետը՝ ձևավորելով ակտիվի բարոյական մաշվածության ռիսկ և լիզինգի պահանջարկի նվազում: Երկարաժամկետ վարձակալության պարագայում վարձատուն ներգրավում է լրացուցիչ փոխառու միջոցներ՝ ավելացնելով իր

գործունեության ինքնարժեքը և կրճատելով իրեն հասանելիք շահութահարկի գծով հարկային պարտավորությունները (տե՛ս գծապատկեր 3.7):



Գծապատկեր 3.8

Լիզինգի շահութահարկի պարտավորությունների ձևավորումը՝ ակտիվի հավասարաչափ ամորտիզացման և վարձավճարների հավաքագրման ժամկետների կրճատման դեպքում

Երբ վարձակալը կիրառում է ակտիվի հավասարաչափ ամորտիզացիա՝ ժամանակագրական տեսանկյունից երկարաձգելով լիզինգի ծախսերը և տարիների կտրվածքով նվազեցնելով լիզինգի ինքնարժեքը, իսկ վարձատուն կարճ ժամանակով պայմանագիր է կնքում՝ ժամանակի կտրվածքով ավելացնելով վարձակալության եկամուտները (տե՛ս գծապատկեր 3.8), ապա արդյունքում՝ ֆինանսական շուկայում ավելանում է վարձակալության գինը, քանի որ կազմակերպվում է կարճաժամկետ լիզինգ, որը երկուստեք ձեռնտու է:

Ամփոփելով լիզինգի ժամկետներից և ամորտիզացիոն քաղաքականությունից վարձակալության գնի և շահութահարկի փոխկապակցվածության վերլուծությունը, հարկ ենք համարում նշել՝ ելնելով թե հարկաբյուջետային քաղաքականության շահերից և թե վարձակալության շուկայի ակտիվացման նկատառումներից՝ առավել շահեկան է վարձակալի կողմից ակտիվի արագացված ամորտիզացման կիրառումը, որը հանգեցնում է վարձակալության գնի և շահութահարկի պարտավորությունների աճի (տե՛ս աղյուսակ 3.3, սցենար 1):

Աղյուսակ 3.3

Գնի և շահութահարկի պարտավորությունների ձևավորման արդյունքները լիզինգի ժամկետների և ամորտիզացիոն քաղաքականության փոփոխման դեպքում[86]

Սցենարներ	Սցենարի բնութագրումը	Գ/պ	Արդյունքը	
Սցենար 1	ակտիվի արագացված ամորտիզացիա	3.5	գնաճ $V_1>V_0$	հարկերի աճ $P_1>P_0$
Սցենար 2	ակտիվի արագացված ամորտիզացիա և վարձավճարների հավաքագրման ժամկետների կրճատում	3.6	գնաճ $V_2>V_0$	հարկերի աճ $P_2>P_0$
Սցենար 3	ակտիվի հավասարաչափ ամորտիզացիա և վարձավճարների հավաքագրման ժամկետների երկարացում	3.7	գնի նվազում $V_3<V_0$	հարկերի նվազում $P_3<P_0$
Սցենար 4	ակտիվի հավասարաչափ ամորտիզացիա և վարձավճարների հավաքագրման ժամկետների կրճատում	3.8	գնաճ $V_4>V_0$	հարկերի նվազում $P_4<P_0$

[86] Կազմված է՝ ըստ 3.5 - 3.8 գծապատկերների տեղեկատվության:

Արագացված ամորտիզացիայի կիրառմանը զուգահեռ, լիզինգի պայմանագրային ժամկետների կրճատումը նույնպես դրական ազդեցությունն է թողնում վարձակալության շուկայի ակտիվացման, վարձավճարների ավելացման և շահութահարկի մուտքերի աճի վրա (տե՛ս աղյուսակ 3.3, սցենար 2): Տնտեսագիտական առումով՝ արագացված ամորտիզացիան նպաստում է ակտիվների նորացմանը և հետևապես՝ լիզինգային գործարքների հետագա ընդլայնմանը, որոնց հետևանքով վարձակալության ժամկետների կրճատումը զուգորդվում է լիզինգային գործարքների հարկային մուտքերի աճով:

Վերլուծության արդյունքները վկայում են, որ վարձակալության շուկան պասիվանում է և դրա հետ մեկտեղ կտրուկ նվազում են հարկային մուտքերը՝ լիզինգի հավասարաչափ ամորտիզացման և պայմանագրային ժամկետների երկարաձգման դեպքում (տե՛ս աղյուսակ 3.3, սցենար 3): Անգամ պայմանագրային ժամկետների կրճատումը չի կանխում հարկային մուտքերի նվազեցումը, երբ վարձակալը կիրառում է ակտիվի հավասարաչափ ամորտիզացման քաղաքականություն (տե՛ս աղյուսակ 3.3, սցենար 4):

Հետևաբար, վարձակալության շուկայի ակտիվացման և հարկային մուտքերի ավելացման նկատառումով առաջարկում ենք «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով թույլատրել կատարելու վարձակալած ակտիվների արագացված ամորտիզացիա, որը վարձատուի մոտ որոշակի ակտիվի գծով կավելացնի շահութահարկի նվազեցումները, սակայն, վերջին հաշվով, կնպաստի նաև լիզինգային հարկերի աճին, քանի որ վարձակալը շահագրգռվածություն կցուցաբերի ոչ թե գնելու, այլ ակտիվներ վարձակալելու՝ ընդլայնելով վարձակալական գործարքների հարկման բազան:

Ինչպես նշել ենք 2.1 պարագրաֆում, միջազգային փորձը վկայում է, որ շատ երկրներում վարձակալած ակտիվների արագացված ամորտիզացիան թույլատրվում է հարկային օրենսդրությամբ և հարկերի կրճատման առումով չի համարվում ռիսկային: Անգամ արագացված ամորտիզացիայի գործակիցը հասնում է մինչև 3-ի:[87] Նման փորձի կիրառումը արդարացված է տնտեսական այն իրավիճակներում, երբ վարձակալության շուկան առավել ակտիվ է, քան հիմնական միջոցների առք ու վաճառքի շուկան: Արդյունքում՝ լիզինգի հարկման բազայի աճի տեմպերը գերազանցում են հիմնական միջոցների ձեռք բերման հարկային բազայի աճի տեմպերը: Մակրոտնտեսական նման իրավիճակն առավելապես բնորոշ է զարգացող երկրներին:[88]

[87] Федеральный закон РФ о финансовой аренде (лизинге): от 29 октября 1998г., # 164-ФЗ, Налоговый кодекс РФ, с. 259.3. п.2, пп.1 (31.07.0998г.).

Ամփոփելով հարկային ազատականացման ռիսկայնության վերլուծության արդյունքները վարձակալության շուկայում՝ կատարենք հետևյալ եզրահանգումները.

առաջին՝ պետությունը հարկային քաղաքականությունը կարող է օգտագործվել որպես վարձակալության շուկայի ակտիվացման որոշակի կարգավորիչ, և հարկերն ու ողջ հարկային համակարգը կդառնան լիզինգի կառավարման արդյունավետ գործիք՝ ի հաշիվ վարձակալության գործարքների խթանիչ քաղաքականության ներգործության և լիզինգային գործարքների ծավալների ընդլայնման,

երկրորդ՝ հարկային քաղաքականությունը արդյունավետ է, եթե այն նպաստում է ներդրումային միջավայրի առավել ակտիվացմանը, կառուցվում է հարկային ազատական մոտեցումներով: Վարձակալության ոլորտում հարկային եկամուտների կառուցվածքային գնահատումը ցույց է տալիս, որ վերջին տարիներին հանրապետությունում ԱԱՀ-ի գծով մուտքերը շուրջ 3.5 անգամ գերազանցում են շահութահարկը, որը չի կարող նպաստել լիզինգի շուկայում հարկային քաղաքականության խթանիչ դերի բարձրացմանը: Ուստի նպատակահարմար է ԱԱՀ-ի գծով սահմանել լրացուցիչ արտոնություններ (տե՛ս պարագրաֆ 3.2),

երրորդ՝ լիզինգի շուկայի ակտիվացմանը, հետևապես՝ վարձակալության ոլորտի հարկային մուտքերի ավելացմանը մեծապես նպաստում են վարձակալության ժամկետների կրճատումը և վարձակալության օբյեկտի նկատմամբ արագացված ամորտիզացիայի կիրառումը: Ընդունելի ենք համարում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով թույլատրել հավասարաչափ ամորտիզացիայի կիրառմանը զուգահեռ, ֆինանսական վարձակալությամբ ակտիվների գծով նույնպես սահմանել արագացված ամորտիզացիա (տե՛ս պարագրաֆ 3.2):

[88] Королев А., Нужны новые подходы к лизинговому законодательству, Хозяйство и право, 2001, #9, с.118.

Արագացված ամորտիզացիայի կիրառմանը զուգահեռ, լիզինգի պայմանագրային ժամկետների կրճատումը նույնպես դրական ազդեցությունն է թողնում վարձակալության շուկայի ակտիվացման, վարձավճարների ավելացման և շահութահարկի մուտքերի աճի վրա (տե՛ս աղյուսակ 3.3, սցենար 2): Տնտեսագիտական առումով՝ արագացված ամորտիզացիան նպաստում է ակտիվների նորացմանը և հետևապես՝ լիզինգային գործարքների հետագա ընդլայնմանը, որոնց հետևանքով վարձակալության ժամկետների կրճատումը զուգորդվում է լիզինգային գործարքների հարկային մուտքերի աճով:

Վերլուծության արդյունքները վկայում են, որ վարձակալության շուկան պասիվանում է և դրա հետ մեկտեղ կտրուկ նվազում են հարկային մուտքերը՝ լիզինգի հավասարաչափ ամորտիզացման և պայմանագրային ժամկետների երկարաձգման դեպքում (տե՛ս աղյուսակ 3.3, սցենար 3): Անգամ պայմանագրային ժամկետների կրճատումը չի կանխում հարկային մուտքերի նվազեցումը, երբ վարձակալը կիրառում է ակտիվի հավասարաչափ ամորտիզացման քաղաքականություն (տե՛ս աղյուսակ 3.3, սցենար 4):

Հետևաբար, վարձակալության շուկայի ակտիվացման և հարկային մուտքերի ավելացման նկատառումով առաջարկում ենք «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով թույլատրել կատարելու վարձակալած ակտիվների արագացված ամորտիզացիա, որը վարձատուի մոտ որոշակի ակտիվի գծով կավելացնի շահութահարկի նվազեցումները, սակայն, վերջին հաշվով, կնպաստի նաև լիզինգային հարկերի աճին, քանի որ վարձակալը շահագրգռվածություն կցուցաբերի ոչ թե գնելու, այլ ակտիվներ վարձակալելու՝ ընդլայնելով վարձակալական գործարքների հարկման բազան:

Ինչպես նշել ենք 2.1 պարագրաֆում, միջազգային փորձը վկայում է, որ շատ երկրներում վարձակալած ակտիվների արագացված ամորտիզացիան թույլատրվում է հարկային օրենսդրությամբ և հարկերի կրճատման առումով չի համարվում ռիսկային: Անգամ արագացված ամորտիզացիայի գործակիցը հասնում է մինչև 3-ի:[87] Նման փորձի կիրառումը արդարացված է տնտեսական այն իրավիճակներում, երբ վարձակալության շուկան առավել ակտիվ է, քան հիմնական միջոցների առք ու վաճառքի շուկան: Արդյունքում՝ լիզինգի հարկման բազայի աճի տեմպերը գերազանցում են հիմնական միջոցների ձեռք բերման հարկային բազայի աճի տեմպերը: Մակրոտնտեսական նման իրավիճակն առավելապես բնորոշ է զարգացող երկրներին:[88]

[87] Федеральный закон РФ о финансовой аренде (лизинге): от 29 октября 1998г., # 164-ФЗ, Налоговый кодекс РФ, с. 259.3. п.2, пп.1 (31.07.0998г.).

Ամփոփելով հարկային ազատականացման ռիսկայնության վերլուծության արդյունքները վարձակալության շուկայում՝ կատարենք հետևյալ եզրահանգումները.

առաջին՝ պետությունը հարկային քաղաքականությունը կարող է օգտագործվել որպես վարձակալության շուկայի ակտիվացման որոշակի կարգավորիչ, և հարկերն ու ողջ հարկային համակարգը կդառնան լիզինգի կառավարման արդյունավետ գործիք՝ ի հաշիվ վարձակալության գործարքների խթանիչ քաղաքականության ներգործության և լիզինգային գործարքների ծավալների ընդլայնման,

երկրորդ՝ հարկային քաղաքականությունը արդյունավետ է, եթե այն նպաստում է ներդրումային միջավայրի առավել ակտիվացմանը, կառուցվում է հարկային ազատական մոտեցումներով: Վարձակալության ոլորտում հարկային եկամուտների կառուցվածքային գնահատումը ցույց է տալիս, որ վերջին տարիներին հանրապետությունում ԱԱՀ-ի գծով մուտքերը շուրջ 3.5 անգամ գերազանցում են շահութահարկը, որը չի կարող նպաստել լիզինգի շուկայում հարկային քաղաքականության խթանիչ դերի բարձրացմանը: Ուստի նպատակահարմար է ԱԱՀ-ի գծով սահմանել լրացուցիչ արտոնություններ (տե՛ս պարագրաֆ 3.2),

երրորդ՝ լիզինգի շուկայի ակտիվացմանը, հետևապես վարձակալության ոլորտի հարկային մուտքերի ավելացմանը մեծապես նպաստում են վարձակալության ժամկետների կրճատումը և վարձակալության օբյեկտի նկատմամբ արագացված ամորտիզացիայի կիրառումը: Ընդունելի ենք համարում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով թույլատրել հավասարաչափ ամորտիզացիայի կիրառմանը զուգահեռ, ֆինանսական վարձակալությամբ ակտիվների գծով նույնպես սահմանել արագացված ամորտիզացիա (տե՛ս պարագրաֆ 3.2):

[88] Королев А., Нужны новые подходы к лизинговому законодательству, Хозяйство и право, 2001, #9, с.118.

3.2 Հարկային բեռի վերաբաշխման հիմնախնդիրը լիզինգի ոլորտում

Հարկային համակարգի ներուժի գնահատման առավել տարածված և հաճախակի օգտագործվող ցուցանիշ է տնտեսության վրա հարկային ճնշման մեծությունը: Մասնագիտական գրականության մեջ հաճախ օգտագործվում է նաև «հարկային ծանրություն» ցուցանիշը՝ որպես հարկեր և տուրքեր/համախառն ներքին արդյունք հարաբերակցություն: Կիրառվում է նաև «հարկային բեռ» ցուցանիշը՝ ներկայացնելով հարկային մուտքերի տեսակարար կշիռը համախառն ազգային արդյունքում:[89]

Մասնագիտական գրականությունում հարկային բեռը ունի տարբեր մեկնաբանություններ: Այսպես՝ հարկային բեռ ասելով՝ գնահատվում է մի իրավիճակ, երբ բարձր հարկերը վտանգի տակ են դնում նյութական բարեկեցությունը, վճարման ենթակա հարկերի գումարը:[90] Առաջարկվում է նաև հարկային բեռը բնութագրել ֆիզիկական անձի կամ կազմակերպության վճարած հարկի մեծությամբ:[91]

Հարկային ռազմավարության համատեքստում հարկային բեռը գտնվում է տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Դա պայմանավորված է նրանով, որ, ի վերջո, երկրում իրագործվող հարկային ռազմավարությունը բնութագրող հիմնական հասկացությունը հարկային բեռն է:

Մասնագիտական գրականության մեջ հարկային բեռը կարևորում է նաև որպես տնտեսական չափորոշիչ: Ինչպիսի հարկային քաղաքականություն էլ ընտրած լինի պետությունը, նրա դերը բնութագրող առավել ընդհանրացնող ցուցանիշ է հարկային ծանրությունը կամ բեռը: Հարկային բեռի ցուցանիշը նաև պետության հարկային քաղաքականության կարևոր չափորոշիչ է:[92] Նշվում է նաև, որ այս ցուցանիշի միջոցով տրվում են այնպիսի հիմնահարցերի պատասխաններ, ինչպիսիք են՝ պետության հարկային համակարգի արդյունավետությունը, պետության ֆինանսական պահանջների բավարարման աստիճանը, հարկատուների տնտեսական ակտիվության խթանումը, ձեռնարկատիրական գործունեության շրջանակների ընդլայնման նպատակով՝ տնտեսավարման ուղիների առաջադրումը:

Վերլուծելով հայրենական տնտեսագետների՝ հարկային բեռի վերաբերյալ կարծիքները և մոտեցումները, պետք է նկատել, որ կարևորելով հասկացության նշանակությունը և նաև այն հաշվարկելու անհրաժեշտությունը, նրանք չեն բացահայտում որոշակի հարկատուի գծով հարկային բեռի ձևավորվող մակարդակը: Հետևաբար, չի բացահայտվում նաև այն, թե հանրապետությունում որ մակարդակը կարող է ընդունվել որպես հարկատուի հարկային բեռի ծանրության սահման: Ըստ էության, բացակայում են մշակումները կամ գոնե առաջարկությունները հարկ վճարողների հարկային բեռը հաշվարկելու մեթոդի ընտրության շուրջ:[93]

Ի վերջո, միայն նման հաշվարկների արդյունքում է հնարավոր կատարել եզրահանգում հարկային բեռի նկատելի ծանրության մասին: Որոշակի հաջորդականությամբ, ըստ վճարողների, հարկային բեռի հաշվարկումն այն անկյունաքարն է, որի վրա կարող է կառուցվել ինչպես երկրի արդյունավետ հարկային համակարգը, այնպես էլ մշակվել հարկային ինքնուրույն քաղաքականությունը (ոչ հարկաբյուջետային), որոնց հնարավորություններն իրենց հերթին պետք է պայմանավորեն երկրում իրագործվող բյուջետային քաղաքականության սահմանները:[94]

ՀՀ հարկային համակարգի գործունեության ֆիսկալ տեսանկյունից վերլուծությունը վկայում է, որ հարկային բեռի ծանրությունն առավելապես պայմանավորված է անուղղակի հարկերով, որոնք բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրն են: Դրան զուգահեռ շարունակում է ցածր մնալ ուղղակի հարկերի տեսակարար կշիռը: Ուղղակի և

[89] Խաչատրյան Տ., Հարկային բեռը բնութագրող ցուցանիշները և դրանց նշանակությունը հարկային համակարգի գնահատման համար, Էկոնոմիկա, #4, Եր., 1999 թ., էջ 34-35:

[90] Налоги и налоговое право, под. Ред. А. Брызалгина, М, Аналитика-Пресс, 1997, с. 55.

[91] Шишов В., Словарь современных экономических и правовых терминов., М., ФИНИНФО, 1999, с. 243.

[92] Մարկոսյան Ա., Հարկային բեռի կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում: Տնտեսագիտության թեկնածուի ատենախոսության սեղմագիր: Ե. 2004թ., էջ 13:

[93] Դարբինյան Գ., «ՀՀ հարկային քաղաքականության արդյունավետ իրականացման ուղիները», ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, «ՀՀ սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու- 8, Եր. 2006, էջ 85-89:

[94] Թամազյան Ա., Հարկային օրենսդրության հիմունքներ, «Տիգրան Մեծ», Եր., 2003թ., 148 էջ:

անուղղակի հարկերի նման հարաբերակցությունը, որը հանրապետությունում արդեն դարձել է ավանդական, չի կարող իր մեջ պարունակել տնտեսական զարգացման անհրաժեշտ նախադրյալներ: Տնտեսական զարգացման համար բարենպաստ նախադրյալներ ապահովելու նկատառումից ելնելով՝ աստիճանաբար պետք է բարձրացնել ուղղակի հարկերի տեսակարար կշիռը, փոխարենը՝ նվազեցնել անուղղակի հարկերինը:

Գործարարության ակտիվացման նպատակով կարևորվում է ոչ միայն հարկային բեռի իրատեսական գնահատումը, այլև արդյունավետ բաշխումը փոխկապակցված տնտեսական ոլորտների միջև, ինչպես վարձակալությունը իր «վարձատու-վարձակալ» փոխհարաբերությունների շղթայով:

Հարկերի օպտիմալացումը հարկային պարտավորությունների չափերի նվազեցումն է՝ հարկատուի նպատակաուղղված իրավական գործողությունների միջոցով, որոնք ընդգրկում են օրենդրությամբ նախատեսված բոլոր արտոնությունները, օրինական այլ եղանակներն ու միջոցները: Այլ կերպ ասած, դա ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման այնպիսի ձև է, որի դեպքում հարկային վճարումները հասցվում են նվազագույնի՝ օրինական եղանակով և չի ենթադրում պետական բյուջեի շահերի խախտումներ:[95]

Մեզոմակարդակով հարկային օպտիմալացումը կարող է լինել ընթացիկ և հեռանկարային: Հեռանկարային հարկային օպտիմալացումը ենթադրում է այնպիսի միջոցների և եղանակների կիրառում, որոնք փոքրացնում են հարկատուի հարկային բեռը՝ նրա ողջ գործունեության ընթացքում: Ընթացիկ հարկային օպտիմալացումը ենթադրում է մի շարք մեթոդների ամբողջական կիրառում, որոնք թույլ են տալիս նվազեցնել հարկատուի հարկային բեռը՝ յուրաքանչյուր որոշակի դեպքում:[96]

Լիզինգի ոլորտում հարկերի օպտիմալացումը նախևառաջ ենթադրում է հարկային բեռի թեթևացում՝ դրանով իսկ նպատակ ունենալով խթանիչ միջավայր ստեղծելու վարձակալության շուկայում և տեսանելի ապագայում մեծացնելու վարձակալման գործարքներից ակնկալվող հարկային մուտքերը: Եվ երկրորդ, վարձակալության ոլորտում հարկերի օպտիմալացումը հարկային բեռի հիմնավոր վերաբաշխումն է վարձակալի և վարձատուի միջև այնպես, որ խթանիչ լծակներ ձևավորվեն վարձակալության շուկայի ակտիվացման համար:

Ֆինանսական վարձակալության մասնակիցների հարկային բեռի թեթևացման առումով բազմաթիվ առաջարկություններ են քննարկվում՝ կապված վարձավճարների նկատմամբ ԱԱՀ-ի արտոնությունների սահմանման, ԱԱՀ-ից ազատման հետ: Մեր կարծիքով՝ անշարժ գույքի ֆինանսական վարձակալության, ինչպես նաև վարձակալությամբ տրամադրվելիք՝ ՀՀ ներմուծվող շարժական գույքի գծով անհրաժեշտ է հարկային արտոնությունների կիրառում՝ ԱԱՀ-ից ազատման ձևով, որը էապես կրճատում է անուղղակի հարկերի մասնաբաժինը վարձակալության կողմերի հարկային պարտավորություններում:

Բացի դրանից, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1 հոդվածով սահմանվում է ԱՏԳՍԱ մի շարք ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների գծով ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգում: Դրանք հիմնականում սարքավորումներ են, որոնք լիզինգի առարկա են հանդիսանում: Սակայն, նույն օրենքով, վճարման ժամկետի հետաձգման արտոնությունը անմիջապես դադարում է գործել, երբ նույն սարքավորումը վարձակալության հանձնելիս հետաձգման ժամկետը կասեցվում է: Հետևաբար, այդ նույն ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների լիզինգը հարկվում է ԱԱՀ-ով, քանի որ վարձակալության կողմերից վարձատուն հարկային պարտավորություն է կրում: Ավելին, քանի որ վարձավճարների հաշվարկի հիմքում ընդգրկվում է նաև ԱԱՀ-ի գումարը, ներառվելով վարձակալի պարտավորության մեջ, վերջինիս համար «ուռճացվում են» տոկոսավճարները, որոնք վճարվում են վարձատուին: Այդ հակասությունը լուծելու նպատակով առաջարկում ենք ՀՀ ներմուծված ապրանքները լիզինգով տրամադրելու դեպքում հարկի վճարման ժամկետները չկասեցնել, այլ այդ արտոնությունը պահպանել և փոխանցել վարձակալին:

Ինչ վերաբերում է շահութահարկին, ապա պարագրաֆ 3.1-ում նշեցինք, որ նպատակահարմար ենք համարում վարձակալի համար օրենսդրորեն թույլատրելի համարել ակտիվի արագացված ամորտիզացիան՝ որպես համախառն եկամտից նվազեցում:

[95] Берд В.С., Налоги в условиях экономической интеграции, КиоРус, 2004, с. 48.

[96] Ачкурина Е.В., Оптимизация налогообложения, М., ОСЬ-89, 2003 г., с. 69.

Այդպիսով, կարծում ենք, վարձակալների համար լիզինգն առավել շահեկան կդառնա սարքավորումներ գնելիս՝ նպաստելով լիզինգի շուկայի աշխուժացմանը, ընդլայնելով հարկման ընդհանուր դաշտը, հետևաբար նաև հանգեցնելով ապագա հարկային մուտքերի ավելացմանը: Այս մոտեցումը լայնորեն կիրառվում է միջազգային պրակտիկայում: Մի շարք երկրների, այդ թվում նաև ՌԴ օրենսդրությամբ սահմանված է շահութահարկը հաշվարկել արագացված ամորտիզացիայի կիրառմամբ: Այսինքն՝ հարկատու վարձակալները իրավունք ունեն այն հիմնական միջոցների նկատմամբ, որոնք լիզինգի առարկա են և հաշվառվում են իրենց հաշվեկշռում, ամորտիզացիոն մասնահումները հաշվարկելիս սահմանված ամորտիզացիան հիմնական նորմաների նկատմամբ կիրառել արագացման հատուկ գործակիցներ[97]: ՀՀ հարկային օրենսդրության մեջ դեռևս չի գործում արագացված ամորտիզացիայի նման մոտեցում, որը, մեր կարծիքով, չափազանց անհրաժեշտ և հրատապ փոփոխություն է:

Սակայն, կարծում ենք, վարձակալության տոկոսային ծախսերի համար նույնպես պետությունը պետք է տրամադրի որոշակի հարկային արտոնություններ, դրանով իսկ վարձակալին խթանելով՝ ակտիվ ձեռք բերելիս դիմել ոչ թե վարկային պարտավորությունների ստանձմանը, այլ՝ լիզինգի կիրառմանը:

Տոկոսային ծախսերն էականորեն պետք է տարբերվեն վարկավորման պարտավորությունների ստանձման և լիզինգի կազմակերպման դեպքերում: Որպեսզի կազմակերպությունը դիմի լիզինգի, պետք է համոզված լինի, որ դրանով թեթևացնելու է հարկային բեռը վարձակալման պարագայում: Այդ նպատակով առաջարկում ենք վարձակալի լիզինգի տոկոսային ծախսերը շահութահարկը հաշվարկելիս ճանաչել 150 տոկոսի չափով՝ դրանով իսկ ավելացնելով հարկի հաշվարկման ժամանակ համախառն եկամտից նվազեցումները և հարկային խթաններ ձևավորելով վարձակալի մոտ: Նման խթանիչ լծակ արդեն իսկ գործում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում, հաշմանդամների աշխատավարձի նվազեցումների գծով. «Հարկվող շահույթը որոշելիս, համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումնե-

[97] Налоговый кодекс РФ, статья 259.3, п. 2, пп. 1. (31/07/1998г. с изм. и доп.).

րի 150 տոկոսի չափով»[98]: Ուստի կարծում ենք, որ շահութահարկը հաշվարկելիս լիզինգային տոկոսային ծախսերի գծով նվազեցումներ ճանաչելիս մեր առաջարկը ռիսկային չէ և իր դրական ազդեցությունը կունենա վարձակալության գործարքների ակտիվացման համար:

Մասնագիտական գրականության մեջ դեռևս վիճահարույց է լիզինգի օբյեկտի գույքահարկի պարտավորության վերագրումը վարձակալության կողմերից մեկին: Կարծիք է հայտնվում, որ լիզինգի օբյեկտի գույքահարկը վճարելու է վարձատուն՝ որպես ակտիվի սեփականատեր:[99] Սակայն այս պնդմանը հակադրվում է այն տեսակետը, որ վարձակալը, ստանալով ակտիվի օգտագործման իրավունքը, ձեռք բերելով նաև շահագործման ռիսկերն ու հատույցները, փաստորեն, օգտվում է սեփականատիրոջ առանցքային առավելությունից, և հետևաբար, պետք է ստանձնի նաև լիզինգի օբյեկտի գույքահարկի պարտավորությունը:[100] Տնտեսական առումով, վարձակալության օբյեկտի պարտավորությունները, որպես ակտիվի օգտագործման իրավունքը ձեռք բերողի, վերագրվում են վարձակալին՝ ինչպես օգուտների, այնպես էլ հատույցների մասով (գույքահարկ, արժեզրկման կորուստներ, վերագնահատման վնասներ և այլն):

Մեր կարծիքով, գույքահարկի պարտավորությունը կարող է վերագրվել վարձատուին, որպես ակտիվի սեփականատիրոջ, սակայն որոշ արտոնություններով: Այսինքն՝ վարձակալման հանձնված անշարժ և շարժական գույքի համար առաջարկում ենք գույքահարկի նվազեցում՝ 50 տոկոսի չափով: Առաջարկի տնտեսագիտական հիմնավորումն այն է, որ լիզինգի օբյեկտի շահագործումից տնտեսական շահը երկուստեք է՝ թե վարձակալի և թե վարձատուի համար: Ուստի ակտիվի տիրապետման և օգտագործման օգուտներից բացի, լիզինգի երկու կողմերն էլ պետք է կիսեն նաև հիմնական միջոցի գույքահարկի պարտավորությունը: Ըստ այդմ՝ վարձակալված անշարժ և շարժական գույքի գույքահարկի մյուս 50 տոկոսը պետք է վերագրվի վարձակալին:

Դրա հետ մեկտեղ պետք է արձանագրել, որ հարկային վարչա-

[98] «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը, հոդ. 38, ՀՕ-155, 27.11.1997թ.:

[99] Королев А., Нужны новые подходы к лизинговому законадательству, Хозяйство и право, 2001, #9, с. 121.

[100] Самохвалова Ю.Н., Лизинг в России: правовые основы, бухгалтерский учет, налогообложение, М., Современная экономика и право, 1999, с. 75.

ռարության պրակտիկայում միայն մեկ կազմակերպության է համարվում հարկային գործակալ, և ընդունված չէ բյուջեի նկատմամբ պարտավորությունը կիսել և վերագրել մեկից ավելի կազմակերպությունների: Ելնելով վերոնշյալ հանգամանքից, նպատակահարմար է լիզինգի օբյեկտի գույքահարկի պարտավորությունը կիսով չափ վերագրել վարձատուին, իսկ վարձակալին՝ ազատել հարկային այդ բեռից: Գույքահարկի սահմանման և վերաբաշխման նման արտոնությունները, վստահ ենք, կխթանեն լիզինգային գործառնությունները՝ հատկապես նոր ստեղծված և դեռևս չշահագործված հիմնական միջոցների գծով, որոնց համար, որպես կանոն, սահմանվում են բարձր գույքահարկեր: Միջազգային փորձը վկայում է, որ անշարժ գույքի ֆինանսական վարձակալությունն առավելապես երկարատև շահագործված շենք և շինությունների գծով է, քանի որ դրանց վարձավճարն է ցածր և միաժամանակ՝ գույքահարկն է փոքր[101]:

Այսպիսով, ֆինանսական վարձակալության ոլորտում հարկային բեռի վերաբաշխման՝ մեր կողմից առաջարկվող մեխանիզմը կներկայացվի գծապատկեր 3.9-ի միջոցով:

Հարկային բեռի օպտիմալ վերաբաշխումից բացի, կարևոր ենք համարում նաև ֆինանսական վարձակալության յուրաքանչյուր կողմի հարկային բեռի տնտեսական չափումն ու արժևորումը:

Հարկային բեռի գնահատման համեմատական դաշտի ապահովման նկատառումներով խնդիր է առաջանում վարձակալի տնտեսական գործունեությանը վերագրվող հարկային ողջ պարտավորություններից առանձնացնել և ամփոփել միայն լիզինգին առնչվող հարկերը, իսկ վարձատուի մոտ ձևավորվող հարկերն ամբողջությամբ ընդգրկել համեմատական գնահատման հաշվարկներում:

[101] Харитонова Ю.С., Договор лизинга, М., Юрайт-М, 2002, с. 16 с.



– վարձատուն վճարում է շահութահարկ՝ գործող օրենդրության համաձայն,
II – վարձակալին տրվում են հարկային արտոնություններ՝ ակտիվի արագացված ամորտիզացիա հաշվարկելու և լիզինգի տոկոսային ծախսերը 150 տոկոսի չափով նվազեցում ճանաչելու համար,
III – վարձավճարները ազատվում են ԱԱՀ-ից,
IV – վարձավճարները ազատվում են ԱԱՀ-ից,
V – գույքահարկի պարտավորությունը 50 տոկոսով է վերագրվում վարձատուին,
VI – վարձակալը ազատված է գույքահարկից:

Գծապատկեր 3.9

Վարձակալի և վարձատուի միջև լիզինգի հարկային բեռի վերաբաշխման առաջարկվող մեխանիզմը

Որպես լիզինգին բաժին ընկնող հարկային բեռի ցուցանիշ, առաջարկում ենք կիրառել վարձակալությանն առնչվող հարկերի և վարձավճարների հարաբերակցությունը: Վարձատուի դեպքում, մասնավորապես, այն կունենա հետևյալ տեսքը՝

$$Գ_h = \frac{\text{լիզինգի տարեկան շահութահարկ + գույքահարկ + ԱԱՀ}}{\text{տարեկան վարձավճարներ}}$$

Հարկային բեռի առաջարկվող $Գ_h$ գործակիցը, որքան մոտենում է մեկին, այնքան բարձր է գնահատվում վարձակալության հարկային բեռը: Ընդ որում, գործակցի հաշվարկը հնարավորություն է ստեղծում ոչ միայն գնահատելու հարկային բեռի ծանրության կենտրոնի

տեղափոխման նպատակահարմարությունը վարձակալի կամ վարձատուի մոտ, այլև վերլուծելու այդ ցուցանիշի դինամիկան՝ տարիների կտրվածքով:

Այսպիսով՝ վարձակալության ոլորտում հարկային բեռի գնահատման հիման վրա կարելի է հանգել մի շարք եզրահանգումների:

Առաջին՝ անհրաժեշտ է վերանայել վարձակալության կողմերից յուրաքանչյուրի մոտ ձևավորվող հարկային բեռի ծանրությունը և կատարել վերջինիս վերաբաշխում: Մասնավորապես՝ վարձակալին տրամադրել շահութահարկի գծով հաշվարկվող համախառն եկամտից նվազեցումների արտոնություններ, լիզինգային գործարքների համար սահմանել լրացուցիչ ազատման արտոնություններ ԱԱՀ-ի գծով, վարձատուին տրամադրել արտոնություն լիզինգի օբյեկտի գույքահարկի գծով:

Երկրորդ՝ վարձակալության ոլորտում դեռևս չի գործում հարկային բեռի գնահատման հստակ մեթոդաբանություն: Գոյություն ունեն պարզապես որոշ ցուցանիշներ, որոնք անուղղակի պատկերացում կարող են տալ հարկային բեռի ծանրության մասին: Այս առումով, նպատակահարմար է հարկային բեռի գնահատման նկատմամբ ցուցաբերել երկու մոտեցում:

Նախ՝ հարկային բեռի գնահատումը վարձակալության կողմերից յուրաքանչյուրի համար՝ հարկերի ձևավորման տնտեսական միջավայրի հատվածավորման, հարկային պարտավորությունների կատարման արդյունավետության չափման, հարկերի գանձման արդյունավետ գործառույթների ծանապարհով: Նման մոտեցումը հնարավորություն է ստեղծում գնահատելու կազմակերպության հարկային բեռի վրա «մատակարարում-արտադրություն-իրացում» շղթայում յուրաքանչյուր գործոնի ազդեցության փոփոխման բնույթը:

Այնուհետև, վարձատուի և վարձակալի մոտ լիզինգի «հարկային բեռի» գնահատման և տարիների համեմատման նկատառումով կարևորվում է տարեկան հարկեր/վարձավճարներ գործակցի հաշվարկումը: Դրանով հնարավորություն է ընձեռվում պատկերացում կազմելու վարձակալության կողմերից յուրաքանչյուրի մոտ լիզինգային գործարքներին բաժին ընկնող հարկային բեռի ծանրության մասին, ինչպես նաև վարձակալության գործարքները խթանելու նկատառումով ծանրության կենտրոնը հօգուտ վարձատուի կամ վարձակալի տեղափոխել:

3.3 Ֆինանսական վարձակալության ռիսկերի կառավարումը և դրա բարելավման ուղիները

Ֆինանսական վարձակալության ռիսկերի կառավարման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Լինելով բազմաքանակ մասնակիցների համախմբված գործունեության արդյունք՝ լիզինգը կարող է հեշտությամբ ձախողվել մասնակիցներից որևէ մեկի թերի գործելաոճի պատճառով: Լիզինգի պարագայում կարևորվում է «ակտիվի մատակարարում-վարձատու-վարձակալ» շղթայի ներդաշնակ գործունեությունը, որը խափանման ռիսկ է պարունակում նաև ներդրումների երկարաժամկետայնության, խոշոր ֆինանսական ռեսուրսների ներգրավման և վարձակալության շուկայի առանձնահատկությունների պատճառով:

Ֆինանսական վարձակալության ռիսկը տարբեր մեկնաբանություններ ունի մասնագիտական գրականության մեջ: Կարծիք է հայտնվում, որ վարձակալության ռիսկը գործարարության նախատեսվող արդյունքների ոչ լիարժեք ձեռք բերումն է:[102] Լիզինգի ռիսկայնությունը բնորոշվում է նաև վարձակալության ձախողումից ձևավորվող վնասների չափով:[103] Լիզինգի ռիսկի գնահատման նպատակներից է այն, որ վարձակալական գործարքների կիրառմամբ՝ կառավարող մարմիններին որոշակի հավանականությամբ հայտնի են դառնում դրանց իրականացումից ակնկալվող բացասական արդյունքները: Հետևաբար, համեմատելով սպասվող դրական ու բացասական արդյունքները՝ հնարավորություն է ստեղծվում գնահատելու ցանկացած տնտեսական միջոցառման ռիսկի արժեքը:[104]

Նույնը չի կարելի ասել տնտեսական անորոշության մասին, քանի որ այս դեպքում ծրագրերի իրականացումից սպասվող բացասական հետևանքները ծագում են անսպասելիորեն, և հետևապես, կանխագուշակման անհնարինությունը բացառում է դրանց ցուցանիշների նախօրոք ընդգրկումը ռիսկի գնահատման հաշվարկներում:[105]

---

[102] Симонова М.Н., Аренда, лизинг, прокат, М., Статус-Кво, 2001, с. 56.

[103] Лещенко М.И., Основы лизинга, М.. Прогрес-МТ, 2000, с.108.

[104] Финансовая аренда (лизинг) в России. Обзор рынка 2005-2006, М., Международная финансовая корпорация, 2006, с.82.

[105] Ճուղուրյան Ա., Արտադրական նորամուծությունների կառավարչական հաշվառումը, «Վան Արյան», Երևան, 1996, էջ 121:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ անհիմն է նախատեսվող վնասների նույնացումը տնտեսական ռիսկի կորուստների հետ, քանի որ եթե առաջինի առաջացումը որևէ կասկած չի հարուցում, ապա երկրորդը՝ ձևավորման հավանականության որոշակի մակարդակ ունի և հետագայում իր փաստացի մեծությամբ կարող է ցածր կամ բարձր լինել նախատեսվածից: Կարծում ենք՝ վարձակալության ռիսկ կարելի է համարել լիզինգի համակարգում ընդգրկված գործարար սուբյեկտների վնասների ձևավորման այն հավանականությունը, որը հնարավոր է գնահատել և կառավարման շնորհիվ հասցնել նվազագույնի:

Ռիսկի տնտեսական արժեքորման սկզբունքները բնութագրելիս ևս կարծիքները տարբերվում են: Այսպես՝ գործարքի ռիսկայնությունն արդարացվում է այնքանով, որքանով հնարավորություն կա փոխհատուցելու դրանից ակնկալվող վնասները: Վարձակալության ռիսկի դիմելը աննպատակահարմար է, եթե տնտեսական փոքր արդյունքների հասանելիության ակնկալիքներն ուղեկցվում են խոշոր վնասների ձևավորման սպառնալիքներով:[106]

Մասնագիտական գրականության մեջ վարձակալության ռիսկը նույնպես տարբեր դասակարգումներով է հանդես գալիս: Հավանական վնասները կարող են լինել.

- ընդհանուր, որոնք բնորոշ են տնտեսական գործունեության ցանկացած ոլորտի (քաղաքական, մակրոտնտեսական, իրավական, բնապահպանական, հարկային և այլն),
- ներդրումային, որոնք առնչվում են ֆինանսական շուկային (տոկոսային, պորտֆելային, կրեդիտորական, արժութային, սղաճային և այլն),
- ուղղակի վարձակալական (ակտիվի մատակարարման, վարձատուի, վարձակալի գործունեության ռիսկեր):[107]

Լիզինգի բնագավառի ռիսկերը ներկայացվում են նաև հետևյալ հինգ խմբով.

- լիզինգի առարկայի ընտրությանն առնչվող ռիսկեր,

[106] Харитонова Ю.С., Договор лизинга, М., Юрайт-М, 2002, с. 94.

[107] Чекмарева Е., Методы интеграции банковского и промышленного капитала, Лизинг ревю, М., 2004, #1, с. 16.

- լիզինգի մատակարարմանն առնչվող ռիսկեր,
- վարձատուի վճարունակության անկմանն առնչվող ռիսկեր,
- լիզինգի առարկայի իրացվելիությանն առնչվող ռիսկեր,
- լիզինգային կազմակերպության ներդրումային պորտֆելի ձևավորմանն առնչվող ռիսկեր:[108]

Լիզինգային ռիսկերի կառավարման մոտեցումները մեծ մասամբ վարձակալության հավանական վնասները կանխարգելելու կամ նվազեցնելու նպատակ են հետապնդում[109]: Ռիսկերի կառավարման համար գործնականում կիրառվում են վիճակագրական եղանակներ, վերլուծական մեթոդներ, էքսպերտային գնահատումներ: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս ֆինանսական վարձակալության ռիսկերի կառավարմանը մասնագիտական գրականությունում չի ցուցաբերվում համակարգված մոտեցում:

Ֆինանսական վարձակալության ռիսկերի կառավարման համակարգված մեխանիզմը, մեր կարծիքով, պետք է գործի հետևյալ քայլերով.

առաջին՝ լիզինգի ռիսկերի ձևավորման կենտրոնների բացահայտում՝ ըստ պատասխանատվության կենտրոնների,

երկրորդ՝ լիզինգի ռիսկերի վերաբաշխում մասնակից կողմերի միջև, և հավանական վնասների փոխհատուցում կորպորատիվ մոտեցմամբ,

երրորդ՝ լիզինգի հնարավոր վնասների տնտեսագիտական չափում և գործնական վերլուծություն,

չորրորդ՝ լիզինգի հնարավոր վնասների կանխարգելում կամ առավելագույնս նվազեցում:

Վերոնշյալ քայլերի՝ ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգված մեխանիզմը ներկայացնենք գծապատկեր 3.10-ով:

Նախ՝ ռիսկերի կառավարման հիմքում վարձակալության հնարավոր կորուստների ձևավորման կենտրոնների բացահայտումն է «ակտիվի մատակարար-վարձատու-վարձակալ» շղթայում: Ռիսկերի ձևավորման կենտրոնները գծապատկեր 3.10-ում ինն են (1.1, 1.2,

[108] Киркоров А., Методы определения эффективности финансового лизинга по сравнению с кредитом, Лизинг ревю, 2000, #5/6 с. 18.

[109] Касатонов В.Ю., Морозов Д.С. Проектное финансирование: организация, управление риском, страхование. М., Анкил, 2001, с. 147.

2.1, 2.2, 3.1, 3.2, 4.1, 4.2, 4.3), սակայն դրանք կարող են լինել ավելին՝ ընդգրկելով վարձակալության մասնակից միջնորդ կամ անուղղակի կազմակերպությունների գործունեությունը (տե՛ս գծապատկեր 1.12):



1.1 մատակարարված ակտիվի անհամապատասխանությունը չափորոշիչներին,
1.2 վարձակալված ակտիվի սպասարկման ձախողում մատակարարի կողմից,
2.1 ֆինանսական ռեսուրսների թանկացում,
2.2 նախատեսվածից ավելի սղաձ,
3.1 ոչ իրատեսական վարձավճարների սահմանում,
3.2 վարձակալության պորտֆելի անարդյունավետ ձևավորում,
4.1 ֆինանսական անկայունություն,
4.2 գործարար ակտիվության նվազում,
4.3 լիզինգի առարկայի վաղաժամկետ վերադարձ կամ ոչ նպատակային օգտագործում:

Գծապատկեր 3.10

Լիզինգային ռիսկերի կառավարման առաջարկվող մեխանիզմը

Վարձակալության ձևավորման հավանական վնասները ռիսկերի կառավարման առաջարկվող սխեմայով ներկայացվում են ոչ միայն ըստ պատասխանատվության կենտրոնների (վարձակալության ծրագրի մասնակից կողմերի), այլև նրանց միջև վերաբաշխման կտրվածքով:

Այսպես՝ ֆինանսական վարձակալության մեկնարկային կողմը՝ մատակարար կազմակերպությունը, լիզինգի ներդաշնակ կազմակերպումը կարող է ձախողել, եթե վարձակալին տրամադրի ակտիվ՝ անհամապատասխան կանխորոշված չափորոշիչներին: Այստեղ երկրորդական չէ նաև այն հանգամանքը, որ մատակարար կազմակերպությունը երկարատև վարձակալության ընթացքում կարող է չկատարել իր ստանձնած պարտավորություններն ակտիվի սպասարկման գծով:

Քանի որ վարձակալն է ընտրում լիզինգի օբյեկտի մատակարար, ուստի, կարծում ենք, որ մատակարարի մեղքով՝ ֆինանսական վարձակալության խափանման վնասների փոխհատուցմանը, բացի նրանից, իր չափաբաժնով (որն անհրաժեշտ է ամրագրել պայմանագրով) պետք է մասնակցի վարձակալը: Այդ իսկ պատճառով ակտիվի մատակարարման հավանական վնասների փոխհատուցման պարտավորության վերաբաշխումը վարձատուի և մատակարարի միջև (1 ⟷ 4) համարում ենք հիմնավոր (տե՛ս գծապատկեր 3.10):

Կրեդիտորները, որոնք երկարաժամկետ կտրվածքով ֆինանսական ռեսուրսներ են տրամադրում վարձատուներին, կարող են խոչընդոտել լիզինգային գործառույթների ներդաշնակ իրականացմանը՝ ելնելով մակրոտնտեսական իրավիճակով պայմանավորված վարկային տոկոսադրույքների բարձրացումից կամ կտրուկ սղաձից: Միջազգային փորձը վկայում է, որ նման հավանական վնասների փոխհատուցման պարտավորությունը միասնաբար իրենց վրա են վերցնում վարձատուներն ու բանկերը:[110] Կրեդիտորների հետ մեկտեղ, վարձատուների մասնակցությունը ֆինանսական շուկայում ձևավորվող ռիսկերի փոխհատուցմանը (2 ⟷ 3) տնտեսագիտորեն արդարացվում է նրանով (տե՛ս գծապատկեր 3.10), որ վերջիններս էլ իրենց հերթին յուրօրինակ փոխառություններ տրամադրողներ և տոկոսային եկամուտներ վաստակողներ են:

[110] Андреева М., Дубровина Н., Назарова Л., Банковский лизинг. Деньги на оборудование. Экономика и жизнь. 2003. #5. с. 8

Վարձատուի կողմից վարձակալության ծրագրերի խափանումը հավանական է, եթե վերջինս սահմանում է ոչ իրատեսական վարձավճարներ, որոնք լիզինգի սկզբում կարող են համարվել բավական գրավիչ, իսկ հետագայում, երկարատև վարձակալության ընթացքում, կապված մակրոտնտեսական իրավիճակի փոփոխությունների հետ՝ վնասաբեր: Հետևաբար, ապագային միտված ոչ հիմնավոր վարձավճարների սահմանման ռիսկայնությունը մեղմելու նպատակով վարձակալները պետք է ձևավորեն վարձակալության ճկուն պորտֆելներ: Նմանատիպ ռիսկերը մեղմվում են այն վարձատուների մոտ, որոնք հնարավորինս խուսափում են մասնագիտացված լիզինգային ուղիներից և ձգտում են դիվերսիֆիկացնել իրենց ֆինանսական ներդրումները՝ նախընտրելով ոչ բարձր շահութաբերություն ունեցող, բայց տարաբնույթ լիզինգային ոլորտներ (սարքավորումներ, շինություններ, տանսպորտ և այլն):

Վարձատուի գործունեության ձախողման հավանական վնասները, կարծում ենք, ինչ-որ չափով պետք է փոխհատուցվեն նաև վարձակալի կողմից (3 ⟷ 4), որի իրագործման ուղիներից են՝ վարձակալության ընթացքում պայմանագրի վերափոխումները և վարձակալի առաջարկով վարձավճարների վերանայումները՝ հօգուտ վարձատուի:

Ֆինանսական վարձակալության խափանման մեծ ռիսկայնություն ունի նաև վարձակալի գործունեությունը: Երկարատև վարձակալության տարիների ընթացքում լիզինգի օբյեկտը կարող է ոչ նպատակային օգտագործվել կամ բարոյական մաշվածության ենթարկվել և թեկուզ տույժերով, բայց վերադարձվել վարձատուին: Այս համատեքստում են նաև վարձակալի սնանկացումը, գործարար ակտիվության անկումը և վարձավճարներից հրաժարումն ու լիզինգի պայմանագրի խզումը:

Նման իրավիճակներում ֆինանսական վարձակալության հավանական կորուստների փոխհատուցման պարտավորությունները նպատակահարմար է բաշխել եռակողմ՝ մատակարարի, վարձատուի և վարձակալի միջև (1 ⟷ 3 ⟷ 4): Ի դեպ՝ վնասների փոխհատուցման գործում առավել վիճահարույցը վարձակալի կողմից վերադարձվող ակտիվի իրացվելիության աստիճանի որոշումն է: Փորձառու լիզինգային կազմակերպությունները նման հիմնախնդիրների լուծման

նպատակով վարձակալության պայմանագրին կցում են հավելված՝ ընդգրկելով ակտիվի հետգնման սանդղակը՝ վարձակալության տարիների կտրվածքով:[111]

Լիզինգային ռիսկերի կառավարման առաջարկվող մեխանիզմում (տե՛ս գծապատկեր 3.10) կարևորվում են վարձակալության հնարավոր վնասների գնահատումը և վերլուծությունը: Մասնագիտական գրականության մեջ ռիսկերի գնահատման եղանակներից ամենատարածվածներն են վիճակագրական և անալիտիկ վերլուծությունները:[112]

Վիճակագրական ցուցանիշներից գործնականում լայնորեն կիրառվում է վարձակալության հավանական վնասների ձևավորման հաճախականությունը (F), որը հաշվարկվում է որպես ձախողված լիզինգային գործարքների (f) հարաբերություն՝ վարձակալական գործարքների համախմբի (N) վրա: Ընդ որում, միջազգային աուդիտորական կազմակերպությունները վարձակալության ռիսկայնությունը, ըստ վնասների ձևավորման հաճախականության, ներկայացնում են հետևյալ գոտիներով.[113]

f/N < 0.05 անվտանգության (ոչ ռիսկային) գոտի,
0.05 < f/N < 0.15 նվազագույն ռիսկի գոտի,
0.15 < f/N < 0.25 բարձր ռիսկի գոտի,
0.25 < f/N < 0.35 կրիտիկական ռիսկի գոտի,
f/N > 0.35 ռիսկի անթույլատրելիության գոտի:

Գործնականում լայն տարածում ունի նաև վարձակալության հավանական վնասների գնահատումը վարիացիայի գործակցի միջոցով.

$$V = \Sigma\sqrt{(K_i - K)^2} \times P_i / K ,$$

որտեղ՝
K_i – վնասի ձևավորման i-րդ տարբերակ,
P_i – i-րդ տարբերակի կայացման հավանականություն,
K - եկամտի ձևավորման կանխատեսվող նորման:

Ռիսկի գնահատումը վարիացիայի գործակցի միջոցով առավել նպատակահարմար է վարձակալական մի շարք ծրագրերի համեմա-

[111] Lease and Hire Purchase Contracts, UK GAAP, 7th ed., L.: Ernst and Young, 2006, page 205.
[112] Горемыкин В.А., Лизинг, М., Дашков и К, 2003, с. 356-392.
[113] Lease and Hire Purchase Contracts, UK GAAP, 7th ed., L.: Ernst and Young, 2006, pages 66-68.

տական վերլուծության հիմքով մեկի ընտրությունը կատարելիս:

Վարձակալության ռիսկայնության գնահատումն անալիտիկ եղանակներով, որպես կանոն, հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- ռիսկայնության աստիճանը որոշելիս պետք է հաշվի առնել սեփական միջոցներով հնարավոր վնասների փոխհատուցման հնարավորությունը,
- չպետք է դիմել մեծ ռիսկի՝ հանուն փոքր դրական տնտեսական արդյունքների,
- անհրաժեշտ է կանխորոշել ռիսկի ֆինանսատնտեսական հետևանքները:

Ֆինանսական վարձակալության առանձնահատկություններից է դրա մեկնարկի և ակնկալվող արդյունքների ստացման ժամկետների միջև երկարատևությունը, որով էլ պայմանավորվում է նախատեսվող ներդրումների արդյունքների վերագնահատման անհրաժեշտությունը՝ ըստ ձևավորման ժամանակահատվածի:

Վարձակալության արդյունքների ռիսկայնությունն ընդգրկում է երկու կարևորագույն գործոններ, որոնք են՝ ակնկալվող արդյունքների իրացման ժամանակահատվածի և շահույթի գործող նորմայի փոփոխությունները: Վերոհիշյալ գործոնների ազդեցությունն էլ հաշվի է առնվում վարձակալության տնտեսական նպատակահարմարության գնահատման հաշվարկներում, որի անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով:

Առաջին՝ լիզինգից ստացվող եկամուտների հաշվին վարձակալության կողմերը նախատեսում են ամբողջովին փոխհատուցել կատարած ֆինանսական ներդրումներն ու ստանալ շահույթ: Այն ժամանակահատվածը, որը նախատեսվում է ֆինանսական ծախսերի փոխհատուցման և շահույթի ստացման համար, կարևոր դեր է խաղում վարձակալության ռիսկի գնահատման գործում, քանի որ ժամանակագրական տեսանկյունից՝ արդեն ձևավորված եկամուտները համարժեք չեն հետագայում միևնույն չափով ակնկալվող եկամուտներին:

Եթե կազմակերպություն մուտք գործող ընթացիկ եկամուտներն անմիջապես ուղղվում են դեպի տնտեսական գործունեության համակարգ, ապա սպասվելիք համարժեք եկամուտները, դուրս մնալով տնտեսավարման բնագավառից, «սառեցվում են» որոշակի ժամանակահատվածով և արդյունավետ գործունեության մեջ են ընդգրկվում՝

միայն հետագա ձևավորման պահից սկսած: Այդ իսկ պատճառով ժամանակի գործոնն անհրաժեշտ վերագնահատման է ենթարկում վարձակալությունից ակնկալվող եկամուտների մեծությունը՝ ելնելով ֆինանսական ներդրումների հետգնման ժամկետի տևողությունից:

Երկրորդ՝ շուկայական տնտեսության պայմաններում փոխատվական բնագավառում ձևավորվող շահույթի նորման պարբերաբար փոփոխվում է, և անհրաժեշտություն է առաջանում, ելնելով նման տատանումներից, ճշգրտումներ կատարել ֆինանսական վարձակալության նպատակահարմարության գնահատման հաշվարկներում:

Լիզինգի ռիսկը որոշվում է ֆինանսական ներդրումներով պայմանավորված զուտ ներկա արժեքով (ԶՆԱ), այսինքն՝ դրամական արտահոսքի և զեղչված դրամական ներհոսքի տարբերությամբ.

(+, -) ԶՆԱ = Դրամական արտահոսք + Զեղչված ներհոսք

Զուտ ներկա արժեքի բացասական լինելու դեպքում է ներդրումը համարվում ոչ շահավետ, քանի որ դրանով պայմանավորված՝ դրամական արտահոսքը գերազանցում է ընդհանուր զեղչված ներհոսքը: Դրական զուտ ներկա արժեքը վկայում է ներդրման նպատակահարմարության մասին, քանի որ դրամական զեղչված ընդհանուր ներհոսքը գերազանցում է արտահոսքը:

Լիզինգի ռիսկայնությունը գնահատվում է նաև վարձակալության ծրագրի շահութաբերության ներքին նորմայով, որը հատկապես լայնորեն կիրառվում է վարձակալության ծրագրերի ընտրության ժամանակ: Յուրաքանչյուր ներդրումային ծրագրի շահութաբերության ներքին նորման զեղչման այն տոկոսադրույքն է, որի կիրառմամբ ներդրման զուտ ներկա արժեքը դառնում է զրո: Հետևաբար, այն ներդրումային ծրագրերն են նախընտրելի, որոնք ունեն բարձր շահութաբերության ներքին նորմա:

Շահութաբերության ներքին նորման (ՇՆՆ) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$ՇՆՆ = A + \frac{N_A}{(N_A - N_B)} \times (B-A),$$

որտեղ՝

A - զեղչի փոքրագույն տոկոս,

B - զեղչի մեծագույն տոկոս,

N_A - զուտ արժեք A տոկոսի դեպքում,
N_B - զուտ արժեք B տոկոսի դեպքում:

Վարձակալության ռիսկերի կառավարման առաջարկվող մեխանիզմի վերջին փուլում կատարվում է հավանական կորուստների կանխարգելում կամ նվազեցում (տե՛ս գծապատկեր 3.10): Ռիսկերի նվազեցման նպատակով առաջարկում ենք կիրառել գործակիցներով արտաքսման եղանակը: Այդ նպատակով վարձակալության ռիսկերը, ըստ ձևավորման կենտրոնների, դասակարգվում են ռիսկային գոտիներով՝ յուրաքանչյուրն առանձին K գործակցի թույլատրելի սահմաններով: Ընդ որում, վարձակալության ռիսկերի գործակիցները հաշվարկելիս հաշվի է առնվում նաև հավանական կորուստների բաշխման մասնաբաժինը (U) լիզինգի մասնակիցների կողմից, քանի որ կորուստների վերաբաշխումով կրճատվում են վարձակալության ռիսկերը և դրանով իսկ՝ դառնում առավել կառավարելի:

Լիզինգի ռիսկայնության յուրաքանչյուր i-րդ գործոնի գործակիցը (K_i), փաստորեն, ցույց է տալիս հավանական վնասների տեսակարար կշիռը վարձակալությունից ակնկալվող դրական արդյունքների մեջ, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$K_i = \frac{D_i - U_i}{V},$$

որտեղ՝
D_i – վարձակալության i-րդ գործարքի հավանական կորստի չափ,
U_i – վարձակալության մասնակից կողմի կորուստների փոխհատուցման մասնաբաժին,
V – վարձակալությունից ակնկալվող դրական արդյունք:

Եթե մատակարարի մեղքով ֆինանսական վարձակալության խափանման պատճառ է դառնում սահմանված չափորոշիչներին անհամապատասխան ակտիվի տրամադրումը վարձակալին (ռիսկային գործոն 1.1, գծապատկեր 3.10), որից առաջացող հավանական վնասները վարձակալից բացի պարտավորվում է փոխհատուցել ակտիվի մատակարարը (ռիսկի ձևավորման «1» պատասխանատվության կենտրոն), ապա ռիսկային այս գործոնի գործակիցը վարձակալի

համար կհաշվարկվի.

$$K_{1.1} = \frac{D_{1.1} - U_1}{V_4},$$

որտեղ՝
V_4՝– վարձակալի՝ լիզինգից ակնկալող տնտեսական եկամուտ,
$D_{1.1}$ –վարձակալի՝ սահմանված չափորոշիչներին անհամապատասխան լիզինգի օբյեկտի շահագործումից ակնկալվող կորուստներ,
U_1 – ակտիվի մատակարարի՝ հավանական կորուստների փոխհատուցման մասնաբաժին:

Նման մոտեցմամբ առաջարկում ենք հաշվարկել $K_{1.1}$, $K_{1.2}$, $K_{2.1}$, $K_{2.2}$, $K_{3.1}$, $K_{3.2}$, $K_{4.1}$, $K_{4.2}$, $K_{4.3}$ գործակիցները՝ վարձակալության ռիսկի յուրաքանչյուր գործոնի գծով (տե՛ս գծապատկեր 3.10):

Առաջարկում ենք լիզինգի ռիսկի նվազեցման նպատակով հավանական կորուստների չեզոքացումը իրականացնել ռիսկային անվտանգության գոտիների սահմանումով, որոնք յուրատեսակ ֆիլտրեր են վարձակալության ծրագրերի ռիսկայնության որոշման համար (տե՛ս գծապատկեր 3.11): Փաստորեն, վարձակալության ծրագրի ռիսկայնության աստիճանը քննարկվում է ըստ փուլերի, և եթե սահմանված ռիսկայնության գործակցի մեծությունն ընդունելի է որոշակի փուլում, ապա անցում է կատարվում առավել նվազ ռիսկայնության գոտի պարունակող հաջորդ փուլ, հակառակ դեպքում՝ լիզինգի իրականացումը մերժվում է:

Ռիսկայնության յուրաքանչյուր գոտու համար հաշվարկվում է ռիսկայնության ամփոփ գործակից (K), որը ներկայացվում է որպես քննարկվող ռիսկային գործոնների անհատական գործակիցների միջին թվաբանական.

$$K = (K_{1.1} + K_{1.2} + K_{2.1} + K_{2.2} + K_{3.1} + K_{3.2} + K_{4.1} + K_{4.2} + K_{4.3}) / n$$

Եթե հավանական կորուստների ձևավորման առաջին փուլում վարձակալության ռիսկայնության ամփոփ գործակիցը (K) գերազանցում է 0.35-ի սահմանը, ապա լիզինգային ծրագիրը ռիսկայնության առումով անթույլատրելի է և չի անցնում հաջորդ փուլ՝ կրիտիկական

ռիսկի քննարկման գոտի (տե՛ս գծապատկեր 3.11): Եթե վարձակալության ծրագրի ռիսկային գործոնները վերլուծվում են առաջին փուլում, և ծրագրի ամփոփ գործակիցը (K) հայտնվում է կրիտիկական ռիսկի գոտում, ապա այն չպետք է գերազանցի 0.35-ի սահմանը, այլապես լիզինգի իրականացումը կասկածի տակ կդրվի:



Գծապատկեր 3.11

Լիզինգի հավանական կորոատների կրճատման փուլային մեխանիզմը

Լիզինգի մասնակիցները կարող են վարձակալություն կազմակերպել բարձր ռիսկայնությամբ գործակցի պայմաններում (K < 0.25): Կարծում ենք՝ նման իրավիճակում ռիսկայնության աստիճանը թույլ է տալիս լիզինգի կազմակերպում, սակայն դրանով իսկ ցուցաբերվում է չափազանցված ֆինանսատնտեսական կարգապահություն, ինչպես նաև կարող են պահանջվել լրացուցիչ երաշխիքներ: Բնականաբար, նվազագույն ռիսկի գոտում (K < 0.15) հայտնված վարձակալական ծրագրերը հավանական վնասների կանխարգելման տեսանկյունից

մեծ ռեսուրսներ չեն պահանջում և ենթադրում են վարձակալության բնականոն ընթացք: Հետևաբար, սահմանված առաջին և երկրորդ գոտիներում հայտնված լիզինգային ծրագրերը պետք է մերժվեն, եթե հնարավորություն չի ստեղծվում ռիսկերի կառավարման ճանապարհով մեղմելու հավանական վնասների չափը, իսկ երրորդ և չորրորդ գոտիներում հայտնված լիզինգային ծրագրերը պետք է ընթացք ստանան՝ միաժամանակ պահպանելով գործարարության բարձր ֆինանսատնտեսական կարգապահություն:

Այսպիսով, վարձակալության ռիսկերի նվազեցումը նպատակահարմար է իրականացնել ռիսկային գոտիներից հավանական կորոատների գործոններից յուրաքանչյուրի ազդեցության հնարավորինս չեզոքացմամբ և դրանով իսկ, առավել նվազ ռիսկային գոտի տեղափոխման ճանապարհով, որով կրճատվում է վարձակալության ռիսկայնության ABCD դաշտի մակերեսը (տե՛ս գծապատկեր 3.11):

Լիզինգային ռիսկերի կառավարման՝ մեր կողմից առաջարկվող մեխանիզմն ունի մի շարք առավելություններ.

առաջին՝ լիզինգային ռիսկերը խմբավորվում են՝ ոչ միայն ըստ ձևավորման աղբյուրների, այլև պատասխանատվության կենտրոնների՝ հնարավորություն ստեղծելով վարձակալության յուրաքանչյուր մասնակցի գծով հասցեագրելու հավանական վնասների կրճատման կառավարման գործառույթները:

երկրորդ՝ քանի որ վարձակալության կոնկրետ մասնակցի գործունեության բարձր ռիսկայնության վնասների մի մասը փոխհատուցվում է մեկ այլ մասնակցի կողմից, ապա լիզինգի հավանական վնասների բաժնեմասնակցային փոխհատուցման սկզբունքի կիրառմամբ ծրագրի մասնակիցների միջև մոտիվացիոն դաշտ է ստեղծվում՝ փոխադարձ վերահսկողություն իրականացնելու ռիսկային գործառույթների վերացման ուղղությամբ, որն էլ բարձրացնում է ռիսկերի կառավարման արդյունավետությունը:

երրորդ՝ լիզինգի հավանական կորոատների կրճատման փուլային մեխանիզմը, ի սկզբանե չմերժելով ռիսկային ծրագրերը, չի խոչընդոտում վարձակալության զարգացումը, որովհետև վերջինս, վերլուծական քայլերի միջոցով, հնարավոր է դարձնում կրիտիկական ռիսկայնություն ունեցող լիզինգային ծրագրի՝ հավանական կորուստների չեզոքացման ուղիների որոնումն ու կրճատումը:

ԳԼՈՒԽ IV
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

4.1 Լիզինգի ֆինանսական հաշվառման կարգավորումը միջազգային ստանդարտներով

Շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց Հայաստանի Հանրապետության կազմակերպությունների տնտեսահարաբերություններում ակտիվացավ վարձակալությունը և, հետևաբար, անհրաժեշտություն ծագեց կանոնակարգելու այդ գործունեության ու դրա արդյունքների հաշվապահական հաշվառման և հաշվետվության գործընթացն՝ ինչպես վարձակալի, այնպես էլ՝ վարձատուի մոտ: Այս առումով, արդիական է հաշվապահական հաշվառման 17 «Վարձակալություն» ստանդարտի կիրառումը, որի նպատակն է ներկայացնել վարձակալների և վարձատուների համար հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականություն, ինչպես նաև վարձակալությունների նկատմամբ կիրառվող բացահայտումներ[114]:

Համաձայն ստանդարտի վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե վարձակալին են փոխանցվում սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները[115]: Սովորաբար վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական եթե վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին փոխանցվում է վարձակալին, վարձակալը հնարավորություն ունի տվյալ ակտիվը գնելու այն գնով, որը սպասվում է, որ բավականաչափ ցածր կլինի այդ հնարավորությունն իրագործելու ամսաթվի իրական արժեքից, և եթե վարձակալության սկզբում արդեն կա խելամիտ համոզվածություն, որ այդ հնարավորությունը կիրագործվի, վարձակալության ժամկետի մեջ է ներառվում ակտիվի տնտեսական ծառայության մեծ մասը, եթե նույնիսկ սեփականության իրավունքը չի փոխանցվում, վարձակալության սկզբում նվազագույն վարձավճարների ներկա արժեքը վարձակալված ակտիվի առնվազն ըստ էության իրական արժեքն է, վարձակալված ակտիվների յուրահատուկ բնույթի պատճառով միայն վարձակալն է ի վիճակի դրանք օգտագործել առանց էական ձևափոխությունների[116]:

Լիզինգի ժամանակ գոյություն ունեն առանձնահատկություններ վարձակալի և վարձատուի հաշվառման և հաշվետվության մեջ վարձակալության գործառնությունների ճանաչման, չափման և արտացոլման հետ կապված: Լիզինգային գործառնությունները վարձակալի և վարձատուի ֆինանսական հաշվետվություններում արտացոլելու մոտեցումները սահմանված են նույն 17 «Վարձակալություն» ստանդարտով:

Վարձատուն ֆինանսական վարձակալության տրված ակտիվները իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ճանաչի որպես ակտիվ և ներկայացնի դրանք որպես դեբիտորական պարտք՝ վարձակալությունում զուտ ներդրումների մեծությանը հավասար գումարով[117]: Այսինքն վարձակալությունում զուտ ներդրումների գծով վարձակալության ժամկետի մեկնարկին վարձատուն արտացոլում է որպես դեբիտորական պարտք՝ ստացվելիք գումարները ֆինանսական վարձակալության գծով և միաժամանակ՝ չվաստակած ֆինանսական (տոկոսային) եկամուտները:

Վարձակալը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական վարձակալությունը պետք է ճանաչի որպես ակտիվ (վարձակալությամբ օգտագործվող հիմնական միջոցներ) և պարտավորություն (կրեդիտորական պարտք)՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է, ընդ որում՝ դրանցից յուրաքանչյուրը որոշվում է վարձակալության սկզբի դրությամբ[118]: Այսինքն վարձակալության ժամկետի մեկնարկին վարձակալը արտացոլում է որպես կրեդիտորական պարտք՝ ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարները և միաժամանակ՝ չկրած ֆինանսական (տոկոսային) ծախսերը:

Ֆինանսական եկամուտը՝ վարձատուի մոտ և ֆինանսական ծախսը՝ վարձակալի մոտ բաշխվում և ճանաչում են վարձակալության պայմանագրի գործողության ընթացքում:

[114] ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», հոդ. 1:
[115] Նույն տեղում, հոդ. 4:
[116] ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», հոդ. 10:
[117] Նույն տեղում, հոդ. 36:
[118] Նույն տեղում, հոդ. 20:

Վարձատուի մոտ ֆինանսական եկամտի ճանաչումը պետք է հիմնված լինի մի գրաֆիկի վրա, որը կապահովի հատուցման հաստատուն պարբերական դրույք ֆինանսական վարձակալության շրջանակներում վարձատուի զուտ ներդրումների նկատմամբ[119]:

Վարձակալի մոտ նվազագույն վարձավճարները պետք է բաշխվեն ֆինանսական վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսական վճարը վարձակալության ժամկետի ընթացքում ըստ ժամանակաշրջանների պետք է բաշխվի այնպես, որպեսզի ստացվի հաստատուն պարբերական տոկոսադրույք յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ[120]:

Նվազագույն վարձավճարները այն վճարներն են, որոնք վարձակալության ժամկետի ընթացքում պահանջվում կամ կարող են պահանջվել վարձակալից՝ հաշվի առնելով նաև ստանդարտի պահանջներն ու սահմանափակումները[121]: Նվազագույն վարձավճարների ներկա արժեքի հաշվարկման ժամանակ զեղչման դրույք է հանդիսանում վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այն հնարավոր է որոշել[122]: Վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը զեղչման այն դրույքն է, որը վարձակալության սկզբի դրությամբ հանգեցնում է, որ՝ նվազագույն վարձավճարների և չերաշխավորված մնացորդային արժեքի հանրագումարի ներկա արժեքը հավասար լինի՝ վարձակալված ակտիվի իրական արժեքի և վարձատուի սկզբնավորման ուղղակի ծախսումների հանրագումարին[123]: Ներկա արժեքը հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$P=S/(1+R)(n)$$

որտեղ՝

P - նվազագույն վարձավճարների ներկա արժեքն է,

S - նվազագույն վարձավճարների համախառն գումարն է,

R - զեղչման տոկոսադրույքն է,

n - ժամանակաշրջանների քանակն է:

[119] ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», հոդ. 39:
[120] Նույն տեղում, հոդ. 25:
[121] Նույն տեղում, հոդ. 4:
[122] Նույն տեղում, հոդ. 20:
[123] Նույն տեղում, հոդ. 4:

Համաձայն ՀՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի սահմանումների ֆինանսական վարձակալության սինթետիկ հաշվառումը կազմակերպվում է հետևյալ սխեմայով:

Վարձատուի մոտ վարձակալության մեկնարկին վարձակալության հանձվող հիմնական միջոցների արժեքով դեբետագրվում է «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով» հաշիվը՝ կրեդիտագրելով «Հիմնական միջոցներ» հաշիվը: Միաժամանակ պայմանագրով և մարման ժամանակացույցով սահմանված վարձակալության ամբողջ ֆինանսական (տոկոսային) եկամուտների գումարով դեբետագրվում է «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով» հաշիվը՝ կրեդիտագրելով «Չվաստակած ֆինանսական եկամուտ» հաշվիվը: Ֆինանսական եկամուտը ճանաչելիս, հաստատուն պարբերական հատույցն արտացոլող գրաֆիկի հիման վրա որոշվող գումարով «Չվաստակած ֆինանսական եկամուտ» հաշիվը դեբետով թղթակցում է «Ֆինանսական վարձակալությունից տոկոսային եկամուտ» հաշվի կրեդիտի հետ: Վարձավճարները ստանալիս, դրամական փաստացի ներհոսքի գումարով, դեբետագրվում են դրամական միջոցներ հաշվառող հաշիվները և կրեդիտագրվում է «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով» հաշիվը:

Վարձակալի մոտ վարձակալության մեկնարկին վարձակալական պարտավորությունների ամբողջ գումարով կրեդիտագրվում է «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» հաշիվը՝ վարձակալված ակտիվի արժեքի չափով դեբետագրելով «Ֆինանսական վարձակալությամբ օգտագործվող հիմնական միջոցներ» հաշիվը և միաժամանակ՝ պայմանագրով և մարման ժամանակացույցով սահմանված վարձակալության ամբողջ ֆինանսական (տոկոսային) ծախսերի գումարով դեբետագրելով՝ «Չկրած ֆինանսական ծախսեր» հաշիվը: Ֆինանսական ծախսը ճանաչելիս, յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ հաստատուն պարբերական տոկոսադրույքը պահպանելով, «Չկրած ֆինանսական ծախսեր» հաշիվը կրեդիտով թղթակցում է «Ֆինանսական վարձակալության դիմաց տոկոսային ծախսեր» հաշվի դեբետի հետ: Մարման ժամանակացույցով սահմանված վարձակալական պարտավորության բաժնեմասը վճարելիս դրամական փաստացի արտահոսքի գումարով դեբետագրվում է «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք

գումարներ» հաշիվը՝ կրեդիտագրելով դրամական միջոցներ հաշվառող հաշիվները[124]:

Լիզինգային գործառնությունների հաշվառումը որոշ առանձնահատկություններ ունի նաև հարկային հաշվառման կազմակերպման տեսակետից:

Այդպես՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում նախատեսող պայմանագրի հիման վրա իրականացվող ֆինանսական վարձակալության գործարքները ԱԱՀ-ով հարկման առումով, ըստ էության, դիտվում են որպես ապրանքի մատակարարման գործարքներ՝ վարձակալության տրվող ակտիվների արժեքի մասով, և միաժամանակ՝ ծառայության մատուցում՝ վարձակալության տրամադրման համար գանձվող տոկոսագումարների մասով: Ընդ որում, ապրանքի մատակարարման գործարքների մասով վարձատուի մոտ հարկային պարտավորության ծագման պահ է համարվում գույքը վարձակալին վարձակալության հանձնելու պահը: Միաժամանակ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ֆինանսական վարձակալությունից (լիզինգից) ստացված տոկոսագումարները ազատված են ԱԱՀ-ից[125]: Քանի-որ ֆինանսական վարձակալության գործարքները ենթակա են ԱԱՀ-ով հարկման, այդ գործարքների պայմանագրային արժեքը որոշելիս հաշվի է առնվում ավելացված արժեքի հարկի գումարը: Վարձակալը պայմանագրային արժեքը վճարելիս հատուցում է նաև հարկի գումարը:

Շահութահարկի առումով վարձատուի մոտ ֆինանսական վարձակալությունից ստացված տոկոսային եկամուտները ճանաչվում են որպես համախառն եկամտի տարր, իսկ վարձակալի մոտ՝ համախառն եկամտից նվազեցվում են ինչպես ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսերը, այնպես էլ վարձակալված հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումները (մաշվածության ծախսերը): Բնականաբար թե՛ վարձակալի և թե՛ վարձատուի մոտ համապատասխանաբար ծախսերն ու եկամուտները բաշխվում են վարձակալության պայմանագրի գործողության հաշվետու տարիների միջև:

Լիզինգի հաշվառման համակարգում ընդգրկվում են նաև հետ-

[124] Տես՝ «Հաշվապահական հաշվառում: Ուսումնական ձեռնարկ», Ա.Զ. Սարգսյան, Ռ.Պ. Համբարձումյան, Ա.Մ. Մարջանյան, Ն.Մ. Օգանեզովա և ուրիշներ: Եր.: Տնտեսագետ 2007, էջ 179-186:

տաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ, որոնք ծագում են հաշվապահական հաշվառման ստանդարտներով և հարկային օրենսդրությամբ նախատեսվող եկամուտների կամ ծախսերի ճանաչման պահի անհամապատասխանությունից, երբ ժամանակավոր տարբերություններ են առաջանում ակտիվի կամ պարտավորության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև[126]:

Ժամանակագրական տեսանկյունից, հարկային տարբերություններ առաջանում են այն դեպքում, երբ եկամուտը կամ ծախսը հաշվապահական շահույթի կազմում ներառվում են մեկ ժամանակաշրջանում, իսկ հարկվող շահույթի կազմում՝ այլ ժամանակաշրջանում: Հետևաբար, եթե հաշվետու ժամանակաշրջանում եկամուտների և ծախսերի ճանաչման պահերը ֆինանսական և հարկային հաշվառման համակարգերում համընկնում են, ապա հարկային ժամանակավոր տարբերություններ չեն առաջանում[127]:

Հաշվապահական հաշվառման տեսանկյունից, այսպիսով, ժամանակավոր տարբերությունները, ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած տարբերություններն են, որոնք լինում են.

- հետաձգված հարկային պարտավորություններ,
- հետաձգված հարկային ակտիվներ:

Հետաձգված հարկային պարտավորություններն առաջանում են այն դեպքերում, երբ հաշվապահական շահույթը գերազանցում է հարկային շահույթի մեծությանը, իսկ հետաձգված հարկային ակտիվներն՝ այն դեպքերում, երբ հարկվող շահույթն է գերազանցում հաշվապահական շահույթի մեծությանը[128]:

Լիզինգի համակարգում հետաձգված հարկային ակտիվներ հիմնականում առաջանում են վարձակալի մոտ, երբ այն կիրառում է վարձակալած ակտիվի արագացված ամորտիզացիա: Հաշվապահական շահույթը որոշելիս, վարձակալ կազմակերպությունում լիզինգի օբյեկտը կարող է ամորտիզացվել արագացված մաշվածության մեթոդով[129]:

[126] ՀՀՄՍ «Շահութահարկեր», հոդ 5:
[127] Ա.Գ. Ճոտղուրյան, Ա.Ա. Հակոբյան, «Հարկային հաշվապահություն և պլանավորում», Տնտեսագետ, Եր., 2003թ., էջ 25:
[128] Նույն տեղում:

Սակայն, հարկային շահույթը որոշելիս, հիմնական միջոցները, ըստ խմբերը, ամորտիզացվում և ընդգրկվում են ծախսերի կազմում օրենքով սահմանված նվազագույն ժամկետներում՝ հավասարաչափ կարգով[130]՝ առաջացնելով հարկվող ժամանակավոր տարբերություն:

Տարբեր հաշվետու ժամանակաշրջանների կտրվածքով վարձակալությամբ օգտագործվող հիմնական միջոցների մաշվածության ներառումը ֆինանսական և հարկային հաշվառման ծախսերում, հաշվեկշռում առաջին տարիներին հանգեցնում է հետաձգված հարկային ակտիվների առաջացման, որոնք ձևակերպվում են դեբետագրելով «Հետաձգված հարկային ակտիվներ» հաշիվը և կրեդիտագրելով «Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)» հաշիվը, իսկ վարձակալված ակտիվի շահագործման վերջին տարիներին՝ դրանց մարմանը, որը ձևակերպվում է հակառակ հաշվային թղթակցությամբ:

Այսպիսով, ֆինանսական վարձակալության գործառնությունների ֆինանսական հաշվառումը կարգավորվում է հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներով: Սակայն, գոյություն ունեն լուծում պահանջող մի շարք հիմնախնդիրներ:

Առաջինը՝ ֆինանսական հաշվառման բնագավառում. լուծված չեն վարձակալական պարտավորությունների հեջավորման, ինչպես նաև վարձակալության ներխմբային համագործակցության արդյունքների հաշվառման և գնահատման ու այլ հիմնախնդիրներ: Բարելավման կարիք ունեն նաև ֆինանսական հաշվետվություններում վարձակալության գործառնությունների վերաբերյալ ներկայացվող բացահայտումները:

Երկրորդ՝ կառավարչական հաշվառման բնագավառում. ինչպես տեսության մեջ, այնպես էլ գործնականում դեռևս իր զարգացումը չի ստացել ֆինանսական վարձակալության կառավարչական հաշվառումը: Վարձակալության պարտավորությունների կառավարչական հաշվառման ներդրումը, կարծում ենք, էապես կարող է նպաստել լիզինգի արդյունավետ կազմակերպման գործընթացին:

[130] «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը, հոդված 12:

4.2 Վարձակալության ֆինանսական արդյունքների հաշվետվության բարելավումը

Ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի և ֆինանսական արդյունքների համակարգված ներկայացումն են: Հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների նպատակը ՀՀՄՍ-երին (հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ) և ՖՀՄՍ-երին (ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ) համապատասխան, կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն է, որն օգտակար է օգտագործողների լայն շրջանակներին՝ տնտեսական որոշումներ կայացնելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները նաև ցուցադրում են կազմակերպության ղեկավարության կողմից վստահված ռեսուրսների կառավարումը: Այս նպատակն ապահովելու համար ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են տեղեկություններ կազմակերպության ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի, եկամուտների և ծախսերի, դրամական միջոցների հոսքերի վերաբեր-

Ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների (կոչվում են «Ֆինանսական հաշվետվություններ») նպատակն է բավարարել այն օգտագործողների կարիքները, որոնք ի զորու չեն պահանջել կազմակերպությունից՝ պատրաստելու իրենց հատուկ տեղեկատվական կարիքները բավարարող հաշվետվություններ:[131]

Ծանոթագրություններում ներառվում է տեղեկատվություն՝ ի լրումն ֆինանսական վիճակի մասին հաշվետվության, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության, առանձին ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության (եթե ներկայացվում է), սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության: Ծանոթագրությունները պարունակում են պատմողական նկարագրություններ կամ տեղեկատվություն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված՝ չմանրամասնեցված հոդվածների, ինչպես նաև

[131] «2010 Interpretation and Application of International Financial Reporting Standards» Barry J. Epstein, Eva K. Jermakowich, Wriey inc. USA, p. 654.

այն հոդվածների մասին, որոնք չեն բավարարում այդ հաշվետվություններում ճանաչման չափանիշները:[132]

Կարծում ենք՝ ֆինանսական վարձակալությանն առնչվող տեղեկատվությունն առավել ընդգրկուն ծանոթագրություններում պետք է ներկայացվի, քան արվում է այսօր գործնականում՝ կապված լիզինգի տնտեսակազմակերպչական մի շարք առանձնահատկություններին՝ վարձակալության երկարաժամկետայնությանը, խրախոսող պայմաններին, վարձակալության առկայության որոշմանը և իրավական ձև ներառող գործարքների բովանդակությանը, սակագնային քաղաքականությանը, ռիսկայնությանը:

Նախորդ պարագրաֆում նշեցինք, որ ֆինանսական վարձակալության շրջանակներում, սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերը և օգուտները վարձատուի կողմից փոխանցվում են, և այդպիսով վարձակալության դիմաց վարձավճարների գծով դեբիտորական պարտքերը վարձատուն դիտում է՝ որպես իր ներդրումների հիմնական գումարի մարում և ֆինանսական եկամուտ, ներդրումների և ծառայությունների դիմաց՝ հատույց: Վարձակալության ժամկետի մեկնարկի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում վարձակալը ֆինանսական վարձակալությունը ճանաչում է որպես ակտիվ և պարտավորություն՝ վարձակալված գույքի իրական արժեքին հավասար գումարով կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է, ընդ որում՝ դրանցից յուրաքանչյուրը որոշվում է վարձակալության սկզբի դրությամբ:[133] Վարձատուն ֆինանսական վարձակալության տրված ակտիվներն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում պետք է ճանաչի որպես ակտիվ և ներկայացնի դրանք որպես դեբիտորական պարտք՝ վարձակալությունում զուտ ներդրումների մեծությանը հավասար գումարով: Փաստորեն, ակտիվի օգտագործման իրավունքով է արձանագրվում ֆինանսական վարձակալության մեկնարկը:

Ակտիվի օգտագործման իրավունքը փոխանցվում է, եթե բավարարում է ստորև նշված պայմաններից որևէ մեկը.

- գնորդը հնարավորություն կամ իրավունք ունի կառավարելու ակտիվը կամ ուղղորդելու այլ անձանց՝ կառավարելու այդ

[132] ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում», հոդ. 7:
[133] ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», հոդ. 20:

ակտիվը իր կողմից սահմանված ձևով՝ ստանալով կամ վերահսկելով այդ ակտիվի արտադրանքի կամ օգտակարության ավելի քան ոչ նշանակալի մասը,
- գնորդը հնարավորություն կամ իրավունք ունի վերահսկելու հիմքում ընկած ակտիվի ֆիզիկական հասանելիությունը՝ ստանալով կամ վերահսկելով այդ ակտիվի արտադրանքի կամ այլ օգտակարության ավելի քան ոչ նշանակալի մասը,
- փաստերն ու հանգամանքները ցույց են տալիս, որ շատ փոքր է հավանականությունը, որ բացի գնորդից, մեկ կամ ավելի այլ կողմեր կստանան պայմանագրի ժամկետի ընթացքում ակտիվի կողմից արտադրված կամ ստեղծված արտադրանքի կամ այլ օգտակարության ավելի քան ոչ նշանակալի մասը և այն գինը, որ գնորդը կվճարի արտադրանքի համար:[134]

Կազմակերպությունը կարող է չկապակցված կողմի կամ կողմերի (Ներդրող) հետ մտնել վարձակալության իրավական ձև ունեցող գործարքի կամ մի շարք կառուցվածքային գործարքների (համաձայնություն) մեջ: Օրինակ՝ Կազմակերպությունը կարող է Ներդրողին վարձակալության տալ ակտիվներ և նույն ակտիվները հետ վարձակալել կամ, որպես այլընտրանք, իրավական տեսանկյունից վաճառել ակտիվները և նույն ակտիվները հետ վարձակալել: Յուրաքանչյուր համաձայնության ձևը և պայմանները կարող են զգալիորեն տարբերվել: Վարձակալության տալու և հետ վարձակալելու օրինակում հնարավոր է, որ համաձայնության նպատակն է հարկային առավելություն ապահովել Ներդրողին, որն այն կիսում է Կազմակերպության հետ վճարի տեսքով, և ոչ թե փոխանցել ակտիվի օգտագործման իրավունքը:

ՀՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտը կիրառվում է այն դեպքերում, երբ համաձայնության բովանդակությունը ներառում է ակտիվի օգտագործման իրավունքի փոխանցում որոշակի ժամանակահատվածով: Նախանշանները, որոնք առանձին վերցրած վկայում են, որ համաձայնությունն իր բովանդակությամբ կարող է չներառել վարձակալություն՝ ըստ ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», ստանդարտի, ներառում են.

[134] IFRIC Interpretation 4 "Determining whether on Arrangement contains a Lease", p. 9:

(ա) Կազմակերպությունը պահպանում է հիմքում ընկած ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները և պահպանում է ակտիվի նկատմամբ, ըստ էության, նույն իրավունքները, որոնք ունեցել է նախքան համաձայնությունը,

(բ) համաձայնության հիմնական նպատակը հարկային առավելություն ապահովելն է, այլ ոչ թե ակտիվի օգտագործման իրավունքի փոխանցումը,

(գ) ներառված է օպցիոն այնպիսի պայմաններով, որ դրա իրագործումը մեծապես հավանական է (օրինակ՝ վաճառքի օպցիոն, որն իրագործելի է սպասվելիք իրական արժեքից բավարար բարձր գնով՝ այդ օպցիոնի իրագործելի դառնալու պահին):

Նախանշանները, որոնք միասնաբար ցույց են տալիս, որ, ըստ էության, առանձին ներդրումային հաշիվը և վարձավճարների գծով պարտականությունները չեն բավարարում ակտիվի և պարտավորության սահմանումներին և չպետք է ճանաչվեն կազմակերպության կողմից, հետևյալն են.

(ա) Կազմակերպությունն իր նպատակները հետապնդելիս չի կարող վերահսկել ներդրումային հաշիվը և պարտավորված չէ վճարել վարձավճարները: Նման իրավիճակ առկա է, երբ, օրինակ, կանխավճարը Ներդրողին պաշտպանելու նպատակով փոխանցվում է առանձին ներդրումային հաշվին, որը կարող է օգտագործվել միայն Ներդրողին վճարումներ կատարելու համար, և Ներդրողը համաձայնվում է, որ վարձավճարները վճարվեն այդ ներդրումային հաշվից, իսկ Կազմակերպությունն ի վիճակի չէ արգելել ներդրումային հաշվից վարձավճարների վճարումը Ներդրողին.

(բ) Կազմակերպությունը ենթակա է միայն աննշան ռիսկի, որ կփոխհատուցի Ներդրողից ստացված վճարների ամբողջ գումարը և հավանաբար կվճարի հավելյալ գումար, կամ, եթե վճարներ չեն ստացվել, ենթակա է միայն աննշան ռիսկի, որ այլ պարտականությունների (օրինակ՝ երաշխիքի) դիմաց գումար կվճարի: Վճարում կատարելու միայն աննշան ռիսկը առկա է, երբ, օրինակ, համաձայնության պայմանները պահանջում են, որ կանխավճարի գումարը ներդրվի ռիսկից զերծ ակտիվների մեջ, որոնք, ըստ ակնկալության, կգոյացնեն բավա-

կանաչափ դրամական հոսքեր՝ վարձավճարների գծով պարտականությունները մարելու համար:

Ֆինանսական հաշվետվություններում վարձակալության եկամտի ճանաչման մոտեցումները սահմանվում են միջազգային ստանդարտներով: Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը պետք է ճանաչվի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն,

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:[135]

ՀՀՄՍ 18 «Հասույթ» ստանդարտի 20-րդ պարագրաֆի չափանիշները կիրառվում են յուրաքանչյուր համաձայնության փաստերի և հանգամանքների նկատմամբ՝ որոշելու համար, թե երբ պետք է վճարները ճանաչել որպես եկամուտ, որը կարող է ստանալ կազմակերպությունը: Վարձակալության պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ շարունակվող ներգրավվածությունը՝ վճարը վաստակելու համար անհրաժեշտ ապագա արդյունքների հետ կապված նշանակալի պարտականությունների ձևով, պահպանված ռիսկերի առկայությունը, ցանկացած երաշխիքային համաձայնության պայմանները և վճարների վաղաժամկետ վճարման ռիսկը: Նախանշանները, որոնք առանձին վերցրած վկայում են, որ ամբողջ վճարի ճանաչումը որպես եկամուտ, երբ այն ստացվում է համաձայնության սկզբում, ճիշտ չէ, ներառում են.

- որոշակի նշանակալի գործողություններ իրականացնելու

[135] ՀՀՄՍ 18 «Հասույթ», հոդ 20:

կամ դրանցից ձեռնպահ մնալու պարտականությունները հանդիսանում են ստացված վճարը վաստակելու պայմաններ, և հետևաբար, իրավաբանորեն պարտադրող համաձայնագրի կնքումը ամենակարևոր գործողությունը չէ, որ պահանջվում է համաձայնությամբ,

հիմքում ընկած ակտիվի օգտագործման վրա դրվում են սահմանափակումներ, որոնք գործնականում սահմանափակում կամ նշանակալիորեն փոփոխում են Կազմակերպության կողմից այդ ակտիվի օգտագործման (օրինակ՝ սպառելու, վաճառելու կամ գրավ դնելու) հնարավորությունը,

- ստացված վճարի որևէ մասը վերադարձնելու և, հավանաբար, որոշ հավելյալ գումար վճարելու հավանականությունը աննշան չէ: Սա տեղի է ունենում, երբ, օրինակ՝

(ա) հիմքում ընկած ակտիվը մասնագիտացված ակտիվ չէ, որը պահանջվում է Կազմակերպության գործունեությունը վարելու համար, և հետևաբար, առկա է հավանականություն, որ Կազմակերպությունը գումար կվճարի՝ համաձայնությունը վաղաժամկետ դադարեցնելու համար կամ՝

(բ) Կազմակերպությունը համաձայնության պայմանների պահանջով կամ իր մասնակի կամ լիիրավ հայեցողությամբ պետք է ներդնի ստացված կանխավճարն ավելի, քան աննշանակալի ռիսկայնությամբ (օրինակ՝ արժութային, տոկոսադրույքի կամ պարտքային ռիսկերի տեսանկյունից) ակտիվներում: Այս պարագայում աննշան չէ այն ռիսկը, որի ներդրման արժեքը բավարար չի լինի վարձավճարների գծով պարտականությունների կատարման համար, և, հետևաբար, հնարավոր է, որ Կազմակերպությունից պահանջվի վճարել որոշակի գումար:[136]

Վարձակալը, ի լրումն ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» ստանդարտի պահանջների կատարման, ֆինանսական վարձակալության առումով, պետք է կատարի բացահայտումներ՝ նորացման կամ գնման օպցիոնների առկայության ու պայմանների, ինչպես նաև սահող գների վերապահումների վերաբերյալ:[137]

Նոր կամ նորացվող վարձակալության վերաբերյալ բանակցու-

[136] SIC Interpretation 27 "Evaluating the Substance of Transactions Involving the Legal Form of a Lease", p. 8:

թյունների ժամանակ վարձատուն կարող է վարձակալին խրախուսող պայմաններ տրամադրել՝ պայմանագիրը կնքելու համար: Այդպիսի խրախուսող պայմանների օրինակներից են՝ գումարի կանխավճարումը, վարձակալին ծախսումների (ինչպիսիք են՝ տեղափոխման, վարձակալված գույքի բարելավման, ինչպես նաև վարձակալի նախկին վարձակալության պայմանագրի հետ կապված ծախսումները) փոխհատուցումը կամ դրանց ստանձնումը վարձատուի կողմից: Որպես այլընտրանք՝ վարձակալության սկզբնական ժամանակաշրջանում վարձավճարը փոխադարձ համաձայնությամբ կարող է չգանձվել կամ կարող է գանձվել ցածր վարձավճար[138]: Հարցն այն է, թե ինչպես պետք է ճանաչվեն վարձակալությանն առնչվող խրախուսող պայմանները թե՛ վարձատուի և թե՛ վարձակալի ֆինանսական հաշվետվություններում:

Կարծում ենք՝ վարձատուն պետք է ճանաչի խրախուսող պայմանների ընդհանուր արժեքը՝ որպես վարձավճարներից ստացվող եկամտի նվազեցում վարձակալության ժամկետի ընթացքում, կիրառելով առաջարկվող կոնտրարային՝ «Վարձավճարների զեղչերից եկամուտների նվազեցում» հաշիվը: Նույն սկզբունքը առաջարկում ենք կիրառել վարձակալի մոտ, որը պետք է վարձակալության ժամկետի ընթացքում խրախոսող պայմաններից ընդհանուր օգուտը ճանաչի «Վարձավճարների զեղչերից ծախսի նվազեցում» հաշվի օգտագործմամբ:

Դիցուք՝ այգեգործական ֆերմերային տնտեսությունը լիզինգային կազմակերպությունից 15% դրույքաչափով, հինգ տարի ժամկետով և տարեկան 800 հազ. դրամ վարձավճարով ֆինանսական վարձակալությամբ տրակտոր է ձեռք բերել՝ լիզինգի ավարտին ակտիվը գնելու կամ վարձատուին վերադարձնելու հնարավորությամբ: Լիզինգի ընթացքում վարձատուն ֆերմերային տնտեսությանը ներկայացնում է վերջին երեք տարիների համար նորացված պայմանագրային առաջարկ, ըստ որի՝ երրորդ տարում վարձավճարը սահմանվելու է 600 հազ. դրամ, չորրորդ տարում՝ 700 հազ. դրամ, հինգերորդ տարում՝ 800 հազ. դրամ:

Վարձատուի կողմից, լիզինգի խրախոսման նպատակով, սահող վարձավճարը, փաստորեն, նորացված պայմանագրային ժամկետում

[138] Аренда: учет, налого, право. Под редакцией Н.А. Малофеевой, М.С.

վարձակալության կողմերի մոտ ձևավորում է տոկոսային ծախսերի տնտեսում և եկամուտների կրճատում (տե՛ս աղյուսակ 4.1, սյուն VI), որը առաջարկում ենք արտացոլել հաշվապահական հաշվառման հաշիվներով և բացահայտել հրապարակվող հաշվետվություններում՝ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին առավել ընդգրկուն տեղեկատվության ներկայացման նպատակով:

Աղյուսակ 4.1

Լիզինգի տոկոսային ծախսերի (եկամուտների) տարբերությունները սահող գների կիրառման դեպքում (հազ. դրամ)

Տարիներ	Տոկոսային եկամուտները ամրագրված գների պարագայում		Տոկոսային եկամուտները սահող գների պարագայում		Տարբերություն
	վարձավճարներ	վարձակալության %	վարձավճարներ	վարձակալության %	
	II	III	IV	V	VI
1	800	800 – 800 x 0.870* = 104	x	x	x
2	800	800 – 800 x 0.756 = 195	x	x	x
3	800	800 – 800 x 0.658 = 274	600	600 – 600 x 0.658 = 205	69
4	800	800 – 800 x 0.572 = 342	700	700 – 700 x 0.572 = 300	42
5	800	800 – 800 x 0.497 = 402	800	800 – 800 x 0.497 – 402	0

* Տե՛ս ներկա արժեքի բերման աղյուսակ:

Սահող վարձավճարների նման պայմաններում առաջարկում ենք լիզինգի եկամուտների և ծախսերի հաշվապահական ձևակերպումներն իրականացնել հետևյալ կերպ.

վարձատուի մոտ

նորացված վարձակալության **առաջին տարի.**

- վարձակալությունից դրամական ներհոսքի դեպքում

Դտ «Հաշվարկային հաշիվ» 600 000
Կտ «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով» 600 000

վարձակալման տոկոսային եկամուտը ձևակերպելիս

Դտ «Չվաստակած ֆինանսական եկամուտ» 205 000
Դտ «Վարձավճարների զեղչերից եկամտի նվազեցում» 69 000
Կտ «Ֆինանսական վարձակալությունից տոկոսային եկամուտ» 274 000

նորացված վարձակալության **երկրորդ տարի.**

վարձակալությունից դրամական ներհոսքի դեպքում.

Դտ «Հաշվարկային հաշիվ» 700 000
Կտ «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով» 700 000

վարձակալման տոկոսային եկամուտը ձևակերպելիս

Դտ «Չվաստակած ֆինանսական եկամուտ» 300 000
Դտ «Վարձավճարների զեղչերից եկամտի նվազեցում» 42 000
Կտ «Ֆինանսական վարձակալությունից տոկոսային եկամուտ» 342 000

նորացված վարձակալության **երրորդ տարի.**

վարձակալությունից դրամական ներհոսքի դեպքում

Դտ «Հաշվարկային հաշիվ» 800 000
Կտ «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով» 800 000

վարձակալման տոկոսային եկամուտը ձևակերպելիս

Դտ «Չվաստակած ֆինանսական եկամուտ» 402 000
Դտ «Վարձավճարների զեղչերից եկամտի նվազեցում» 0
Կտ «Ֆինանսական վարձակալությունից տոկոսային եկամուտ» 402 000

Այսպիսով՝ առաջարկվող կոնտրարային հաշվի օգնությամբ հնարավորություն է ստեղծվում վարձատուի ֆինանսական հաշվետվությունում ներկայացնել բացահայտում՝ վարձակալության խրախուսող պայմաններից բխող ֆինանսական արդյունքների մասին: Նույն սկզբունքով վարձակալն է ներկայացնում խրախուսող պայմաններով սահող վարձավճարների հետևանքները ֆինանսական հաշվետվության բացահայտումներում:

Արտադրող կամ դիլեր վարձատուները երբեմն սահմանում են արհեստականորեն իջեցված տոկոսադրույքներ՝ հաճախորդներ ներգրավելու նպատակով:[139] Եթե սահմանվում է զեղչային տոկոսադրույք, ապա, մեր կարծիքով, դրա արդյունքը պետք է բացահայտվի վարձատուի և վարձակալի ֆինանսական արդյունքների հաշվետվություններում, ցույց տալով, թե ինչպիսին կլինի լիզինգի ֆինանսական հետևանքը, եթե կիրառվի շուկայական տոկոսադրույք:

[139] ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», հոդ. 45:

Աղյուսակ 4.2

Լիզինգի տոկոսային ծախսերի (եկամուտների) տարբերությունները զեղչային տոկոսադրույքների կիրառման դեպքում (հազ. դրամ)

Տարի-ներ	Տոկոսային ծախսերը ամրագրված գների պարագայում		Տոկոսային ծախսերը սահող գների պարագայում		Տարբե-ություն
	վարձա-վճարներ	վարձակա-լության %	վարձա-վճարներ	վարձակա-լության %	
I	II	III	IV	V	VI
1	800	800 – 800 x 0.870* = 104	x	x	x
2	800	800 – 800 x 0.756 = 195	x	x	x
3	800	800 – 800 x 0.658 = 274	800	800 – 800 x 0.751 = 199	75
4	800	800 – 800 x 0.572 = 342	800	800 – 800 x 0.683 = 254	88
5	800	800 – 800 x 0.497 = 402	800	800 – 800 x 0.621 = 303	99

* Տե՛ս ներկա արժեքի բերման աղյուսակ:

Դիցուք, լիզինգի խրախուսման նպատակով վարձատուն կիրառում է ոչ թե սահող վարձավճարներ (ինչպես վերը նկարագրված դեպքում), այլ առաջարկում է վարձակալության տոկոսադրույքի զեղչ՝ 15%-ի փոխարեն սահմանելով 10%: Զեղչային տոկոսադրույքների կիրառման պարագայում վարձակալը նորացված լիզինգային պայմանագրի ժամանակահատվածում ձեռք է բերում տոկոսային ծախսերի տնտեսում (տե՛ս աղյուսակ 4.2, սյուն VI), որը, ըստ տարիների, առաջարկում ենք արձանագրել առանձին հաշվով՝ դրանով իսկ տնտեսման արժեքը ներկայացնելով ֆինանսական հաշվետվությունների բացահայտումներում:

Զեղչային տոկոսադրույքների կիրառման պայմաններում առաջարկում ենք վարձակալի մոտ լիզինգի ծախսերի հաշվապահական

ձևակերպումներն իրականացնել հետևյալ կերպ.

Նորացված վարձակալության **առաջին տարի.**

վարձակալական պարտավորության բաժնեմասը վճարելիս

Դտ «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»..... 800 000

Կտ «Հաշվարկային հաշիվ»..... 800 000

տոկոսագումարը հաշվետու տարվա ծախսերին վերագրելիս

Դտ «Ֆինանսական վարձակալության դիմաց տոկոսային ծախսեր»..... 274 000

Կտ «Վարձավճարների զեղչերից ծախսի նվազեցում»..... 75 000

Կտ «Չկրած ֆինանսական ծախսեր»..... 199 000

Նորացված վարձակալության **երկրորդ տարի.**

վարձակալական պարտավորության բաժնեմասը վճարելիս

Դտ «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»..... 800 000

Կտ «Հաշվարկային հաշիվ»..... 800 000

տոկոսագումարը հաշվետու տարվա ծախսերին վերագրելիս

Դտ «Ֆինանսական վարձակալության դիմաց տոկոսային ծախսեր»..... 342 000

Կտ «Վարձավճարների զեղչերից ծախսի նվազեցում»..... 88 000

Կտ «Չկրած ֆինանսական ծախսեր»..... 254 000

Նորացված վարձակալության **երրորդ տարի.**

վարձակալական պարտավորության բաժնեմասը վճարելիս

Դտ «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»..... 800 000

Կտ «Հաշվարկային հաշիվ»..... 800 000

տոկոսագումարը հաշվետու տարվա ծախսերին վերագրելիս

Դտ «Ֆինանսական վարձակալության դիմաց տոկոսային ծախսեր»..... 402 000

Կտ «Վարձավճարների զեղչերից ծախսի նվազեցում»..... 99 000

Կտ «Չկրած ֆինանսական ծախսեր»..... 303 000

Լիզինգային գործունեության ֆինանսական արդյունքների ներկայացման գործընթացում հիմնախնդիր է վարձավճարների ընդհանուր գումարներից զուտ վարձակալությանն առնչվող գումարների տարանջատումը և առանձին ներկայացումը:[140] Նվազագույն վար-

[140] Ковалев В.В., Лизинг, учетно-аналитические и правовые аспекты, М.,

ծավծարները, ինչպես սահմանված է ՀՀՄՍ 17 «Վարձակալություն» ստանդարտի 4-րդ պարագրաֆում, ներառում է միայն վարձակալության, այսինքն՝ ակտիվի օգտագործման իրավունքի համար վճարները և չեն ընդգրկում վճարները համաձայնության այլ տարրերի համար (սպասարկման և այլ ծախսումների արժեքը):[141]

Վարձատուն հաճախ կատարում է սկզբնավորման ուղղակի ծախսումներ, ինչպիսիք են՝ միջնորդական և իրավաբանական ծառայությունների դիմաց վճարները, ներքին ծախսումները, որոնք լրացուցիչ են և ուղղակիորեն վերագրելի վարձակալության շուրջ բանակցություններին ու համաձայնության ձեռք բերմանը: Այդ ծախսումներում չեն ներառվում ընդհանուր վերադիր ծախսումները, ինչպիսիք են՝ վաճառքի և մարքեթինգային խմբի ծախսումները: Ֆինանսական վարձակալության դեպքում, բացառությամբ նրանց, որոնք ներառում են արտադրող կամ դիլեր վարձատուներին, սկզբնավորման ուղղակի ծախսումները ներառվում են ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքի սկզբնապես չափման մեջ և նվազեցնում են վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվող եկամտի գումարը: Ենթադրվող տոկոսադրույքը վարձակալությամբ սահմանվում է այնպես, որ սկզբնավորման ուղղակի ծախսումները մեխանիկորեն ներառվում են ֆինանսական վարձակալության գծով դեբիտորական պարտքում, և անհրաժեշտություն չկա դրանք առանձին ավելացնելու: Վարձակալության շուրջ բանակցություններին և համաձայնության ձեռք բերմանը ուղղակիորեն վերագրելի՝ արտադրող կամ դիլեր վարձատուների կողմից կատարված ծախսումները բացառվում են սկզբնավորման ուղղակի ծախսումների սահմանումից: Արդյունքում՝ դրանք բացառվում են վարձակալությունում զուտ ներդրումից և ճանաչվում են որպես ծախս վաճառքի գծով շահույթի ճանաչման պահին, որը ֆինանսական վարձակալության դեպքում, սովորաբար, վարձակալության ժամկետի մեկնարկն է:[142]

Որոշ դեպքերում վարձակալության գծով վճարները համաձայնության այլ տարրերի գծով վճարներից տարանջատելը գնորդից պահանջում է կիրառել որևէ գնահատման մեթոդ: Օրինակ՝ գնորդը կարող է գնահատել վարձակալության վճարները՝ անդրադառնալով համադրելի ակտիվի գծով որևէ վարձակալական պայմանագրի, որն այլ տարր չի պարունակում կամ գնահատել համաձայնության այլ տարրերի գծով վճարները՝ անդրադառնալով համադրելի պայմանագրերի, այդ վճարները նվազեցնելով համաձայնության այլ վճարներից:

[141] IFRIC Interpretation 4 "Determining whether on Arrangement contains a Lease", p. 13:

[142] ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», հոդ. 2:

Եթե վարձակալը եզրակացնում է, որ վճարների հուսալի տարանջատումը գործնականում անհնար է, ապա առաջարկվում է ֆինանսական վարձակալության դեպքում ճանաչել ակտիվը և պարտավորությունը՝ ակտիվի իրական արժեքին հավասար արժեքով, բացի դրանից, բացահայտել այդ վճարները՝ ոչ վարձակալական տարրերի գծով վճարումներ չպարունակող այլ համաձայնությունների նվազագույն վարձավճարներից առանձին:[143]

Համաձայն լիզինգային պայմանագրի՝ վարձակալը չորս տարի ակտիվի օգտագործման դիմաց տարեկան վճարելու է 955 հազ. դրամ վարձավճար՝ 18% դրույքաչափի պայմաններում (ընդամենը 3 820 000 (955 000 x 4)): Վարձակալած ակտիվի իրական արժեքը լիզինգի պահին կազմել է 3 մլն դրամ: Վարձակալն, ակտիվը մուտքագրելիս հաշվարկում է նվազագույն վարձավճարների ներկա արժեքը.

955 000 x 2.690[144] = 2 568 950 դրամ

Հետևաբար, վարձավճարների գումարից սպասարկման, միջնորդական, իրավաբանական ծառայությունների ծախսերի տարանջատման համար նպատակահարմար է որոշել նվազագույն վարձավճարների ներկա արժեքի և ակտիվի իրական արժեքի տարբերությունը (3 000 000 - 2 568 950 = 431 050 դրամ), որի գծով վարձակալի մոտ կտրվեն հետևյալ հաշվապահական ձևակերպումները.

լիզինգի մեկնարկին վարձակալական պարտավորությունը ձևակերպելիս

Դտ «Ֆինանսական վարձակալությամբ օգտագործվող հիմնական միջոցներ»..... 3 000 000

Կտ «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»..... 3 000 000

վարձակալության չկրած տոկոսային ծախսը ձևակերպելիս

Դտ «Չկրած ֆինանսական ծախսեր»..... 388 950 (3 820 000 –3 000 000 –431 050)

Կտ «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» 388 950

[143] ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», հոդ.15:

[144] Տես անուփտետի աղյուսակ:

վարձավճարներից տարանջատված սկզբնավորման ծախսերը ձևակերպելիս

Դտ «Վերադիր (սկզբնավորման) ծախսեր»..... 431 050
Կտ «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»..... 431 050

Ակտիվի օգտագործման իրավունք ձեռք բերելիս վարձակալը ձեռք է բերում նաև հիմնական միջոցի արժեզրկման ռիսկ[145]: Եթե լիզինգի ավարտին ակտիվ գնելիս՝ այն հաշվապահական հաշվեկշռում ներկայացվում է իրական արժեքով, ապա վարձակալության ընթացքում արժեզրկում արձանագրելիս, մեր կարծիքով, դրա ֆինանսական հետևանքները նույնպես պետք է արտացոլվեն վարձակալի հաշվետվություններում:

Որոշելու համար, թե արդյոք վարձակալված ակտիվը արժեզրկվել է, կազմակերպությունը կիրառում է ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտը:[146] Արժեզրկումից կորուստն այն գումարն է, որով ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը: Այն հաշվարկելու համար՝ նախ որոշվում է վարձակալած ակտիվի օգտագործման արժեքը. այսինքն՝ ապագա դրամական հոսքերի ներկա արժեքը, որն ակնկալվում է ստանալ ակտիվից կամ դրամաստեղծ միավորից: Իսկ փոխհատուցվող գումարը ներկայացվում է որպես ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքի և օգտագործման արժեքի առավելագույնը:[147]

Վարձակալ կազմակերպությունը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պետք է գնահատի՝ առկա՞ է, արդյոք, որևէ հայտանիշ՝ ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե այո, ապա կազմակերպությունը պետք է գնահատի ակտիվի փոխհատուցվող գումարը:

Ակտիվն արժեզրկված է, երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրան փոխհատուցող գումարը: Գնահատելիս, եթե առկա է որևէ հայտանիշ, ըստ որի՝ ակտիվը կարող է արժեզրկված լինել, կազմակերպությունը պետք է դիտարկի առնվազն հետևյալ հայտանիշները՝

[145] Анисимов. М., Маслова И., Лизинговые операции в финансовой и бухгалтерской отчетности: американский опыт и российская практика, Финансовый бизнес, М., 2001, N 11, с. 29-32.
[146] ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», հոդ.30:
[147] ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում», հոդ. 6:

ա) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում վարձակալած ակտիվի շուկայական արժեքը նվազել է զգալիորեն ավելի մեծ չափով, քան կակնկալվեր որոշակի ժամանակ անցնելու կամ սովորական օգտագործման արդյունքում.
բ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում տեղի են ունեցել կամ մոտ ապագայում տեղի կունենան վարձակալ կազմակերպության համար անբարենպաստ հետևանք ունեցող նշանակալի փոփոխություններ այն տեխնոլոգիական, շուկայական, տնտեսական կամ իրավական միջավայրում, որտեղ գործում է այդ կազմակերպությունը, կամ այն շուկայում, որի համար նախատեսված է վարձակալած տվյալ ակտիվը.
գ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շուկայական տոկոսադրույքները կամ ներդրումների շուկայական այլ հատույցադրույքներ աճել են, և հավանական է, որ այդ աճը կազդի զեղչման դրույքների վրա, որոնք կիրառվում են ակտիվի օգտագործման արժեքը հաշվարկելիս, և էականորեն կնվազեցնի ակտիվի փոխհատուցվող գումարը.
դ) կազմակերպության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա շուկայական կապիտալացումը.
ե) վկայություն կա վարձակալած ակտիվի բարոյական մաշվածության կամ ֆիզիկական վնասվածության վերաբերյալ.
զ) տվյալ ժամանակաշրջանի ընթացքում տեղի են ունեցել կամ ակնկալվում է, որ մոտ ապագայում տեղի կունենան վարձակալ կազմակերպության համար անբարենպաստ ազդեցություն ունեցող նշանակալի փոփոխություններ ակտիվի ներկա կամ ակնկալվող օգտագործման աստիճանի (ինտենսիվության) կամ եղանակի մեջ: Այս փոփոխությունները ներառում են վարձակալած ակտիվի պարապուրդի մատնվելը, այն գործառնությունների ընդհատման կամ վերակառուցման ծրագրերը, որոնց պատկանում է տվյալ ակտիվը, ակտիվը նախապես ակնկալվող ամսաթվից շուտ օտարելու ծրագրերը և ակտիվի օգտակար ծառայությունը՝ անորոշի փոխարեն որպես սահմանափակ վերանայելը:
է) ներքին հաշվետվական համակարգը վկայում է, որ ակտիվի տնտեսական ցուցանիշները ավելի ցածր են կամ կլինեն ավելի ցածր, քան ակնկալվում էր:[148]

[148] ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում», հոդ. 12:

Ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է նվազեցվի մինչև դրան փոխհատուցող գումարը միայն այն դեպքում, եթե ակտիվը փոխհատուցող գումարն ավելի փոքր է, քան դրա հաշվեկշռային արժեքը: Այդ նվազումն իրենից ներկայացնում է կորուստ արժեզրկումից:

Ակտիվները ապագա տնտեսական օգուտներ ապահովող միջոցներ են, որոնք շահագործումից հետագա օգուտների նվազում արձանագրելու դեպքում պետք է արժեզրկվեն՝ վերագնահատված ներկայացվելով հաշվապահական հաշվեկշռում: Հետագա տնտեսական օգուտների կրճատում ակնկալելու պարագայում ակտիվի արժեզրկման հաշվապահական մոտեցումը ըստ ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում» ստանդարտի կատարվում է հետևյալ քայլերով.

1. որոշվում են ակտիվի օգտագործումից ստացվող ապագա դրամական ներհոսքերը ըստ առանձին տարիների,
2. վերագնահատման պահին հաշվարկվում է ակտիվի օգտագործումից ապագա դրամական ներհոսքերի ներկա արժեքը,
3. եթե դրամական ներհոսքերի ներկա արժեքի հանրագումարը մեծ է ստացվում վերագնահատման պահին ակտիվի հաշվեկշռային արժեքից, ապա արժեզրկում չի կատարվում, իսկ եթե ակտիվի հաշվեկշռային արժեքը մեծ է դրամական ներհոսքերի ընդհանուր ներկա արժեքից, ապա կատարվում է օգտագործվող ակտիվի վերագնահատում՝ ըստ օգտակարության աստիճանի:

Դիցուք՝ կաթնամթերք արտադրող բաժնետիրական ընկերությունը 80 000 հազ. դրամ շուկայական արժեքով և 8 տարվա շահագործման ժամկետով վարձակալել է հոսքային գիծ, որը ընկերությունում տարեկան լրացուցիչ ապահովելու է 15 000 հազ. դրամ եկամուտ:

Հոսքային գծի շահագործման 5-րդ տարվա վերջին պարզվում է, որ կաթնամթերքի շուկայում հզոր մրցակիցներ են հայտնվել, որի հետևանքով կրճատվել է սպառման շուկայի պահանջարկը, և դրանով իսկ 6-րդ տարվա սկզբին ակտիվի թերշահագործումից ակնկալվում է 10 000 հազ. դրամ եկամուտ՝ 15 000 հազ. դրամի փոխարեն: Առաջիկա երեք տարիներին նախատեսվում է փոխառու կապիտալի արժեքի 10% դրույքաչափ:

Նման պարագայում անհրաժեշտություն է առաջանում վերանայելու դեռևս երեք տարի շահագործման ժամկետ ունեցող վարձակալած ակտիվի հաշվապահական արժևորման հարցը:

1. Ներկայացնենք վարձակալած ակտիվի շահագործումից ակնկալվող դրամական ներհոսքերը.

6-րդ տարի՝ 10 000 հազ. դրամ,
7-րդ տարի՝ 10 000 հազ. դրամ,
8-րդ տարի՝ 10 000 հազ. դրամ:

2. Կատարենք ակտիվի շահագործումից ակնկալվող ապագա դրամական ներհոսքերի վերագնահատում՝ ներկա արժեքով.

Ներկա արժեքի 10% դրույքաչափով զեղչման գործակիցներն (կլորացված) են՝

1-ին տարի՝ 0.9, 2-րդ տարի՝ 0.8, 3-րդ տարի՝ 0.7:

Հոսքային գծի շահագործումից ակնկալվող ապագա եկամուտների ներկա արժեքը կկազմի.

6-րդ տարի՝ 10 000 x 0.9 = 9 000
7-րդ տարի՝ 10 000 x 0.8 = 8 000
8-րդ տարի՝ 10 000 x 0.7 = 7 000
24 000 հազ. դրամ:

3. Կատարենք վարձակալած ակտիվի վերագնահատման անհրաժեշտության հիմնավորում՝ համեմատելով վարձակալած հոսքային գծի շահագործման 6-րդ տարվանը հաջորդող ժամանակահատվածում ակնկալվող դրամական զեղչված ներհոսքերի ընդհանուր գումարի և 5-րդ տարվա հաշվեկշռային արժեքի համեմատում:

Հաշվեկշռային արժեք = 80 000 – (80 000 : 8 տարի) x 5 = 30 000

Ակնկալվող ապագա եկամուտների ներկա արժեք = 24 000

Քանի որ ակտիվի հաշվեկշռային արժեք (30 000) < դրամական ներհոսքերի ընդհանուր ներկա արժեք (24 000), ապա անհրաժեշտ է կատարել հոսքային գծի արժեզրկում 20 %-ով.

$$\frac{(30\,000 - 24\,000) \times 100}{30\,000} = 20\%$$

Շահագործվող ակտիվի արժեզրկման գծով 5-րդ տարվա վերջին կձևակերպվեն հետևյալ հաշվային թղթակցությունները.

վարձակալած հոսքային գծի սկզբնական արժեքի գծով

Դտ «Ոչ ընթացիկ ակտիվների վերաչափումից կորուստներ» ..... 16 000 (80 000 x 20%)
Կտ «Ակտիվների արժեզրկում» 16 000

- վարձակալած հոսքային գծի կուտակված մաշվածության գծով

Դտ «Ֆինանսական վարձակալությամբ օգտագործվող հիմնական միջոցների մաշվածություն» ..... 10 000 (50 000 x 20%)
Կտ «Ոչ ընթացիկ ակտիվների վերաչափումից օգուտներ» 10 000

Ընդհանուր հաշվարկով, ընկերության ֆինանսական արդյունքների հաշվետվությունում կներկայացվի վարձակալած ակտիվի արժեզրկումից վնաս՝ 6 000 հազ. դրամ (16 000 - 10 000):

Հոսքային գծի արժեզրկմանը հաջորդող տարիներին վարձակալած ակտիվի շահագործման տարեկան ամորտիզացիոն հատկացումները նախկին 10 000 հազ. դրամի փոխարեն կկազմեն 8 000 հազ. դրամ [(80 000 – 16 000) : 8 տարի]՝ 10 000 հազ. դրամ եկամուտների դեպքում:

Այսպիսով՝ 5-դ տարվա վերջում, կաթնամթերքի պահանջարկի նվազման դեպքում 6 000 հազ. դրամով ակտիվի արժեզրկման վնասը, միանվագ դուրս գրելով, կիրառվում է պահպանողականության սկզբունքը, քանի որ կանխվում է ակտիվի արժեքի 6 000 հազ. դրամով գերագնահատված ներկայացումը հաշվապահական հաշվեկշռում (30 000-ի փոխարեն՝ 24 000).

սկզբնական արժեք	80 000	
արժեզրկում	(16 000)	
կուտակված մաշվածություն	(40 000)	50 000 – 10 000
	24 000	

Լիզինգի ֆինանսական արդյունքների բացահայտումները կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում, կարծում ենք, բարելավման կարիք ունեն նաև հետադարձ վարձակալության պարագայում: Վաճառք հետադարձ վարձակալությամբ գործարքն ակտիվի վաճառք է և նույն ակտիվի հետադարձ վարձակալություն: Վիճակագրական վերլուծությունները ցույց են տալիս, որ վարձավճարները և վաճառքի գները սովորաբար փոխադարձ կախվածություն ունեն, քանի որ դրանք բանակցվում են որպես մեկ փաթեթ:[149] Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի հաշվապահական մոտեցումը կախված է վարձակալության տեսակից:

[149] Шеленков В.Г., Учет лизинговых операций и анализ их эффективности, М., "Экзамен", 2005, с. 96-97.

Եթե վաճառք հետադարձ վարձակալությամբ գործարքը հանգեցնում է ֆինանսական վարձակալության, ապա հաշվեկշռային արժեքի նկատմամբ վաճառքից հասույթի ցանկացած գերազանցում չպետք է անմիջապես ճանաչվի որպես եկամուտ վաճառող-վարձակալի կողմից: Փոխարենը, այն պետք է հետաձգվի և ամորտիզացվի վարձակալության ժամկետի ընթացքում:[150] Քանի որ հետադարձ վարձակալությունը լիզինգ է, ապա գործարքը վարձատուի կողմից վարձակալին ֆինանսավորում հատկացնելու միջոց է, որում ակտիվը հանդես է գալիս որպես երաշխիք: Այդ պատճառով հաշվեկշռային արժեքի նկատմամբ վաճառքից հասույթի գերազանցումը տեղին չէ դիտել որպես եկամուտ: Այդպիսի գերազանցումը հետաձգվում և ամորտիզացվում է վարձակալության ժամկետի ընթացքում:

Այսպիսով՝ վարձակալության ֆինանսական արդյունքների հրապարակվող հաշվետվության բարելավումը առաջարկում ենք իրականացնել հետևյալ ուղղություններով.

առաջին՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացնել օգտագործման իրավունքով շահագործվող ակտիվների տարանջատման սկզբունքները, ֆինանսական վարձակալության իրավական և տնտեսական նախանշանների հստակեցումը, վարձակալության առկայության որոշման մոտեցումները,

երկրորդ՝ լիզինգի ֆինանսական արդյունքների կազմում հստակեցնել սահող վարձակալական վճարներից ձևավորվող լրացուցիչ եկամուտները (ծախսերը), վարձակալության խրախուսման զեղչային արտոնություններից բխող ֆինանսական հետևանքները, ինչպես նաև հետադարձ վարձակալության պարագայում՝ ակտիվի վաճառքից եկամուտներն ու դրան հաջորդող լիզինգի ծախսերի համեմատական վերլուծության արդյունքները,

երրորդ՝ վարձավճարներից տարանջատել վարձատուի կողմից ակտիվի սպասարկման ծախսումները, որը հնարավորություն կընձեռի բացահայտելու ակտիվի օգտագործման իրավունքի դիմաց լիզինգի զուտ վճարները,

չորրորդ, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներառել վարձակալած ակտիվի արժեզրկման ռիսկային գործոնների համախումբը, իսկ փաստացի արժեզրկման պարագայում՝ բացահայտել լիզինգով օգտագործվող ակտիվի արժեզրկման կորուստը՝ այն միաժամանակ արձանագրելով կազմակերպության ֆինանսական արդյունքների հաշվետվության մեջ:

[150] Международные стандарты финансовой отчетности. М., Аскери, 2006,

4.3 Լիզինգի հեջավորման արդյունքների հաշվառման հիմնախնդիրները

Ֆինանսական վարձակալությունն իր գործառույթներով լինելով ռիսկային և երկարաժամկետ, կարգավորում պետք է ստանա հեջավորման հարաբերություններում: Հեջավորման հարաբերությունները վարձակալության ոլորտում ձևավորվում են ակտիվի իրական արժեքի ճանաչման և ապագա դրամական հոսքերի գնահատման դեպքում:

Իրական արժեքի հեջը ճանաչված ակտիվի կամ պարտավորության այնպիսի արժեք է, որին վերագրելի է հետագա փոփոխության որոշակի ռիսկ՝ ազդեցություն ունենալով շահույթի կամ վնասի վրա: Դրամական հոսքերի հեջը վերաբերում է փոփոխական տոկոսադրույքով պարտքի գծով ապագա տոկոսային վճարումներին, որոնք, կանխատեսված գործարքի հետ կապված, ենթարկվում են որոշակի ռիսկի, և կարող է ազդեցություն ունենալ կազմակերպությունների շահույթի կամ վնասի վրա:

Վարձակալության վերջում իրական արժեքով ակտիվի գնահատումը կարող է շեղվել պայմանագրային արժեքից այնպիսի պատճառներով, ինչպիսիք են՝ բարոյական մաշվածությունը, արժեզրկման կորուստները, վերագնահատման կորուստները կամ օգուտները, չնախատեսված տնտեսական վնասները, վարձակալած ակտիվի արդիականացման ծախսերը: Ֆինանսական վարձակալության ուղղակի մասնակիցները՝ վարձակալն ու վարձատուն, պայմանագրային կարգով կատարելով գործարքների հեջավորում, մեղմում են ակտիվի հետագա գնահատման և տոկոսադրույքների փոփոխման ռիսկային տատանումները:[151]

Ֆինանսական վարձակալության տնտեսահիրավական հարաբերությունների կարգավորման համակարգում ընդգրկված են երաշխիքների ապահովումը և ակտիվի վերադարձը կամ գնումը (տե՛ս գծապատկեր 2.3): Քանի որ ֆինանսական վարձակալության դեպքում, վարձակալին է փոխանցվում ակտիվի շահագործման իրավունքը, նաև դրա հետ կապված բոլոր ռիսկերն ու հատույցները, ապա վարձատուն և վարձակալը ձգտում են հնարավորինս կառավարելի դարձնել գործարքի հավանական կորուստները:[152]

[151] [illegible]
с. 28-29.

[152] Ковалев В.В., Лизинг, финансовые, учетно-аналитические и правовые аспек-

Վարձակալը, ստանալով ակտիվի օգտագործման իրավունքը, ձեռք բերելով նաև շահագործման ռիսկերն ու հատույցները, փաստորեն, օգտվում է սեփականատիրոջ առանցքային առավելությունից՝ ակտիվի օգտագործման տնտեսական արդյունքներից և ոչ թե սեփականատիրոջ իրավական հնարավորություններից: Սեփականության իրավունքը, որը դեռևս պահպանվում է վարձատուի մոտ, վարձակալության ընթացքում նրա կողմից կատարված ներդրման գծով ընդամենը երաշխիքային դեր է կատարում:[153] Նշանակում է՝ լիզինգի վերջում, ակտիվը վաճառելիս կամ վերադարձնելիս, ձևավորվում են վերագնահատման արժեքային տատանումների ռիսկեր՝ ինչպես վարձատուի, այնպես էլ վարձակալի մոտ, որոնք առաջարկում ենք հեջավորման միջոցով դիտարկել որպես ֆինանսական գործիք և իրենց արդյունքներով ներկայացնել ֆինանսական հաշվետվություններում:

Ֆինանսական գործիքը ցանկացած պայմանագիր է, որը միաժամանակ մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուս կազմակերպությունում՝ ֆինանսական պարտավորություն կամ սեփական կապիտալի գործիք: Նման պայմանագրերի հետևանքով առաջանում են նաև հեջավորված հոդվածներ, որոնք ակնկալվող գործարքին առնչվող մի կազմակերպությունում կարող են լինել միևնույն ռիսկային բնութագրիչներով ակտիվ, մյուսում՝ պարտավորություն: Հեջավորման գործիքի կիրառմամբ չեզոքացվում են նախատեսված հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի փոփոխությունները: Հեջավորված հոդվածը ակտիվ կամ պարտավորություն է, որը կազմակերպությանը ենթարկում է իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի փոփոխությունների ռիսկի:[154] Փաստորեն, հեջի հաշվառմամբ ճանաչվում են հեջավորման գործիքի և հեջավորված հոդվածի իրական արժեքների փոփոխությունների միմյանց չեզոքացնող ազդեցությունները շահույթի կամ վնասի վրա: Հեջի արդյունավետության աստիճանը գնահատվում է այնքանով, որքանով հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ դրամական հոսքերի փոփոխությունները, որոնք վերագրելի են հեջավորված ռիսկին, չեզոքացվում են հեջավորման գործիքի իրական արժեքի կամ դրամական հոսքերի փոփոխություններով:

[153] Заварина А.В., Договор финансовой аренды. Учет, налоги, арбитраж., М., ЗАО ИКЦ "ЛИС", 2004, с. 48.

Լիզինգային պարտավորությունների հեջավորումը հնարավորություն է ընձեռում՝ վարձատուին և վարձակալին ապահովագրելու ակտիվի վերագնահատման ռիսկային տատանումներից, իսկ հեջի հաշվառման կազմակերպումը ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին տեղեկատվություն է տրամադրում ֆյուչերսային գործարքների արդյունավետության մասին:[155]

Լիզինգի կարգավորման տնտեսահրավական հիմնախնդիրներից է պայմանագրի վերջում վարձակալած ակտիվի գնումը վարձակալի կողմից: Ֆինանսական վարձակալության պայմանագրով կարող է նախատեսվել, որ վարձակալված գույքը, վարձակալության ժամկետի ավարտից հետո կամ մինչև դրա ավարտը, անցնի վարձակալի սեփականությանը՝ վարձակալի կողմից պայմանագրով նախատեսված գինը վճարելու պայմանով: Քանի որ վաճառքի հիմքում դրված չէ շուկայական հավասարակշռված գինը, այլ տարիներ առաջ լիզինգի մեկնարկին սահմանված ակտիվի վաճառքի պայմանագրային արժեքը, ապա շեղումներ կառաջանան պայմանագրային գնի և վարձակալության վերջում ակտիվի իրական արժեքի միջև, որոնք առաջարկում ենք վերագրել լիզինգի կողմեր հանդիսացող կազմակերպությունների շահույթին կամ վնասին և ներկայացնել ֆինանսական հաշվետվություններում:

Լիզինգային գործարքների հեջի հաշվառման նպատակով վարձակալության պարտավորությունները նպատակահարմար ենք գտնում ներկայացնելու հեջավորված հոդվածների տեսքով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանում կիրառելով նոր հաշիվներ. վարձատուի համար՝ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ», իսկ վարձակալի համար՝ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»: Առաջարկվող հաշիվների կիրառմամբ հնարավորություն կստեղծվի ճանաչել վարձակալության հեջավորված հոդվածների իրական արժեքների ազդեցությունները շահույթի կամ վնասի վրա:

Այսպես՝ կաթի արտադրության ֆերմերային տնտեսությունը չորս տարվա ֆինանսական վարձակալության հիմունքներով ձեռք է բերել կաթի հավաքագրման և զտման ագրեգատ՝ տարեկան 2 500 հազ.

[155] Международные стандарты финансовой отчетности: учеб. пособ., под ред. И.А. Смирновой, М., "Финансы и статистика", 2005 г. с. 111.

դրամ վարձավճարով: Վարձակալության վերջում վարձակալն իրավունք ունի պայմանագրում սահմանված 1 000 հազ. դրամ գնով ակտիվը վարձատուից սեփականության իրավունքով ձեռք բերելու, որի արժեքը ներառված չէ վարձավճարներում և վարձակալական պայմանագրում երաշխիքային արժեք է: Վարձակալության տոկոսային գումարները կազմում են 2 000 հազ. դրամ, իսկ վարձատրվող ակտիվի մնացորդային արժեքը՝ 9 000 հազ. դրամ: Այնուամենայնիվ, վարձակալության վերջում բարոյական մաշվածության հետևանքով ակտիվի իրական արժեքը կազմել է ոչ թե 1 000 հազ. դրամ, այլ՝ 700 հազ. դրամ:

Լիզինգային գործարքների հեջի հաշվառումը առաջարկվող հաշիվներով կարտացոլվեն հետևյալ հաշվապահական հաշվառման թղթակցություններով.

վարձատուի մոտ.

վարձակալության սկզբին հիմնական միջոցը դուրս գրելիս

Դտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» *9 000*

Կտ «Հիմնական միջոցներ» *9 000*

նախատեսվող տոկոսագումարները հաշվեգրման գծով

Դտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» *2 000*

Կտ «Չվաստակած ֆինանսական եկամուտ» *2 000*

Ըստ լիզինգի տարիների, վարձատուն կձևակերպի թղթակցություններ՝ համաձայն վարձակալական մուտքերի գրաֆիկի.

վարձակալությունից դրամական ներհոսքի դեպքում

Դտ «Հաշվարկային հաշիվ» ..... *10 000 (2 500 x 4 տարի)*

Կտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» *10 000*

վարձակալման տոկոսային եկամուտը ձևակերպելիս

Դտ «Չվաստակած ֆինանսական եկամուտ» *2 000*

Կտ «Ֆինանսական վարձակալությունից տոկոսային եկամուտ» . *2 000(500x4 տարի)*

վարձակալության վերջում ակտիվի հեջավորված պարտավորությունը վերագնահատելիս

Դտ «Ֆինանսական գործիքների վերաչափումից կորուստներ» ..... *300 (1 000 - 700)*

Կտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» *300*

վարձակալության վերջում

ա) տարբերակ

ակտիվը վարձակալին վաճառելիս և հեջի արդյունքը վարձակալի ֆինանսական արդյունքներին վերագրելիս

Դտ «Հաշվարկային հաշիվ» 1 000
Կտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ».....700
Կտ «Ֆինանսական գործիքների վերաչափումից օգուտներ» .....300 (1 000 - 700)



Գծապատկեր 4.1

Ֆինանսական հաշվետվություններում վարձակալության գծով ստացվելիք գումարների հեջավորման արդյունքների արտացոլման առաջարկվող մեխանիզմը՝ ակտիվի արժեզրկման դեպքում

բ) տարբերակ

վարձատուի կողմից ակտիվը վարձակալից ստանալիս և հաշվեկշռում մուտքագրելիս

Դտ «Հիմնական միջոցներ» ..... .700
Կտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ».....700

Այսպիսով, վարձակալման վերջում, վարձատուն իր ֆինանսական հաշվետվություններում ամբողջությամբ կմարի վարձակալից ստացվելիք գումարները՝ միաժամանակ ավելացնելով դրամական միջոցներն ու եկամուտները: Մյուս կողմից, լիզինգի հեջի հաշվառման շնորհիվ վարձատուի ֆինանսական հաշվետվություններում կարտացոլվի տվյալ ֆինանսական գործիքի կիրառման արդյունքը:

Դիցուք, եթե լիզինգի ավարտին արժեզրկված ակտիվը վաճառվի վարձակալին՝ կարձանագրվի 300 հազ. դրամ օգուտ ֆինանսական գործիքների վերաչափումից (տարբերակ «ա»), իսկ տարբերակ «բ»-ի դեպքում, երբ արժեզրկված ակտիվը վերադարձվի վարձատուին, վերջինիս ֆինանսական հաշվետվություններում 300 հազ. դրամով կարձանագրվի ֆինանսական գործիքների վերաչափումից կորուստ (տե՛ս գծապատկեր 4.1):

Վարձակալի մոտ վերոնշյալ լիզինգային գործարքների հեջի հաշվառումը առաջարկվող հաշիվներով կարտացոլվեն հետևյալ հաշվապահական հաշվառման թղթակցություններով.

վարձակալության պարտավորությունը ձևակերպելիս

Դտ «ֆինանսական վարձակալությամբ օգտագործվող հիմնական միջոցներ» 9 000
Կտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ».....9 000

վարձակալության չկրած տոկոսային ծախսը ձևակերպելիս

Դտ «Չկրած ֆինանսական ծախսեր» 2 000
Կտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ».....2 000

Վարձավճարի գրաֆիկը հաշվարկելիս վարձակալը հիմնվում է վճարվելիք ընդհանուր գումարի ներկա արժեքի և պայմանագրային տոկոսադրույքի վրա այնպես, որ կատարվելիք վճարները հստակ բաժանվեն վարձավճարի և տոկոսավճարի:

Յուրաքանչյուր տարի վարձակալը կձևակերպի հաշվային թղթակցություններ վարձավճարի և տոկոսագումարի մարման գծով.

վարձակալական պարտավորության բաժնեմասը վճարելիս.

Դտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»..... 10 000

Կտ «Հաշվարկային հաշիվ»..... 10 000 (2 500 x 4 տարի)

տոկոսագումարը հաշվետու տարվա ծախսերին վերագրելիս

Դտ «Ֆինանսական վարձակալության դիմաց տոկոսային ծախսեր»..... 2 000

Կտ «Չկրած ֆինանսական ծախսեր» ..... 2 000 (500 x 4 տարի)

վարձակալության վերջում ակտիվը վերագնահատելիս

Դտ «Ֆինանսական գործիքների վերաչափումից կորուստներ» ..... 300 (1 000 - 700)

Կտ «Ֆինանսական վարձակալությամբ օգտագործվող հիմնական միջոցներ» ... 300

վարձակալության վերջում

ա) տարբերակ

վարձակալի կողմից ակտիվը վարձատուից ձեռք բերելիս.

Դտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»..... 1 000

Կտ «Հաշվարկային հաշիվ»..... 1 000

բ) տարբերակ

ակտիվը վարձակալին վերադարձնելիս և հեջի արդյունքը վարձակալի ֆինանսական արդյունքներին վերագրելիս

Դտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ»..... 1 000

Կտ «Ֆինանսական գործիքների վերաչափումից օգուտներ» ..... 300 (1 000 - 700)

Կտ «Ֆինանսական վարձակալությամբ օգտագործվող հիմնական միջոցներ» ... 700

Այսպիսով՝ լիզինգի հեջի հաշվառման պարագայում վարձակալը ակտիվը հետ վերադարձնելիս («բ» տարբերակ) ֆինանսական արդյունքների հաշվետվություններում ներկայացնում է ֆինանսական գործիքների վերաչափումից օգուտներ, սակայն «ա» տարբերակի դեպքում, երբ վարձակալը հեջի արդյունքում առավել թանկ է ձեռք բերում ակտիվը, գործարքի արդյունքը ձևակերպվում է որպես 300 հազ. դրամի կորուստ և ներկայացվում հաշվեկշռում (տե՛ս գծապատկեր 4.2):



Գծապատկեր 4.2

Ֆինանսական հաշվետվություններում վարձակալության գծով վճարվելիք գումարների հեջավորման արդյունքների արտացոլման առաջարկվող մեխանիզմը՝ ակտիվի արժեզրկման դեպքում

Փորձը ցույց է տալիս, որ լիզինգի ավարտին, վարձակալը ձգտում է էժան ձեռք բերել երկար տարիներ իր տրամադրության տակ գտնվող ակտիվը, որի վրա կատարվել են շահագործման և պահպանման ծախսեր, ինչպես նաև արդիականացման նպատակով՝ ներդրումներ:[156] ՀՀ ՔՕ-ն վարձակալած գույքի բարելավումները դասակարգում է երկու մասով՝ ակտիվից բաժանելի և անբաժանելի: Ընդ որում, նշվում է, որ վարձակալած գույքից վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը, եթե վարձակալության պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Եթե վարձակալն իր միջոցների հաշ-

[156] Левкович А.О., рынка услуг, М., Издательство еловой и учебной 2004, с.

վին և վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, պայմանագիրը դադարելուց հետո վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով, եթե վարձակալության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:[157]

Սակայն եթե պայմանագրով նախատեսվում է լիզինգի ավարտին ակտիվի փոխանցում վարձակալին՝ նախօրոք ամրագրված գնով, ապա արդեն իսկ լիզինգի մեկնարկին ձևավորվում է հիմնական միջոցի վաճառքի իրական արժեքից պայմանագրային արժեքի շեղումների ռիսկայնություն, որի մեղմման նպատակով առաջարկում ենք կիրառել լիզինգային պարտավորությունների հեջավորում և դրա արդյունքները արտացոլել վարձակալության կողմերի ֆինանսական հաշվետվություններում:

Օրինակ՝ կաթի արտադրության ֆերմերային տնտեսությունը երեք տարվա ֆինանսական վարձակալության հիմունքներով ձեռք է բերել կաթի տեղափոխման ցիստեռն-բեռնատար՝ տարեկան 650 հազ. դրամ վարձավճարով: Վարձակալության վերջում վարձակալն իրավունք ունի պայմանագրում սահմանված 3 500 հազ. դրամ գնով ակտիվը սեփականության իրավունքով վարձատուից ձեռք բերել, որի արժեքը ներառված չէ վարձավճարներում, և այն վարձակալական պայմանագրում համարվում է երաշխիքային արժեք:

Ըստ պայմանագրի՝ վարձակալի կողմից ակտիվի անբաժանելի բարելավումները (կապիտալ նորոգում, արդիականացում) չեն փոխհատուցվում վարձատուի կողմից: Վարձակալության տոկոսային գումարները կազմում են տարեկան 150 հազ. դրամ, իսկ վարձատրվող ակտիվի մնացորդային արժեքը՝ 5 000 հազ. դրամ:

Վարձակալության ընթացքում վարձակալը բեռնատարի արդիականացման ծախսումներ է կատարել, հզորացնելով շարժիչը և ընդլայնելով բեռնատարողությունը (անբաժանելի բարելավումներ), որի հետևանքով լիզինգի վերջում ակտիվի իրական արժեքը կազմել է ոչ թե 3 500 հազ. դրամ, այլ՝ 3 600 հազ. դրամ:

Լիզինգային գործարքների հեջի հաշվառումը առաջարկվող հաշիվներով կարտացոլվի հաշվապահական հաշվառման հետևյալ թղթակցություններով.

[157] ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, 626 հոդ., Եր., 1998 թ.:

վարձատուի մոտ.

վարձակալության սկզբին հիմնական միջոցը դուրս գրելիս

Դտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» *5 000*
Կտ «Հիմնական միջոցներ» *5 000*

նախատեսվող տոկոսագումարների հաշվեգրման գծով

Դտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» *450*
Կտ «Չվաստակած ֆինանսական եկամուտ» *450*

Ըստ լիզինգի տարիների՝ վարձատուն կձևակերպի թղթակցություններ՝ համաձայն վարձակալական մուտքերի գրաֆիկի.

վարձակալությունից դրամական ներհոսքի դեպքում.

Դտ «Հաշվարկային հաշիվ» ..... *1 950 (650 x 3 տարի)*
Կտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» *1 950*

վարձակալման տոկոսային եկամուտը ձևակերպելիս

Դտ «Չվաստակած ֆինանսական եկամուտ» *450*
Կտ «Ֆինանսական վարձակալությունից տոկոսային եկամուտ» .. *450 (150 x 3 տարի)*

վարձակալության վերջում հեջավորված ստացվելիք գումարները վերագնահատելիս

Դտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» *100*
Կտ «Ֆինանսական գործիքների վերաչափումից օգուտներ» ..... *100 (3 600-3 500)*

վարձակալության վերջում

ա) տարբերակ

ակտիվը վարձակալին վաճառելիս և հեջի արդյունքը վարձատուի ֆինանսական արդյունքներին վերագրելիս

Դտ «Հաշվարկային հաշիվ» *3 500*
Դտ «Ֆինանսական գործիքների վերաչափումից կորուստներ» ..... *100 (3 600 -3 500)*
Կտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» *3 600*

բ) տարբերակ

վարձատուի կողմից ակտիվը վարձակալից ստանալիս և հաշվեկշռում մուտքագրելիս

Դտ «Հիմնական միջոցներ» 3 600
Կտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ» 3 600



Գծապատկեր 4.3

Ֆինանսական հաշվետվությունում վարձակալության գծով ստացվելիք գումարների հեջավորման արդյունքների արտացոլման առաջարկվող մեխանիզմը՝ ակտիվի արժևորման դեպքում

Այսպիսով՝ լիզինգի ավարտին վարձատուն, արդիականացված ակտիվը վարձակալից հետ ստանալիս, ֆյուչերսային գործարքի հեջավորումից կստանա լրացուցիչ 100 հազ. դրամի օգուտ և, միաժամանակ, հաշվապահական հաշվեկշռում ակտիվը կներկայացնի 3 600 հազ. դրամ (3 500 + 100) վերագնահատված արժեքով (տե՛ս գծապատկեր 4.3):

Նույն լիզինգային գործարքների հեջի հաշվառումը առաջարկվող հաշիվներով *վարձակալի* մոտ կարտացոլվեն հետևյալ հաշվապահական հաշվառման թղթակցություններով.

վարձակալական պարտավորությունը ձևակերպելիս

Դտ «Ֆինանսական վարձակալությամբ օգտագործվող հիմնական միջոցներ» 5 000
Կտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» 5 000

վարձակալության չկրած տոկոսային ծախսը ձևակերպելիս

«Չկրած ֆինանսական ծախսեր» 450
Կտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» 450

Յուրաքանչյուր տարի վարձակալը կձևակերպի հաշվային թղթակցություններ վարձավճարի և տոկոսագումարի մարման գծով.

վարձակալական պարտավորության բաժնեմասը վճարելիս.

Դտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» 1 950
Կտ «Հաշվարկային հաշիվ» ..... 1 950 (650 x 3 տարի)

տոկոսագումարը հաշվետու տարվա ծախսերին վերագրելիս

Դտ «Ֆինանսական վարձակալության դիմաց տոկոսային ծախսեր» 450
Կտ «Չկրած ֆինանսական ծախսեր» 450

վարձակալված ակտիվի արդիականացման ծախսումները կատարելիս

Դտ «Ֆինանսական վարձակալությամբ օգտագործվող հիմնական միջոցներ» 100 (3 600-3 500)
Կտ «Հաշվարկային հաշիվ» 100

վարձակալության վերջում

ա) տարբերակ

վարձակալը՝ ակտիվը վարձատուից գնելիս

Դտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» 3 500
Կտ «Հաշվարկային հաշիվ» 3 500

բ) տարբերակ

ակտիվը վարձակալին հետ վերադարձնելիս և հեջի արդյունքը վարձակալի ֆինանսական արդյունքներին վերագրելիս

Դտ «Հեջավորման գործիք նախատեսած ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» 3 500
Դտ «Ֆինանսական գործիքների վերաչափումից կորուստներ» 100 (3 600-3 500)
Կտ «Ֆինանսական վարձակալությամբ օգտագործվող հիմնական միջոցներ» 3 600



Գծապատկեր 4.4

Ֆինանսական հաշվետվություններում վարձակալության գծով վճարվելիք գումարների հեջավորման արդյունքների արտացոլման առաջարկվող մեխանիզմը՝ ակտիվի մոդեռնացման հետևանքով արժևորման դեպքում

Հետևաբար, եթե լիզինգի պայմանագրում նախօրոք ամրագրվում է վարձակալության վերջում վարձակալի կողմից ակտիվի ձեռք բերման գինը. և այն հետագայում դառնում է վիճահարույց վարձատուի և վարձակալի միջև, ապա գործնականում հիմնախնդիրը լուծվում է վարձակալության պարտավորությունների՝ մեր կողմից առաջարկվող հեջավորման ճանապարհով, որի արդյունքները ներկայացվում են լիզինգի կողմեր հանդիսացող ֆինանսական հաշվետվություններում (տե՛ս գծապատկեր 4.5):



Գծապատկեր 4.5

Լիզինգային պարտավորությունների հեջի արդյունքների ամփոփ արտացոլումը ֆինանսական հաշվետվություններում

Այսպիսով՝ լիզինգի հեջավորման արդյունքների հաշվապահական հաշվառման՝ մեր կողմից առաջարկվող մեխանիզմը հնարավորություն է ընձեռում.

առաջին՝ լիզինգի ավարտին ակտիվի վերադարձի կամ գնման ժամանակ, հնարավորինս կառավարելի դարձնել գործարքի հավանական ֆինանսական կորուստները՝ կապված վարձակալության օբյեկտի վերագնահատումների հետ, և դրանով իսկ ապահովագրվել ակտիվի արժեքային տատանումներից,

երկրորդ՝ ճանաչել վարձակալության հեջավորված հոդվածների իրական արժեքների ազդեցությունները շահույթի կամ վնասի վրա և վարձակալության ավարտին կատարել ակտիվի տնօրինման նպատակային կառավարչական որոշումները: Տոկոսները, շահաբաժինները, կորուստները և օգուտները, որոնք վերաբերում են ֆինանսական պարտավորություն հանդիսացող ֆինանսական գործիքին կամ բաղադրիչին, պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս շահույթում կամ վնասում,[158]

[158] ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը», հոդ. 35:

Աղյուսակ 4.3

Հեջի արդյունավետության համեմատումը կաթի հավաքագրման ագրեգատի և բեռնատարի լիզինգի դեպքում

		Ֆերմերային տնտեսություն	Լիզինգային կազմակերպություն
ագրեգատի լիզինգ	Հեջավորված ստացվելիք գումարներ		11 000
	Հեջավորումից օգուտներ		300
	Հեջավորված վճարվելիք գումարներ	11 000	
	Հեջավորումից կորուստներ	300	
	Հեջավորված հոդվածի շեղումը = (300 : 11 000) x 100 = 2.72%		
բեռնատարի լիզինգ	Հեջավորված ստացվելիք գումարներ		5000
	Հեջավորումից օգուտներ		100
	Հեջավորված վճարվելիք գումարներ	5000	
	Հեջավորումից կորուստներ	100	
	Հեջավորված հոդվածի շեղումը = (100 : 5 000) x 100		2.00%

երրորդ՝ հեջավորման գործիքի օգտագործմամբ և հեջավորված հոդվածի իրական արժեքների փոփոխությունների հաշվապահական արձանագրմամբ՝ գնահատելու լիզինգի շրջանակում կազմակերպված ֆյուչերսային գործարքների արդյունավետությունը: Այսպես՝ բեռնատարի լիզինգի դեպքում ֆյուչերսային գործարքի արդյունավետությունն ավելին է, քան կաթի հավաքագրման ագրեգատը վարձակալելիս, քանի որ այն ունի հեջավորված պարտավորության հոդվածի առավել ցածր, հարաբերական շեղում (2.00 < 2.72):

4.4 Վարձակալության պարտավորությունների կառավարչական հաշվառման ներդրման հիմնախնդիրները

Վարձակալության ստացվելիք և վճարվելիք գումարների գծով դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների հաշվառումը, որպես կանոն, գործնականում կատարվում է երկու նկատառումով՝ ֆինանսական և հարկային: Ֆինանսական հաշվառման համակարգում պարտավորությունները հաշվառվում են դրամական հոսքերի շարժը արտացոլելու և ձևավորված ֆինանսական պարտքերը մարելու նպատակով: Հարկային հաշվառման համակարգում պարտավորությունները ձևակերպվում են որպես անհուսալի դեբիտորական պարտքերից նվազեցումներ կամ չմարված կրեդիտորական պարտավորություններից եկամուտներ:

Տեսության բնագավառում և լիզինգի կազմակերպման գործնական ոլորտում մեր ուսումնասիրությունները վկայում են, որ վարձակալության պարտավորությունները դեռևս չեն ընդգրկվում կառավարչական հաշվառման համակարգում, որը չի նպաստում լիզինգի համակարգում ընդգրկված կազմակերպությունների ֆինանսական կայունության ապահովման նպատակով ժամանակին և արդյունավետ կառավարչական որոշումների կայացմանը:

Դեբիտորական պարտքերի գերակշիռ մասը վարձատու կազմակերպություններում գոյանում է լիզինգային ծառայությունների մատուցումից, երբ վարձակալների կողմից կատարվելիք վճարումները ժամանակագրական առումով հետ են ընկնում վարձավճարների ստացման ժամանակացույցից: Դեբիտորների առկայությունը տնտեսավարման բնականոն երևույթ է, սակայն, մյուս կողմից՝ դեբիտորական պարտքերի կուտակումների աճը հանգեցնում է կազմակերպությունների դրամական միջոցների ներհոսքերի կրճատմանը, անհուսալի ստացվելիք գումարների ձևավորմանը, շրջանառու կապիտալի պտույտի դանդաղեցմանը, որը, վերջին հաշվով, ֆինանսական կայունության թուլացման պատճառ է դառնում:

Վարձատու կազմակերպությունում առհասարակ լիզինգի գծով դեբիտորական պարտքերը ձևավորվում են երկարաժամկետ և կարճաժամկետ հատվածով: Որպես երկարաժամկետ դեբիտորական պարտք՝ ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք

գումարները դիտվում են իբրև ֆինանսական ներդրումներ, որոնք ընդգրկում են վարձակալության հանձնած ակտիվի արժեքը և դեռևս չվաստակած տոկոսային եկամուտները: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար լիզինգի գծով երկարաժամկետ ստացվելիք գումարներից մարման ենթակա բաժնեմասը համարվում է կարճաժամկետ դեբիտորական պարտք՝ «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով» հաշվի դեբետային մասով: Քանի որ լիզինգային ծառայությունը երկարաժամկետ բնույթ ունի և մի քանի տարվա ընթացքում է իրականացվում, ապա յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար վարձատուի կողմից ծառայության մատուցման պահ է համարվում վարձավճարների ստացման ժամանակացույցը՝ ամսական, եռամսյակային կամ տարեկան կտրվածքով: Եթե վարձակալը թույլ է տալիս վարձավճարների ուշացումներ, ապա վարձատուն, ունենալով դրամական ներհոսքի պակաս, կարող է կորցնել իր ֆինանսական կայունությունը:

Գործնականում կիրառվող «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով» հաշիվը նախատեսված է վարձավճարների (ներառյալ անուղղակի հարկերը) գծով ձևավորվող գումարների առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Հաշիվն ակտիվային է և իր դեբետում արձանագրում է դեբիտորական պարտքերի ձևավորումը, իսկ կրեդիտում՝ դրանց մարումները կամ ճշտումները: Փաստորեն, հաշվի մնացորդը դեբետային է և ներկայացնում է լիզինգային ծառայությունների գծով ընթացիկ դեբիտորական պարտքերի գումարը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ: Սակայն, մյուս կողմից՝ վերոնշյալ հաշիվը վարձատուին ներկայացնում է միայն ֆինանսական տեղեկատվություն, այն է՝ յուրաքանչյուր վարձակալի պարտքը ընթացիկ վարձավճարների գծով: Իսկ վարձավճարների կառավարման տեսանկյունից կարևորվում է նաև այնպիսի տեղեկատվությունը, որը թույլ կտար պարզելու, թե, մասնավորապես՝ որքանով են կրճատվել վարձակալի դրամական հոսքերը հաշվետու ժամանակաշրջանում դեբիտորական պարտքերի մարման դանդաղեցման կամ վարձակալությունից եկամուտների (տոկոսային եկամուտների) կրճատման պատճառով: Նման տեղեկատվության ձևավորման համար, կարծում ենք, նպատակահարմար է վարձատու կազմակերպություններում կիրառելու վարձավճարների գծով

ստացվելիք գումարների նորմատիվային հաշվառում:

Վարձատու կազմակերպություններում դեբիտորական պարտքերի կառավարչական հաշվառման կազմակերպման համար առաջարկում ենք իրականացնել հետևյալ միջոցառումները.

- ներդնել նորմատիվային հաշվառման համակարգ այնպես, որ կազմվեն վարձավճարների նախահաշվային մեծություններ և դրանք ձևավորող տնտեսական գործոններ,
- ներմուծել նոր հաշիվներ և հաշվային թղթակցություններ, որով հնարավորություն կստեղծվի արձանագրելու և հաշվառելու վարձավճարների գծով դեբիտորական պարտքերի նախահաշվային մեծություններից շեղումների հետևանքով կազմակերպություն դրամի ներհոսքի տատանման պատճառները,
- կազմել վարձավճարների գծով շեղումների ներքին հաշվետվություններ, որը հնարավորություն կստեղծի օպերատիվ կառավարչական որոշումներ կայացնելու կազմակերպությունների դրամական հոսքերի կարգավորման և ֆինանսական կայունության ապահովման վերաբերյալ:

Տնտեսավարման ընթացքում հատկապես կարևորվում է տնտեսական որոշումների ժամանակին իրագործումը, որով ձեռնարկատիրական գործունեության թերությունները օպերատիվորեն բացահայտվելուց բացի, հրատապ շտկվում են: Նման խնդիրները լուծվում են նորմատիվային հաշվառման կազմակերպմամբ:[159]

Նորմատիվային հաշվառման կազմակերպման ժամանակ նախօրոք կազմվում են տնտեսավարման արդյունքների նորմաներ, որոնք առավելագույն արդյունավետություն են ապահովում: Հետևաբար, գործարարության ոլորտում ձգտում են ստանալ հաշվարկված նորմաներին համապատասխան փաստացի արդյունքներ, իսկ սահմանված նորմաներից շեղումները վկայում են տնտեսավարման թերացումների և դրանց հրատապ շտկման անհրաժեշտության մասին: Այդ իսկ պատճառով, տնտեսական որոշումներ կայացնող օղակների համար չափազանց կարևորվում է տնտեսավարման փաստացի արդյունքների հոսքի վերլուծությունը հետևյալ կտրվածքով.

[159] M. Powers, B.E. Needles, S.V. Crosson «Financial and managerial Accounting Principles» Interpretational Edition, South-Western Cengage Learning. 2011, p. 433.

Փաստացի հոսք = Նորմատիվային հոսք (+) (-) Շեղումներ

Նորմատիվային հաշվառում կազմակերպելիս, անհրաժեշտություն է ծագում ապահովելու հետևյալ պայմանները.[160]

- ստեղծել տնտեսավարման ցուցանիշների նորմատիվային բազա, որը պետք է ընդգրկի արտադրության և իրացման ողջ գործընթացը,
- ապահովել նորմաներից շեղումների արձանագրման փաստաթղթաշրջանառություն,
- կիրառել լրացուցիչ հաշվապահական հաշիվներ, որոնք տարանջատված կամփոփեն տնտեսավարման արդյունքների նորմատիվային և նորմաներից ծագած շեղումների հոսքերը,
- կիրառել այնպիսի հաշվային թղթակցություններ, որոնք թույլ կտան հաշվապահական համակարգի շրջանակներում փոխկապակցելու նորմատիվային, շեղումների և փաստացի տեղեկատվական հոսքերը,
- հնարավորություն ստեղծել փաստացի հոսքերը զուգահեռաբար ներկայացնելու **«նորմատիվային հոսք + – շեղումներ»** կտրվածքով:

Հիմնախնդիր է հանդիսանում նաև սահմանված նախահաշվային մեծություններից շեղումների հաշվառումը, որին գործող հաշվապահական հաշիվների պլանում դեռևս անդրադարձ չի կատարված: Այդ առումով, մեր կողմից պարտավորությունների նախահաշվային շեղումների արձանագրման և հաշվառման համար առաջարկվում են նոր հաշիվներ:

Այսպես՝ առաջարկվում է հաշվապահական հաշվառման հաշվային պլանում գործող «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով» հաշիվին զուգահեռ կիրառել երկու նոր հաշիվ՝ «Ծառայությունների իրացումից դրամական ներհոսքեր» և «Նախահաշվային դրամական ներհոսքերից շեղումներ» անվանումներով:

Առաջարկվող «Ծառայությունների իրացումից դրամական ներհոսքեր» հաշվի դեբետային մասում արձանագրվում են ստացվելիք վարձավճարների գծով ձևավորված փաստացի դեբիտորական պարտքերը, իսկ կրեդիտում, ելնելով դեբիտորական պարտքերի փոխ-

[160] Եղիկյան Ա., Կառավարչական հաշվառման հիմունքներ, Եր., 2003, էջ 124-125

հատուցման տևողությունից և լիզինգի ծառայությունների իրացման ծավալներից, արտացոլվում են պարտավորությունների նախահաշվային արժեքները և բացահայտված շեղումները:

Ընդ որում, շեղումների առանձնացված հաշվառման համար առաջարկվող «Նախահաշվային դրամական ներհոսքերից շեղումներ» հաշիվը, ամփոփելով դրական և բացասական արդյունքները, դրանք տեղափոխում է «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով» հաշիվ այն պարագայում, երբ վարձակալների կողմից մարվում են դեբիտորական պարտքերը (տե՛ս գծապատկեր 4.6):



Գծապատկեր 4.6

Վարձավճարների ստացման ժամկետների խախտման հետևանքով դրամական ներհոսքերի շեղումների հաշվառման առաջարկվող մեխանիզմը վարձատուի մուտ

Արդյունքում՝ շեղումների հաշվառման առաջարկվող մեխանիզմի օգնությամբ մի կողմից՝ արձանագրվում են վարձատու կազմակերպությունում ձևավորված փաստացի դեբիտորական պարտքերը մյուս կողմից՝ նշվում են դրանց նախահաշվային արժեքներից դրական և բացասական շեղումները, երբ վարձակալի կողմից կատարված փաստացի վճարումը չի համապատասխանում նախօրոք սահմանված ժամկետներին:

Վարձատու կազմակերպության դեբիտորական պարտքերի մե-

ության վրա հիմնականում ազդում են վարձավճարների մարման ժամկետները և մատուցվող լիզինգային ծառայությունների իրացման ծավալը: Օգտվելով տնտեսական գործունեության վերլուծության տարբերությունների եղանակից՝ ըստ աղյուսակ 4.4-ի տվյալների հաշվարկենք վերոնշյալ երկու գործոնի ազդեցության չափը դեբիտորական պարտքերի աճի վրա:

Լիզինգային ծառայությունների իրացման ծավալի փոփոխության ազդեցությունը դեբիտորական պարտքերի շեղման վրա.

ΔV = (+1500 x 90) : 360 = + 375

Վարձակալների կողմից 90 օրից մինչև 126 օր պարտավորությունների փոխհատուցման ժամկետի աճի ազդեցությունը դեբիտորական պարտքերի շեղման վրա.

ΔTd= (+ 36 x 6300) : 360 = + 630

Աղյուսակ 4.4

Կազմակերպության կողմից մատուցվող լիզինգային ծառայությունների գծով դեբիտորական պարտքերի ձևավորման գործոնները

Ցուցանիշներ	Նշանակում	Նախահաշվային մեծություն	Փաստացի մեծություն	շեղում (+, -)
Դեբիտորներ /հազ. դրամ/	D	1 200	2 205	+ 1 005
Լիզինգային ծառայությունների իրացման ծավալը /հազ. դրամ/	V	4 800	6 300	+ 1 500
Դեբիտորական պարտքերի պտույտը օրերով /օր/	Td	90	126	+ 36

Դեբիտորական պարտքերի՝ նախատեսվածից փաստացի մնացորդի ընդհանուր շեղումը.

ΔD = ΔV + ΔTd = + 375 + 630 = + 1 005 հազ. դրամ

Փաստացի դեբիտորական պարտքեր = Նախահաշվային մեծություն (+, -) շեղումներ.

1 200 + 1 005 = 2 205 հազ. դրամ

Կառավարչական հաշվառման համակարգում նախատեսված նախահաշվային դեբիտորական պարտքերի շեղումների հաշվառման գծով մեր կողմից առաջարկվում են հետևյալ թղթակցությունները.

(1) լիզինգային ծառայության իրացման փաստացի դեբիտորական պարտքերը ձևակերպելիս

Դտ «Ծառայությունների իրացումից դրամական ներհոսքեր»..... 2 205
Կտ «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով» 2 205

(2) հաշվետու ժամանակաշրջանում մատուցված լիզինգային ծառայությունների ծավալի ավելացման հետևանքով նախահաշվային դեբիտորական պարտքերից շեղումը արձանագրելիս.

Դտ «Նախահաշվային դրամական ներհոսքերից շեղումներ»..... 375
Կտ «Ծառայությունների իրացումից դրամական ներհոսքեր»..... 375

(3) վարձավճարների ստացման նախատեսված ժամկետի երկարացման հետևանքով նախահաշվային դեբիտորական պարտքերից շեղումների արձանագրումը.

Դտ «Նախահաշվային դրամական ներհոսքերից շեղումներ» 630
Կտ «Ծառայությունների իրացումից դրամական ներհոսքեր»..... 630

(4) լիզինգային ծառայությունների մատուցումից նախատեսվող դրամական ներհոսքի նախահաշվային արժեքի վերագրումը վարձակալությունից ստացվելիք գումարներին.

Դտ «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով»..... 1 200
Կտ «Ծառայությունների իրացումից դրամական ներհոսքեր»..... 1 200

(5) իրացումից նախատեսվող դրամական ներհոսքի նախահաշվային արժեքի շեղումների վերագրումը վարձակալությունից ստացվելիք գումարներին.

Դտ «Ստացվելիք գումարներ ֆինանսական վարձակալության գծով»..... 1 005
Կտ «Նախահաշվային դրամական ներհոսքերից շեղումներ»..... 1 005

Արդյունքում՝ կփակվի առաջարկվող «Ծառայությունների գծով դրամական ներհոսքեր» հաշիվը (տե՛ս գծապատկեր 4.8), իսկ «Նախահաշվային դրամական ներհոսքերից շեղումներ» հաշիվը կարձանագրի, թե կազմակերպությունը որքան դրամական միջոցներ է տնտեսել (գերածախսել) նախատեսված դեբիտորական պարտքերի շրջանառելիության փոփոխման կամ վարձակալական ծառայությունների մատուցման ծավալների տատանման հետևանքով, որը կարևոր տեղեկատվություն է դրամական հոսքերի գծով օպերատիվ կառավարչական որոշումների կայացման պարագայում:



Գծապատկեր 4.7

Վարձավճարների գծով դեբիտորական պարտքերի կառավարչական հաշվառման հաշիվներում առաջարկվող գրանցումները

Այսպիսով՝ վարձավճարների գծով վարձատու կազմակերպության դեբիտորական պարտքերի կառավարչական հաշվառման արդյունքները ներկայացնում են դրամական հոսքերի կառավարման արժեքավոր տեղեկատվություն: «Նախահաշվային դրամական ներհոսքերից շեղումներ» հաշվի կրեդիտային շրջանառությունը բացահայտում է հաշվետու ժամանակաշրջանում վարձավճարների ոչ

ժամանակին մարման հետևանքով վարձատու կազմակերպության կողմից դրամական միջոցների լրացուցիչ ներգրավումը 1 005 հազ. դրամի չափով: Միաժամանակ՝ հաշվի դեբետային գրանցումները բացահայտում են դրամական միջոցների պակասորդի ձևավորման վրա գործոնների ազդեցության չափը, ինչպիսիք են լիզինգի ծառայությունների իրացման ծավալի ավելացման հետևանքով նախատեսվածից ավելի դեբիտորական պարտքերի 375 հազ. դրամով աճը և վարձավճարների փոխանցման ժամկետային հետաձգումների հետևանքով 630 հազ. դրամով դեբիտորական պարտքերի ավելացումը:

Նույն սկզբունքով առաջարկում ենք վճարվելիք վարձավճարների գծով պարտավորությունների համար վարձակալի մոտ ներդնել կրեդիտորական պարտքերի կառավարչական հաշվառման մեխանիզմ, որը թույլ կտա բացահայտել պարտավորությունների մարման ժամկետների խախտման հետևանքով վարձակալ կազմակերպությունների դրամական արտահոսքերի տատանումները: Այդ նպատակով, գործող հաշվապահական հաշվառման հաշվային պլանում, «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» հաշվին զուգահեռ, առաջարկում ենք կիրառել «Վարձավճարների գծով դրամական արտահոսքեր» և «Նախահաշվային դրամական արտահոսքերից շեղումներ» անվանումները:

Առաջարկվող «Վարձավճարների գծով դրամական արտահոսքեր» հաշվի կրեդիտային մասում արձանագրվում են ձևավորված փաստացի կրեդիտորական պարտքերը, իսկ դեբետում, ելնելով կրեդիտորական պարտքերի փոխհատուցման տևողությունից և ստացված լիզինգային ծառայությունների ծավալից, արտացոլվում են պարտավորությունների նախահաշվային արժեքները և բացահայտված շեղումները:

Ընդ որում՝ պարտավորությունների մարման ժամկետների հետևանքով առաջացած շեղումների առանձնացված հաշվառման համար առաջարկվող «Նախահաշվային դրամական արտահոսքերից շեղումներ» հաշիվը, ամփոփելով դրական և բացասական արդյունքները, դրանք տեղափոխում է «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» հաշիվ այն պահին, երբ մարվում են վարձատուի նկատմամբ վարձավճարի պարտավորությունները (տե՛ս գծապատկեր 4.8):



Գծապատկեր 4.8

Վարձավճարների գծով պարտավորությունների մարման ժամկետների խախտման հետևանքով դրամական արտահոսքերի շեղումների հաշվառման առաջարկվող մեխանիզմը վարձակալի մոտ

Այսպես, վարձակալ կազմակերպության՝ վարձատուի նկատմամբ կրեդիտորական պարտքերի մեծության վրա հիմնականում ազդում են վարձավճարների պարտավորությունների մարման ժամկետները և ստացված լիզինգային ծառայությունների ծավալը: Վարձակալը ձգտում է հնարավորինս երկարաձգել վարձավճարների մարման ժամկետները՝ դրանով իսկ խնայելով դրամական միջոցներ և արագացնելով շրջանառու կապիտալի պտույտը: Բացի այդ, վարձակալ կազմակերպության կրեդիտորական պարտավորությունների մարման ժամկետների վրա ազդում է նաև գործարարության ծավալների աճը:

Օգտվելով տնտեսական գործունեության վերլուծության տարբերությունների եղանակից՝ ըստ աղյուսակ 4.5-ի տվյալների հաշվարկենք վերոնշյալ երկու գործոնի ազդեցության չափը կրեդիտորական պարտքերի աճի վրա:

Աղյուսակ 4.5

Վարձավճարների գծով վարձակալի պարտքերի ձևավորման գործոնները

Ցուցանիշներ	Նշանակում	Նախահաշվային մեծություն	Փաստացի մեծություն	Շեղում (+.-)
Կրեդիտորական պարտավորություններ /հազ. դրամ/	G	42	72.5	30.5
Ստացված լիզինգային ծառայությունների ծավալ /հազ. դրամ/	C	120	145	+ 25
Կրեդիտորական պարտքերի պտույտը օրերով /օր/	Tg	126	180	+ 54

Ստացված լիզինգային ծառայությունների ծավալի փոփոխության ազդեցությունը վարձավճարների գծով կրեդիտորական պարտքերի շեղման վրա կկազմի.

$$\Delta C = (+ 25 \times 126) : 360 = + 8.75$$

Վարձատուին 126 օրից մինչև 180 օր վարձակալ կազմակերպության վարձավճարների գծով պարտավորությունների փոխհատուցման ժամկետի աճի ազդեցությունը կրեդիտորական պարտքերի շեղման վրա կկազմի.

$$\Delta Tg = (+ 54 \times 145) : 360 = + 21.75$$

Կրեդիտորական պարտքերի՝ նախատեսվածից փաստացի մնացորդի ընդհանուր շեղումը.

$$\Delta G = \Delta C + \Delta Tg = 8.75 + 21.75$$

Փաստացի կրեդիտորական պարտքեր = Նախահաշվային մեծություն (+ -) շեղումներ.

8.75 + 21.75 = 30.5 հազ. դրամ

Կառավարչական հաշվառման համակարգում նախատեսված նախահաշվային կրեդիտորական պարտքերի շեղումների հաշվառման գծով առաջարկում ենք հետևյալ թղթակցությունները.

(1) վարձավճարների գծով փաստացի կարճաժամկետ կրեդիտորական պարտքերը ձևակերպելիս

Դտ «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» 72.5
Կտ «Վարձավճարների գծով դրամական արտահոսքեր» 72.5

(2) ստացված լիզինգային ծառայությունների նվազման հետևանքով նախատեսված կրեդիտորական պարտքերի շեղումը արձանագրելիս.

Դտ «Վարձավճարների գծով դրամական արտահոսքեր».....8.75
Կտ «Նախահաշվային դրամական արտահոսքերից շեղումներ».....8.75

(3) վարձավճարների գծով պարտավորությունների փոխհատուցման ժամկետի երկարացման հետևանքով նախատեսված կրեդիտորական պարտքերի շեղումների արձանագրումը.

Դտ «Վարձավճարների գծով դրամական արտահոսքեր».....21.75
Կտ «Նախահաշվային դրամական արտահոսքերից շեղումներ».....21.75

(4) վարձակալության պարտավորությունների մարումից նախատեսվող դրամական արտահոսքի նախահաշվային արժեքի վերագրումը վարձակալության վճարվելիք գումարներին.

Դտ «Վարձավճարների գծով դրամական արտահոսքեր» 42
Կտ «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» 42

(5) պարտավորությունների մարումից նախատեսվող դրամական արտահոսքի նախահաշվային արժեքի շեղումների վերագրումը վարձակալության վճարվելիք գումարներին.

Դտ «Նախահաշվային դրամական արտահոսքերից շեղումներ» 30.5
Կտ «Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարներ» 30.5

Արդյունքում՝ կփակվի առաջարկվող «Վարձավճարների գծով դրամական արտահոսքեր» հաշիվը (տե՛ս գծապատկեր 4.9), իսկ «Նախահաշվային դրամական արտահոսքերից շեղումներ» հաշիվը կարձանագրի, թե վարձակալ կազմակերպությունը որքան դրամական միջոցներ է տնտեսել (գերածախսել) նախատեսվածից կրեդիտորական պարտքերի շրջանառելիության փոփոխման կամ արտադրանքի ինքնարժեքի մեծության տատանման հետևանքով, որը կարևոր տե-

ղեկատվություն է դրամական հոսքերի գծով օպերատիվ կառավարչական որոշումների կայացման պարագայում:



Գծապատկեր 4.9

Վարձավճարների գծով կրեդիտորական պարտքերի կառավարչական հաշվառման հաշիվներում առաջարկվող գրանցումները

Առաջարկվող հաշիվների և հաշվային թղթակցությունների կիրառումը տեղեկատվական հիմք են ապահովում դրամական հոսքերի կառավարման համար, քանի որ հնարավորություն է ստեղծվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կառավարչական համակարգում ներքին հաշվետվություններ կազմելու: Վարձավճարների գծով պարտավորությունների կառավարչական վերլուծությունը գործնականում սահմանափակվում է հիմնականում ֆինանսական կայունության համակարգում կրեդիտորական պարտքերի մնացորդների իրավիճակային գնահատմամբ: Առաջարկվող կառավարչական հաշվառման համակարգի ներդնումը վարձակալ կազմակերպություններում տեղեկատվություն է ապահովում նաև գործոնային վերլուծության իրակա-

նացման համար:

Այսպիսով՝ պարտավորությունների կառավարչական հաշվառման առաջարկվող մեխանիզմը, մեր կարծիքով, էապես նպաստում է լիզինգի կողմեր հանդիսացող կազմակերպություններում դրամական հոսքերի կառավարմանը, քանի որ.

առաջին՝ առաջարկվող նոր հաշիվներն ու հաշվային թղթակցություններն անընդմեջ տեղեկություններ են տրամադրում ոչ միայն վարձավճարների գծով պարտավորությունների առաջացման, այլև դրանք ձևավորող գործոնների փոփոխման հետևանքով նախատեսված դրամական հոսքերի շեղումների մասին,

երկրորդ՝ բացահայտվում են դրամական հոսքերի նախահաշվային մեծությունից բարենպաստ և անբարենպաստ շեղումները, որը թույլ է տալիս իրականացնելու օպերատիվ գործոնային վերլուծություն՝ դրանով իսկ հակազդելու կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացմանը ոչ միայն պարտավորությունների ձևավորման պահին, այլև մինչև դրանց մարումն ընկած ժամանակահատվածը,

երրորդ՝ հնարավորություն է ստեղծվում ներդնելու վարձավճարների գծով դեբիտորական և կրեդիտորական պարտքերի նորմատիվային հաշվառման համակարգ և կազմելու պարտավորությունների ձևավորման նախահաշվային մեծությունից շեղումների կառավարչական ներքին հաշվետվություն, որը էապես նպաստում է լիզինգին մասնակից կազմակերպությունների ֆինանսական ոլորտի արդյունավետ տնտեսական որոշումների կայացմանը:

Պարտավորությունների կառավարչական հաշվառման առաջարկվող մեխանիզմը հնարավորություն է ընձեռում ներկայացնելու այնպիսի վերլուծական տեղեկատվություն, որը թույլ է տալիս լիզինգին մասնակից կազմակերպություններում իրականացնելու շրջանառու կապիտալի օպերատիվ կառավարում և հիմքեր է ստեղծում ֆինանսական կայունության ապահովման արդյունավետ գործիքների կիրառման համար:

4.5 Ֆինանսական վարձակալության ներխմբային օգուտների հաշվառման բարելավման ուղիները

Ֆինանսական և արտադրական կապիտալի համատեղ ներգրավմամբ է կազմակերպվում լիզինգ, և դրանով իսկ, վարձակալության համակարգը դիտարկվում է որպես կազմակերպությունների յուրատեսակ ֆինանսաարտադրական հանգույց, որտեղ ընդգրկված են ուղղակի մասնակիցներ (վարձատուներ, մատակարարներ, վարձակալներ) և լիզինգի բիզնեսին աջակցող անուղղակի մասնակիցներ (բանկեր, երաշխավորներ, ապահովագրական կառույցներ և այլն):

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կազմակերպությունների ֆինանսաարտադրական խմբերի ստեղծման շարժառիթները հիմնականում ներկայանում են հետևյալ խմբերով.

- ներխմբային մատակարարման և սպառման արդյունավետությունը,
- գործունեության մասշտաբի էֆեկտը,
- նոր շուկաների նվաճումը,
- գործարարության ռիսկերի դիվերսիֆիկացիան:[161]

Ֆինանսաարտադրական կազմակերպությունների խմբերը կարող են ձևավորվել հորիզոնական (միատիպ գործարարության միավորում), ուղղահայաց (փոխկապակցված գործարարության միավորում), կամ կոնգլոմերանտային սկզբունքով (գործարարությանն առնչվող արտադրության, ծառայությունների, ֆինանսական ոլորտների միավորում):

Լիզինգի գործարարության ոլորտին հատուկ ֆինանսաարտադրական հանգույցներին բնորոշ է կազմակերպությունների միավորումների ձևավորման թե վերոնշյալ շարժառիթների և թե ձևերի լայն շրջանակ: Նախ և առաջ, վարձատու կազմակերպությունը, որը օրինակ մասնագիտացած է ագրոտեխնիկայի վարձակալության ոլորտում, պայմանագրեր է կնքում գյուղտեխնիկայի արտադրողների հետ առավել էժան գներով, քանի որ վերջինիս համար մշտական և հուսալի գնորդ է: Վարձակալը, այդ գյուղատնտեսական տեխնիկան հետագայում վարձատուից ձեռք է բերում նույնպես շուկայականից ցածր գներով, և արդյունքում՝ լիզինգի ներխմբային կազմակերպությունների

[161] Peter Clarrke, Interpretation of Financial Statements, The Financial Training Company, Paggety Studios, London, 1998, page 253.

շրջանակում ակտիվի մատակարարումն ու իրացումը փոխշահավետ, առավել էժան հիմքով են տեղի ունենում:

Նույնը վերաբերում է նաև ֆինանսական կապիտալի ներգրավմանը, երբ լիզինգային կազմակերպությունները, որպես կանոն, բանկերից համեմատաբար էժան փոխառություններ են ձեռք բերում՝ հանդիսանալով կամ վերջիններիս դուստր կազմակերպություններ, կամ մշտական և հուսալի հաճախորդներ: Դրան հաջորդում է վարձատուի կողմից ֆինանսական վարձակալության առավել ցածր տոկոսադրույքի սահմանումը՝ համեմատած բանկի երկարաժամկետ վարկավորման դրույքաչափերի հետ, այլապես վարձակալն ակտիվը ձեռք կբերեր երկարաժամկետ վարկերով և ոչ թե լիզինգով: Այսպիսով՝ լիզինգի մասնակից կազմակերպությունների միջև ֆինանսական կապիտալը գործում է համեմատաբար ցածր արժեքով, որն էլ ներխմբային օգուտների ձևավորման լրացուցիչ աղբյուր է:[162]

Լիզինգով ձեռք բերվող տեխնոլոգիական սարքավորումները, երբեմն չափազանց յուրահատուկ լինելով կամ տեխնիկական առաջընթացի նորույթ հանդիսանալով, պահանջում են նորոգման հատուկ մոտեցումներ և նեղ մասնագիտացում: Գործնականում հաճախ վարձակալության ուղղակի կողմ հանդիսացող ակտիվի մատակարար կազմակերպություններն իրենք են կատարում վարձակալի մոտ գտնվող սարքավորումների նորոգում և սպասարկում՝ դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծելով նորոգման ծախսերի կրճատման համար, քանի որ վարձակալը չի դիմում դրսի նորոգման մասնագիտացված ծառայություններին, որոնք, որպես կանոն, առավել թանկ են:[163]

Այսպիսով՝ լիզինգում ընդգրկված ուղղակի մասնակիցները, փոխշահավետ ծառայություններ մատուցելով, պայմաններ են ստեղծում ներխմբային լրացուցիչ օգուտների ձևավորման համար: Նույնը վերաբերում է լիզինգի անուղղակի մասնակիցներին, ինչպիսին են, օրինակ, ապահովագրական ընկերությունները, որոնք վարձակալության իրենց մշտական գործընկերներին տրամադրում են զեղչային ապահովագրական պոլիսներ (տե՛ս աղյուսակ 4.6):

[162] Дегтярева Е., Лизинг или кредит?, Лизинг-курьер, 2002, #2, с. 26.

[163] Лещенко М. И., Основы лизинга, М., "Прогрес-МТ" 2000, с. 101-102.

Աղյուսակ 4.6

Վարձակալության փաստացի և այլընտրանքային տարեկան ծախսերի համադրումը վարձակալի մոտ (հազ. դրամ)

	Ծախսային հոդվածների անվանումը	Փաստացի ծախսեր	Այլընտրանքային ծախսեր	Շեղում
1	Վարձակալության տոկոսագումար	2500	2700	200
2	Ընթացիկ նորոգման ծախսեր	120	200	80
3	Արդիականացման ծախսեր	350	440	90
4	Ապահովագրական ծախսեր	40	70	30
5	Վարձակալության ավարտին ակտիվի ձեռք բերման արժեք	1550	1620	70

Լիզինգի գործարարության ոլորտին հատուկ ֆինանսաարտադրական հանգույցներին բնորոշ է գործարարության ռիսկերի դիվերսիֆիկացիան: Փորձը ցույց է տալիս, որ վարձակալության հավանական կորուստների փոխհատուցման պարտավորությունները պայմանագրային հարաբերությունների ճանապարհով նախօրոք բաշխվում են վարձատուի և վարձակալի, ինչպես նաև փոխառություններ տրամադրող բանկերի և վարձատուների միջև: Այդպիսով պայմաններ են ստեղծվում լիզինգում ընդգրկված յուրաքանչյուր կողմի գործարարության ռիսկերի մեղմման և հավանական կորուստների չափերի կրճատման համար: Դրա օրինակներից մեկն է վարձակալի և ակտիվի մատակարար կազմակերպության փոխհարաբերությունը՝ վարձակալության օբյեկտի արժեզրկումը փոխհատուցելիս:[164] Ֆինանսական վարձակալության ժամանակ վարձակալին են փոխանցվում ակտիվի շահագործման ռիսկերը, և եթե տեղի է ունենում ակտիվի վաղաժամկետ արժեզրկում կամ բարոյական մաշվածություն, ապա կորուստների փոխհատուցման մի մասն իր վրա կարող է վերցնել մատակարար կազմակերպությունը՝ մասնակցելով վարձակալած ատիվի արդիականացմանը:

[164] Нитецкий В., Финансовый анализ в аудите., М, Дело, 2003, с. 145.

Այսպիսով, լիզինգի համակարգ հանդիսացող ֆինանսաարտադրական հանգույցներում ընդգրկված կազմակերպությունները, հետապնդելով ներխմբային շահեր, առաջին հերթին շահագրգռված պետք է լինեն ծախսերի ոչ միայն լոկալ, այլև համընդհանուր վերահսկողություն իրականացնելու գործում:[165] Նման պարագայում լուրջ հնարավորություններ են ստեղծվում վարձակալության գործարքների ինքնարժեքի կրճատման, տնտեսական ռեսուրսների համատեղ օգտագործման արդյունավետության բարձրացման առումով:

Ֆինանսաարտադրական հանգույցների ներխմբային գործունեության տնտեսական էֆեկտի վերլուծությունը լիզինգի կողմեր հանդիսացող կազմակերպություններում պահանջում է ներխմբային համագործակցության ֆինանսական արդյունքի չափման մեխանիզմների մշակում՝ մի շարք բաղադրիչներով:

Նախ՝ անհրաժեշտ է համակարգել ներխմբային գործառնությունները, որոնք տեղի են ունենում ֆինանսաարտադրական հանգույցներում ընդգրկված կազմակերպություններում: Այնուհետև պետք է համեմատություններ կատարել ներխմբային գործառնություններից ձևավորված փաստացի ծախսերի և ֆինանսաարտադրական հանգույցներից դուրս՝ նմանատիպ գործարքների (այլընտրանքային գործարքներ) ծախսային հոսքերի հետ, դրանով իսկ որոշելով ծախսային այն տնտեսումները, որոնք արդյունք են լիզինգի համակարգում ընդգրկված կազմակերպությունների ներխմբային փոխշահավետ ձեռնարկատիրական գործունեության:

Ներխմբային համագործակցության ֆինանսական արդյունքի չափման և գնահատման հաջորդ քայլը պահանջում է գործառնությունների փաստացի և այլընտրանքային ծախսերի շեղումների բացահայտում, ամփոփում և դրանց հիման վրա՝ համակարգված հաշվապահական հաշվառման կազմակերպում: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում լիզինգի ֆինանսաարտադրական հանգույցների շրջանակում ներդնելու այնպիսի հաշվառման համակարգ, որը հնարավորություն կտա արձանագրել վարձակալության շրջանակում գործող յուրաքանչյուր կազմակերպության ներխմբային գործունեության ֆինանսական արդյունքները:

[165] Финансовая аренда (лизинг) в России. Обзор рынка 2005-2006, М., Международная финансавая корпорация, 2006, с. 45.

Ֆինանսաարտադրական հանգույցի շրջանակում գործող յուրաքանչյուր կազմակերպության ներխմբային գործունեության արդյունքներն արձանագրելու նպատակով առաջարկենք կառավարչական հաշվառման հաշիվների դասում կիրառել համադրող հաշվապահական հաշվառման հաշիվ՝ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» անվանմամբ:

Նշված հաշվի դեբետային մասում կարձանագրվեն փաստացի այն ծախսերը, որոնք առնչվում են ներխմբային գործառնություններին, իսկ կրեդիտային մասում՝ նույն գործարքներին առնչվող այլընտրանքային ծախսերը, որոնք կձևավորվեին, եթե չիրականացվեր ներխմբային համագործակցություն՝ տվյալ գործարքի դեպքում: Բնականաբար, կոնկրետ գործարքի գծով լիզինգի ֆինանսաարտադրական հանգույցում ընդգրկված կազմակերպությունների ներխմբային համագործակցությունը համարվելով փոխշահավետ, կհանգեցնի նրան, որ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» հաշվի դեբետում արձանագրված գործառնության փաստացի ծախսերը փոքր կլինեն այլընտրանքային ծախսերից, և այդ տարբերությունն էլ կարձանագրվի որպես լիզինգի համակարգում ընդգրկված կազմակերպությունների ներխմբային համագործակցության ֆինանսական արդյունք:

Լիզինգի կողմերի ներխմբային համագործակցության փաստացի արդյունքների ձևակերպումը կարող է իրականացվել «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» հաշվի դեբետը թղթակցելով դրամական միջոցներ կամ պարտավորություններ հաշվառող հաշիվների կրեդիտի հետ: Իսկ այլընտրանքային համագործակցության ծախսերը այդ դեպքում կձևակերպվեն «Այլ գործառնական ծախսեր» հաշվի դեբետը թղթակցելով «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» հաշվի կրեդիտի հետ:

Հետևաբար, լիզինգի համակարգում ընդգրկված կազմակերպությունների ներխմբային համագործակցության օգուտները կձևակերպվեն «Այլ գործառնական ծախսեր» հաշվի դեբետը թղթակցելով «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» հաշվի կրեդիտի հետ:

Լիզինգի ֆինանսաարտադրական հանգույցում ընդգրկված կազմակերպությունում վարվող «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» հաշիվը՝ փոխհամագործակցության ֆինանսական արդյունքի ձևակերպումից հետո կփակվի և մնացորդ չի ունենա (տե՛ս գծապատկեր 4.10):

«Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ»



Գծապատկեր 4.10
«Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» համադրող հաշվի գործունեության մեխանիզմը

Այսպես, կիրառելով «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» հաշիվը աղյուսակ 4.6-ի տվյալներով՝ ներկայացնենք լիզինգի ներխմբային օգուտների ձևավորմանն առնչվող հաշվային թղթակցությունները:

(1) Ձևակերպվել է հաշվետու ժամանակաշրջանի վարձակալության տոկոսավճարը 2500 հազ. դրամով, որը կկազմեր 2700 հազ. դրամ, եթե ակտիվը ձեռք բերվեր ոչ թե վարձակալությամբ, այլ գնվեր երկարաժամկետ վարկային միջոցներով.

ա) Դտ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» 2500
Կտ «Չկրած ֆինանսական ծախսեր» 2500
բ) Դտ «Այլ գործառնական ծախսեր» 2700
Կտ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» 2700

(2) Ձևակերպվել են ակտիվի մատակարարի կողմից լիզինգի օբյեկտի ընթացիկ նորոգման ծախսերը 120 հազ. դրամով, որը կկազմեր 200 հազ. դրամ, եթե վարձակալած ակտիվի

նորոգումը կատարեր մասնագիտացված նորոգող կազմակերպությունը.

ա) Դտ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» 120
Կտ «Պարտավորություններ մատակարարներին» 120
բ) Դտ «Այլ գործառնական ծախսեր» 200
Կտ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» 200

(3) Վճարվել է վարձակալած ակտիվի արդիականացման համար 350 հազ. դրամը, որին մասնակցել է նաև ակտիվի մատակարարը, հակառակ դեպքում մոդեռնացման ծախսը կկազմեր 440 հազ. դրամ.

ա) Դտ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» 350
Կտ «Հաշվարկային հաշիվ» 350
բ) Դտ «Այլ գործառնական ծախսեր» 440
Կտ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» 440

(4) Վճարվել է վարձակալած ակտիվի տարեկան ապահովագրության ծախսը՝ 40 հազ. դրամ, որը կկազմեր 70 հազ. դրամ, եթե ապահովագրական ընկերությանը երաշխավորություն չներկայացներ նրա մշտական հաճախորդ վարձատու կազմակերպությունը.

ա) Դտ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» 40
Կտ «Հաշվարկային հաշիվ» 40
բ) Դտ «Այլ գործառնական ծախսեր» 70
Կտ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» 70

(5) Ձևակերպվել է վարձակալության ավարտին վարձակալի կողմից ակտիվի ձեռք բերման արժեքը 1550 հազ. դրամ, որը կկազմեր 1620 հազ. դրամ, եթե նույն ակտիվը գնվեր շուկայից՝ և ոչ թե վարձատուից.

ա) Դտ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» 1550
Կտ «Հաշվարկային հաշիվ» 1550
բ) Դտ «Հիմնական միջոցներ» 1620
Կտ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» 1620

(6) Ներխմբային համագործակցության արդյունքը 400 հազ. դրամով ամփոփվել և վերագրվել է.
վերադիր ծախսերին [(2700+200+440+70)– (2500+120+350+40)]

ա) Դտ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ».....400
Կտ «Այլ գործառնական ծախսեր».....400

վարձակալության ավարտին ձեռք բերված հիմնական միջոցի արժեքին (1620-1550).

բ) Դտ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ».....70
Կտ «Հիմնական միջոցներ».....70

Լիզինգի ֆինանսաարտադրական խմբում ընդգրկված վարձակալ կազմակերպությունում վարվող «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» հաշվի տեղեկատվական ամփոփումով կներկայացվի ներխմբային գործարքների ֆինանսական արդյունքը: Դրա ձևավորման հիմքը համագործակցության հետևանքով վարձակալած ակտիվի շահագործման՝ 400 հազ. դրամով (3410 հազ. դրամ – 3010 հազ. դրամ) և ձեռք բերման ծախսերի՝ 70 հազ. դրամով (1620 հազ. դրամ- 1550 հազ. դրամ) տնտեսումն է, որի մասին տեղեկատվությունը հնարավոր է ստանալ «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» հաշվի դեբետային և կրեդիտային շրջանառությունների գումարները համադրելով (տե՛ս գծապատկեր 4.11):

Այսպիսով «Վարձակալության ֆինանսաարտադրական հետևանքներ» հաշվի կիրառումը հնարավորություն է ստեղծում ոչ միայն արձանագրելու փոխշահավետ համագործակցության արդյունքում ձևավորված ներխմբային գործարքներից տնտեսումները վարձակալի մոտ, այլև դրանք համախմբված ներկայացնելու լիզինգի ֆինանսաարտադրական հանգույցի հաշվետու ժամանակաշրջանի գործունեության շրջանակում, եթե այն զուգահեռաբար կիրառվի նաև լիզինգի կողմեր հանդիսացող մյուս կազմակերպություններում:



Գծապատկեր 4.11

Ներխմբային գործառնությունների ֆինանսական էֆեկտի հաշվապահական հաշվառման տեղեկատվության ձևավորումը

Նման համախմբված տեղեկատվությունը ոչ միայն կարևորվում է կազմակերպությունների մակարդակով լիզինգի արդյունավետությունը գնահատելիս, այլև հիմք է վարձակալության շուկայի մեզոտնտեսական վերլուծությունների համար, քանի որ համապարփակ և ամփոփ արտահայտում է վարձակալության կողմերից յուրաքանչյուրի մոտ ձևավորված ներխմբային գործառնությունների ֆինանսական էֆեկտը:

ԳԼՈՒԽ V
ԼԻԶԻՆԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

5.1 Վարձավճարների օպտիմալացման հիմնախնդիրները լիզինգի համակարգում

Օպտիմալ վարձավճարների սահմանումը լիզինգի արդյունավետ կազմակերպման կարևորագույն երաշխիքներից է, որը վարձակալական հարաբերությունների տնտեսական կարգավորման հիմքում է: Վարձավճարները նպաստում են արտադրության միջոցների վերարտադրության, կապիտալի կուտակման, ձեռներեցության խթանման գործառույթների իրականացմանը: Հետևաբար, դրանց կառուցվածքի, չափաբաժնի և հաշվարկման մեթոդների ընտրությունը էական դեր է խաղում վարձակալական հարաբերությունների կարգավորման գործում: Բացի դրանից վարձավճարները վարձատուի համար եկամուտներ են՝ միտված հասնելու առավելագույնին, իսկ վարձակալի համար, ընդհակառակը, ձևավորվում են ծախսեր՝ միտված կրճատման, որն էլ անհրաժեշտություն է առաջացնում որոշելու այն օպտիմալ մեծությունը, որը տնտեսապես խթանում է լիզինգային գործունեությունը:

Վարձակալության տնտեսական հարաբերություններում հատկանշական է նաև ֆինանսական ներդրման տարբերակների ընտրության գործոնը: Վարձակալը տեխնիկական վերազինում կատարելիս կանգնում է սեփական միջոցներով ակտիվի գնման, վարկային միջոցներով ակտիվի ձեռք բերման կամ ֆինանսական վարձակալությամբ ակտիվի օգտագործման ուղիներից որևէ մեկի ընտրության առջև: Իր հերթին, վարձատուն, ֆինանսական ներդրումներ իրականացնելիս, փոխառու միջոցների մարման, շահավետ տոկոսադրույքների կիրառման, վարձավճարների ձևերի, հաշվարկման մեթոդների, ստացման չափաբաժինների ընտրության առջև է կանգնում, որոնցով պայմանավորվում է ոչ միայն կազմակերպության գործարար ակտիվության աստիճանը, այլև ֆինանսական կայուն դրությունը:

Գործնականում կարող է կիրառվել վարձավճարների երեք ձև՝ դրամական, բնաիրային և խառը: Առավել օգտագործվողը դրամական

վարձավճարների կազմակերպումն է: Սակայն անհրաժեշտություն է առաջանում նաև բնաիրային վարձավճարային պարտավորությունների ձևավորման համար այն դեպքում, երբ վարձակալը մարում է իր պարտավորությունները լիզինգի օբյեկտի շահագործումից ստացվող ապրանքաիրային խմբաքանակներով կամ վարձատուի համար իրականացնում է հանդիպակաց ծառայություն: Վարձավճարի նման ձևն առավել տարածված է ագրոպարենային ոլորտում. վերամշակող կազմակերպությունը ֆերմերներին վարձակալական հիմունքներով գյուղտեխնիկա է հանձնում և փոխարենը՝ բնամթերքներ ստանում՝ որպես վարձավճար: Երբեմն, կիրառվում է նաև վարձավճարի խառը ձևը՝ համակցելով դրամականն ու բնաիրայինը:

Ըստ հաշվարկման մեթոդների՝ վարձավճարները լինում են ամրագրված և բաժնային: Գործնականում առավել տարածում ունեն ամրագրված վարձավճարները, որոնք ողջ լիզինգի ժամանակահատվածում մնում են անփոփոխ և հաշվարկվում են գործարքին առնչվող բացարձակ գումարով: Լիզինգի կազմակերպումը կարող է հիմնվել նաև բաժնային սկզբունքով վարձավճարների ձևավորման վրա, երբ վերջիններիս հաշվարկման հիմքում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ վարձակալի շահույթի մեծությունը, իրացվող արտադրանքի ծավալը և այլն: Այսինքն՝ վարձավճարի չափաբաժնի հաշվարկն ուղղակիորեն փոխկապակցված է վարձակալի տնտեսական գործունեության արդյունքներին: Սակայն տեսության մեջ լիզինգային վճարների ձևավորման այս մոտեցումը միանշանակորեն չի ընդունվում և երբեմն էլ տնտեսապես աննպատակահարմար է, քանի որ այս դեպքում որքան ավելանում է վարձակալի գործարար ակտիվությունը, այնքան նույն ժամանակահատվածում աճում են նրա լիզինգային պարտավորությունները:[166]

Ըստ վճարման եղանակների՝ վարձավճարները ներկայացվում են հետևյալ խմբերով.

- գծային, երբ վարձավճարները հավասարաչափ բաշխվում են լիզինգի ողջ ժամանակահատվածում,
- աճողական (պրոգրեսիվ), երբ լիզինգի մեկնարկային ժամանակահատվածում սահմանվում են առավել նվազ վարձավճարներ՝ հետագայում աճողական միտում ունենալու

[166] Чекмарева Е.Н., Лизинговый бизнес, М., Экономика, 2004 г., с. 182.

պայմանով, որը առավելապես հատուկ է գործարարության ոլորտում սկսնակ վարձակալների համար,

- նվազող (ռեգրեսիվ), երբ լիզինգի մեկնարկին կիրառվում են բարձր վարձավճարներ, հետագայում նվազման միտումով, որը վարձակալի մոտ մեղմում է լիզինգի օբյեկտի բարոյական մաշվածության ռիսկը,
- սեզոնային վարձավճարներ, որոնք առավելապես տարածված են ագրարային ոլորտում և ձևավորվում են բերքահավաքի իրացումից ստացվող եկամուտներով:

Վարձավճարները դասակարգվում են նաև ըստ վճարման ժամանակացույցի: Գործնականում լայն տարածում են գտել պարբերական (տարեկան, եռամսյակային, ամսական) ամրագրված մեծությամբ վարձավճարները: Երբեմն էլ վարձատուն, ռիսկային վարձակալների պարագայում, լիզինգի մեկնարկին պահանջում է կանխավճարային (դեպոզիտային) վճարումներ, որից հետո միայն վարձակալության ընթացքում անցնում պարբերական վարձավճարների:

Վարձավճարների օպտիմալացման հիմնախնդիրները քննարկելիս կարևորում ենք լիզինգային վճարների կազմի և կառուցվածքի վերլուծությունը: Մասնագիտական գրականությունում վարձավճարների կառուցվածքի ձևավորմանը հեղինակները տարբեր մոտեցումներ են ցուցաբերում: Վարձավճարների կառուցվածքի պարտադիր տարրեր են ամորտիզացիոն հատկացումները, լիզինգի ֆինանսավորման փոխատվությունների տոկոսային ծախսերը, վարձատուի շահույթը, հնարավոր ռիսկային կորուստների փոխհատուցման պահուստային հատկացումները, վարձատուի կողմից ակտիվի շահագործման լրացուցիչ ծախսերը, ապահովագրական ծախսերը, հարկերը:[167]

Բացի թվարկված տարրերից, վարձավճարների կառուցվածքում առաջարկվում է ընդգրկել նաև այնպիսի վերադիր հոդվածներ, ինչպիսիք են՝ միջնորդ կազմակերպություններին կատարած փոխանցումները, գովազդային ծախսերը, բրոկերներին՝ վճարումները և այլն:[168] Նպատակահարմար է նաև վարձավճարների կազմում ընդգրկել վարձակալման ավարտից հետո վարձակալին փոխանցվող

[167] Лазин А.И., Николаев С.Н., Особенности развития аренды строительной техники., М., Лизингстроймаш, МС., Консалтинг, 2000, с. 152.

[168] Дегтярева Е., Лизинг или кредит?, Лизинг-курьер, 2002, #2, с. 22-23.

լիզինգի օբյեկտի մնացորդային արժեքը:[169]

Վարձավճարների կազմը և կառուցվածքը հանդես են գալիս հատկանշական տարբերություններով՝ կախված լիզինգի կազմակերպման ճյուղային առանձնահատկություններից: Միջազգային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ագրարային ոլորտում, որտեղ որոշակիորեն բարձր է գործարարության ռիսկայնության աստիճանը, վարձավճարների կազմում, արդյունաբերության համեմատությամբ, բարձր են նաև հավանական կորուստների փոխհատուցման գումարները, ապահովագրական մուծումները, վարձատուի՝ ակտիվի սպասարկման ծախսերը, սակայն, միաժամանակ, ցածր են հարկերը, ամորտիզացիոն հատկացումները, վարձատուի շահույթը (տե՛ս աղյուսակ 5.1):

Աղյուսակ 5.1

Վարձավճարների կազմի և կառուցվածքի ճյուղային համեմատական բնութագրումը ԵՄ երկրներում (%)[170]

Վարձավճարի տարրեր	Արդյունաբերություն	Ագրարային ոլորտ
ամորտիզացիա	32	27
փոխառության տոկոսագումարներ	11	13
ապահովագրական ծախսեր	5	10
միջնորդային ծախսեր	1	1
գովազդային և կոմերցիոն ծախսեր	4	2
վարձատուի շահույթ	9	7
ակտիվի սպասարկման ծախսեր	7	11
ռիսկերի փոխհատուցման պահուստներ	2	4
հարկեր	27	24
ակտիվի մնացորդային արժեք	2	1
Ընդամենը	100	100

Տեսության մեջ առաջարկվում է նաև հաշվարկել վարձավճարների ներքին և վերին սահմանային չափեր: Վարձավճարի վե-

[169] Лизинг-инвестиции или налоговая уловка?, Конкуренция и рынок, #9, 2004, с. 41.

[170] Lease and Hire Purchase Contracts, UK GAAP, 7th ed., L.: Ernst and Young, 2006, page 256.

րին սահմանն այն առավելագույն չափն է, որը հնարավորություն է ընձեռում վարձատուին՝ ապահովելու առավելագույն շահույթ, իսկ վարձակալին թույլ է տալիս, ծյուղի մակարդակով, ձևավորել շահույթի միջին նորմա և կազմակերպել ընդլայնված վերարտադրություն: Նվազագույն վարձավճարի պայմաններում ապահովվում է լիզինգի օբյեկտի պարզ վերարտադրություն, այնպես, որ լիզինգային վճարները գերազանցեն կամ գոնե հավասարվեն ակտիվի վարձակալության մեկնարկային արժեքին (հանած մնացորդային արժեքը), այլապես վարձակալությունը տնտեսապես աննպատակահարմար կլինի: [171]

Մասնագիտական գրականության մեջ կարծիք է հայտնվում նաև վարձավճարները հաշվարկելիս հաշվի առնել վարձատուի կապիտալ և ընթացիկ ծախսերը (տե՛ս աղյուսակ 5.2):

Աղյուսակ 5.2

Վարձավճարների կազմում առաջարկվող հոդվածների կազմը՝ ըստ կապիտալ և ընթացիկ ծախսերի[172]

Կապիտալ ծախսեր	**Լիզինգի ընթացիկ ծախսեր**
լիզինգի առարկայի արժեք	լիզինգի առարկայի գույքահարկ
ակտիվի տեղափոխման և տեղակայման ծախսեր	հավանական ռիսկային կորուստների փոխհատուցման պահուստներ
ակտիվը շահագործող անձնակազմի վերապատրաստման ծախսեր	ակտիվի սպասարկման ծախսեր (եթե այն վարձատուի պարտավորությունն է)
ակտիվի ձեռք բերման մաքսավճարներ, տուրքեր	լիզինգի առարկայի կապիտալ նորոգման պահուստի ձևավորման ծախսեր
ակտիվի՝ մինչ վարձակալության պահպանման ծախսեր	միջնորդավճարներ
փոխառության տոկոսային ծախսեր	գովազդային և կոմերցիոն այլ ծախսեր
կոմիսիոն վճարներ	լիզինգի առարկայի հետդարձի ծախսեր
ապահովագրական վճարներ	վարձակալից ստացված ակտիվի վերաշահագործման մեկնարկային ծախսեր

[171] Горемыкин В.А., Основы технологии лизинговых операций, М., Ось-89, 2000, с.53.

[172] Горемыкин В.А., Лизинг, М., "Дашков и К", 2003, с. 244.

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում կազմակերպվող լիզինգի վարձավճարները ձևավորվում են առավել համառոտ հոդվածներով (տե՛ս գծապատկեր 5.1)՝ պայմանավորված լիզինգի շուկայի թերզարգացածությամբ և հետևաբար, բրոկերային, միջնորդային, կոմերցիոն ծախսերի բացակայությամբ: Բացի դրանից, ՀՀ-ում կազմակերպվող լիզինգի ապահովագրական վճարները, ինչպես նաև հավանական կորուստների, ռիսկային ծախսերի փոխհատուցման պարտավորությունները, որպես կանոն, վարձակալի վրա են, որն էլ, իր հերթին, կրճատում է վարձատուի կողմից պահանջվող վարձավճարների ձևավորման հոդվածների անվանացանկը:



Գծապատկեր 5.1

Վարձավճարների ձևավորման հոդվածների կազմն ու կառուցվածքը ՀՀ-ում կազմակերպվող լիզինգի պայմաններում[173]

Լիզինգի տնտեսական կարգավորման շրջանակներում, վարձավճարների կառուցվածքի տարրերի կազմի հիմնավոր ձևավորմանը զուգահեռ, կարծում ենք՝ պետք է կարևորել նաև վճարների չափը, փոխանցման պարբերականությունն ու չափաբաժինը, որոնք էապես

[173] Կազմված է՝ «Ագբա-Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի 2008թ. և 2009թ. հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների տվյալներով:

ազդում են վարձակալության կողմերի ֆինանսական դրության և գործարար ակտիվության վրա:

Ինչպես նշեցինք, որպես կանոն, վարձատուն ձգտում է վարձավճարների առավելագույն չափով ձևավորման, իսկ վարձակալը, ընդհակառակը, նախընտրում է դիմել ցածր վարձավճարներով լիզինգի: Հակառակ դեպքում, ծրագիրը տնտեսապես շահավետ չհամարելով՝ վարձակալը կդիմի ակտիվի գնման, և ոչ թե վարձակալության: Այսպիսով՝ ֆինանսական շուկայում լիզինգի օպտիմալ վարձավճարների ձևավորումը դրամական հոսքերի առումով հիմնվում է վարձատուի առավելագույն և վարձակալի նվազագույն ձգտումների հավասարակշռման վրա: Վարձավճարները ձևավորելիս լիզինգի մասնակիցները միմյանց հակասող տնտեսական շահերով են առաջնորդվում, ուստի առաջանում է վարձակալի և վարձատուի առաջարկների հակակշռման անհրաժեշտություն, որն էլ հանգեցնում է հավասարակշիռ վարձավճարի սահմանման: Գործնականում վարձավճարների սահմանման գործընթացը կարգավորում է ֆինանսական շուկան, սակայն, կարծում ենք, որ լիզինգի կողմերը կարող են իրենց սուբյեկտիվ ներգործությունն ունենալ այս գործընթացում և վարձավճարների ձևավորումը դարձնել առավել արդյունավետ և կառավարելի[174]:

Հավասարակշիռ վարձավճարների սահմանումը առաջարկում ենք իրականացնել երկու փուլով:

Առաջին՝ վարձակալության ընդհանուր գումարի հաստատում, որը սահմանվում է վարձատուի և վարձակալի ներկայացրած հակակշիռ գործոնների ազդեցությամբ (տե՛ս աղյուսակ 5.3):

Երկրորդ՝ վարձավճարների պարբերականության և չափաբաժնի սահմանում, որը որոշվում է լիզինգի կողմերից յուրաքանչյուրի ֆինանսական դրության պահանջներով:

Վարձավճարների հավասարակշռված մեծության որոշման նպատակով բացահայտենք դրանց կազմի մեջ մտնող յուրաքանչյուր տարրի ձևավորման առանձնահատկությունը՝ վարձակալի և վարձատուի տնտեսական շահերի տեսանկյունից (տե՛ս աղյուսակ 5.3):

[174] "366 Marketing Tips for equipment leasing" Linda P. Kester, London School of Business and Finance, 2011, p. 204.

Աղյուսակ 5.3

Վարձավճարներ սահմանելիս լիզինգի կողմերի տնտեսական մոտիվացիան՝ ըստ առանձին գործոնների

Վարձատու	Մոտիվացիոն բնույթը	Վարձավճարի տարրերը	Մոտիվացիոն բնույթը	Վարձակալ
ձգտում է լիզինգի առարկան ձեռք բերել շուկայականից ցածր գնով	(-) ⇩	առարկայի արժեք (W)	(-) ⇩	ձգտում է, որ վարձավճարների ներկա արժեքը չգերազանցի ակտիվի արժեքը
ձգտում է լիզինգը ֆինանսավորել բանկային ավանդների տոկոսադրույքից բարձր դրույքաչափերով	(+) ⇧	լիզինգի ֆինանսավորման փոխառության ծախսեր (M)	(-) ⇩	ձգտում է բանկի տրամադրած վարկային տոկոսադրույքներից ավելի ցածր դրույքաչափերով լիզինգի
ձգտում է, որ լիզինգի վերադիր ծախսերը հնարավորինս փոխհատուցի վարձակալը առնվազն պետք է ապահովի ծյուղի մակարդակով շահույթի նորմա	(-) ⇩ (+) ⇧	վարձատուի վերադիր ծախսեր (B) վարձատուի շահույթ (P)	(-) ⇩ (-) ⇩	ձգտում է, որ լիզինգի վերադիր ծախսերը հնարավորինս փոխհատուցի վարձատուն ձգտում է վարձավճարներում վարձատուի շահույթի հնարավորինս նոծատման
ձգտում է, որ լիզինգի հարկերը հնարավորինս փոխհատուցի վարձակալը	(-) ⇩	վարձավճարներին առնչվող հարկեր (L)	(-) ⇩	ձգտում է, որ լիզինգի հարկերը հնարավորինս փոխհատուցի վարձատուն
ΣC ⇒ max		վարձավճարների գումարը (ΣC)	ΣC ⇒ min	

Լիզինգի վարձավճարների ընդհանուր գումարը (ΣC) ձևավորվում է հետևյալ տարրերով՝ լիզինգի առարկայի արժեք (W), լիզինգի ֆինանսավորման փոխառության ծախսեր (M), վարձատուի վերադիր

ծախսեր (B), վարձատուի շահույթ (P), վարձավճարներին առնչվող հարկեր (L).

$$\sum C = W + M + B + P + L \qquad (5.1)$$

Քանի որ վարձատուի համար $\sum C \Rightarrow \max$, իսկ վարձակալի համար՝ $\sum C \Rightarrow \min$, ապա հարկ է քննարկել վարձավճարի տարրերի ձևավորման սահմանները՝ լիզինգի կողմերից յուրաքանչյուրի շահերից բխող տնտեսական հակակշիռների պայմաններում: Ընդ որում, վարձավճարի սահմանման գործընթացում լիզինգի կողմերի տնտեսական շահերը հիմնականում չեն համընկնում և, որպես կանոն, գործում են հակադիր, քանի որ վարձակալն ու վարձատուն ձգտում են հնարավորինս թեթևացնել վարձավճարի կազմում ընդգրկված հոդվածների չափաբաժնի փոխհատուցման բեռը՝ այն թողնելով հակառակ կողմի վրա (տե՛ս աղյուսակ 5.3):

Քննարկենք վարձավճարի առանձին տարրերի ձևավորման մոտիվացիան՝ վարձակալի և վարձատուի տեսանկյունից:

Լիզինգի առարկայի արժեք (W):

Վարձատուի համար լիզինգի առարկայի արժեքը (W) պետք է ցածր լինի շուկայականից, այլապես նրա սահմանած վարձավճարը կթանկանա և կդառնա տնտեսապես ոչ շահավետ՝ ի հաշիվ փոխառության ծախսերի, վերադիր ծախսերի, շահույթի և հարկային պարտավորությունների հավելումների: Հետևաբար, վարձատուն պետք է ձգտի, որ վարձավճարներն առնվազն փոխհատուցեն լիզինգի առարկայի արժեքը.

$$\sum C - M - B - P - L \geq W \qquad (5.2)$$

Մյուս կողմից, վարձակալը ձգտում է, որ տարիների ընթացքում վճարվող վարձավճարի արժեքը չգերազանցի լիզինգի մեկնարկի պահին ակտիվի շուկայական արժեքը, հակառակ դեպքում, նպատակահարմար է ակտիվը գնել և ոչ թե վարձակալել: Դրանից ելնելով՝ վարձակալի համար լիզինգի առարկայի արժեքի գծով դրվում է հետևյալ սահմանափակումը.

$$W = \qquad (5.3)$$
$$(1 + r)^n$$

Հետևաբար, վարձավճարի կազմում լիզինգի առարկայի հավասարակշռված արժեքը առաջարկում ենք ձևավորել հետևյալ համակարգի լուծման սահմաններում.

$$\begin{cases} \sum C - M - B - P - L \geq W \\ W \leq \sum C/(1 + r)^n \end{cases} \qquad (5.4)$$

Փոխառության ծախսեր (M):

Փոխառության ծախսերի գծով լիզինգի կողմերը նույնպես միմյանց հակակշռող տնտեսական փաստարկներ են ներկայացնում: Վարձատուն ձգտում է ֆինանսավորել լիզինգը բանկային ավանդի տոկոսադրույքից բարձր տոկոսներով ($r > R_{դեպ}$), այլապես իր միջոցները կնախընտրի ներդնել ոչ թե վարձակալական ծրագրերում, այլ ավանդագրել բանկերում: Իր հերթին, վարձակալը ձգտում է բանկի տրամադրած վարկային տոկոսադրույքներից ցածր դրույքաչափերով լիզինգի ($r < R_{վարկ}$), քանի որ հակառակ դեպքում (բարձր տոկոսադրույքների), վարձակալությունը կդառնա տնտեսապես աննպատակահարմար, և նա լիզինգի փոխարեն բանկային վարկով կգնի ակտիվ: Հետևաբար, լիզինգի կազմակերպման ենթադրվող տոկոսադրույքը, ելնելով վերոնշյալ հակակշիռներից, պետք է գտնվի բանկային ավանդի և վարկի դրույքաչափերի միջև ընկած հատվածում.

$$R_{դեպ} < r < R_{վարկ} \qquad (5.5)$$

Վերադիր ծախսեր (B):

Լիզինգի կազմակերպմանն առնչվող վերադիր ծախսերի գծով նույնպես վարձակալության կողմերը միմյանց նկատմամբ հակակշիռ դրսևորումներ են ցուցաբերում: Վարձատուն ձգտում է ակտիվի սպասարկման ծախսերը, միջորդավճարները, ապահովագրավճարները, հավանական կորուստների փոխհատուցման ծախսերը, կոմիսիոն վճարները, կոմերցիոն ծախսերը հնարավորինս թողնել վարձակալի վրա: Նույն կերպ է վարվում նաև վարձակալը, որն ամեն կերպ ձգտում

է կրճատել լիզինգի կազմակերպման՝ իրեն բաժին ընկնող վերադիր ծախսերը:

Վիճակագրությունը վկայում է, որ լիզինգի միջազգային շուկայում ձևավորվող վարձավճարների կազմում վերադիր ծախսերի մասնաբաժինը չի գերազանցում 15%-ը,[175] որը վարձատուի և վարձակալի՝ վերադիր ծախսերի ձևավորման նկատմամբ գործող տնտեսական հակակշիռների արդյունքն է: Հետևաբար, լիզինգի կազմակերպման վերադիր ծախսերի գծով նպատակահարմար է կիրառել հետևյալ սահմանափակումը.

$$B : \sum C < 0.15 \qquad (5.6)$$

Վարձատուի շահույթ (P):

Լիզինգային ծրագրի իրականացումից ձևավորվող շահույթը վարձատուի համար պետք է առնվազն ապահովի գործարարության տվյալ ոլորտում ձևավորվող շահույթի նորմայի մակարդակ ($P\%_{ծյուղ}$), այլապես լիզինգային ծրագիրը կհամարվի տնտեսապես աննպատակահարմար: Հետևաբար, լիզինգը կազմակերպելիս վարձատուն պետք է սահմանի այնպիսի վարձավճար, որի կազմում ընդգրկված շահույթը (P) ապահովի առնվազն ծյուղի մակարդակով շահույթի նորմա.

$$(P : \sum C) \times 100 \geq P\%_{ծյուղ} \qquad (5.7)$$

Վարձավճարներին առնչվող հարկեր (L):

Վարձավճարներում ընդգրկված հարկերի նվազեցմանը ձգտում են վարձակալության կազմակերպման երկու կողմն էլ: Պարագրաֆ 3.2-ում մեր կողմից առաջարկվել է լիզինգի կողմերին բաժին ընկնող հարկային բեռի K_T ցուցանիշ՝ տարեկան կտրվածքով: Դրան զուգահեռ, նպատակահարմար է կիրառել լիզինգի հարկային բեռի ամփոփ ցուցանիշ: Այն լիզինգի ընդհանուր գումարում կներկայացվի որպես վարձավճարներին առնչվող հարկերի տեսակարար կշիռ, որը, ըստ միջազգային փորձագետների, վարձակալության խրախուսման նպատակով չպետք է գերազանցի 30%-ի մակարդակը.[176]

[175] Downes J., Finance and Investment Handbook, 5th ed., N.Y.Barons Educational Series, 1999, page 93.

[176] Королев А., Нужны новые подходы к лизинговому законодательству, и 2001, с.118.

$$(L : \sum C) \times 100 \leq 30 \qquad (5.8)$$

Վարձավճարների օպտիմալացման ընթացքում առաջարկում ենք հաշվի առնել ոչ միայն վարձավճարների ընդհանուր մեծության բաղադրիչները, այլև գումարների փաստացի վճարման հաճախականությունը, հաշվետու ժամանակաշրջանում պարտավորության մարման պահը և կանխավճարային մուծումները:

Մասնագիտական գրականության մեջ կանխավճարներով վարձավճարների հաշվարկն առաջարկվում է իրականացնել անուիտետի բանաձևով.[177]

$$ЛП = (C-A) \times \frac{И : T}{1 - 1 : (1 + И : T)^{T \times П}} \qquad (5.9)$$

որտեղ՝

ЛП – վարձավճարների ընդհանուր մեծությունն է,
C – լիզինգի ակտիվի արժեքը,
A – կանխավճարը,
П – լիզինգի ժամկետը,
И – վարձակալության ենթադրվող տոկոսադրույքը,
T – վարձավճարների հաճախականությունը:

Այսպես՝ եթե լիզինգի ակտիվի արժեքը 2 000 հազ. դրամ է (առանց ԱԱՀ-ի), վարձակալության ժամկետը 3 տարի է, դրույքաչափը՝ 12 %, վարձավճարի փոխանցման հաճախականությունը՝ եռամսյակային, վարձակալի կանխավճարը՝ 20% լիզինգի ակտիվի սկզբնական արժեքի նկատմամբ, ապա վարձավճարի ընդհանուր մեծությունը կկազմի.

$$ЛП = (2\,000\,000 - 400\,000) \times \frac{0.12 \times 4}{1 - 1 : (1 + 0.12 : 4)^{4 \times 3}} = 160\,736 \text{ հազ. դրամ}$$

Փաստորեն, վարձավճարների սահմանման ժամանակ որոշիչ դեր են կատարում նաև վարձակալի կողմից լիզինգի կանխա-

[177] Газман В.Д., Финансовый лизинг, М., ВШЭ, 2003, с. 186.

վճարները, որոնք կարող են գերազանցել վարձակալության պարտավորությունների նույնիսկ 20%-ը: Նման իրավիճակ ձևավորվում է լիզինգի մեկնարկին՝ վարձակալի մոտ վճարունակության բարձր մակարդակի պայմաններում, որն էլ թույլ է տալիս միանվագ փոխհատուցելու վարձակալական պարտավորությունների մեծ չափաբաժին:

Լիզինգային պարտավորությունների մարման ժամկետը նույնպես որոշիչ է վարձավճարների օպտիմալացման պարագայում: Վարձավճարները, որոնք ձևավորվում են լիզինգի առավելապես սեղմ ժամկետներով, համեմատաբար մեծ չափերի են հասնում՝ բաշխվելով կարճ ժամանակահատվածում: Մյուս կողմից, եթե ավելացվում է վարձավճարների փոխանցման հաճախականությունը (տարեկանից՝ եռամսյակային, նույնիսկ՝ ամսական), ապա տեղի է ունենում վարձավճարների չափաբաժնային գումարների կրճատում: Հետևաբար, վարձավճարներ սահմանելիս վարձատուն և վարձակալը, ելնելով ֆինանսատնտեսական իրավիճակից, հաշվի են առնում դրամական փոխանցումների արագությունը և հաճախականությունը:

Այսպես, եթե վարձատուն վարձակալության է հանձնել ակտիվ՝ 120 հազ. դրամ ընդհանուր վարձավճարով (ΣC) և 5 տարվա ծառայության ժամկետով, ապա վարձավճարների պտույտի արագությունը կտրուկ փոփոխության է ենթարկվում լիզինգի ժամկետի (մինչև 3 տարի) կրճատման պարագայում (տե՛ս աղյուսակ 5.4):

Այսպիսով՝ վարձատուի տնտեսական շահերի տեսանկյունից նպատակահարմար է վարձակալության տևողության կրճատմանը զուգահեռ ավելացնել վարձավճարների հաճախականությունը, որը կրճատում է վարձակալի դեբիտորական պարտքերի հավաքագրման կամ մարման տևողությունը: Այս ոլորտում հակառակ ուղղությամբ են ձևավորվում վարձակալի տնտեսական շահերը, որոնք հիմնվում են լիզինգի ժամկետայնության երկարացման, ինչպես նաև վարձավճարների թվաքանակի կրճատման (փաստացի վճարումների հաճախականության նվազեցման) վրա:

Աղյուսակ 5.4

Վարձավճարների պտույտի փոփոխությունը՝ լիզինգի ժամկետները կրճատելիս (հազ. դրամ)

Ցուցանիշներ	Նշանակում	5 տարով վարձակալություն	3 տարով վարձակալություն	Շեղում (+, -)
Ընդհանուր վարձավճար	ΣC	120	120	0
Տարեկան վարձավճար	ΣC/Tn	120 : 5 = 24	120 : 3 – 40	+16
Եռամսյակային վարձավճար	ΣC/Tnx4	24 : 4 = 6	40: 4 = 10	+4
Ամսական վարձավճար	ΣC/Tnx12	24 : 12 = 2	40 : 12 =3.3	+1.3
Վարձավճարի պտույտի տևողությունը՝ տարեկան վարձի դեպքում	360/ Tn	360 : 5 = 72 օր	360 : 3 = 120 օր	+ 48
Վարձավճարի պտույտի տևողությունը՝ եռամսյակային վարձի դեպքում	360/ Tnx4	360 : 5 x 4 = 18 օր	360 : 3 x 4 = 30 օր	+12
Վարձավճարի պտույտի տևողությունը՝ ամսական վարձի դեպքում	360/ Tnx12	360 : 5 x 12 = 6 օր	360 : 3 x 12 = 10 օր	+4

Ընդ որում, լիզինգի ժամկետների փոփոխությունը և վարձավճարների փոխանցման արագությունը յուրովի են ազդում վարձակալության պարտավորությունների վրա, որոնք հնարավոր է որոշել շղթայական տեղադրումների եղանակով:

Եթե լիզինգի ժամկետը (Tn) 5 տարուց կրճատվել է մինչև 3 տարի, իսկ վարձավճարների փոխանցման հաճախականությունը՝

տարեկանից դարձել եռամսյակային, ապա վարձակալական պարտավորությունների մարման ժամկետը կկրճատվի 42 օրով (360 : (3 x 4) – 360 : (5 x 1)), իսկ յուրաքանչյուր գործոնի ազդեցությունը կհաշվարկվի.

- լիզինգի ժամկետի կրճատման ազդեցություն՝
360 : (3 x 1) - 360 : (5 x 1) = + 48 օր,
- վարձավճարների հաճախականության աճի ազդեցություն՝
360 : (3 x 4) - 360 : (3 x 1) = - 90 օր:

Լիզինգ կազմակերպելիս պայմանագրային բանակցային խնդիր է վարձավճարների փաստացի փոխանցման կամ վճարման պահի որոշումը: Որպես վարձավճարների փոխանցման ամսաթիվ կարելի է ընդունել ինչպես հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը, այնպես էլ՝ վերջը: Որպես կանոն, վարձակալը ձգտում է վարձավճարի պարտավորությունը մարել հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ հավաքագրելով լրացուցիչ դրամական ռեսուրսներ, իսկ վարձատուն, նույն նկատառումներով, ձգտում է վարձավճարները ստանալ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի սկզբում: Լիզինգի կողմերի տնտեսական շահերի այս շրջանակը մասնագիտական գրականության մեջ առավել պարզորոշ վերլուծվում է ակտիվի գնման կամ վարձակալության որոշումների կայացման ժամանակ:[178]

Հիմնական միջոցներ ձեռք բերելիս կազմակերպությունները հաճախ կանգնում են գնման կամ վարձակալության ընտրության առջև: Մի կողմից, գնում կատարելիս միանվագ խոշոր դրամական միջոցներ են ծախսվում, սակայն վարձակալության տոկոսագումարներ չեն վճարվում: Մյուս կողմից, վարձակալության հիմունքներով հիմնական միջոցներն օգտագործելիս, չկատարելով մեկնարկային միանվագ խոշոր դրամական ծախսեր, վարձակալ կազմակերպությունն ակտիվի ծառայության տարիների ընթացքում պարբերաբար բացասական դրամական զուտ հոսքեր է ունենում՝ վարձատուին տոկոսագումար փոխանցելով[179]:

Նման դեպքերում հաշվարկվում են դրամական ներհոսքերն ու արտահոսքերը գնման և վարձակալության տարբերակներով՝ ընտրելով նվազագույն բացասական կամ առավելագույն դրական զուտ հոսք պարունակող գործարքը:

[178] Ճուղուրյան Ա., Հաշվապահական հաշվառում, Եր., «Վան Արյան», 2009, էջ 402:
[179] Townsend Walker "Managing lease portfolios", Wiley, USA, 2006, p. 101.

Դիցուք՝ վարձակալ կազմակերպությունը նախատեսում է ձեռք բերել արտադրական հաստոց.

- հաստոցի գնման արժեքը 2 000 հազ. դրամ է, իսկ օգտակար ծառայության ժամկետը՝ 4 տարի,
- հաստոցի ծառայության վերջում լուծարային արժեք չի գոյանում, և հետևաբար, հավասարաչափ մաշվածության հաշվարկման մեթոդով՝ ակտիվի տարեկան ամորտիզացիան կազմում է 500 հազ. դրամ,
- վարձակալության հիմունքներով հաստոց ձեռք բերելիս (տարեկան վարձավճարը՝ 700 հազ. դրամ) ակտիվի օգտակար ծառայության ընթացքում վարձակալը ծախսում է ընդամենը 2 800 հազ. դրամ, քանի որ հաստոցի սպասարկման ծախսերը հոգում է վարձատուն,
- լիզինգի դրույքաչափը կազմում է 12 %, իսկ կազմակերպության միավոր ծախսերին բաժին ընկնող շահութահարկի տնտեսման գործակիցը 0.20 է,
- գնում կատարելիս՝ հաշվարկված տարեկան ամորտիզացիայի պատճառով ծախսերն ավելանում են, և նվազում է բյուջե մուծվող տարեկան շահութահարկը՝ 100 հազ. դրամով (500x0.20),
- վարձակալելիս, տարեկան վարձավճարի շնորհիվ, ծախսերի ավելացումով նվազում է բյուջե մուծվող տարեկան շահութահարկը՝ 140 հազ. դրամով (700 x 0.20):

Օգտվելով վերոնշյալ տվյալներից՝ ներկայացնենք հաստոցի օգտակար ծառայության ընթացքում դրամական զուտ հոսքերը գնման և վարձակալության տարբերակներով (տե՛ս աղյուսակ 5.5):

Կազմակերպությանը ձեռնտու է հաստոցի վարձակալությունը և ոչ թե գնումը (1 635<1 699)՝ հետևյալ հիմնավորումներով.

1. գնելու դեպքում, ակտիվի օգտակար ծառայության չորս տարիների ընթացքում, հաստոցի շահագործումից ստացվում է 1 699 հազ. դրամի բացասական դրամական զուտ հոսք, իսկ վարձակալելիս՝ այդ ցուցանիշը նվազում է՝ հասնելով 1 635-ի մակարդակին,

2. գնելու առաջին տարում կազմակերպությունը, 2000 հազ. դրամի միանվագ արտահոսք թույլ տալով, հաջորդող տարիներին ակտիվի շահագործումից միայն դրամական ներհոսք է ակնկալում, իսկ վարձակալման դեպքում բոլոր տարիների կտրվածքով դիտվում է դրամի բացասական զուտ հոսք՝ նվազման միտումով:

Աղյուսակ 5.5

Դրամական զուտ հոսքերը՝ ակտիվը գնելիս կամ վարձակալելիս (հազ. դրամ)

Ցուցանիշներ	Ընդամենը	Տարիներ				
		0	1	2	3	4
ԳՆՈՒՄ						
Դրամական արտահոսք						
գնման արժեք	2 000	2 000	0	0	0	0
Դրամական արտահոսքի տնտեսում						
շահութահարկի գծով		0	100	100	100	100
զեղչման գործակից		X	0.89	0.78	0.71	0.63
զեղչված ներհոսք	301	0	89	78	71	63
Դրամական զուտ հոսք	(1 699)	(2000)	89	78	71	63
ՎԱՐՁԱԿԱԼՈՒՄ						
Դրամական արտահոսք						
նախատեսվող	2 800	0	700	700	700	700
զեղչված	2 056		623	532	460	441
Դրամական ներհոսք						
շահութահարկի տնտեսում		0	140	140	140	140
զեղչման գործակից		X	0.89	0.78	0.71	0.63
զեղչված ներհոսք	421	0	125	109	99	88
Դրամական զուտ հոսք	(1 635)	0	(498)	(423)	(361)	(353)

Եթե վարձավճարները վարձատուին փոխանցվեն ոչ թե յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում, այլ սկզբում, ապա կստացվի ճիշտ հակառակ պատկերը. վարձակալությունը վարձակալի համար կդառնա տնտեսապես ոչ շահավետ՝ ակտիվի գնման համեմատ, քանի որ լիզինգի դեպքում վարձակալի մոտ դրամական արտահոսքը կկազմի.

700 –125 = 575 (1-ին տարվա սկիզբ)
700 –109 = 591 (2-րդ տարվա սկիզբ)
700 – 99 = 601 (3-րդ տարվա սկիզբ)
700 – 88 = 612 (4-րդ տարվա սկիզբ)

2 379 հազ. դրամ

Այսպիսով՝ վարձավճարներն օպտիմալացնելիս առաջարկում ենք կիրառել լիզինգի կողմերի տնտեսական շահերի հակակշռման սկզբունքը՝ փոխհամաձայնեցնելով վարձակալի և վարձատուի՝ միմյանց հակազդող ֆինանսական մոտիվացիաները, օպտիմալ վարձավճարների սահմանումը դարձնելով առավել կառավարելի, իրականացնելով հետևյալ երկու փուլը (տե՛ս գծապատկեր 5.2).



Գծապատկեր 5.2

Լիզինգի վարձավճարների օպտիմալացման առաջարկվող մեխանիզմը

Առաջին՝ վարձավճարների կազմի և կառուցվածքի փոխհամաձայնեցման փուլում վարձատուն ձգտում է բարձր վարձավճարների սահմանման, շահույթի միջին նորմայի ապահովման, իսկ վարձակալը, հակազդելով դրան, վարձավճարների կրճատման, որով ակտիվի վարձակալումը տնտեսապես շահավետ է դառնում գնման նկատմամբ:

Երկրորդ՝ կանխավճարների, դրամական հոսքերի չափաբաժինների, գումարների փոխանցման պահի և հաճախականության սահմանման փուլում վարձակալի մոտ ապահովվում է հաշվեկշռի թույլատրելի իրացվելիություն, իսկ վարձատուի մոտ՝ դեբիտորական պարտքերի կայուն հավաքագրելիություն և ներդրումային ռեսուրսների արդյունավետ փոխհատուցում:

5.2 Ֆինանսական կայունության և լիզինգի արդյունքների փոխազդեցության գնահատման մեթոդաբանության բարելավումը

Լիզինգը, որպես ֆինանսական ներդրումների այլընտրանքային ուղի, հիմնախնդիրներ է առաջացնում վարձակալության կողմերից յուրաքանչյուրի ֆինանսական կայունության ապահովման ոլորտում: Վարձակալը, ստանձնելով մեծածավալ և երկարաժամկետ պարտավորություններ, լիզինգի դեպքում ձգտում է ոչ միայն ձեռք բերված ակտիվի գծով ներդրումների առավելագույն տնտեսական հատույցի, այլև նպատակ է հետապնդում դիմագրավելու լիզինգային պարտավորությունների հետևանքով ձևավորվող՝ կազմակերպության վճարունակության, ինքնավարության, ակտիվների իրացվելիության անկմանը[180]: Իր հերթին, վարձատուն, լիզինգի միջոցով վարձակալին տրամադրելով երկարատև փոխառություններ, ձգտում է ապահովել դեբիտորական պարտքերի հավաքագրելիության թույլատրելի մակարդակ, ֆինանսական ներդրումների առավելագույն հատույց, գործարար ակտիվության աճ, և, որ ոչ պակաս կարևոր է, կազմակերպության կայուն ֆինանսական վիճակ:

Լիզինգի արդյունքների և կազմակերպության ֆինանսական դրության փոխազդեցության հավասարակշռման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից կարևորագույններն են՝ ակտիվի լիարժեք շահագործման նպատակով՝ դրամական ռեսուրսների առկայության անհրաժեշտ չափերի ապահովումը և, միաժամանակ, ներդրման ծախսերի հետևանքով՝ գործարարության ֆինանսական կայունության անկման թույլատրելի սահմանի պահպանումը:[181]

Լիզինգն ուղեկցվում է տնտեսական մեծածավալ ռեսուրսների ծախսերով, որոնք վարձակալության ընթացքում պահանջում են անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայություն: Հակառակ դեպքում խախտվում է իրականացվող միջոցառման համաչափությունը, և վտանգի է ենթարկվում վարձակալության հաջող ավարտը[182]:

---

[180] Ahmed Riahi-Belkaoui "Long-Term Leasing – Accounting, evaluation, consequences" Westport, Connecticut, London, 2008, p. 184.

[181] Зубарева Л.В., Лизинг как метод инвестирования: Учебное пособие, М.Финансы и инвестиции, 2001, с. 231.

[182] David G. Mayee, Joseph Lane "Business leasing for Dummies" Barnes & Noble 2011, USA, p. 184.

Մյուս կողմից, մեծածավալ ֆինանսական ռեսուրսների ծախսը կտրուկ վատթարացնում է կազմակերպությունների ֆինանսական կայունությունը, որը շուկայական տնտեսավարման պայմաններում ռիսկային է և չափազանց բացասական է գնահատվում: Հետևաբար, լիզինգի ֆինանսական արդյունքների վերլուծության ժամանակ որոշվում են նաև ակտիվի շահագործման արդյունքների և կազմակերպության ֆինանսական դրության ցուցանիշների այն սահմանները, որոնց շրջանակներում իրականացվող վարձակալությունը ապահովում է ինչպես բարձր արդյունավետություն, այնպես էլ՝ ծրագրի կատարման անխափանություն և ընթացիկ իրացվելիության թույլատրելի մակարդակի կայունություն:

Նման հիմնախնդիրը քննարկումների առիթ է տվել մասնագիտական գրականությունում: Ձեռք բերվող նոր տեխնիկայի, արտադրությունում ներդրվող նորագույն տեխնոլոգիաների և կազմակերպության ֆինանսական դրության փոխազդեցության հավասարակշռման վերլուծությունը առաջարկվում է իրականացնել այդ նպատակով կազմվող տնտեսական ցուցանիշների կոնկրետ համակարգի շրջանակներում, որը հնարավորություն է տալիս համամասնություն սահմանելու նորամուծությունների և կազմակերպության ֆինանսական դրության փոփոխման չափերի միջև:[183]

Ցանկացած ներդրման իրականացման ֆինանսական նպատակահարմարությունը գնահատելիս առաջարկվում է նաև առաջին հերթին համեմատել կազմակերպությունում ներդրման ընդհանուր արդյունքները՝ համարժեք գումարի չափով փոխատվական կապիտալից ակնկալվող եկամուտների մեծության հետ: Եթե միջոցառման իրականացմանը հատկացվող գումարները որպես փոխատվական կապիտալ օգտագործելու դեպքում ստացվող շահույթը գերազանցում է վարձակալությունից ակնկալվող օգուտները, ապա լիզինգը համարվում է տնտեսապես աննպատակահարմար:[184]

Վարձակալության և կազմակերպության ֆինանսական դրության փոփոխման չափերի տնտեսական հավասարակշռման կարևոր պայման է նաև կազմակերպության իրացվելիության թույլատրելի սահմանի ապահովումը: Շուկայական տնտեսավարման պայմաններում

[183] Коршунова Н.М., Лизинг: экономические и правовые основы: Учебное пособие для вузов, 2-е изд., М.:, ЮНИТИ-ДАНА, 2001, с. 92.

[184] Селезнева Н.Н., Ионова А.Ф., Финансовый анализ, Учебное пособие, М., Финансы, 2003, с. 205.

անթույլատրելի է այնպիսի մեծածավալ ներդրումային միջոցառումների իրականացումը, որոնք խիստ վատացնում են կազմակերպության վճարունակությունը և առաջացնում սնանկացման վտանգ: Այդ իսկ պատճառով կազմակերպությունը նորամուծական միջոցառումների իրականացման ընթացքում անհրաժեշտ է համարում խստագույնս պահպանել վճարունակության անկման թույլատրելի սահմանը:[185]

Լիզինգային ծրագրերի իրականացման և կազմակերպության ֆինանսական դրության փոփոխման միջև համամասնության ապահովման կարևոր պայման է նաև տնտեսավարման ինքնավարության անհրաժեշտ մակարդակի պահպանումը:

Վարձակալության իրականացման նպատակով մեծածավալ փոխառությունների և պարտավորությունների ձեռք բերումը զգալի կախվածության մեջ է դնում տվյալ վարձատու կազմակերպության տնտեսական գործունեությունը բանկերից ու կրեդիտորներից, որը շուկայական տնտեսավարման պայմաններում հանգեցնում է անցանկալի հետևանքների: Այս նկատառումով մասնագիտական գրականության մեջ վարձատու կազմակերպությունների պասիվների կազմում վարկային պարտավորությունների տեսակարար կշռի թույլատրելի սահմանը առաջարկվում է 50%-ից ոչ ավելի:[186]

Ներգրավելով ֆինանսական միջոցներ և ձևավորելով կապիտալ՝ կազմակերպությունները ձգտում են առավել շահութաբերության: Հետևաբար, խնդիր է առաջանում առկա ֆինանսական ռեսուրսներով ապահովելու առավելագույն շահույթ: Լիզինգի դեպքում հաշվի է առնվում նաև ֆինանսական լծակի գործոնը: Այս անվանումը գալիս է այն հայտնի ճշմարտությունից, որ լծակը գործիք է՝ փոքր ուժի գործադրմամբ ծանր առարկաները շարժելու համար: Եթե ընդունենք, որ գործարարության բնագավառում «ծանր առարկան» շահույթի աճն է, ապա պարզ կդառնա, որ գոյություն ունեն այնպիսի տնտեսական գործոններ, որոնց ոչ մեծ փոփոխությունները կարող են բազմապատիկ ուժգնությամբ ազդել կազմակերպության շահույթի աճի վրա:

Ֆինանսական վերլուծությունը գնահատում է երեք տեսակի լծակ՝ արտադրական, ֆինանսական և արտադրաֆինանսական: Արտադրական և ֆինանսական լծակները, միաժամանակ ազդելով կազմակերպության զուտ շահույթի մեծության վրա, առաջացնում են

[185] Ковалева А.М., Финансовый менеджмент:, М., ИНФРА-М, 2004, с. 66.

[186] Степанова И.С., Экономика предприятия, Учебник для вузов, М., Юрайт-Издат, 2005, с. 321.

արտադրաֆինանսական լծակի էֆեկտ:

Զուտ շահույթի մեծության վրա կարող է ազդել արտադրական լծակը՝ փոփոխուն և հաստատուն ծախսերի հարաբերակցության ճանապարհով, իսկ ֆինանսական լծակի ազդեցության ուժը պայմանավորված է փոխառու և սեփական կապիտալի հարաբերակցությամբ: Հետևաբար, արտադրական լծակը շահույթի վրա ազդեցության պոտենցիալ հնարավորությունն է՝ թողարկման ինքնարժեքի փոփոխության և ծավալի աճի միջոցով: Ֆինանսական լծակը շահույթի վրա ազդեցության պոտենցիալ հնարավորությունն է՝ կազմակերպության կապիտալի կառուցվածքի փոփոխության և թողարկման ծավալի աճի ճանապարհով: Բնականաբար, եթե տեղի ունենա թողարկման ծավալի աճ, ապա միաժամանակ կգործեն վերոհիշյալ երկու լծակները, և կարտահայտվի արտադրաֆինանսական լծակի (ԱՖԼ) էֆեկտը կազմակերպության շահույթի վրա.

ԱՖԼ = արտադրական լծակի էֆեկտ x ֆինանսական լծակի էֆեկտ =

$$\frac{\textbf{գործառնական շահույթի աճի տեմպ}}{\textbf{թողարկված արտադրանքի աճի տեմպ}} \times \frac{\textbf{զուտ շահույթի աճի տեմպ}}{\textbf{գործառնական շահույթի աճի տեմպ}}$$

Փաստորեն, որքան մեծ է ֆինանսական լծակի մակարդակը, այնքան բարձր է զուտ շահույթի փոփոխման զգայունությունը գործառնական շահույթի փոփոխման նկատմամբ: Ֆինանսական լծակի մակարդակը պայմանավորվում է փոխառու և սեփական կապիտալի հարաբերակցությամբ: Հետևաբար, կազմակերպության համար այն ձևավորում է նաև ֆինանսական ռիսկ: Ֆինանսական ռիսկը պայմանավորվում է արտադրական ոչ լիարժեք ծավալների ապահովման դեպքում երկարաժամկետ փոխառությունների, այդ թվում վարձավճարների գծով կազմակերպության պարտավորությունների մարման անկարողությամբ: Սակայն, մյուս կողմից, բարձր ֆինանսական լծակի մակարդակ ունեցող կազմակերպությունը արտադրական ծավալների աճով կապահովի զուտ շահույթի առավել աճ՝ թույլ ֆինանսական լծակ ունեցող կազմակերպության համեմատ[187]:

[187] Տես Բայադյան Ա. «Ֆինանսական վերլուծություն» Եր., Լիմուշ, 2009թ., էջ 165-168:

Որպես կանոն, բարձր մակարդակի արտադրական լծակ ունեցող կազմակերպությունները խոսափում են բարձր մակարդակի ֆինանսական լծակ ձևավորելուց, քանի որ արդեն իսկ գտնվում են արտադրական ռիսկային գոտում և չեն ցանկանում ձեռք բերել նաև լրացուցիչ ֆինանսական ռիսկեր: Նույն տրամաբանությամբ, ֆինանսական ռիսկային գոտում գտնվող կազմակերպությունը, որին հատուկ է ֆինանսական լծակի բարձր մակարդակը, չի ձգտի լրացուցիչ արտադրական ռիսկի և գործառնական լծակի մակարդակի բարձրացման:[188]

Հետևաբար, հաստատուն ծախսերի բարձր տեսակարար կշռի առկայության դեպքում կազմակերպությունը չի բարձրացնի կապիտալի կառուցվածքում փոխառու կապիտալի տեսակարար կշիռը: Անհրաժեշտ չափով չթողարկելու և իրացում չապահովելու պարագայում ոչ միայն հնարավորություն չի ստեղծվի հաստատուն ծախսերի կլանման և ծախսածածկման ապահովման համար, այլև չեն փոխհատուցվի փոխառու կապիտալին առնչվող տոկոսային ծախսերը, և կազմակերպությունը կհայտնվի ծանր ֆինանսական դրության մեջ: Ոատի արտադրաֆինանսական լծակի էֆեկտը հակակշռում է կազմակերպության արտադրական և ֆինանսական ռիսկերը՝ կապված թողարկման և իրացման անհրաժեշտ ծավալների ապահովման հետ:

Կազմակերպությունը, վարձակալված ակտիվներով կրկնապատկելով արտադրանքի թողարկման ծավալը և լիզինգի երկարաժամկետ պարտավորությունների տոկոսային ծախսերը, ունենալով հաստատուն ծախսերի բարձր տեսակար կշիռ՝ կձևավորի գործառնական և ֆինանսական լծակի էֆեկտ՝ հետևյալ կտրվածքով.[189]

(հազ. դրամ)

Ցուցանիշներ	Մինչև վարձակալելը	Վարձակալության դեպքում
Արտադրանքի թողարկման ծավալը	200	400
Թողարկման ինքնարժեքը	150	190
Գործառնական շահույթ	50	210
Լիզինգի պարտավորությունների տոկոսագումար	10	20
Շահույթ	40	190

[188] В. Ковалев, Финасовый анализ: методы и процедуры, М., Финансы и статистика, 2001, с. 358.

[189] О. Ефимова, Анализ финансовой отчетности, М., Омега, 2004, с. 255.

Գործառնական լծակի էֆեկտ = [(210 -50)/50] : [(400 – 200)/ 200 = 3.2
Ֆինանսական լծակի էֆեկտ = [(190 – 40)/40] : [(210 -50)/50] = 1,17
Ընդհանուր (արտադրաֆինանսական) լծակ = [(190 – 40)/40] = 3.2 x 1.17 = 3.75

Երկարաժամկետ պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության օպտիմալացման շուրջ գրականությունում առկա են տարբեր մոտեցումներ: Կապիտալի կառուցվածքի գնահատման ավանդական տեսությամբ՝ սեփական կապիտալի ձեռք բերման արժեքը գերազանցում է փոխառու կապիտալի ձեռք բերման արժեքը, ոատի երկարաժամկետ փոխառությունների ընդլայնմամբ նվազում է կապիտալի միջին կշռված գինը:[190]

Գրականությունում առաջարկվում է նաև կապիտալի կառուցվածքի ձևավորման փոխհամաձայնային տարբերակ, որի հիմքում միմյանց հակազդող գործոններ են՝ կապիտալի օգտագործման արդյունավետությունն ու ֆինանսական ռիսկը: Փոխհամաձայնային տարբերակի կիրառման դեպքում նշվում են մի շարք նախապայմաններ.[191]

- շահութահարկի դրույքաչափն ընդգրկվում է կապիտալի կառուցվածքի օպտիմալացման հաշվարկներում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկային գործոնը տարաբնույթ ազդեցություն է գործում կապիտալի կառուցվածքը ձևավորող բաղադրիչների վրա (երկարաժամկետ փոխառությունների տոկոսային ծախսերը շահութահարկը հաշվարկելիս դիտվում են որպես համախառն եկամտից նվազեցումներ, իսկ սեփական կապիտալով պայմանավորված շահաբաժինները չեն հարկվում),
- կապիտալի կառուցվածքի ձևավորման դեպքում հաշվի են առնվում կազմակերպության ինքնավարության ապահովման գործոնը և սնանկացման վտանգի աստիճանը, որոնցով հակազդեցություն է ցուցաբերվում երկարաժամկետ փոխառությունների ընդլայնման նկատմամբ,

[190] И. Балабанов, Финансовый анализ и планирование хозяйствующего обьекта, М., Техническая книга, 2001, с. 241.
[191] Л. Гапенски, Финансовый менеджмент, С-Пб, Санкт-Петербургский университет финансов, 2001, с. 304.

- արտաքին աղբյուրներից ձևավորվող կապիտալի բաղադրիչների գծով հաշվի են առնվում ոչ միայն փոխառությունների տոկոսային պարտավորությունները, այլև գործարքների կատարման գործառնական ծախսերը:

Լիզինգի դեպքում առաջարկում ենք վարձակալի կապիտալի կառուցվածքում փոխհամաձայնային մոդելի զարգացում հետևյալ ուղղություններով: Նախ՝ փոխառու կապիտալի չափաբաժինը որոշելիս անպայման գործառնական և ֆինանսական լծակները պետք է փոխկապակցվեն այնպես, որ գործառնական շահույթը մշտապես գերազանցի ֆինանսական շահույթը: Տվյալ իրավիճակում կազմակերպությունը զգալիորեն կմեղմի երկարաժամկետ փոխառությունների ընդլայնման հետևանքով՝ ֆինանսական լարվածության ռիսկերը: Երկրորդ՝ կապիտալի միջին կշռված գնի նվազեցման նպատակով երկարաժամկետ փոխառությունների ընդլայնումը պետք է իրականացվի այնպես, որ վարկերի գծով տոկոսային ծախսերը գերազանցեն սեփական կապիտալը սպասարկող վճարվող շահաբաժինները:

Ֆինանսական կայունության և լիզինգի արդյունքների փոխազդեցության գնահատումը տեսության մեջ առաջարկվում է քննարկել ոչ միայն երկարաժամկետ, այլև կարճաժամկետ կտրվածքով, նպատակ ունենալով պարզելու, թե ինչպես են միմյանց հակակշռում վարձակալության կարճաժամկետ պարտավորությունների ձևավորման վարքագիծն ու շրջանառու կապիտալի օգտագործման արդյունավետությունը, կազմակերպության ընթացիկ իրացվելիության ապահովման պահանջները և ընթացիկ պարտավորությունների նվազագույն ու առավելագույն սահմանները, դրամական միջոցներով տնտեսական գործունեության ապահովումն ու պարտավորությունների թույլատրելի չափաբաժնի սահմանումը:[192]

Վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորությունների վերլուծության հիմքում, կարծում ենք, պետք է դրսևորվի համալիր մոտեցում՝ հնարավորինս հաշվի առնելով կազմակերպության հաշվեկշռի իրացվելիության, կապիտալի արդյունավետ օգտագործման, հարկային բեռի թեթևացման, ինչպես նաև դրամական հոսքերի նպատակային կառավարման ոլորտները: Նման խնդրի լուծումը պահանջում է միմյանց հակակշռող գործոնների ազդեցության վերլուծության իրականացում:

[192] Чекмарева Е.Н., Лизинговый бизнес, М., Экономика, 2004, с. 76.

Կապիտալի շրջապտույտի արագացման և ներգրավված դրամական միջոցների լրացուցիչ կրճատման նպատակով կազմակերպություններն անընդհատ ձգտում են կարճաժամկետ պարտավորությունների աճի, որը հակազդում է հաշվեկշռի իրացվելիության պահանջին, քանի որ կարճաժամկետ պարտավորությունների կտրուկ աճը հանգեցնում է սնանկացման բարձր ռիսկերի:[193]

Կարճաժամկետ պարտավորությունների աճի շարժառիթ է նաև հարկային գործոնը, քանի որ տոկոսային ծախսերը համարվում են համախառն եկամտից նվազեցումներ և որոշ չափով մեղմում են կազմակերպության հարկային պարտավորությունները շահութահարկի գծով: Դեբիտորական պարտքերի նկատմամբ կարճաժամկետ պարտավորությունների աճը կազմակերպություններին հնարավորություն է ընձեռում ճկուն կառավարելու դրամական հոսքերը: Ուստի արդիական է պարտավորությունների ճիշտ գնահատումը հաշվապահական հաշվեկշռում:

Հետևաբար, լիզինգի գծով կարճաժամկետ պարտավորությունների ֆինանսական վերահսկողության մեխանիզմը առաջին հերթին նպատակ է հետապնդում կազմակերպությունների մակարդակով հակակշիռներ ձևավորելու տնտեսական շահ հետապնդող ձեռներեցության և ֆինանսական կայունության միջև[194]:

Մասնագիտական գրականության մեջ վարձակալության ներգործության գնահատումը կազմակերպության ֆինանսական արդյունքների վրա առաջարկվում է իրականացնել իրավիճակային վերլուծության գործակիցների չորս համախմբով. գործարար ակտիվություն, ակտիվների իրացվելիություն, ինքնավարություն, վճարունակություն:[195] Իրավիճակային վերլուծության առավել ցայտուն առավելություններից են կիրառման պարզությունը և ֆինանսական դաշտում լայնածավալ համեմատությունների անցկացումը: Ստանդարտ ֆինանսական գործակիցներով, որոնք հեշտ հաշվարկելի են, անմիջապես հնարավորություն է ստեղծվում համեմատություններ կատարելու ոչ միայն սահմանված նորմատիվային մեծությունների,

[193] Кондраков Н., Основы финасового анализа, М., Главбух, 2001, с. 103.

[194] Steven M. Bragg "The Ultimate Accountants's reference, including GAAP, IRS & SEC Regulations, Leases and More" Wiley, USA, 2010, p. 282.

[195] Виленский П.Л., Оценка эффективности инвестиционных проектов. Теория и практика, М., Дело, 2001, с.104.

այլև մրցակից կազմակերպությունների ֆինանսական գործակիցների միջև՝ դրանով իսկ ախտորոշելու վերլուծվող կազմակերպության ֆինանսական կայունության սպառնալիքները և մրցակցային դիրքերը[196]:

Այդուհանդերձ, ստանդարտ ֆինանսական գործակիցներն ու դրանց նորմատիվային մեծությունները, որպես վերլուծության գործիքներ, ունեն որոշակի թերություններ: Այսպես՝ շուկայում կազմակերպությունների մրցակցային դիրքերի վերաբաշխումը ստիպում է պարբերաբար վերանայելու սահմանված նորմատիվները, և մի քանի տարվա կտրվածքով հաշվարկված գործակիցներն անհամադրելի են դառնում անփոփոխ մնացած միևնույն նորմատիվային մեծության նկատմամբ: Բացի դրանից, ֆինանսական գործակիցների գծով սահմանված նորմատիվները էականորեն տատանվում են գործարարության տարբեր ոլորտներում՝ կապված ռեսուրսների ձեռք բերման, շուկայում մրցակցային պայմանների, դրամական հոսքերի կառավարման առանձնահատկություններին: Ուստի շատ հաճախ տարբեր ճյուղերում գործող կազմակերպությունների ֆինանսական գործակիցների համեմատումները տնտեսագիտորեն դառնում են անիմաստ:

Մասնագիտական գրականությունում նշվում են նաև մի շարք պատճառներ, որոնց առկայությամբ ֆինանսական գործակիցներով համեմատումների արդյունքները կարող են հիմնավոր չհամարվել: Համեմատվող կազմակերպությունները կարող են արտադրության տարբեր ոլորտների պատկանել՝ թողարկելով տարաբնույթ արտադրատեսակներ: Դա կարող է պատճառ հանդիսանալ համախառն շահույթի տարբեր մակարդակների ձևավորման համար: Մի խումբ կազմակերպություններ կարող են գործարարության բարձր ռիսկ ունենալ ու տիրապետել շուկայի նպաստավոր դիրքերի, և ընդհակառակը:[197]

Քանի որ համեմատվող կազմակերպություններում հաշվապահական հաշվառման քաղաքականությունը ոչ միշտ է բացահայտվում, ապա հաճախ դժվար է պատկերացում կազմել ձևավորվող համախառն շահույթի համադրելիության մասին: Օրինակ՝ եթե չի ներկա-

[196] Виленский П.Л., Оценка эффективности инвестиционных проектов. Теория и практика, М., Дело, 2001, с.104.

[197] Касатонов В.Ю, Морозов Д.С., Проектное финансирование: организация, управление риском, страхование, М., Анкил, 2001, с. 77.

յացվում հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ապա հայտնի չէ, թե ամորտիզացման ինչ եղանակ է կիրառում վարձակալը (հավասարաչափ, արագացված): Նույնը կարելի է փաստել պաշարների գծով, որոնց ծախսի գնահատման եղանակները (FIFO, միջին և այլն) հայտնի չեն:

Հետևաբար, համեմատական գործակիցներով կատարված վերլուծությունը լիարժեքորեն չի արտացոլում կազմակերպությունների ֆինանսական դրությունը: Այս առումով կան մի շարք հանգամանքներ, որոնք վերլուծության ժամանակ պարտադիր բացահայտման կարիք ունեն.[198]

- ոչ ընթացիկ ակտիվների կառուցվածքը, շարժը և ամորտիզացման քաղաքականությունը,
- հետհաշվեկշռային իրադարձությունների նկարագիրը,
- անուղղակի ծախսերի կառուցվածքը, ինչպիսիք են՝ վարչական, տոկոսային, կոմերցիոն ծախսերը,
- պաշարների կառուցվածքը և դրանց իրացման զուտ արժեքը,
- գործունեության սեզոնայնությունը, որը մեծապես ազդում է դեբիտորական և կրեդիտորական պարտքերի ձևավորման վրա,
- երկարաժամկետ և կարճաժամկետ պարտավորությունների կառուցվածքը (վարկերի տոկոսագումարներ, վարձակալական պարտավորություններ),
- մի քանի տարիների հարաբերական ցուցանիշների դինամիկան, որով հնարավոր կլիներ բացահայտել ֆինանսական առողջացման կամ վատթարացման միտումները:

Գրականության մեջ փաստարկներ են բերվում՝ հօգուտ կազմակերպությունների ֆինանսական դրության գործոնային վերլուծության՝ այն առումով, որ ֆինանսական գործակիցներն ախտորոշում են իրավիճակը և արձանագրում, թե « ինչ է եղել», սակայն չեն բացահայտում այն հանգամանքները, թե «ինչու է եղել», որը չափազանց կարևոր է կառավարչական որոշումների իրականացման համար:[199]

[198] Негашев Е., Методика финансового анализа деятельности коммерческих организаций, М,. Инфра-М, 2004, с.207-208.
[199] Вахрин П.И., Инвестиции, учебник, М., Финансы, 2002, с. 57.

Հաճախ իրավիճակային վերլուծությամբ դժվար է ընդհանուր գնահատական տալ կազմակերպության ֆինանսական դրության վերաբերյալ, քանի որ մի խումբ գործակիցների գծով կարող են ձևավորվել դրական արդյունքներ (օրինակ՝ հաշվեկշռի իրացվելիություն), իսկ մեկ այլ խումբ գործակիցներ միաժամանակ կարող են ներկայացնել ֆինանսական կայունության թուլացում (օրինակ՝ ինքնավարություն, շահութաբերություն և այլն)[200]:

Համակարծիք ենք գրականության մեջ առկա այն առաջարկին՝ համաձայն որի ֆինանսական կայունության գնահատման դեպքում թվարկված հիմնախնդիրների լուծման ուղի է իրավիճակային և գործոնային վերլուծության գործիքների փոխկապակցումը:[201]

Առաջին՝ ֆինանսական գործակիցների համակազմը անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե տարանջատված, այլ փոխկապակցված և համակարգված բիզնես ռիսկերի, ֆինանսական դրության կայունության սահմանափակ ռեսուրսների, դրամական հոսքերի թույլատրելի շրջանակների հետ: Նման համակարգումը հնարավորություն կտա ոչ միայն ձևավորելու պարտավորությունների շրջանակը՝ ի նպաստ ֆինանսական կայունության ապահովման, այլև հաշվի առնելու գործարար ակտիվության շահերը՝ կրեդիտորական և դեբիտորական պարտավորությունների թույլատրելի շրջանակները սահմանելիս:

Երկրորդ՝ ֆինանսական կայունության վերլուծության մեթոդաբանությունն անհրաժեշտ է կառուցել հակակշռող համակարգի հենքով՝ հնարավորինս համալիր կարգով հաշվի առնելով տնտեսական գործունեության՝ միմյանց հակազդող բազմաբնույթ գործոնները և դրանց առնչվող սահմանափակումները: Վարձակալության պարտավորությունների աճի կամ նվազման ցանկացած շարժառիթ պետք է զուգակցվի դրան հակասող մեկ այլ գործոնի ներգրավմամբ, որպեսզի սահմանվեն հակակշիռներ՝ ի նպաստ կազմակերպության գործարարության տարբեր բնագավառների ներդաշնակեցման:

Երրորդ՝ ֆինանսական կայունության գնահատման համակար-

[200] Տես Шеремет А.Д., Сайфулин Р.С., Негашев Е.В. Методика финансового анализа", М. Инфра-М, 2000, с. 211,
[201] Ճուղուրյան Ա., Հաշվապահական հաշվառում, Եր., «Վան Արյան», 2009թ., էջ 839:

գում պարտավորությունների գնահատման համակարգը պետք է լինի բաց՝ ապահովելու համար արագ արձագանքման ճկունություն շուկայի մրցակցային պայմանների փոփոխման նկատմամբ: Բաց համակարգն անհրաժեշտ է կառուցել այնպես, որ գործարարության միջավայրի փոփոխման դեպքում արագորեն վերանայվեն թե նրանում ընդգրկված սահմանափակող գործոնների համակազմը և թե ֆինանսական կայունություն ապահովող ներուժը:

Այսպիսով՝ ֆինանսական կայունության և լիզինգի արդյունքների փոխազդեցության գնահատման մեխանիզմը պետք է տարբեր մոտեցումներով իրականացվի վարձատուի և վարձակալի համար՝ զուգահեռաբար հաշվի առնելով այնպիսի ընդհանուր սկզբունքներ, ինչպիսիք են՝

- ֆինանսական կայունության գնահատումը՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով,
- ֆինանսական կայունության և գործարար ակտիվության փոփոխվող մակարդակների հավասարակշռության սահմանումը,
- միմյանց հակազդող բազմաբնույթ տնտեսական գործոնների և դրանց առնչվող սահմանափակումների վերլուծությունը:

Ֆինանսական կայունության և լիզինգի արդյունքների փոխազդեցության գնահատման առաջարկվող մեխանիզմը ներկայացված է գծապատկեր 5.3-ով:

Առաջնորդվելով կազմակերպությունների ֆինանսական կայունության և լիզինգի արդյունքների փոխազդեցության գնահատման վերոնշյալ սկզբունքներով՝ առաջարկում ենք վարձակալության պարտավորությունների աճի կամ նվազման ցանկացած շարժառիթ համադրել մեկ այլ հակազդող գործոնի: Նման մոտեցմամբ կներկայացվեն ակտիվի շահագործման արդյունքների և կազմակերպության ֆինանսական դրության ցուցանիշների այն սահմանները, որոնց շրջանակներում իրականացվող վարձակալությունը միաժամանակ ապահովում է ինչպես բարձր արդյունավետություն, այնպես էլ ծրագրի կատարման անխափանություն և թույլատրելի ֆինանսական մակարդակի կայունություն:

Գծապատկեր 5.3

Ֆինանսական կայունության և լիզինգի արդյունքների փոխազդեցության գնահատման առաջարկվող մեխանիզմը

Ֆինանսական վարձակալության երկարաժամկետ պարտավորությունների ընդունելի սահմանների որոշման նպատակով առաջարկում ենք հետևյալ առաջնահերթ պայմանները.

Վարձատուի մոտ

լիզինգի կազմակերպման տնտեսական նպատակահարմարության նկատառումով՝ վարձատուի ֆինանսական ներդրման տոկոսային եկամուտը համարժեք գումարի չափով պետք է գերազանցի ավանդի ներդրումից ակնկալվող տոկոսային եկամուտը.

$$\text{լիզինգի առարկայի արժեք (W)} \times \%_{\text{վարկ}} < \text{ներգրավված փոխառություններ (Z)} \times \%_{\text{դեպ}}$$

որտեղ՝ $\%_{\text{վարկ}}$ – վարկային փոխառության տոկոսադրույքը,
$\%_{\text{դեպ}}$ - բանկային ավանդի տոկոսադրույքը

ինքնավարության ապահովման համար վարձատուի կողմից լիզինգի ֆինանսավորման նպատակով ներգրավված միջոցների գծով երկարաժամկետ պարտավորությունները չպետք է գերազանցեն պասիվների 50%-ի շեմը.

$$\text{ներգրավված փոխառություններ (Z) : պասիվներ (H)} < 0.5$$

Այսպիսով՝ պարտավորությունների մասով վարձատուն իր ֆինանսական կայունության ապահովման սահմանները կարտացոլի հետևյալ կերպ.

$$\begin{cases} Z > (W \times \%_{\text{վարկ}}) / \%_{\text{դեպ}} \\ Z < 0.5 \times H \end{cases} \qquad (5.10)$$

Հետևաբար, վարձակալի մոտ երկարաժամկետ ֆինանսական կայունության ապահովման նպատակով ստացվելիք գումարների և բանկային պարտավորությունների ձևավորումը առաջարկում ենք ներկայացնել (5.10) անհավասարությունների համակարգով՝ հակակշիռ գործոններով թելադրվող սահմաններով.



Վարձատուի կարճաժամկետ ֆինանսական կայունության ապահովման գործում էական դեր են խաղում վարձավճարների գծով կարճաժամկետ դեբիտորական պարտքերի ժամկետայնությունն ու ընթացիկ ակտիվների իրացվելիությունը.

վարձատուի մոտ ձևավորվող կարճաժամկետ դեբիտորական պարտքերը (D) պետք է ունենան մարման կարճաժամկետ բնույթ (մինչև 90 օր)՝ ժամանակին ապահովելով դրամական ներհոսքեր.

$$\text{վարձավճարների ներհոսքեր(Q) / կարճաժամկետ դեբիտորական պարտքեր(D)} \times 360 < 90$$

վարձատուի մոտ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի մակարդակը պետք է ապահովի ընթացիկ ակտիվների իրացվելիության թույլատրելի աստիճան, ձևավորի կանխիկ դրամի բարձր հավաքագրելիություն՝ չգերազանցելով ընթացիկ պարտավորությունների (CL) 70%-ը.

$$\text{կարճաժամկետ դեբիտորական պարտքեր(D) / CL} < 0.7$$

Կարճաժամկետ դեբիտորական պարտքերի մասով վարձատուն իր ֆինանսական կայունության ապահովման սահմանները կներկայացնի հետևյալ կերպ.

$$\begin{cases} D > 90Q/360 \\ D < 0.7\ CL \end{cases} \qquad (5.11)$$

որտեղ հակակշիռ գործոնները կներազդեն հետևյալ ուղղություններով.



Վարձակալի մոտ

լիզինգի կազմակերպման տնտեսական նպատակահարմարությունը վարձակալը գնահատում է ֆինանսական լծակի ազդեցության ուժով՝ պայմանավորված փոխառու և սեփական կապիտալի հարաբերակցությամբ, երբ սեփական կապիտալի ձեռք բերման արժեքը, գերազանցելով փոխառու կապիտալինը, շահույթի վրա ազդեցության հնարավորություն է ստեղծում կազմակերպության կապիտալի կառուցվածքի փոփոխությամբ և թողարկման ծավալի աճով.

լիզինգի երկարաժամկետ փոխառության ծախսեր ($Zx\%_{վարկ}$) < սեփական կապիտալի շահաբաժիններ (K%)

ֆինանսական լծակի ներգործության ազդեցիկության նպատակով լիզինգի տոկոսային ծախսերն առնվազն պետք է կազմեն գործառնական շահույթի (OP) 10%-ը, որի արդյունքում թողարկման ծավալի հավելաճը կապահովի զուտ շահույթի կտրուկ ավելացում.

լիզինգի երկարաժամկետ փոխառության ծախսեր (Zx%վարկ) / գործառնական շահույթ (OP) > 0.1

Երկարաժամկետ պարտավորությունների մասով վարձակալը իր ֆինանսական կայունության ապահովման սահմանները կներկայացնի հետևյալ կերպ.

$$\begin{cases} Zx\%_{վարկ} < K\% \\ Zx\%_{վարկ} > 0.1 \times OP \end{cases} \qquad (5.12)$$

որտեղ ներկայացվող հակակշիռ գործոնները կներազդեն նշված ուղղություններով.

Երկարաժամկետ պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցության օպտիմալացման առաջարկվող մեխանիզմը ճկուն է և հնարավորություն ունի արագ արձագանքելու գործարարության թե արտաքին և թե ներքին միջավայրի փոփոխություններին: Նախ՝ առաջարկվող սահմանափակումների շրջանակը բաց է և կարող է ընդլայնվել՝ հաշվի առնելով փոխառությունների ներգրավման լրացուցիչ գործոնները: Այսպես՝ կազմակերպության ինքնավարությունը ներկայացնող ավանդական ցուցանիշը՝ երկարաժամկետ փոխառություն/հաշվեկշռի հանրագումար հարաբերությունը, որը գրականությունում առաջարկվում է առավելագույնը 0,3 մակարդակով[202] (Z/K < 0,3), ըստ անհրաժեշտության կարող է ընդգրկվել առաջարկվող սահմանափակումների համակարգում՝ լրացուցիչ ճշգրտում մտցնելով երկարաժամկետ լիզինգային պարտավորությունների մեջ.

$$\begin{cases} Zx\%_{վարկ} < K\% \\ Zx\%_{վարկ} > 0.1 \times OP \\ Z < 0.3 \times K \end{cases} \qquad (5.13)$$

Հետևաբար, երկարաժամկետ վարձակալության պարտավորությունների նվազագույն և առավելագույն սահմանների որոշման առաջարկվող մեխանիզմը, վարկային պարտավորությունների սպասարկման պայմաններից բացի, հնարավորինս հաշվի է առնում նաև հարկային, շահութաբերության, ինքնարժեքի ձևավորման գործոնները, որոնք դինամիկ փոփոխությունների մեջ են և պետք է համալիր սկզբունքով նկատի առնվեն ու ընդգրկվեն կապիտալի կազմի օպտիմալացման հաշվարկներում:

Վարձակալի կարճաժամկետ ֆինանսական կայունության ապահովման գործում էական է վարձավճարների գծով կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի մարման արագությունն ու ընթացիկ վճարունակությունը.

վարձակալի մոտ ձևավորվող կարճաժամկետ կրեդիտորական պարտքերը (CL) պետք է ունենան մարման

[202] Ա. Կոստանդինով, Գլուխներ ... Մ., Էքսմո, 2006, էջ 79

դանդաղընթաց բնույթ (120 օրից ոչ պակաս) և դրանով իսկ՝ որոշակիորեն մեղմեն ֆինանսական լարվածությունը.

վարձավճարների արտահոսքեր (V) / կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր (CL) / Z x 360 > 120

վարձակալի մոտ կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի մակարդակը պետք է ձևավորի ընթացիկ վճարունակության թույլատրելի աստիճան՝ ապահովելով կանխիկ դրամի մնացորդի (CA) առկայության անհրաժեշտ մակարդակ և չգերազանցելով վերջինիս 40%-ը.

կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր (CL) /կանխիկ դրամի մնացորդ (CA) < 0.4

Կարճաժամկետ դեբիտորական պարտքերի մասով վարձատուն իր ֆինանսական կայունության ապահովման սահմանները կներկայացնի հետևյալ կերպ.

$$\begin{cases} CL > Zx120/360 \\ CL < 0.4xCA \end{cases} \qquad (5.14)$$

որտեղ հակակշիռ գործոնները կներազդեն նշված ուղղություններով.



Կարճաժամկետ պարտավորությունների կառավարման առաջարկվող մեխանիզմը բացի նրանից, որ հնարավորինս համալիր շրջանակում հաշվի է առնում վարձակալ կազմակերպության ֆինանսական կայունության ապահովման, կապիտալի օգտագործման արդյունավետության և հարկային բեռի պլանավորման գործոնները, նաև ճկուն է և ունակ՝ մրցակցային միջավայրին արագ արձագանքելու: Հարկային դրույքաչափերի, ինքնարժեքի մեծության փոփոխությունը, ապառիկ վաճառքի պայմանների վերանայումը կարող են անմիջապես ճշգրտումներ մտցնել անհավասարությունների համակարգում:

5.3 Վարձակալության միկրոտնտեսական արդյունավետության վերլուծության բարելավման ուղիները

Ֆինանսական վարձակալության նպատակահարմարությունն առաջին հերթին բնորոշվում է տվյալ ոլորտի գործարարության արդյունավետությամբ: Արդյունավետության գնահատման չափանիշները միկրոտնտեսական գործնական միջավայրում բազմազան են, սակայն, ի վերջո, բերվում են ընդհանուր հայտարարի՝ համադրելով տնտեսական կոնկրետ գործունեության ծախսերը և դրանցից բխող արդյունքները: Եվ քանի որ ֆինանսական ներդրումային ծրագրերն ուղեկցվում են բազմաբնույթ ծախսերով և տնտեսական հետևանքներով, որոնք ոչ միշտ են հեշտությամբ և ճշգրտորեն գնահատվում, ապա, որպես կանոն, բարդանում է նման ծրագրերի արդյունավետության վերլուծության գործընթացը:

Ֆինանսական կառավարման ոլորտում ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատումը հիմնվում է մի շարք կարևորագույն սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ ամբողջականությունը (ծրագրին առնչվող դրամական, ապրանքանյութական գնահատումների համադրում), համալիրությունը (ծրագրից բխող տնտեսական արդյունքների շղթայական գնահատում միկրո, մեզո և մակրո հաջորդական մակարդակներով), սահմանային արդյունքը (ծրագրի հետագա զարգացման ծախսերից՝ դրական արդյունքների առաջանցիկություն)[203]:

Գործնականում կիրառվում են ֆինանսական ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատման առավել պարզեցված մոտեցումներ, որոնցից է «նվազագույն ծախսերի» մեթոդը: Համաձայն գնահատման այս մեթոդի՝ ներդրումային ծրագրի արդյունավետությունը որոշվում է այլընտրանքային մեկ այլ ծրագրի իրականացման ծախսերի համեմատման ճանապարհով: Լիզինգի դեպքում դրա առավել ցայտուն օրինակը «գնե՞լ, թե՞ վարձակալել» որոշման կայացումն է (տե՛ս պարագրաֆ 5.1):

Ֆինանսական ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատման պարզեցված մոտեցում է նաև կապիտալ ծախսերի հետգնման ժամկետի որոշումը: Ընդ որում, հետգնման ժամկետը որոշվում է՝ ելնելով ներդրման արդյունքում ձևավորվող զուտ

[203] Jeffrey Taylor "The future of equipment leasing", Executive Caliber, 2006, p. 69.

շահույթից, որի բարձր մակարդակը, կրճատելով ծախսերի հետգնման ժամանակահատվածը, ներդրումային ծրագիրը դարձնում է արդյունավետ: Եթե հետգնման ժամկետը ինչ-որ չափով հեշտ հաշվարկելի է, այնուամենայնիվ, մի շարք պատճառներով լայն տարածում չի գտնում ֆինասական ծրագրերի արդյունավետությունը գնահատելիս: Նախ՝ այն հաշվի չի առնում նեդրումային գործընթացի դինամիկան՝ ծախսերի հետգնմանը հաջորդող ժամանակաշրջանում: Բացի դրանից, ծախսերի կարճաժամկետ հետգնման միտումը, որպես կանոն, անարդյունավետ է, տնտեսագիտական տեսանկյունից ոչ միշտ արդարացված գիտատար և մեծածավալ ծրագրերի համար:[204]

Ֆինանսական ներդրումների արդյունավետության գնահատման պարզ հաշվարկներից գործնականում առավել տարածված է գործարար ակտիվության գործակիցների կիրառումը, որտեղ հաշվի է առնվում ծրագրերի ծախսահատույցը՝ ըստ ձևավորվող տարեկան շահույթի, հետևյալ ցուցանիշներով.

համախառն շահույթ (շահույթ մինչև հարկումը/ներդրումային ծախսեր),

զուտ շահույթ/ներդրումային ծախսեր:

Սակայն, գրականության մեջ նշվում են ֆինանսական գործակիցներով ներդրումային ծրագրերի արդյունավետության գնահատման թերությունները, որոնցից են՝ համեմատման նպատակով լավագույն տարվա ընտրության բարդությունը, ինչպես նաև տարբանույթ գործոնների (ժամանակագրական, հարկային, տոկոսային) ազդեցության որոշման անհնարինությունը արդյունավետությունը գնահատելիս:[205]

Միևնույն ժամանակ, գրականության մեջ առաջարկվում են մաթեմատիկական եղանակներ՝ դիսկոնտավորումը, քմփաուսթինգը, շահութաբերության ներքին նորմայի կիրառումը[206], որոնց միջոցով ֆինանսական ներդրման արդյունավետությունը գնահատելիս հաշվի են առնվում ժամանակի գործոնը, բանկային տոկոսադրույքը, սղաձը,

[204] Стеценко И., Филипп Данн, Управление финансами фирмы, Рига, ABC Balt, 2005, с. 208-209.

[205] М. Янушка, Методика анализа финансово-экономического состояния фирмы, Рига, Инновация, 2002, с. 92.

[206] Хелферт Э., Техника финансового анализа, Санкт-Петербург, Питер, 2003, с. 158-164.

կորուստների ռիսկայնության աստիճանը:

Ֆինանսական ներդրման արդյունավետության գնահատման չափանիշ է զուտ ներկա արժեքը (NPV), որի հիմքում է ապագա դրամական հոսքերի զեղչումը: Մասնագիտական գրականության մեջ ընդգծվում են այս ցուցանիշին բնորոշ առավելությունները.[207]

1. հաշվի է առնվում ներդրման ծավալը, որով հնարավորություն է ընձեռվում ֆինանսական սուղ միջոցների դեպքում իրականացնել այլընտրանքային ներդրումային ծրագրերի համեմատական վերլուծություն,
2. դրամական հոսքերի վերլուծության ժամանակ հաշվի են առնվում հարկային արտոնությունների, ամորտիզացոն քաղաքականության ազդեցության գործոնները,
3. արդյունավետության գնահատման հաշվարկներում ցուցաբերվում է ճկուն մոտեցում՝ դրամական հոսքերի զեղչման ժամանակ հաշվի առնելով տարբեր պարամետրերի փոփոխությունները ծրագրի իրագործման ողջ ժամանակահատվածում:

Հիմնվելով դրամական հոսքերի զեղչման մոտեցման վրա՝ մասնագիտական գրականությունում առաջարկվում է նաև լիզինգի արդյունավետությունը գնահատել վարկավորման ծրագրերի հետ համեմատման դաշտում: Ելնելով այն հանգամանքից, որ տնտեսագիտական տեսանկյունից ֆինանսական վարձակալությունը համահունչ է վարկային փոխառությունների ձեռք բերմանը, ապա հնարավոր է լիզինգի արդյունավետությունը գնահատել՝ հաշվի առնելով հարկային արտոնությունները, ակտիվի շահագործման ծախսերի կրճատումը, արագացված ամորտիզացման քաղաքականությունը, ակտիվի մոնտաժման ծախսերի տնտեսումը, գույքահարկի բացակայությունը և այլն:[208]

Այսպես՝ վարկային միջոցներով կամ վարձակալությամբ ակտիվ ձեռք բերելիս դրամական արտահոսքերի զուտ ներկա արժեքը

[207] Рафиков С. А, Методика оценки эффективности применения лизингового финансирования для приобретения основных средств по сравнению с кредитным финансированием, Вестник Российской Ассоциации лизинговых компаний. 2001, #1-2, с. 61.

[208] Лапыгин Ю.Н.,Сокольских Е.В., Лизинг, М., Академический Проект, 2005, с. 396.

հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$NPV_{լ} = \frac{AC}{(1+E)^{i_{լ}}}, \quad (5.16) \qquad NPV_{վ} = \frac{AC}{(1+E)^{i_{վ}}} \quad (5.17)$$

որտեղ.՝

AC - ակտիվի սկզբնական արժեքը,

E - զեղչման դրույքաչափը,

$i_{լ}$ - վարձակալած ակտիվի մուտքագրման ժամանակաշրջանը,

$i_{վ}$ - վարկով գնված ակտիվի մուտքագրման ժամանակաշրջանը:

Վարկային միջոցներով ակտիվ ձեռք բերելիս դրամական հոսքերի զուտ ներկա արժեքի հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում հարկային, գրավադրման, մոնտաժման, ապահովագրության, ակտիվի շահագործմանն առնչվող գործոնները.

$$NPV^{I}_{վ} = \sum_{i=0}^{i=T} \frac{Dվi + Зվi + Hվi + Gվi}{(1+r_{բվ})^{i}} \quad (5.18)$$

որտեղ.

$NPV^{I}_{վ}$ - վարկով ձեռք բերված ակտիվի ընթացիկ ծախսերի զեղչված մեծությունը (+ կամ - նշանով),

$r_{բվ}$ - վարկավորման դրույքաչափը,

Hվi - վարկավորման դեպքում տրամադրվող հարկային արտոնությունները,

Gվi - ակտիվի ընթացիկ շահագործման, մոնտաժման, լուծարման, ապահովագրման ծախսերը i-րդ տարում,

Dվi - պարտավորության մեծությունը (տոկոսագումար և ակտիվի արժեքի բաժնեմաս) i-րդ տարում,

Зվi - գրավադրված միջոցների արժեքը, եթե դրանք ընթացիկ ակտիվներ են:

Լիզինգով ակտիվ ձեռք բերելիս դրամական հոսքերի զուտ ներկա արժեքի հաշվարկման ժամանակ վերը թվարկած նույն գործոններն են հաշվի առնվում.

$$NPV^{I}_{լ} = \sum_{i=0}^{i=T} \frac{Dլi + Зլi + Hլi + Gլi}{(1+r_{բլ})^{i}} \quad (5.19)$$

Եվ որպեսզի որոշվի լիզինգի արդյունավետությունը (ΔE), առաջարկվում է համեմատել դրամական ներհոսքերն ու արտահոսքերը՝ ֆինանսական վաճառքի դեպքում և վարկային միջոցներով ակտիվ ձեռք բերելիս.[209]

$$\Delta E = \sum_{i=0}^{i=T} \left[\frac{Зվi + Hվi + Gվi}{(1+r_{բվ})^{i}} - \frac{Зլi + Hլi + Gլi}{(1+r_{բլ})^{i}} \right] + \left[\frac{AC}{(1+E)^{iվ}} - \frac{AC}{(1+E)^{iլ}} \right] \quad (5.20)$$

Մասնագիտական գրականությունում առաջարկվում է չսահմանափակվել կազմակերպությունների ներդրման ֆինանսական արդյունքների գնահատմամբ, այլև բացահայտել ծրագրի արդյունավետությունը: Ընդ որում, կազմակերպությունների ներդրումային ծրագրերի արդյունքների համակարգային վերլուծությունը առաջարկվում է իրականացնել մի շարք ուղղություններով՝ կարևորելով ներդրումների արդյունքում արտադրության ինտենսիվացման բարձրացումը, վառելիքաէներգետիկ ռեսուրսների խնայողաբար օգտագործումը, անթափոն տեխնոլոգիաների կիրառումը և ծևավորված գիտատեխնիկական ներուժի օգտագործման աստիճանի գնահատումները:[210]

Ֆինանսական ներդրումների արդյունքում արտադրության ինտենսիվացման գնահատման անհրաժեշտությունը պայմանավորվում է սահմանափակ միջոցներով առավելագույն արդյունքի ստացման շուկայական տնտեսավարման առաջնահերթ պահանջով: Խոշոր ֆինանսավորում պահանջող ներդրումները հիմնականում իրականացվում են՝ հետագայում արտադրական ռեսուրսները զգալիորեն կրճատելու ակնկալիքով: Այդ իսկ պատճառով մեծածավալ լիզինգի ֆինանսական արդյունքների գնահատմանը զուգահեռ անհրաժեշտ է դառնում նաև արտադրության ինտենսիվացման այնպիսի ցուցանիշների վերլուծության իրականացումը, ինչպիսիք են՝ ֆոնդահատույցն ու նյութա-

[209] Лапыгин Ю.Н., Сокольских Е.В., Лизинг, М., Академический проект, 2005, с. 398.

[210] Ճուղուրյան Ա., Արտադրական նորամուծությունների կառավարչական հաշվառումը, «Վան Արյան», Երևան, 1996, էջ 109:

հատույցը, աշխատանքի արտադրողականությունն ու տնտեսական ակտիվների շրջապտույտը: Թվարկված ցուցանիշների աճի միտումով է պայմանավորվում տնտեսական մրցակցության պայմաններում կազմակերպությունների համար կարևոր՝ ֆինանսական կայունության պահպանումը:



Գծապատկեր 5.4

Լիզինգի արդյունավետության վերլուծության առաջարկվող ուղղությունները

Կազմակերպություններում առկա գիտատեխնիկական ներուժի օգտագործման աստիճանի գնահատման անհրաժեշտությունը լիզինգի արդյունավետության համակարգային վերլուծության հաշվարկներում հիմնականում պայմանավորված է շուկայական տնտեսավարման սկզբունքներով: Կազմակերպության շրջանակներում գիտատեխնիկական ներուժի ձևավորումը և, միաժամանակ, ոչ բոլոր կարողություններով նրա օգտագործումը ուղեկցվում են տնտեսական բացասական հետևանքներով՝ ակտիվների ապակենտրոնացմամբ, ֆինանսական

անկայունությամբ, շահութաբերության անկմամբ և այլն: Ուստի, կազմակերպությունում նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ պայմանավորված՝ գիտատեխնիկական մակարդակի արդյունավետ գնահատմամբ ավելանում է համակարգային վերլուծության արդյունքների հավաստիությունը:

Ամփոփելով լիզինգի արդյունավետության գնահատման տեսական մոտեցումները, կարող ենք եզրակացնել՝ գրականության մեջ առկա վերլուծության ֆինանսական և արտադրական ուղղությունները: Դրան զուգահեռ առաջարկում ենք որպես լիզինգի արդյունավետության գնահատման ուղի կիրառել վարձակալության հետևանքով ձևավորվող ֆինանսաարտադրական հանգույցի գործունեության արդյունքները:

Այսինքն՝ լիզինգի համակարգում ընդգրկված կազմակերպությունների շղթան ընդունվում է որպես ֆինանսաարտադրական հանգույց, որը գործարարության ոլորտում ունի իր առանձնահատկությունները: Շուկայում մրցակցային դիրքեր ապահովելու համար, արտադրական և ֆինանսական ընկերությունները միավորելով իրենց կարողությունները, առավել արդյունավետ են լուծում առկա հիմնախնդիրները (տե՛ս գծապատկեր 5.4):

Հետևաբար, որպես լիզինգի արդյունավետություն կարելի է դիտարկել վարձակալության համակարգում ընդգրկված կազմակերպությունների ներխմբային օգուտների ամբողջությունը, որը ձևավորվում է բանկի դրատոր կազմակերպության վարձատուի՝ ցածր տոկոսադրույքներով փոխառությունների ձեռք բերման, վարձատուի՝ վարձակալի մոտ ակտիվի հետագա մասնագիտացված շահագործման իրականացման, վարձակալի՝ վարձակալության վերջում շուկայականից ցածր գներով ակտիվի գնման, վարձակալության ռիսկային կորոատները երրորդ կողմի մասնակցությամբ վերաբաշխելու ժամանակ:

5.4 Լիզինգի մակրոտնտեսական արդյունավետության գնահատման մոտեցումները

Ֆինանսական վարձակալության արդյունավետության վերլուծությունը միկրոմակարդակով բացահայտում է կազմակերպության՝ սեփական միջոցներով կամ վարկային փոխառություններով ակտիվի գնման նկատմամբ լիզինգի տնտեսական առավելությունները: Մյուս կողմից, ֆինանսական վարձակալությունը, հանդես գալով որպես ներդրումային ոլորտ, զգալի մակրոտնտեսական էֆեկտներ է ձևավորում, և չափման, հաշվառման ու արդյունավետության տեսանկյունից գնահատման կարիք ունի: Ֆինանսական և արտադրական կապիտալի համատեղ աջակցությամբ է կազմակերպվում լիզինգը, և դրանով իսկ, վարձակալության համակարգը, ընդգրկելով տնտեսավարման մի քանի ոլորտ՝ ուղղակի մասնակիցներով (վարձատուներ, մատակարարներ, վարձակալներ), ինչպես նաև լիզինգի բիզնեսին աջակցող անուղղակի կառույցներով (բանկեր, երաշխավորներ, ապահովագրական կառույցներ և այլն), միկրոմակարդակի շրջանակներից դուրս տնտեսական արդյունքներ է ձևավորում, որոնք համախմբման, մակրոտնտեսական արդյունավետության գնահատման ու վերլուծության պահանջ ունեն:[211]

Գործնականում լիզինգի արդյունավետության գնահատման առավել տարածված ցուցանիշ է համախառն ներքին արդյունքում ֆինանսական վարձակալության ծառայությունների տեսակարար կշիռը[212], որը սակայն, կարծում ենք, առավելապես ֆինանսական վարձակալության գործունեության ակտիվության և ոչ թե արդյունավետության ցուցանիշ է:

Լիզինգի մակրոտնտեսական արդյունավետությունը առաջին հերթին դրսևորվում է ֆինանսական ներդրումների մուլտիպլիկացիոն (բազմարկիչ) էֆեկտով, երբ ներդրումային քաղաքականության ակտիվացումը խթանում է սպառումը՝ իր հետ բերելով արտադրության ծավալների լրացուցիչ աճի պահանջ և հետևաբար, լիզինգի ընդլայնում (տե՛ս պարագրաֆ 2.2): Սակայն լիզինգի մուլտիպլիկացիոն էֆեկտի

[211] Хэй Д., Морисс Д., Теория организации промышленности, пер. с англ., под ред. А.Г. Слуцкого, СПБ, Экономическая школа, 1999, с. 269.

[212] Игонина Л.Л., Инвестиции, М., Экономист, с. 93.

չափման և տնտեսական արժևորման ընթացքում դժվարություններ են առաջանում, քանի որ բնակչության սպառման վարքագծի աճը, պայմանավորված վարձակալությամբ արտադրության ընդլայնմամբ, գործնականում վիճակագրական հաշվառման և գնահատման չի ենթարկվում:[213]

Մասնագիտական գրականությունում լիզինգի արդյունավետության գնահատման նպատակով առաջարկվում է կիրառել միավոր արտադրանքի թողարկման տարեկան կշռված ծախսերը (Zi), որոնց հաշվարկի բանաձևը ներկայացվում է այսպես.[214]

$$Z_i = \frac{\sum_{t=1} (K_{ti} + C_{ti}) \cdot B^t}{\sum_{t=1} X_{ti} \cdot B_t} \qquad (5.21)$$

$$B_t = (1 + E)^{a-1},$$

որտեղ՝

- i - տարբերակի ինդեքսն է,
- K_{ti} - վարձավճարի ծախսերը t տարվա համար՝ i օբյեկտի գծով,
- C_{ti} - ընթացիկ ծախսեր t տարվա համար՝ i օբյեկտի գծով,
- X_{ti} - արտադրանքի թողարկումը t տարվա համար՝ i օբյեկտի գծով,
- t - i-րդ օբյեկտի շահագործման տարիների տևողությունը,
- B_t - զեղչման գործակից,
- a - հաշվարկի իրականացման տարին,
- E - կապիտալի շահութաբերության նորման:

Տնտեսագիտական գրականությունում քիչ չեն նաև լիզինգի արդյունավետության մաթեմատիկական գնահատումները, երբ ծախսերի և սպասվող եկամուտների մոդելավորմամբ կատարվում են գնահատումներ: Մասնավորապես, հաշվի առնելով ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված ակտիվների եկամուտներն ու ծախսերը, առաջարկվում է վարձակալած ակտիվի օգտագործման օպտիմալ կառավարման հետևյալ մոդելը.[215]

[213] Левкович А.О., Формирование рынка лизинговых услуг, Изадтелсьство деловой и учебной литературы, 2004, с. 144.

[214] Бейли Дж., Инвестиции, пер. с англ., М., ИНФРА-М, 1997, с. 83

[215] Инвестиции: учеб., под ред. В.В. Ковалева, В.В.Иванова, 2-ое изд, М., Проспект, 2010, с. 236-237.

$$J = \int_0^T \sum_{k=1}^{K} \sum_{i=1}^{n} [V_i^k(t) - E_{i,2}^k(t)] - \beta \sum_{k=1}^{k} \sum_{i=1}^{n} X_i^k(t) - X_i^k(t)^2] \cdot dt \qquad (5.22)$$

$J \rightarrow \max,$

որտեղ տարբերության առաջին բաղադրիչը գնահատում է [0,T] ժամանակահատվածում լիզինգի օբյեկտի օգտագործման օգուտները, իսկ երկրորդը՝ ակտիվի շահագործման և ապասարկման ծախսերը: Սակայն մոդելում ընդգրկված ցուցանիշներից մեծ մասի իրատեսական հաշվառումն ու արժևորումը գործնականում բարդություններ է առաջացնում, ոատի այն որոշ չափով կորցնում է իր կիրառական նշանակությունը:

Առանձնակի հետաքրքրություն են առաջացնում այն առաջարկությունները, համաձայն որոնց՝ խնդիր է դրվում լիզինգի ֆինանսատնտեսական արդյունքներն ընդգրկել ազգային հաշիվների համակարգում: Ազգային հաշիվները հիմնականում ներկայացվում են հետևյալ սկզբունքներով.

- ըստ տնտեսության հատվածների,
- ըստ տնտեսության ճյուղերի,
- ըստ առանձին գործունեության տեսակների,
- տնտեսության գլոբալ կտրվածքով (համախմբված հաշիվներ):

Ազգային հաշիվները կառուցվում են հաշվապահական հաշվառման հաշիվների ձևավորման սկզբունքով (կրկնակի գրանցում, ռեսուրսներ-օգտագործում կապով և հաշվեկշռված), միայն այն տարբերությամբ, որ աջ մասում արձանագրվում են առկա ռեսուրսները, իսկ ձախում՝ դրանց օգտագործումը:[216] Հաշիվները, որպես կանոն, հաշվեկշռվում են, այսինքն՝ ռեսուրսների չօգտագործված մասը, որպես մնացորդ և մակրոտնտեսական ցուցանիշ, գրանցվում է «օգտագործում» բաժնում և այնուհետև փոխանցվում մյուս հաշվի «ռեսուրսներ» բաժինը (տե՛ս գծապատկեր 5.5):

[216] Кулагина Г.Д., "Национальное счетоводство", М. Финансы и статистика, 1997, с. 125-126.

«Արտադրություն» հաշիվ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
Միջանկյալ սպառում	Արտադրանքի թողարկում
ՀՆԱ	Արտադրանքի զուտ հարկեր

«Եկամուտների ձևավորման» հաշիվ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
Աշխատավարձ	ՀՆԱ
Արտադրության և ներմուծման զուտ հարկեր	
Տնտեսության համախառն շահույթ	

«Սկզբնական եկամուտների բաշխման» հաշիվ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
Արտերկիր փոխանցված սեփականությունից ստացված եկամուտներ	Տնտեսության համախառն շահույթ
	Աշխատավարձ
Համախառն ազգային եկամուտ	Արտադրության և ներմուծման զուտ հարկեր
	Սեփականությունից ստացված եկամուտներ արտերկրից

«Եկամուտների երկրորդային բաշխման» հաշիվ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
Ընթացիկ տրանսֆերտներ, փոխանցված արտերկիր	Համախառն ազգային եկամուտ
Համախառն տնօրինվող ազգային եկամուտ	Ընթացիկ տրանսֆերտներ, ստացված արտերկրից

«Տնօրինման-եկամտի օգտագործման» հաշիվ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
Վերջնական սպառման ծախսեր	Համախառն տնօրինվող ազգային եկամուտ
Համախառն խնայողություն	

Գծապատկեր 5.5

Համախմբված ազգային հաշիվների գործունեության մեխանիզմը

Համակարծիք ենք այն առաջարկներին՝ համաձայն որոնց կազմակերպությունների մակարդակով կառավարչական հաշվառման լիզինգի այլընտրանքային ծախսերի և եկամուտների տեղեկատվությունը պետք է մակրոմակարդակով ամփոփվի և տեղափոխվի ազգային հաշիվների համակարգ: Ընդ որում, այդ տեղեկատվությունն անհրաժեշտ է ներկայացնել եկամուտների և ծախսերի հետևյալ կտրվածքով.

- լիզինգի կազմակերպման այլընտրանքային ծախսեր,
- լիզինգից ստացվող այլընտրանքային եկամուտներ (տե՛ս գծապատկեր 5.6):

Այսպիսով՝ լիզինգի տնտեսական արդյունավետության իրատեսական գնահատման դեպքում առավել արդիական է տնտեսական շահույթի հաշվառման համակարգի ստեղծման հիմնահարցի լուծումը, որն առաջ է քաշվում մասնագիտական հետազոտություններում:[217] Տնտեսական շահույթը ձևավորվում է մակրոտնտեսական միջավայրում՝ ընդգրկելով ոչ միայն կազմակերպության տնտեսական գործունեության ուղղակի, այլև այլընտրանքային եկամուտներն ու ծախսերը:

Կազմակերպությունների մակարդակով տարվող կառավարչական հաշվառման արդյունքում լիզինգի այլընտրանքային ծախսերի և եկամուտների արձանագրումը ազգային հաշիվներում հնարավորություն կտա գնահատելու եկամտային և ծախսային մասերի բացարձակ տարբերությունը, և դրական արդյունքի դեպքում կարձանագրվեն մակրոմակարդակով ֆինանսական վարձակալությունից օգուտներ (տե՛ս գծապատկեր 5.6): Հակառակ դեպքում, երբ լիզինգի կազմակերպման համընդհանուր եկամուտները փոքր կլինեն ծախսերից, մակրոմակարդակով կարձանագրվի ֆինանսական վարձակալության տնտեսական արդյունավետության անկում:

[217] Човушян Э.О., Лизинг в России, М., Дипломатическая академия МИД РФ, 1999, с. 82.

«Արտադրություն» հաշիվ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
Միջանկյալ սպառում, այդ թվում՝ ***լիզինգի ծախսեր***	Արտադրանքի թողարկում, այդ թվում. ***լիզինգից եկամուտներ***
ՀՆԱ	Արտադրանքի զուտ հարկեր

«Եկամուտների ձևավորման» հաշիվ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
Աշխատավարձ	ՀՆԱ
Արտադրության և ներմուծման զուտ հարկեր, այդ թվում՝ ***լիզինգային գործառնություններից հարկեր***	
Տնտեսության համախառն շահույթ	

«Սկզբնական եկամուտների բաշխման» հաշիվ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	ՌԵՍՈՒՐՍՆԵՐ
Արտերկիր փոխանցված սեփականությունից ստացված եկամուտներ	Տնտեսության համախառն շահույթ
Համախառն ազգային եկամուտ	Աշխատավարձ
	Արտադրության և ներմուծման զուտ հարկեր
	Սեփականությունից ստացված եկամուտներ արտերկրից

Գծապատկեր 5.6

Համախմբված ազգային հաշիվների փոխկապակցումը՝ լիզինգի կազմակերպման եկամուտներն ու ծախսերն ամփոփելիս

Նշենք նաև, որ եթե շարունակենք համախմբված ազգային հաշիվների փոխկապակցումը, ապա մակրոմակարդակում «Տնօրինվող եկամտի օգտագործման» հաշվի «օգտագործում» մասի «Համախառն խնայողությունը» եթե ուղղվում է լիզինգի ոլորտում ներդրումներին, ապա ազգային տնտեսության համակարգում լիզինգը ներդրումների բազմապատիկ ներազդեցության էֆեկտ է ապահովում:

Մյուս կողմից, ազգային հաշիվներում մեր առաջարկած՝ լիզինգի կազմակերպման համընդհանուր եկամուտների ու ծախսերի արձանագրումից կստացվի տեղեկատվություն՝ մակրոմակարդակով ֆինանսական վարձակալության արդյունավետության վերաբերյալ, քանի որ հնարավորություն կստեղծվի հաշվարկելու K_1, K_2 և K_3 մակրոտնտեսական հարաբերական ցուցանիշները:

$$K_1 = \frac{\text{ֆինանսական վարձակալությունից ստացվող եկամուտներ–ծախսեր}}{\text{համախառն ներքին արդյունք}} \quad (5.23)$$

$$K_2 = \frac{\text{ֆինանսական վարձակալությունից ստացվող եկամուտներ–ծախսեր}}{\text{տնտեսության համախառն շահույթ}} \quad (5.24)$$

$$K_3 = \frac{\text{ֆինանսական վարձակալությունից ստացվող եկամուտներ–ծախսեր}}{\text{համախառն ազգային եկամուտ}} \quad (5.25)$$

Հարկ է նշել, որ ֆինանսական վարձակալության տնտեսական կառավարման համակարգում հիմնախնդիր են այլընտրանքային ծախսերի և եկամուտների դասակարգումը, արժևորումը և հաշվառումը: Լիզինգի արդյունքում ձևավորվող այլընտրանքային եկամուտները մասնագիտական գրականությունում ներկայացվում են մի քանի խմբով:[218]

Առաջին՝ լիզինգային գործարքը հիմնվում է 100% վարկավորման վրա, թեև վարկային պարտավորություններով ակտիվների ձեռք բերումը գործնականում բանկային վարկեր է ներգրավում 70-80%-ի սահմաններում, և հիմնական միջոցը գնելիս օգտագործվում են կազմակերպության սեփական աղբյուրները՝ դանդաղեցնելով շրջանառու կապիտալի պտույտը:

[218] Ковалев В.В., Лизинг, финансовые, учетно-аналитические и правовые аспек- М., ООО "Вершина", 2011, с. 209-210.

Երկրորդ՝ լիզինգի պայմաններն առավել ճկուն են վարկավորման նկատմամբ, քանի որ գործարքի մասնակիցները հնարավորություն ունեն ընտրելու վճարման առավել հարմար սխեմաներ: Լիզինգի դասական վճարումների սխեման ընտրելիս, վարձակալության ժամկետի ավարտին զուգընթաց, կրճատվում են վարձավճարների տոկոսային ծախսերը, որովհետև զուգահեռաբար կրճատվում է «փոխառության մայր գումարը», որն էլ վարձատուի մոտ ձևավորում է լրացուցիչ ընթացիկ ակտիվներ:

Երրորդ՝ լիզինգային պայմանագիրը հաճախ ներառում է նաև վարձատուի կողմից ակտիվի սպասարկման պարտավորություն (հատկապես՝ բարձր տեխնոլոգիաների դեպքում), որն էլ կրճատում է վարձակալի՝ ակտիվի սպասարկման ծախսերը և նվազեցնում վարձակալած օբյեկտի բարոյական մաշվածության ռիսկը:

Չորրորդ՝ թեև վարձակալած ակտիվը հաշվառվում է վարձակալի հաշվեկշռում, վերջինս ձևավորում է հարկային ծախսերի խնայողություն՝ գույքահարկի գծով:

Հինգերորդ՝ լիզինգը, որպես կանոն, հարկային խնայողություններ է ձևավորում՝ արագացված ամորտիզացիոն քաղաքականության շնորհիվ: Հարկային արտոնություններ են գործում ոչ միայն շահութահարկի, այլև վարձավճարների նկատմամբ սահմանվող ավելացված արժեքի հարկի գծով:

Վեցերորդ՝ ֆինանսական վարձակալության կազմակերպման դասական սխեմայի պայմաններում ակտիվի ծառայության ժամկետը համընկնում է ամորտիզացիոն ծախսերի ամբողջական ձևակերպմանն ու դուրս գրմանը: Արդյունքում՝ լիզինգի ավարտին վարձակալը ձեռք է բերում զրոյական արժեքով հիմնական միջոց, որը, սակայն, դեռևս օգտակար ծառայության հնարավորություններ ունի և օժտված է իրական շուկայական գնով: Ձևավորված նման իրավիճակում, փաստորեն, վարձակալը հիմնական միջոցների ձեռք բերման համար ֆինանսական ռեսուրսներ է խնայում:

Յոթերորդ՝ ակտիվի մատակարար կազմակերպությունը լիզինգի պայմաններում առավել հեշտ է լուծում իր թողարկած արտադրանքի իրացման հիմնախնդիրը, որը չափազանց կարևորվում է շուկայական լարված մրցակցության պայմաններում:

Այդուհանդերձ, լիզինգի կազմակերպումը մակրոտնտեսական միջավայրում ձևավորում է ոչ միայն այլընտրանքային եկամուտներ, այլև ծախսեր, որոնք նույնպես պետք է հաշվի առնվեն ֆինանսական վարձակալության մակրոտնտեսական արդյունավետությունը գնահատելիս:

Այսպես՝ երկարաժամկետ վարձակալության պայմաններում մեծ է վարձակալած ակտիվի բարոյական մաշվածությունից ձևավորվող վնասների ռիսկը, որի գծով կորուստը, որպես կանոն, փոխհատուցում է վարձակալը: Հանդես գալով որպես ֆյուչերսային գործարք՝ լիզինգի ավարտին արժեզրկված ակտիվի ձեռք բերումը վարձակալի մոտ ձևավորում է հեջավորված գործարքներից կորուստներ:

Բացի դրանից, լիզինգի ընթացքում վարձակալը կարող է արդիականացման խոշոր ծախսումներ իրականացնել լիզինգի օբյեկտի նպատակային շահագործման համար, որոնք սակայն, լինելով ակտիվի անբաժանելի մաս, լիզինգի ավարտից հետո փոխանցվելով վարձատուին, կարող են չփոխհատուցվել վերջինիս կողմից, եթե նախատեսված չեն պայմանագրով: Լիզինգ կազմակերպելիս ուղղակի մասնակիցների ներդաշնակ գործունեությունն ապահովում են անուղղակի մասնակիցները (ապահովագրողներ, բրոկերներ, միջնորդներ, երաշխավորողներ և այլն), որոնք իրենց ներգրավվածությամբ լրացուցիչ ծախսեր են ձևավորում և «թանկացնում» վարձակալությունը:

Եվ, վերջապես, լիզինգի արժեքի, տոկոսադրույքների, հետգնման ժամկետների արդյունքները, միմյանց հակակշռելով, մրցակցային միջավայր են ստեղծում վարկային շուկայում՝ նպաստելով մակրոտնտեսական միջավայրում փոխառությունների օգտագործման արդյունավետության բարձրացմանը: Ֆինանսական վարձակալության մեկնարկից հետո, երկարատև վարկավորման տոկոսադրույքների իջեցման դեպքում, լիզինգի վարձավճարները մնում են անփոփոխ, և վարձակալները տոկոսային ծախսերի գծով վնասներ են կրում, քանի որ վարձակալության պարտավորությունները նախօրոք հաշվարկված են «թանկ տոկոսադրույքներով» և, որպես կանոն, մինչև լիզինգի ավարտը փոփոխման ենթակա չեն:



Գծապատկեր 5.7

Վարձակալության տնտեսական շահույթի ձևավորման տեղեկատվական հոսքերի ամփոփ պատկերումը

Ֆինանսական վարձակալության արդյունավետության գնահատումը միկրոտնտեսական միջավայրում հիմնվում է հաշվապահական շահույթի վրա, քանի որ վարձակալը հաշվարկներում կիրառում է զուտ շահույթը: Հաշվապահական շահույթը հաշվարկվում է կազմակերպության գործունեության շրջանակներում ստացվող եկամուտների, ծախսերի և շահութահարկի պարտավորությունների հիման վրա՝ հաշվի չառնելով տնտեսական գործունեության արտաքին էֆեկտները: Մասնավորապես՝ լիզինգի դեպքում վարձակալը տնտեսում է հարկային ծախսեր, հիմնական միջոցների ձեռք բերման գումարներ, սարքավորումների սպասարկման, շահագործման ռեսուրսներ, որոնք հիմնականում չեն արձանագրվում և հաշվառվում կազմակերպությունների մակարդակով, այլ բացահայտվում են մակրոտնտեսական միջավայրում:

Հետևաբար, լիզինգի արդյունավետության գնահատման հիմքում կարևորվում է տնտեսական շահույթի կիրառումը, որը, ի տարբերություն հաշվապահական շահույթի, ներառում է այն եկամուտներն ու ծախսերը, որոնք ստեղծվում են վարձակալական գործունեությունից, սակայն ձևավորվում են կազմակերպությունների տնտեսական գործունեության շրջանակներից դուրս և այդ իսկ պատճառով՝ չեն ենթարկվում հաշվապահական հաշվառման:

Պարագրաֆ 4.3-ում արդեն իսկ առաջարկվել է կառավարչական հաշվառման մեխանիզմ, որը հնարավորություն է ընձեռում կազմակերպությունների մակարդակով արձանագրելու լիզինգով պայմանավորված լրացուցիչ այլընտրանքային եկամուտներն և ծախսերը: Նման տեղեկատվության համախմբումը կարևորվում է ոչ միայն կազմակերպությունների մակարդակով լիզինգի արդյունավետությունը գնահատելիս, այլև վարձակալության շուկայի մակրոտնտեսական վերլուծությունների համար: Այն համապարփակ և ամփոփ ներկայացնում է վարձակալության յուրաքանչյուր կողմի մոտ ձևավորված այլընտրանքային ծախսերն ու եկամուտները (տե՛ս գծապատկեր 5.7) և տեղեկատվական աղբյուր է ֆինանսական վարձակալության տնտեսական շահույթը հաշվարկելիս:

Այսպիսով՝ մակրոմակարդակում ֆինանսական վարձակալությունից ձևավորվող տնտեսական շահույթը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով.

միկրոմակարդակում ձևավորվող հաշվապահական շահույթ
(կազմակերպություններում՝ ֆինանսական վարձակալության եկամուտներ – ծախսեր)
+
մակրոտնտեսական միջավայրում ձևավորվող լիզինգի այլընտրանքային օգուտներ
(ֆինանսական վարձակալության այլընտրանքային եկամուտներ – այլընտրանքային ծախսեր)

Լիզինգի տնտեսական շահույթի ձևավորման տեղեկատվական հոսքերը, որոնք մենք առաջարկում ենք, հիմք են մակրոտնտեսական միջավայրում ֆինանսական վարձակալության արդյունավետության առավել իրատեսական գնահատման համար: Ձևավորելով տնտեսական շահույթ՝ դրանք արտացոլում են ոչ միայն կազմակերպությունների մակարդակով լիզինգային գործունեության շահույթը, այլև մակրոտնտեսական միջավայրում գործունեության ոլորտից բխող այլընտրանքային օգուտները: Հետևաբար, նպատակահարմար է ֆինանսական վարձակալության տնտեսական արդյունավետությունը գնահատել լիզինգի ծառայությունների շահութաբերությամբ (Lp).

$$(Lp) = \frac{\text{ֆինանսական վարձակալության տարեկան տնտեսական շահույթ}}{\text{ֆինանսական վարձակալության ծառայությունների տարեկան արժեք}} \quad (5\ 26)$$

Ըստ այլընտրանքային ծախսերի և եկամուտների դասակարգման, արժևորման և հաշվառման՝ լիզինգային ծառայությունների շահութաբերության առաջարկվող ցուցանիշի կիրառումը հնարավորություն է ընձեռում.

առաջին՝ վերլուծել լիզինգային ծառայությունների կազմում վարձակալության տնտեսական շահույթի տեսակարար կշռի դինամիկան և կատարել ոլորտի արդյունավետության համեմատական վերլուծություն՝ ըստ տարիների,

երկրորդ՝ իրականացնել լիզինգի արդյունավետության գործոնային վերլուծություն՝ բացահայտելով ֆինանսական վարձակալության ծառայությունների տնտեսական հատույցի վրա ազդող՝ եկամտային և ծախսային մակրո, ինչպես նաև միկրոտնտեսական գործոնները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք
2. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ ԱՊՀ-ում լիզինգային գործունեության ընդլայնման համար բարենպաստ իրավական, տնտեսական և կազմակերպական պայմանների ստեղծման համաձայնագրին ՀՀ միանալու մասին որոշումը, 2006 թ.
3. «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը
4. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը
5. «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը
6. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը
7. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը
8. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը
9. «Շարժական գույքի կադաստրի վարման, շարժական գույքի գրավի իրավունքի, լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցման մասին» ՀՀ օրենքը
10. «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը: Վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» ՀՀ ԿԲ կանոնակարգ 14
11. ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»
12. ՀՀՄՍ 12 «Շահութահարկեր»
13. ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ»
14. ՀՀՄՍ 17 «Վարձակալություն»
15. ՀՀՄՍ 18 «Հասույթ»
16. ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը»
17. ՀՀՄՍ 36 «Ակտիվների արժեզրկում»
18. ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»
19. ՖՀՄՄԿ Մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում»
20. «Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք» 2008, 2009, 2010, ԱՎԾ, Երևան
21. «ՀՀ Կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր» 2008, 2009, 2010, ՀՀ ԿԲ
22. Բայադյան Ա., «Ձեռնարկությունների ֆինանսական դրության գնահատումը», Եր., Ասողիկ, 2002, 298 էջ

23. Բայադյան Ա. «Ֆինանսական վերլուծություն» Եր., Լիմուշ, 2009, 289 էջ
24. Գրիգորյան Կ., «Հարկային իրավունքի հիմունքներ», Հեղ. հրատ., Երևան, ԵՊՀ, Եր., 2007, 152 էջ
25. Եղիկյան Ա., «Կառավարչական հաշվառման հիմունքներ», Եր., 2003, 256 էջ
26. Թամազյան Ա., «Հարկային օրենսդրության հիմունքներ», Տիգրան Մեծ, Եր., 2003, 148 էջ
27. «Հաշվապահական հաշվառում: Ուսումնական ձեռնարկ» Ա.Զ. Սարգսյան, Ռ.Պ. Համբարձումյան, Ա.Մ. Մարջանյան, Ն.Ս. Օգանեզովա և ուրիշներ: Եր.: Տնտեսագետ 2008, 524 էջ
28. Հարությունյան Տ. «Հարկման արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում», Զանգակ-97, Եր., 2006, 326 էջ
29. Ճուղուրյան Ա., «Հաշվապահական հաշվառում», Եր., Վան Արյան, 2009, 970 էջ
30. Ճուղուրյան Ա.Գ., Հակոբյան Ա.Ա., «Հարկային հաշվապահություն և պլանավորում», Տնտեսագետ, Եր., 2003, 108 էջ
31. Ճուղուրյան Ա.Գ., Հակոբյան Ա.Ա., «Հաշվապահություն և վերլուծություն», Եր., 2003, 167 էջ
32. «Մենեջմենթ» Յու. Մ. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ, Եր., Տնտեսագետ, 2009, 608 էջ
33. «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» Լ. Բաղանյան, Ա. Սալնազարյան, Գ. Չատինյան, Կ. Աբգարյան, Ա. Մաթևոսյան և ուրիշներ, Եր., ՄՈԱ, 2010, 586 էջ

34. Абрамова Н.В., “Договор аренды, лизинг: учет и налоги: монография, М., НалогИнформ, 2005, 183 с.
35. Адамов Н.А., Тилов А.А., “Лизинг” учебное пособие, СПб, Питер, 2006, 276 с.
36. Андреева М., Дубровина Н., Назарова Л., “Банковский лизинг. Деньги на оборудование”, Экономика и жизнь, 2003, #5, с. 6-8
37. Анисимов М., Маслова И., “Лизинговые операции в финансовой и бухгалтерской отчетности: американский опыт и российская практика”, Финансовый бизнес, М., 2001 # 11, с. 29-32
38. “Аренда: учет, налого, право”. Под редакцией Н.А. Малофеевой, М.С. Кузнецовой, М., Статус-Кво 97, 336 с.

39. Ачкурина Е.В., "Оптимизация налогообложения", М., ОСЬ-89, 2003, 189 с.
40. Балабанов И., "Финансовый анализ и планирование хозяствующего обьекта", М., Техническая книга, 2001, 352 с.
41. Бейли Дж., Шарп У., Александер Г., "Инвестиции", пер. с англ., М., ИНФРА-М, 2008, 257 с.
42. Берд В.С., "Налоги в условиях экономической интеграции", КиоРус, 2004, 166 с.
43. Брагинский М.И., Витрянский В.В., "Договорное право", М., Статут, 2003, 165 с.
44. Бутенина Н.В., "История развития лизинговых отношений в США", М., Лизинг ревю, 2000 #9/10, с. 29-33
45. Вахрин П.И., "Инвестиции" учебник, М., Финансы, 2002, 264 с.
46. Ведута Е.Н., "Стратегия и экономическая политика государства", М., Наука, 2004, 456 с.
47. Виленский П.Л., "Оценка эффективности инвестиционных проектов", Терия и практика, М., Дело, 2010, 422 с.
48. Газман В.Д., "Финансовый лизинг", М., ВШЭ, 2003, 390 с.
49. Горемыкин В.А., "Лизинг", М., Дашков и К, 2003, 922 с.
50. Горемыкин В.А., "Основы технологии лизинговых операций", М., Ось-89, 2000, 116 с.
51. Дегтярева Е., "Лизинг или кредит?", Лизинг-курьер, 2002 #2, с. 20-28
52. Друри К., "Управленческий и производственный учет" Вводный курс, 5-ое изд., М., ЮНИТИ, 2005, 564 с.
53. Ефимова О., "Анализ финансовой отчетности", М., Омега, 2004, 422 с.
54. Заварина А.В., "Договор финансовой аренды: Учет, налоги, арбитраж"., М., ЗАО ИКЦ "ДИС", 2004, 184 с.
55. Задон А., Петрухин Ю., "Основы экономической теории", М., Рыбари, 2000, 416 с.
56. Зубарева Л.В., "Лизинг как метод инвестирования", учебное пособие, М., Финансы и инвестиции, 2001, 231 с.
57. Ищенко Е.П. "Государство — особый участник лизинговых отношений", Законность, 2007 #11, с. 46-49
58. Кабатова Е.В., "Закон "О лизинге" сегодня и завтра", Закон, 2000 #11, стр. 49-55
59. Касатонов В.Ю, Морозов Д.С., "Проектное финансирование: организация, управление риском, страхование" М., Анкил, 2010, 332 с.

60. Киркоров А., "Методы определения эффективности финансового лизинга по сравнению с кредитом", Лизинг ревю, 2000, #5/6 с. 12-19
61. Ковалев В., "Финасовый анализ: методы и процедуры", М., Финансы и статистика, 2002, 560 с.
62. Ковалев В.В., "Лизинг, финансовые, учетно - аналитические и правовые аспекты", М., Проспект, 2011, 514 с.
63. Ковалева А.М., "Финансовый менеджмент", М., ИНФРА-М, 2004, 284 с.
64. Комаров В., "Инвестиции и лизинг в СНГ", М., Финансы и статистика, 2001, 354 с.
65. Конвенция УНИДРУА "0 международной финансовой аренде (лизинге)", Оттава, 1988
66. Кондраков Н., "Основы финасового анализа", М., Главбух, 2001, 154 с.
67. Королев А., "Нужны новые подходы к лизинговому законадательству", Хозяйство и право, 2001 #9, с.110-124
68. Коршунова Н.М., "Лизинг: экономические и правовые основы" учебное пособие для вузов, 2-е изд., М., ЮНИТИ-ДАНА, 2001, 191 с.
69. Кулагина Г.Д., "Национальное счетоводство", М. Финансы и статистика, 1997, 265 с.
70. Лазин А.И., Николаев С.Н., "Особенности развития аренды строительной техники", М., Консалтинг, 2000, 152 с.
71. Лапыгин Ю.Н., Сокольских Е.В., "Лизинг", М., Академический Проект, 2005, 426 с.
72. Латышева О., Матвеев А., Панова М., "Политика и превлечение прямых иностранных инвестиций в российскую экономику", Экономика и жизнь, 2002, #1, стр 2-9
73. Латышева О., Матвеев А, Панова М. и др. "Темпы хорошо. А качество — лучше!" Экономика и жизнь, 2007. # 16. с. 2-4.
74. Левкович А.О., "Формирование рынка лизинговых услуг", Издательство деловой и учебной литературы, 2004, 184 с.
75. Лещенко М.И., "Основы лизинга", М., Прогрес-МТ, 2000, 422 с.
76. "Международные стандарты финансовой отчетности", М., Аскери, 2006
77. "Международные стандарты финансовой отчетности", под ред. И.А. Смирновой, М., Финансы и статистика, 2005, 321 с.
78. "Налоги и налоговое право", под. ред. А. Брызалгина, М., Аналитика-Пресс, 1997, 152 с.

79. Налоги, Словарь-справочник., М., ИНФРА, 2000.
80. Налоговый кодекс РФ
81. Негашев Е., "Методика финансового анализа деятельности комерческих организаций", М., Инфра, 2004, 418 с.
82. Нитецкий В., "Финансовый анализ в аудите", М., Дело, 2003, 332 с.
83. Новикова З.Т., "Экономическая теория", М., Трикста, 2005, 384 с.
84. Рафиков С. А., "Методика оценки эффективности применения лизингового финансирования для приобретения основных средств по сравнению с кредитным финансированием", Вестник Российской Ассоциации лизинговых компаний., 2001 #1-2, стр. 57-63
85. Самохвалова Ю.Н., "Лизинг в России: правовые основы, бухгалтерский учет, налогообложение", М., Современная экономика и право, 2009, 212 с.
86. Селезнова Н.Н., Ионова А.Ф., "Финансовый анализ" учебное пособие, М., Финансы, 2003, 639 с.
87. Симонова М.Н., "Аренда, лизинг, прокат", М., Статус-Кво, 2001, 214 с.
88. Соколова Т.Ю., "Лизинг-инвестиции или налоговая уловка?" Конкуренция и рынок, #9, М., 2004, с. 39.
89. Справочник финансиста предприятия. 4-е изд., М, ИНФРА, 2002, 420 с.
90. Степанова И.С., "Экономика предприятия", учебник для вузов, М., Юрайт-Издат, 2005, 620 с.
91. Федеральный закон РФ "О финансовой аренде (лизинге)" от 29 октября 1998 г.
92. "Финансовая аренда (лизинг) в России". Обзор рынка 2005-2006, М., Международная финансовая корпорация, 2006
93. Харитонова Ю.С., "Договор лизинга" М., Юрайт-М, 2002, 168 с.
94. Чекмарева Е., "Методы интеграции банковского и промышленного капитала", Лизинг ревю, М., 2004 #1, с. 16-21
95. Чекмарева Е.Н., "Лизинговый бизнес", М., Экономика, 2004, 278 с.
96. Човушян Э.О., "Лизинг в России", М., Финансы, 2006, 146 с.
97. Шеленков В.Г., "Учет лизинговых операций и анализ их эффективности", М., Экзамен, 2005, 296 с.
98. Шеремет А.Д., Сайфулин Р.С., Негашев Е.В. "Методика финансового анализа", М., ИНФРА-М., М, 2000, 421 с.
99. "Экономическая теория", под редакцией Журавлевой Г.П. и др. Российская экономическая академия им. Плеханова, М., 2000, 588 с.

100. "Экономическая теория", под. ред. А. И. Добрынина, Питер, 2000, 544 с.
101. Янушка М., "Методика анализа финансово - экономического состояния фирмы", Рига, Инновация, 2002, 338 с.

102. Ahmed Riahi-Belkaoui, "Long-Term Leasing — Accounting, evaluation, consequences", Westport, Connecticut, London, 2008, 204 p.
103. Barry J. Epstein, Eva K. Jermakowich, "2010 Interpretation and Application of International Financial Reporting Standards", Wiley inc., USA, 2010, 1344 p.
104. David G. Mayee, Joseph Lane, "Business leasing for Dummies", Barnes & Noble, USA, 2011, 340 p.
105. Downes J., Goodman J.E., "Finance and Investment Handbook", 5th ed., N.Y., Barron`s Educational Series, 1999, 320 p.
106. "Financial Sector Deepening Project", USAID, Presentation to partners banks CEOs, 2010.
107. IFRIC Interpretation 4 "Determining whether on Arrangement contains a Lease"
108. Jeffrey Taylor, "The future of equipment leasing", Executive Caliber, 2006, 96 p.
109. "Lease and Hire Purchase Contracts", UK GAAP, 7th ed., L., Ernst and Young, 2006, 428 p.
110. "Leasing Yearbook 2005", 26th ed. Ed by Paul L., Euromoney Institutional Investor Publication, 2005, 846 p.
111. Linda P. Kester, "366 Marketing Tips for Equipment Leasing", London School of Business and Finance, 2011, 376 p.
112. Peter Clarke, "Interpretation of Financial Statements", The Financial Training Company, Paggety Studios, London, 1998, 624 p.
113. Powers M., Needles B.E., Crosson S.V., "Financial and managerial Accounting Principles", Interpretational Edition, South-Western Cengage Learning, 2011, 1320 p.
114. SIC Interpretation 27 "Evaluating the Substance of Transactions Involving the Legal Form of a Lease"
115. Steven M., Bragg J., "The Ultimate Accountants's reference, including GAAT, IRS & SEC Regulations, Leases and More" Wiley, USA, 2010, 811 p.
116. Townsend Walker, "Managing Lease Portfolios", Wiley, USA, 2005, 206 p.

Ֆինանսական վարձակալության (լիզինգի) հիմնախնդիրների վերաբերյալ հեղինակի գիտական հրատարակումները

1. Հակոբյան Ա.Ա., Վարձակալության պարտավորությունների կառավարչական հաշվառման ներդրման հիմնախնդիրները // Բանբեր Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի - N3 (21). 2010. Երևան, էջ 51-61:
2. Հակոբյան Ա.Ա., Ֆինանսական վարձակալության (լիզինգի) շուկայի գործունեության առանձնահատկությունները // Բանբեր Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարանի - N1 (22). 2011. Երևան, էջ 88-95:
3. Հակոբյան Ա.Ա., Վարձավճարների օպտիմալացման հիմնախնդիրները լիզինգի համակարգում // Ագրոգիտություն - N 11-12 (627-628). 2010. Երևան, էջ 468-472:
4. Հակոբյան Ա.Ա., Լիզինգի հեջավորման արդյունքների հաշվառման հիմնախնդիրները // Ագրոգիտություն - N 1-2 (629-630). 2011. Երևան, էջ 25-32:
5. Հակոբյան Ա.Ա., Լիզինգի միկրոտնտեսական արդյունավետության գնահատման մոտեցումները // Ագրոգիտություն - N 5-6 (633-634). 2011. Երևան, էջ 215-218:
6. Հակոբյան Ա.Ա., Լիզինգի կարգավորման՝ ՀՀ տնտեսահիրավական դաշտի բարելավումը // Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա - # 10 (124) հոկտեմբեր 2010. Երևան, էջ 26-29:
7. Հակոբյան Ա.Ա., Ներդրումային քաղաքականության և լիզինգի փոխկապակցվածության մակրոտնտեսագիտական գնահատումը ՀՀ-ում // Հայաստան. Ֆինանսներ և Էկոնոմիկա - # 11 (125) նոյեմբեր 2010. Երևան, էջ 67-69:
8. Հակոբյան Ա.Ա., Լիզինգի մակրոտնտեսական արդյունավետության գնահատման մոտեցումները // Հայաստան. Ֆիանասներ և Էկոնոմիկա - #2 (128) փետրվար 2011թ. Երևան, էջ 66-68:
9. Հակոբյան Ա.Ա., Լիզինգի ֆինանսական արդյունքների հաշվառման և հաշվետվության բարելավման հիմնախնդիրները ՀՀՄՍ-երի և ՖՀՄՍ-երի ներդրման պայմաններում // Հայաստան. Ֆիանանսներ և Էկոնոմիկա - # 4 (130) մայիս 2011. Երևան, էջ 25-28:
10. Հակոբյան Ա.Ա., Հարկային բեռի վերաբաշխման խնդիրները ֆինանսական վարձակալության ոլորտում // Հայաստան, Ֆիանանսներ և Էկոնոմիկա - # 4 (130) մայիս 2011թ. Երևան, էջ 29-31:

11. Հակոբյան Ա.Ա., Ֆինանսական վարձակալության ներխմբային օգուտների հաշվառման բարելավման ուղիները // Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում – N 8. 2010. Երևան, էջ 194-204:
12. Հակոբյան Ա.Ա., Լիզինգի կազմակերպման մեխանիզմը ՀՀ-ում // «Ֆիանանսական գործառնությունների կարգավորման հեռանկարները ՀՀ-ում» կոնֆերանսի զեկուցումներ. 2007. Երևան, էջ 11-15:
13. Акопян А.А. Проблемы организации лизинга в агробизнесе Армении // Материалы международной научной конференции - Известия государственного аграрного университета Армении - N3. 2009. Ереван. С. 168-171.
14. Акопян А.А. Преимущество лизинга при финансировании бизнеса // Материалы международной научной конференции посвященной 80-летию Государственного аграрного университета Армении Известия Государственного аграрного университета Армении - N4. 2010. Ереван. С. 174-178.
15. Акопян А.А. Армения: лизинг, налоги и ускоренная амортизация - Проблемы налогообложения лизинговых операций // Российское предпринимательство – №5 (1). 2011. Москва. С. 178-184.
16. Акопян А.А. Управление рисками лизинговой деятельности // Современные тенденции в экономике и управлении: новый взгляд: сборник материалов IX Международной научно-практической конференции. Новосибирск: Издательство НГТУ. 2011. С. 29-33.
17. Акопян А.А. Анализ экономико-правовых признаков договора лизинга // Актуальные вопросы экономических наук: сборник материалов XX Международной научно-практической конференции. Новосибирск: Издательство НГТУ. 2011. С. 384-390.
18. Акопян А.А. Экономические и правовые аспекты регулирования лизинга // Известия аграрной науки – Том 9, Ном. 1. 2011. Тбилиси. С. 149-152.
19. Акопян А.А. Проблемы страхования рисков лизинговых сделок в РА // Известия аграрной науки - Том 8, Ном. 3. 2010. Тбилиси. С. 143-146.
20. Акопян А.А. Анализ методологических проблем оценки эффективности лизинга // Известия аграрной науки - Том 9, Ном. 2. 2011. Тбилиси. С. 124-127.
21. Акопян А.А. Совершенствование учета хеджирования лизинговых операций в организациях АПК // Материалы международной научно - практической конференции "Молодежь и инновации - 2011". 2011. Горки. С. 185-188.

ԱՐՄԵՆ ԱՇՄԱՏԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՔԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հրատարակման է երաշխավորել
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի գիտական խորհուրդը

Մասնագիտական խմբագիր՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Զ. Սարգսյան
Գրախոսներ՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Հ. Բայադյան
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա. Հ. Սարգսյան

Խմբագիր՝ Ս. Ս. Ալավերդյան

Ստորագրված է տպագրության 03.06.2011
Ծավալը՝ 16 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 250

Տպագրված է «Փրինթինֆո» տպագրատանը